

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

X XI
2 0 1 8

Գյումրի 2018

*«Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուն
հիմնադրվել է 1998թ. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ (15.01.1998)*

ISSN 1829-4316

Գլխավոր խմբագիր՝ բանասիրական գիտությունների դոկտոր
Ս.Ա. ՀԱՅԲԱՊԵՏՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝ Աբրահամյան Լ.Հ.(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր), Ավետիսյան Պ.Ս.(ՀՀ ԳԱԱ թղթակից
անդամ, պատմ. գիտ. դոկտոր), Բաղիկյան Խ.Գ.(բան. գիտ. դոկտոր, պրոֆե-
սոր), Եզանյան Լ.Գ.(պատմ. գիտ. թեկնածու), Խաչատրյան Լ.Մ.(բան. գիտ.
դոկտոր, պրոֆեսոր), Խաչիկյան Գ.Վ.(բան. գիտ. դոկտոր), Հարությունյան
Հ.Հ. (արվեստագ. թեկնածու, պատասխանատու քարտուղար), Մելքոնյան
Ա.Ա. (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր),
Պետրոսյան Ս.Գ.(պատմ. գիտ. դոկտոր), Սահակյան Կ.Ա.(հոգեբ. գիտ.
թեկնածու), Քոսյան Ա.Վ.(պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր)

Ժողովածուն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի թեկնածուական ատենախոսությունների
հիմնական արդյունքների և դրույթների հրապարակման համար ընդունելի
պարբերական հրատարակությունների ցանկում:

*Խմբագրության հասցեն՝ 3101, ՀՀ, Գյումրի, Վ. Սարգսյան 5ա
Հեռ.՝ +374/312/6 94 77, +374/94/411-228
Էլ. փոստ՝ hkentron@mail.ru
Կայքէջ՝ www.shirakcenter.sci.am*

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК
X X I
EDITION

SCIENTIFIC WORKS

Shirak Centre of Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

Гюмри 2018 Gyumri

“Научные труды” основан в 1989г. решением ученого совета Ширакского центра арменоведческих исследований НАН РА (15.01.1998)
The periodical collection of “Scientific Works” was established in 1998 by the decision of the scientific board of Shirak’s Center of Armenological Studies of NAS of RA (15.01.1998)

ISSN 1829 - 4316

Главный редактор: доктор филологических наук
АЙРАПЕТЯН С. А.

Редакционная коллегия: Абрамян Л. А.(член-кор. НАН РА, кандидат ист. наук, профессор), Аветисян П.С.(член кор. НАН РА, доктор ист. наук), Арутюнян А.Г.(кандидат искусствовед., ответственный секретарь), Бадилян Х.Г.(доктор фил. наук, профессор), Еганян Л.Г.(кандидат ист.наук), Косян А.В.(доктор ист. наук, профессор), Мелконян А.А (академик НАН РА, доктор ист. наук, профессор), Петросян С.Г.(доктор ист. наук), Саакян К.А(кандидат псих. наук), Хачатрян Л.М.(доктор фил. наук, профессор), Хачикян Г.В.(доктор фил. наук)

Editor-in –chief: Doctor of Philological Sciences
S. A. HAYRAPETYAN

Editorial board: L.H. Abrahamyan(Corresponding member of NAS RA, Candidate of Historical Sciences, professor), P.S. Avetisyan(Doctor of Historical Sciences), Kh. G. Badikyan(Doctor of Philological Sciences, professor), L.G. Eganyan (Candidate of Historical Sciences), L.M. Khachatryan (Doctor of Philological Sciences, professor), G.V. Khachikyan (Doctor of Philological Sciences), H.H. Harutyunyan(Candidate of Art Studies, responsible secretary), A.A Melkonyan(Akademican of NAS RA Doctor of Historical Sciences, professor), S.G. Petrosyan(Doctor of Historical Sciences), K.A. Sahakyan (Candidate of Psychological Sciences) A.V. Qosyan (Doctor of Historical Sciences, professor)

Адрес редакции: 3101, РА, Гюмри, ул. В. Саргсяна 5а
Address: 3101, 5 V. Sargsyan Street Gyumri, RA
тел./tel.: +374 /312/6 94 77, +374/94/411-228
E-mail: hkentron@mail.ru
hppt: www.shirakcenter.sci.am

Թորգոմ ԱՂԱՆՅԱՆ, Կարինե ԲԱԶԵՅԱՆ

*ԱՐՎԵՍՏՆ ՈՒ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ
ՀԵՏԱՂԵՏՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐՈՒՄ*

1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքով հազարավոր մարդիկ ոչ միայն նյութական ու ֆիզիկական կորուստներ ունեցան, այլև կրեցին բարոյահոգեբանական, սոցիալական զրկանքներ: Ստեղծված նոր իրադրությունը, երբ խաթարվեց կյանքի տասնամյակներով հաստատված բնականոն ընթացքը, վերացան նախկին մշակութային համասեռությունը, փոխադարձ համաձայնվածությունը և կայունությունը, փոխեց մարդկային կյանքի ենթատեքստն ու սոցիալական գործողությունները, հասարակության նորմերը, արժեքները, համոզմունքները: Բնական աղետն ու սոցիալ-տնտեսական ճգնաժամը առաջ բերեցին գործելակերպի ու մտածելակերպի բնականոն ընթացքի շեղումներ, խեղեցին մարդկանց վարքն ու ներաշխարհը՝ առաջ բերելով մեծ լարվածություն՝ ծանր սոցիոմշակութային իրադրությամբ ու ապագայի ակնկալիքներով պայմանավորված: Էական և նշանակալի աղապատացիոն փոփոխություններ կատարվեցին մշակութային-արժեքային կոդմտրոշումներում, անհատական և խմբային վարքի ռազմավարություններում, առողջության ու կենսական այլ արժեքների նկատմամբ վերաբերմունքում, ընտանեկան, ազգակցական հարաբերություններում և այլ ոլորտներում:

Աղետից անմիջապես հետո առաջնայինը հոգեբանական ծանր վիճակից մարդկանց դուրս բերելն էր: Ամեն մի աղետի, այդ թվում՝ երկրաշարժի դեպքում, փոխվում է մարդու ապրելակերպը, և ի հայտ է գալիս սոցիալական ճգնաժամ՝ սոցիալական լավատեսության անկում: Յուրաքանչյուր ոք իր կյանքի ընթացքում ձգտում է ամբողջ ուժով և գիտակցությամբ հասնել որոշակի հաջողությունների, բայց երբ մի քանի վայրկյանում տակնուվրա է լինում ամեն ինչ, այլևս ոչինչ չի մնում, անձն ընկնում է տարակուսանքի, անորոշության մեջ, հայտնվում է անելանելի վիճակում, նրա մեջ տեղի են ունենում ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական ու բարոյական փոփոխություններ: Արտակարգ պայմաններն իրենց հզորությամբ, հանկարծակիությամբ, տնողականությամբ, ավերածությունների, զոհերի մասշտաբայնությամբ մարդու հոգեկանի վրա թողնում են խորը հետևանքներ, որոնք դրսևորվում են հուզական ապրումների տարբեր ձևերով:

Հոգեբանական տրավմայի բարդության աստիճանը որոշվում է հոգեբանական պաշտպանության մեխանիզմների զարգացման յուրահատկություններով և այն վարքագծային ունակություններով, որոնք պայմանավորված են անհատի կոդմից հոգետրավմատիկ իրադրության ակտիվ հաղթահարման, ինչպես նաև արտաքին աջակցության գործոնների (այլ մարդիկ, մասնագետներ, տարբեր կազ-

մակերայություններ) առկայությամբ կամ բացակայությամբ: Հոգեկան տրավման կամ տրավմատիկ սթրեսը հետաթրեսային տարբեր խանգարումների զարգացման հիմնական գործոնն է: Համաձայն միջազգային դասակարգման մեջ նշված հոգեկան հիվանդությունների հատկանիշների՝ նման վիճակը դասվում է ոչ հոգեկան, այսպես կոչված, ներոտիկ խանգարումների խմբի այն ենթախմբին, որ բնորոշվում է որպես «ծանր սթրեսի հակազդեցություն և հարմարվողականության խանգարում»:¹

Այսպիսի պայմաններում անձը, ենթարկվելով բազմաթիվ գործոնների ազդեցության, հաճախ փոխում է իր վերաբերմունքը միջավայրի, մարդկանց նկատմամբ՝ չտեսնելով իրավիճակից ելք գտնելու ուղիներն ու միջոցները: Նրա մեջ առաջանում է բացասական հոգեվիճակների բազմազանություն: Վերջինները հաճախ արտահայտվում են սեփական անձի և միջավայրի մարդկանց, երևույթների նկատմամբ չարության, ագրեսիայի, բռնությունների, ինքնամիտփության, հուսալքության (երբեմն ինքնասպանության) ձևերով, որոնք սեփական ուժերով գրեթե անհնար է հաղթահարել: Այդ պատճառով էլ Մալիտսկի աղետալի երկրաշարժից հետո հոգեբանների մեծ պահանջ զգացվեց: Եվ պատահական չէ, որ հենց դեկտեմբերյան երկրաշարժից հետո Հայաստանում մեծ ուշադրություն դարձվեց հոգեթերապիային: Աղետի գոտում ստեղծված հոգեբանական կենտրոնները մեծ աշխատանք ծավալեցին՝ հոգեթերապևտիկ օգնություն ցույց տալով տուժածներին: Այդ կենտրոններն օգնեցին ստեղծելու բնական հոգեբանական միջավայր, ինչը թույլ տվեց որոշ չափով դիմադրել կործանարար, քայքայիչ սթրեսածին գործոններին և մեղմացնել անելանելիության բարդության ազդեցությունը:

Արտակարգ պայմաններում, երբ մարդն ապրում է բարձր նյարդային լարվածություն, մեծ նշանակություն է ստանում հոգեկան ու սոցիալական ադապտացիայի ունակությունը, իսկ հոգեկան կոնֆլիկտների հաղթահարման հատուկ ձև կարող է դառնալ արվեստը: Արվեստի ստեղծագործության ընկալումը բերում է ներքին լարվածության թուլացման, օգնում է վերականգնելու հոգեկան հավասարակշռությունը: Արվեստի յուրաքանչյուր տեսակ կարող է կամուրջ լինել անհատի ներքին ու արտաքին աշխարհի միջև և որպես խոստով հաղորդամիջոց՝ օգնել մարդկանց կապ հաստատելու միմյանց հետ, հաղթահարելու սթրեսները և հայտնաբերելու իրենց անհատականության տարբեր կողմերը: Նրա միջոցով հնարավոր է անհատի մեջ մնայուն, հիմնականում դրական հույզեր արթնացնել: Արվեստը մարդուն օգնում է ավելի լավ ինքնաարտահայտվելու, ինքնադրսևորվելու և ինքնաբացահայտվելու: Արվեստն, այդպիսով, դառնում է անհատի հոգեկան գործընթացների չգիտակցված արտահայտման միջոց:²

Հոգեբանական սթրեսի հաղթահարման գործում մեծ դեր են կատարում նաև ստեղծագործական բնույթի աշխատանքները: Ստեղծագործելու ընթացքում անց-

¹ Копытин А. Методы арт-терапии в преодолении последствий травматического стресса. https://cogito-shop.com/blog/?page=post&blog=main&post_id=kopytin-ai-metody-artterapii-v-preodolenii-posledstviy-travmaticheskog. Վերջին դիտումը 13.08.2018 թ.

² <http://www.emergency.am/>. Վերջին դիտումը 13.08.2018 թ.

նում է հուզական լարվածությունը, տեղի է ունենում հոգեկան լիցքաթափում: Ստեղծագործելու ձգտումն առավելապես միտված է հաճախ պաշտպանական մեխանիզմի հզորացմանը, որը նվազեցնում և մեղմացնում է հոգեկան լարվածությունը, օգնում է վերացնելու բացասական հույզերի ներգործությունը, ազատվելու սթրեսային վիճակից, իսկ բուն ստեղծագործելու գործընթացը դրական ազդեցություն է ունենում անելանելիության զգացումը հաղթահարելու և ինքնագնահատականը բարձրացնելու վրա:

Այս բոլորից ելնելով է, որ հոգեբանության մեջ լայն կիրառություն է ստացել արվեստի միջոցով հոգեբանական խանգարումների բուժման այն եղանակը, որն ստացել է «արտթերապիա» անունը: Արտթերապիայի մեթոդը կարելի է վերագրել հուզական վիճակների շտկման ամենահին և բնական մեթոդների շարքին, որից մարդիկ օգտվում են կուտակված հոգեկան լարվածությունից ազատվելու, հանգստանալու նպատակով: Այն մի կողմից՝ հոգեբանության, իսկ մյուս կողմից՝ արվեստի հիմքի վրա ձևավորված զարգացող ուղղություն է, որն իր լայն կիրառությունն է գտել ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների հետ հոգեթերապևտիկ, հոգեշտկող և ինքնաձանաչմանն ուղղված աշխատանքներում:

Արտթերապիայի գլխավոր նպատակը արվեստի միջոցով մարդու ինքնարտահայտումն ու ինքնաբացահայտումն է: Մարդիկ հաճախ են իրենց մեջ բացահայտում ստեղծագործական կարողություններ և արտթերապիայից հետո շարունակում են ինքնուրույն զբաղվել արվեստի տարբեր ձևերով: Հատկապես արդյունավետ է արտթերապիան երաժշտության զուգակցությամբ, քանի որ այն օգնում է ղեկավարելու և բարելավելու տրամադրությունը: Բացի դրանից՝ երաժշտական թերապիան նվազեցնում է հիվանդագին սարսափները, վերականգնում է կապը շրջապատող միջավայրի հետ, վերացնում է նյարդային լարվածությունն ու ընկճվածությունը: Արտթերապիան օգնում է ադեկվատ վարքի մշակմանը, ինքնագնահատման բարձրացմանը, դրական «ես»-հայեցակետի ձևավորմանը: Արտթերապիան, բացի հոգեթերապևտիկ ծրագրերում ընդգրկելուց, լայնորեն կիրառվում է սոցիալ-վերականգնողական բնույթի տարբեր աշխատանքների շրջանակներում, նաև կլինիկապես և փաստացի առողջ մարդկանց հետ: ³

Արտթերապիան մեծապես օգնել է նաև Գյումրու՝ հետադեպային ծանր սթրեսային վիճակում հայտնված բնակչության, ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների հոգեբանական վերականգնմանն ու հարմարվողականության գործընթացին: Արվեստի հետ շփումն ու արվեստով զբաղվելը գյումրեցիների ներքին պահանջմունքն են, նրանց էությունը և շատերի համար դարձավ ծանր իրականությունը հարմարվելու, դժվարությունները հաղթահարելու և կյանքը շարունակելու հիմնական գործոններից մեկը: Այդ է վկայում հետևյալ իրողությունը, որի մասին պատմել է Շիրակի մարզպետի նախկին խորհրդական Հասմիկ Գիրակոսյանը. «*Երկրաշարժից 1 ամիս անց Սպիվակովի համերգն էր: Դազադները դեռ քաղաքում դրած են, մարդ կա՝ դեռ իրա մեռելին չի գտել, լացում են, կըսեն՝*

³ Սարգսյան Ս., Արտ-թերապիան որպես ստեղծագործական որոնում, Արդի հոգեբանության տեսական և կիրառական հիմնախնդիրները, N 2, Երևան, 2012, էջ 129-136:

մարդ չի գա: Սպիվակովը կըսեր՝ մի՛ք նեղվեք, մե քանի հոգի էլ էղնի՝ կնվագեն: Մեկ էլ տեսնիմ՝ կամաց-կամաց դռների միջից, սև շալերով կանայք, սև տուլուպներով, փոշոտ տղամարդիկ գերեզմաններից գուքան ու գուքան: Սպիվակովի դեմքից արցունքները կերթային, կըսեր. «Տո էս ի՛նչ ժողովուրդ են, էս ի՛նչ քաղաք է, գերեզմանոցից՝ դահլիճ»: Ի՛նչ ծափերով դիմավորեցին... Այս տարվա համերգին տեսավ ծաղիկներով դահլիճ, սիրուն հագած մարդիկ, բայց ասաց. «Ամբողջ կյանքում էն օրը չեմ մոռանա»⁴

Մշակութային յուրօրինակ էներգիան Գյումրու բացառիկ այցեքարտն է: Երկար ժամանակ քաղաքը համարվել է Արևելյան Հայաստանի մշակութային կենտրոն, քանզի և՛ նախախորհրդային, և՛ խորհրդային շրջանում այն աչքի էր ընկնում իր մշակութային բազմապիսի ձեռքբերումներով, աշխույժ մշակութային կյանքով և հայտնի գործիչներով: Նշված ժամանակաշրջանում հայ ինտելեկտուալ և մշակութային ընտրանու մի զգալի մասը Գյումրի-Ալեքսանդրապոլ-Լենինականի ներկայացուցիչ էր: Ձեռքբերումները չէին սահմանափակվում միայն անհատներով, դրանք առկա էին մշակույթի բոլոր ասպարեզներում՝ կինո, թատրոն, գրականություն, ճարտարապետություն, երաժշտություն, կերպարվեստ, ժողովրդական արվեստ, ինչպես նաև գիտության ու կրթության ոլորտ:

Քաղաքի գիտական և մշակութային գործիչները փաստում են, որ մշակույթը Գյումրում կենդանի օրգանիզմ է, որը երկրաշարժից հետո ապրելու, շարունակվելու և ստեղծագործաբար արարելու ուժ տվեց աղետյալներին: Երկրաշարժից հետո շատ գյումրեցի արվեստագետներ արտերկրում էին. մշակութային կյանքն աննախադեպ անկում էր ապրում, բոլոր ուժերը կենտրոնացվում էին միայն երկրաշարժի հետևանքները վերացնելու և վերականգնողական գործընթաց ծավալելու համար: Սակայն ժամանակի ընթացքում Գյումրի սկսեցին վերադառնալ երկրաշարժից հետո քաղաքից ստիպված հեռացած մտավորականները և արվեստագետները, որոնք մշակութային նախաձեռնություններ և միջոցառումներ անցկացնելու մեթոդով փորձում էին նպաստել Գյումրու վերականգնմանը: Այսպես՝ երկրաշարժից մեկ տարի անց Գյումրիում բացվում է «Մթիլ» կերպարվեստի թանգարանը, որտեղ առաջին «Մոդեռն արթ» ցուցահանդեսը անցկացնում են «Պլիժոկով»: «Քանդուքարափ քաղաք, մարդիկ՝ վշտի մեջ, գերեզմաններ կերթան, սիրտ ու հավես չունին ցուցահանդեսի, թանգարանի: Տնակներում կապրին, ժողովուրդը սոված է, ապագա չկա, լույս չկա, ու հանկարծ մե լուսավոր սրահի մեջ կտեսնին արվեստի գործեր, ընդ որում՝ մոդեռն արթ: Թանգարանը ստեղծվեց, որպեսզի ցույց տար, որ կյանքը շարունակվում է: Մենք չմեռանք, ով որ կենդանի է, կլցնե նաև մեռածների տեղը: Ըսի՞ք կյանք էր, էս թանգարանը, էս թատրոնը՝

⁴ Արվեստը վերապրում է. Գյումրու կյանքի աղետալի փոփոխությունից մշակութային կյանքը չի ցնցվել https://www.armenianow.com/hy/society/the_spitak_quake/50443/spitak_earthquake_gyumri_culture. Վերջին դիտումը 13.08.2018 թ.

ըստնք կապացուցեն, որ կյանքը չմեռավ», - պատմում է թանգարանի տնօրեն Արտուշ Մկրտչյանը:⁵

1996 թ. տեղի ունեցավ Վազգեն Պահլավունի-Թադևոսյանի անհատական նախագիծ-ցուցահանդեսը՝ «Մետապոլիս-58», որը տևեց շուրջ մեկ տարի: Նույն թվականին՝ նաև Գևորգ Սարգսյանի «1+1+1+1» ցուցահանդեսը, ինչպես նաև «Աշտարակներ» նախագիծը. ուշագրավ էր, որ օգտագործվում էին շինհրապարակներն ու լքված գործարանները՝ իբրև ցուցադրության տարածք: Այս նախագծերը նախատիպ դարձան մի ավելի մեծ նախագծի համար: 1997 թ. ամռանը Գյումրիում անցկացվեց ավանգարդիստ-արվեստագետների հավաք, որին մասնակցեցին նկարիչներ, լուսանկարիչներ, պոետներ, երաժիշտներ Գյումրիից ու Երևանից: Այս բոլորի հիման վրա 1996-1997 թթ. հիմնադրվեց Գյումրու ժամանակակից արվեստի կենտրոնը: Այն նպատակ ուներ որոշակի խնդիրներ լուծելու համար ստեղծել հատուկ մշակված քաղաքականություն՝ մշակութային քաղաքականություն, որի արդյունքը դարձավ Գյումրիի միջազգային Բիենալեն:⁶

Բիենալեն առաջին անգամ կազմակերպվել է անցած դարի վերջին Վենետիկում: Այն հրավիրվում է երկու տարին մեկ անգամ, սովորաբար արհավիրք տեսած վայրերում՝ տվյալ քաղաքի հիմնախնդիրները բարձրացնելու, միջազգային կապեր հաստատելու, զարգացման հետագա ուղիներ կանխորոշելու նպատակով: Պատահական չէ, որ Գյումրու երկրորդ Բիենալեի նշանաբանն էր «Անցում գրոյական կետ»: Մարդկությունը հասել է իր գոյության սահմանագրին, որից հետո նա դեռևս չգիտի՝ ուր է գնում: Տարերային բազում աղետներն ու կատակլիզմները կարծես հավաստում են Ապոկալիպսիսն ու Նոր Գալստյան մոտալուտ սպասումները: Մյուս կողմից՝ ժամանակն է վերագտնելու մարդկանց միջև կտրված կապը՝ արժևորելով նոր բովանդակությամբ ու չափանիշներով: Աղետյալ Գյումրին այն վայրն էր, որտեղ այս հարցերը հնչում էին առավել սուր և հրատապ՝ պահանջելով հիմնավոր ու համոզիչ պատասխաններ:⁷ Սրանով էլ պայմանավորված՝ Բիենալեն դարձավ պարբերական մշակութային միջոցառում, որը շարունակվում է մինչ օրս:

Նույնը կարելի է ասել թատրոնի մասին: Դերասանուհի Անահիտ Քոչարյանը հիշում է. «Երկրաշարժից հետո մեր թատրոնի կազմն ամբողջովին տեղափոխվեց Երևան: Մեկ տարի անց վերադարձանք Գյումրի՝ Շեքսպիրի «Միրոսալարյուն ճիգերը» ներկայացմամբ: Փորձել էինք մի քիչ ավելի ուրախ ներկայացում անել: Վախով էինք սպասում առաջին օրվան. և՛ կորստի վիշտն էր թարմ, և՛ քաղաքն էր ավերակ: Ո՞նց պետք է ընդունեք հանդիսատեսը. կգար՞, թե՞ ոչ: Բայց պատկերացրեք՝ վարագույրը բացվեց, և լեփ-լեցուն դահլիճ տեսանք:⁸»

⁵ Արվեստը վերապրում է. Գյումրու կյանքի աղետալի փոփոխությունից մշակութային կյանքը չի ցնցվել:

⁶ <https://arvestabanots.wordpress.com/2011/08/21/>. Վերջին դիտումը 13.08.2018 թ.

⁷ Մարգարյան Ա., Երկրորդ միջազգային Բիենալեն Գյումրիում, ՇՊՄԺ հանրապետական չորրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2000, էջ 60-61:

⁸ Փաստորեն թատրոնը փրկեց մեր կյանքը, Անահիտ Քոչարյանը 1988 թ. Գյումրու աղետի մասին. <https://www.aysor.am/am/news/2015/12/07/>. Վերջին դիտումը 13.08.2018 թ.

Հասմիկ Կիրակոսյանի վկայությամբ՝ երկրաշարժից հետո մշակույթում մեծացավ պրոֆեսիոնալիզմը: «*Ի հեճուկս բնության արհավիրքի՝ մշակույթը կարծես ավելի ուժեղացավ, որ պահի ժողովրդին: Երկրաշարժից հետո պակասեցին ինքնագործ խմբերը՝ կապված արտադրական մակերեսների վերացման հետ: 1988-ից հետո ավելացան պետական նվագախմբերը՝ սիմֆոնիկ, ժողովրդական, այսօր արդեն թանգարանների թիվը հասնում է 9-ի, ավելացել են պրոֆեսիոնալ խմբերը*».⁹ Հետերկրաշարժյան Գյումրիում գործող թանգարանների շարքը համալրեցին համայնքապատկան երկու՝ Հովհաննես Շիրազի և Մհեր Մկրտչյանի հուշատուն-թանգարանները:

Գյումրու մշակութային կյանքում նշանակալի դերակատարում ունեցան «Գոհար» սիմֆոնիկ նվագախումբը և երգչախումբը, որը հիմնադրվեց բեյրութաբնակ Խաչատուրյան ընտանիքի կողմից: 1996 թ. Գոհար Խաչատուրյան (Խաչատուրեան) այցելեց Հայաստանի այն շրջանները, որոնք տուժել էին երկրաշարժից և դեռ գտնվում էին ոչ նպաստավոր նյութական ու հոգևոր վիճակում: Տեսնելով այդ պայմանները՝ նա որոշեց աշխատանքի հնարավորություն ստեղծել մարդկանց համար: 1997-1999 թթ. նրա որդիներ Հարութ, Շահե և Նառ Խաչատուրյանները Գյումրու կենտրոնում կառուցեցին մշակութային համալիր, որտեղ սկզբում բնակություն հաստատեցին երկրաշարժից դեռ անօթևան մնացածները: 1999 թ. իր գործունեությունն սկսեց նաև «Գոհար» երաժշտանոցը, որտեղ աշխատում էր մոտավորապես 20 ուսուցիչ և անվճար սովորում մոտ 100 ուսանող, որոնց սովորելու տարիներին տրվում էին անվճար երաժշտական գործիքներ: 2000 թ. հիմնադրվեցին «Գոհար» սիմֆոնիկ նվագախումբն ու երգչախումբը Մեայուհ Աբգարյանի գլխավորությամբ: Համույթը համերգներով հանդես է գալիս ոչ միայն Հայաստանում, այլև սփյուռքահայ օջախներում:

Քաղաքի մշակութային մթնոլորտի ձևավորմանը մեծապես նպաստում են երկրաշարժից հետո ստեղծված Երևանի պետական կոնսերվատորիայի, Կինոյի ու թատրոնի պետական ինստիտուտի և Գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղերի առկայությունը, որոնք տեղավորված են Լ. Ճգնավորյանի հանգանակությամբ վերանորոգված շենքում:

Չնայած սոցիալ-տնտեսական վատ պայմաններին՝ Գյումրու արվեստի դպրոցներն ու գրադարանները լեցուն են աշակերտներով: Գյումրեցիները կարևորում են հոգևոր արժեքների նշանակությունը երեխաների դաստիարակության գործում: Մերկուրովի անվան նկարչական դպրոցի վատ պայմաններում տասնյակ երեխաներ են սովորում: Դպրոցի տնօրեն Մամվել Գալստյանն ասում է, որ հիանալի սերունդ է գալիս՝ ուժեղ ինքնարտահայտմամբ: «*Ձարմացած եմ էս ջահելների մտածողության վրա, ֆանտաստիկ բաներ են մտածում, էն որ շունչդ կտրվում է, էն որ տիեզերական է լինում*», - ասում է Գալստյանը:¹⁰

⁹ https://www.armenianow.com/hy/society/the_spitak_quake/50443/spitak_earthquake_gyumri_culture.

¹⁰ https://www.armenianow.com/hy/society/the_spitak_quake/50443/spitak_earthquake_gyumri_culture.

Հետերկրաշարժյան Գյումրու գիտա-մշակութային կյանքում նշանակալի եղավ 1994-ի աշնանը կիսավերակ Գյումրիում Շիրակի երկրագիտական թանգարանի մի փոքր խումբ երիտասարդ գիտնականների կողմից «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» խորագրով հանրապետական I գիտաժողովի անցկացումը: Ի հեճուկս բոլոր դժվարությունների, մթի ու ցրտի, անտեսելով բարդություններն ու ամեն տեսակի անհարմարությունները, Գյումրի հրավիրվեցին հանրապետության մի քանի տասնյակ հայտնի հայագետներ՝ քննարկելու Շիրակի պատմամշակութային ժառանգության գիտական ուսումնասիրության վիճակը: Գիտաժողովի հաջողությունն աներկբա էր, Գյումրին էլ առաջին հերթին ինքն իրեն ու ապա նաև բոլորին ապացուցեց, որ չի մարել այստեղ ոչ՝ գիտության լույսը, ոչ՝ վաղվա օրվա հավատը: 1994 թ.-ից մինչ օրս Գյումրիում ավանդաբար գումարվող «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հեղինակավոր գիտական նստաշրջաններն ակնառու երևույթ դարձան ոչ միայն Գյումրու, այլև հանրապետության գիտական ու մշակութային կյանքում և էապես նպաստեցին Գյումրիում Ակադեմիայի հումանիտար կառույց ունենալու վաղեմի ու չարչրկված հարցի վերակենդանացմանը: 1997 թ.-ի կեսերից սկսեց գործել առաջին տարիներին Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մասնաճյուղ հանդիսացող, իսկ 2002 թ.-ից ինքնուրույն Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը, որ մեր երկրում առայսօր միակ ակադեմիական հումանիտար կառույցն է մայրաքաղաքից դուրս: Կենտրոնում, բացի գիտական ուսումնասիրություններից, բազմաթիվ ծրագրեր են իրականացվում Շիրակի պատմության ու մշակույթի հանրահռչակման ուղղությամբ: Դրանցից հիշատակության են արժանի Տեառնընդառաջի համաքաղաքային ազգագրական տոնակատարության և «Հացի տոն» մարզային ազգագրական փառատոնի կազմակերպումը, որն արդեն ավանդական է դարձել Գյումրիում:¹¹

Իր ստեղծումից մինչ օրս Գյումրին հայտնի է նաև որպես արհեստավորական քաղաք՝ իր նշանավոր արհեստավորական գերդաստաններով: Պատահական չէր, որ արհեստները, որոնք խորհրդային տարիներին հետընթաց էին ապրել, երկրաշարժից հետո նոր զարգացում ստացան: Ընդ որում ստեղծագործող վարպետներից շատերը աշխատում էին ոչ այնքան տնտեսական և կենցաղային խնդիրների լուծման, որքան ներքին հոգեկան պահանջները բավարարելու համար: Ըստ Գյումրու ժողովարպետների միության նախագահ Սամվել Հովհաննիսյանի՝ 1980-90-ական թթ. քաղաքում կային մոտ 900 վարպետներ: Հետագա «ցուրտ ու մութ» տարիներին, սոցիալ-տնտեսական ծանր պայմանների բերումով շատերը հեռացան քաղաքից կամ դադարեցին ստեղծագործելուց, սակայն այսօր էլ բազմաթիվ վարպետներ, իրենց աշխատանքները ներկայացնում են Ռիժկով

¹¹ Մ. Հայրապետյան, Շարունակվող երթ, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի 2007, էջ 3-6:

փողոցի հուշանվերների վաճառատանն ու Գյումրիում պարբերաբար կազմակերպվող ցուցահանդես-տոնավաճառներում:¹²

Գյումրու գեղարվեստական արհեստագործության ու արվեստների առաջին տոնավաճառը, կամ, ինչպես ժողովուրդն է ասում՝ վերնիսածը, կազմակերպվել է 2012 թ. հունիսի 30-ին «Սրբազան հող» բարեգործական ՀԿ-ի կողմից, որի նախագահ Սուսաննա Էլբակյանը հավաստում է, որ այն դարձել է Գյումրու ժողովարպետների ու արվեստի գործիչների ստուգատես: Մե Ամենափրկիչ եկեղեցուն հարակից տարածքում անցկացվող ամենամյա ցուցահանդես-վաճառքը շատ վարպետների համար ոչ այնքան իրենց աշխատանքները իրացնելու, այլ հայրենակիցներին իրենց ստեղծագործությունները ներկայացնելու, կարծիքներ լսելու ու փոխանակելու, գնահատվելու ու ճանաչվելու նպատակ է հետապնդում:¹³

Գյումրիում ապրող ու ստեղծագործող վարպետներից, որոնք չեն վաճառում իրենց աշխատանքները, հիշատակության է արժանի ուլունքագործ Գրիգոր Դրմեյանը, որը մասնագիտությամբ ձևարար է, արհեստը սովորել է ինքնուրույն, երբ երկրաշարժից հետո բուժման նպատակով մեկնել է ԱՄՆ: Ժողովարպետը կարծում է, թե դա աստվածատուր շնորհք է: Մկրբում նա զբաղվել է ասեղնագործությամբ, իսկ հետո ուլունքագործությամբ: Պատրաստում է դեկորատիվ պաննոներ հիմնականում աստվածաշնչյան և ազգային թեմաներով:

Ինքնուս ասեղնագործող է նաև Լիլիա Պետրոսյանը, որն իր ստեղծագործական ձիրքը ժառանգել է ծնողներից: Հայրը փայտի փորագրությամբ է զբաղվել, իսկ մայրը եղել է քաղաքի հայտնի դերձակուհիներից մեկը, նաև ասեղնագործել է: Տիկին Լիլիան ժողովարպետի կոչում անգամ չունի. աշխատում է իր հաճույքի համար: Նա, իր վկայությամբ, փոքր հասակից է գործել և իր պատրաստած սեղանի սփռոցները, բարձի երեսներն ու այլ իրեր մեծ քանակությամբ նվիրել է մտերիմներին: Հետերկրաշարժյան տարիներին սկսել է զբաղվել խաչկար ասեղնագործությամբ, որի միջոցով վերարտադրում է գեղարվեստական կտավներ, որոնք ևս չի վաճառում, այլ նվիրում է հարազատներին:¹⁴

Եթե մեծահասակներն ինքնուրույն են ընտրել ժողովրդական արվեստով զբաղվելն ու այդ կերպ ինքնարտահայտվելը, ապա երեխաներին այդ հարցում օգնում են Գյումրու մի շարք կազմակերպություններ, մասնավորապես Գյումրու «Ընտանիք» բարեգործական-հասարակական կազմակերպությունն ու դրան կից ստեղծված «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն ՊՈԱԿ-ը:¹⁵ «Ընտանիք» բարեգործական կազմակերպությունը հիմնադրվել է 1990թ. և առաջինն էր հետադեպ Գյումրիում, որ ձեռնամուխ եղավ դեռահաս-

¹² Շիրակի արդի արհեստները (2012 թ. դիտանցման նյութեր): Դիտանցումն իրականացվել է ՀՀ մշակույթի նախարարության «Հովի» Շարավեյանի անվ. ժողովրդական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

¹³ Տե՛ս «Գյումրին է քաղաքը արհեստի ու արվեստի» ֆիլմը, հեղինակ՝ Արվիկա Թամրազյան, «Ցայգ» հեռուստաընկերություն, 2009թ.:

¹⁴ Բազեյան Կ., Շիրակի արդի արհեստները (ըստ 2012թ. իրականացված դիտանցման), ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Գյումրի, 2012, էջ 148-157:

¹⁵ <https://entanik.am/hy/>. վերջին դիտումը 13. 07. 2018 թ.

ների հիմնահարցերով զբաղվելուն: Կազմակերպությունն իր առջև նպատակ է դրել նպաստել ծնողագուրկ, հաշմանդամ, սոցիալապես անապահով, հատուկ դժվարություններ ունեցող և բազմանդամ ընտանիքների երեխաների բարոյահոգեբանական վիճակի բարելավմանը: Բարեգործական կազմակերպությանը կից՝ 1991թ.-ին հիմնադրված «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն ՊՈԱԿ-ը ևս զբաղվում է Գյումրի քաղաքի դեռահասների հիմնահարցերով, սակայն ոչ թե բարեգործական, այլ կրթադաստիարակչական բնույթի: Կենտրոնի գործունեության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպմամբ նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ստեղծումն է, նրանց հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձևավորումը: Կենտրոնի հիմնական նպատակն է մինչև 18 տարեկան սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումն ու նպատակային զբաղվածության ապահովումը՝ արհեստի ու արվեստի խմբակներում տարվող բազմաբնույթ աշխատանքով և ուսուցմամբ: Կենտրոնում դասավանդում են գեղանկարչություն, փայտի գեղարվեստական փորագրություն, խեցեգործություն, արծաթագործություն, գորգագործություն ու կարպետագործություն, ասեղնագործություն ու ժանեկագործություն, կարուձև:

Նույն գործունեությունն է իրականացնում նաև Գեղագիտության ազգային կենտրոնի Գյումրու մասնաճյուղը, որը հիմնադրվել է 1978թ. ԳԱԿ-ի հիմնադիր, արվեստաբան Հենրիկ Իգիթյանի առաջարկով և Ռոբերտ Արզումանյանի աջակցությամբ, գեղանկարիչ, ՀՀ նկարիչների միության անդամ, պրոֆեսոր Սուսաննա Մկրտչյանի մինչ օրս տնօրինությամբ: Կազմակերպությունը գտնվում է քաղաքի կենտրոնում, որտեղ դասավանդում են մասնագիտական բարձրագույն կրթություն ունեցող մասնագետներ և մանկավարժներ: 32 տարուց ավելի կենտրոնի տարբեր խմբեր են հաճախում 3-18 տարեկան 300-400 սաներ ոչ միայն Գյումրի քաղաքից, այլ նաև հարակից գյուղերից ու շրջաններից: Կենտրոնի սաների ստեղծագործություններն ու ելույթները շրջել են աշխարհի շատ երկրներում՝ արժանանալով խրախուսանքների:

Այս կազմակերպություններն իրենց գործունեությամբ մեծապես նպաստում են երեխաների ու պատանիների գեղագիտական դաստիարակությանը, ստեղծագործական ունակությունների զարգացմանը, ազգային արհեստների, Գյումրու հարուստ մշակութային ժառանգության պահպանմանը: Հաշվի առնելով Հայաստանի և հատկապես Գյումրի քաղաքի ներկայիս սոցիալ-տնտեսական պայմանները՝ այս կազմակերպությունների աշխատանքն առավել քան կարևոր դեր ու նշանակություն է ստանում երիտասարդ սերնդի սոցիալականացման գործում:

Որպես ամփոփում՝ վկայաբերենք Գյումրու մտավորականների հետևյալ միտքը. «Ինչ խոսք, ազգային ծեսերն ու տոները, ժողովրդական արհեստներն ու արհեստավորական ավանդույթների պահպանումը նպաստում են բնակչության հոգեկան հավասարակշռմանը, հզորացնում նրանց հոգեբանական

պաշտպանական մեխանիզմները, ակտիվացնում են քաղաքային մշակութային կյանքը, ստեղծում միջմշակութային հաղորդակցման հնարավորություն՝ նոր սերնդի մեջ դրական վերաբերմունք ձևավորելով ավանդական արժեքների հանդեպ և նպաստելով ավանդույթների փոխանցմանը:

Թվում էր՝ ստրեսը սպառեց խոնարհված քաղաքի հարմարվողական կարողությունները, բայց տոները և տոնական մշակութային դրսևորումները գյումրեցու կյանքում ինքնամաքրման ու ինքնահաստատման նշանակություն են ձեռք բերել: Ստեղծարար քաղաքը՝ ազգային ինքնություն ու արժեքներ կրող, իր պատմամշակութային ժառանգությամբ ու ավանդական մշակութային նկարագրով կարող է դառնալ ժամանակակից արվեստի միջազգային կենտրոն»:¹⁶

ИСКУССТВО И ХУДОЖЕСТВЕННЫЕ РЕМЕСЛА В АДАПТАЦИОННЫХ ПРОЦЕССАХ НАСЕЛЕНИЯ ГЮМРИ ПОСЛЕ ЗЕМЛЕТРЯСЕНИЯ

___ Резюме ___

___ Т. Аганян, К. Базеян ___

В статье обсуждаются роль и адаптационные функции искусства и художественных ремесел в деле преодоления тяжелого морально-психологического состояния населения Гюмри. В течении короткого промежутка времени, в тяжелейших социально-экономических условиях удалось восстановить облик Гюмри, как одного из научно-культурных центров Армении. Наряду с действующими культурно-просветительскими учреждениями были созданы новые, в том числе государственный симфонический оркестр, культурный центр «Гоар» с одноименным оркестром и хором, дома-музеи Ованеса Шираза и Мгера Мкртчяна и др. В Гюмри начали проводить международные Биенале авангардного искусства, открылись филиалы художественных вузов, проводились выставки продажи работ народных мастеров.

Տեղեկություններ հեղինակների մասին

Բազեյան Կարինե Ռազմիկի - պ.գ.թ, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն, E-mail: bazeyan60@mail.ru
Աղանյան Թորգոմ Գրիգորի - ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, E-mail: aghanyan.torgom@gmail.com

¹⁶ Կ. Սահակյան, Ռ. Հովհաննիսյան, Ստեղծարար քաղաքը՝ ազգային ինքնության ու արժեքների կրող (Գյումրու օրինակով), ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 19, Գյումրի, 2016, էջ 163:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ
ԱՐՇԱԿ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

Հայ աշուղական արվեստի պատմության մեջ բացառիկ կարևոր տեղ է զբաղեցնում Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցը, որը ձևավորվել և զարգացել է արևմտահայ (Վան, Բայազետ, Կարին, Կարս) քաղաքային մշակույթին բնորոշ համաքարական ավանդույթների հիման վրա: Համաքարության ձևավորման և կայացման պատմամշակութային նախադրյալներին, քաղաքային մշակույթում ունեցած կարևորագույն դերին ու գործառնություններին նվիրել ենք մի շարք հրապարակումներ:¹


Այստեղ անդրադառնալու ենք Ալեքսանդրապոլի աշուղական երգերի երաժշտական բաղադրիչի առանձնահատկություններին: Նկատի առնելով այն իրողությունը, որ աշուղական արվեստում, բանաստեղծական խոսքի կարևորությամբ պայմանավորված, երաժշտական բաղադրիչը չի գրառվել, ալեքսանդրապոլյան աշուղական երգերը բացառիկ շահեկան վիճակում են հայտնվել: 19-րդ դարի վերջում քաղաքի զարգացող մշակութային կյանքում բանահավաքչական արժեքավոր հավաքածուների մեջ ընդգրկվել են նաև աշուղական երգերի ձայնագրյալ /հայկական նոր ձայնագրության համակարգով կատարված/ նմուշներ: Ութեն դրանք ավելի ուշ են հրատարակվել, բայց համարվում են համաժամանակյա արժեքավոր փաստացի նյութեր՝ աշուղական երգերի երաժշտական բաղադրիչի գիտական ուսումնասիրության համար:

Աշուղական երգերի ձայնագրությամբ Ալեքսանդրապոլում հիմնականում զբաղվել է Բանահավաք, երաժշտագետ, խմբավար, մանկավարժ, նկարիչ Արշակ Բրուտյանը: Լինելով Կոմիտասի լավագույն աշակերտներից մեկը՝ նա կարողացել է ճիշտ գնահատել հայ ազգային երաժշտական բազմաշերտ ժառանգությունը և

¹ Հարությունյան Հ., Կարսի և Ալեքսանդրապոլի աշուղական ավանդույթների փոխառնությունները, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.16, Գյումրի, 2014, էջ 210-216: Աշուղական ավանդույթը քաղաքային մշակույթում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.20, Գյումրի, 2017, էջ 216-623: Հ.Հարությունյան, Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցի ձևավորման նախադրյալները, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հայագիտության արդի հիմնախնդիրներ» միջազգային 9-րդ գիտաժողովի զեկուցումների դրույթներ, Գյումրի, 2016, էջ 198-203: Harutyunyan H., Matikyan H. Kars-Alexandrapol: Ashugh Traditions: III Международная научно-практическая конференция «Диалог наук в XXI веке», Уфа, 29-30 августа 2016. С. 9-14; Harutyunyan H., Matikyan H. Interrelations of ashough traditions in Kars and Alexandrapol in the second half of the XIXth century. VII International Academic Congress "Fundamental and Applied Studies in EU and CIS Countries" (United Kingdom, Cambridge, England, 26-28 February 2017). Volume VII. Cambridge University Press, 2017, p. 529-532; Арутюнян А. Творчество ашугов Карса и Александрополя в конце XIX – начале XX вв. в контексте городской культуры. Всероссийские (с международным участием) историко-этнографические чтения, посвященные памяти профессора Магомедова Расула Магомедовича, сборник статей. Махачкала. 2017. С.43-45.

թղթին է հանձնել Շիրակի ու հատկապես Ալեքսանդրապոլի ժողովրդական, աշուղական երգերի, ինչպես նաև հայ եկեղեցական երաժշտության բացառիկ նմուշներ: Աշուղական երգերն ընդգրկված են «Ռամկական մրմունջներ» ժողովածուի երկրորդ հատորում:² Նշենք նաև, որ Ալեքսանդրապոլի աշուղական բազմաթիվ երգեր 20-րդ դարի սկզբում գրառել են նաև հայ անվանի երաժշտագետներ՝ Գ.Լևոնյանը, Սպ.Մելիքյանը, Շ.Տալյանը, Վ.Տալյանը, Բ. Քուշնարյանը, Ա.Քոչարյանը: Մակայն այդ գրառումների մեծագույն մասը վերաբերում է հիմնականում աշուղներ Զիվանու և Շերամի ժառանգությանը ու գրառված է Ալեքսանդրապոլի քաղաքային հնչող միջավայրից դուրս՝ Թիֆլիսում և Երևանում: Մինչդեռ Ա.Բրուսյանի ժողովածուն ստեղծվել է Ալեքսանդրապոլում՝ աշուղների կատարումներից և գրառվել հայկական նոտագրությամբ, որին նա տիրապետել է հմտորեն:³

Վաստակաշատ երաժշտագետի անձնական արխիվում պահվում է այն վկայականը, որ նրան հանձնել է Կոմիտաս վարդապետը՝ հավաստելով, որ Ա.Բրուսյանը տիրապետում է հայկական նոր նոտագրության համակարգին և կարող է դասավանդել այն ուսումնական հաստատությունում:⁴



² Բրուսյան Ա., Ռամկական մրմունջներ, հ. Բ, Եր., 2002:

³ Նշենք, որ այս համակարգով էր իր գրառումները կատարում նաև Կոմիտասը:

⁴ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ա. Բրուսյանի ֆոնդ, թ. 250:

Հայտնի է, որ աշուղական երգն ու նվագը կրել են ինչպես ազգային ինքնության բնորոշիչներ, այնպես էլ մերձավորարևելյան տարածաշրջանի մշակույթին բնորոշ բազմաթիվ տարրեր. «Լինելով Մերձավոր Արևելքի էպիկական երգարվեստի դասական դրսևորումներից մեկը՝ աշուղական սիրավեպը քննելի է իբրև հայարևելյան երաժշտական առնչությունների հարուստ շտեմարան, որտեղ ամփոփված են հարակից մշակույթներում ձևավորված գեղարվեստական երևույթներ՝ կրոնագեղագիտական ու ժողովրդահավատալիքային պատկերացումների ընդգրկումով»:⁵

Այսպիսով, ալեքսանդրապոլյան աշուղական երգերի ձայնագրությունները հնարավորություն են ընձեռնում պատկերացում կազմելու ինչպես 19-րդ դարում հայ աշուղական երգերի երաժշտաձևական, այնպես էլ այդ երգերի տեղային հատկանիշների մասին:

Հայտնի հայ աշուղների շուրջ 80 երգերի ձայնագրված նմուշները հնարավորություն են տալիս հստակ պատկերացում կազմելու Ալեքսանդրապոլի աշուղական երգարվեստում արմատացած *ժանրային, ոճական, տաղաչափական, երաժշտաարտահայտչական* և այլ բնորոշիչների մասին:

Անդրադառնալով այս երգերի *ժանրային* առանձնահատկություններին, անշուշտ, պետք է նկատի առնել դրանք գրառողի նախասիրությունները և գեղարվեստական այն արժանիքները, որոնք աշուղական բազմաթիվ երգերի մեջ կարևորվել են նրա կողմից: Հայտնի է, որ հատկապես քաղաքային աշուղական երգը աչքի է ընկել ժանրային բազմազանությամբ՝ տարաբնույթ ենթատեսակներով: Այստեղ գերակշռողը *հայրենասիրական երգերն են*: Դա, անշուշտ, պայմանավորված է եղել տվյալ ժամանակաշրջանին բնորոշ ազգային ազատագրական ոգու բարձր պահանջներով ու հրամայականով: Ակներև է, որ Ա.Բրուսյանը գրի է առել այդ երգերի ամենատարածված ու սիրված նմուշները՝ Ջիվանի՝ «Ազգ իմ, որքան նկուն մնաս», «Ավարայրի դաշտը», «Ավետաբեր խոսնակը հայուն», «Դու այն երկրեն մի՛ հեռացիր», Խայաթ՝ «Ա՛խ, իմ անո՛ւշ հայրենիք», Շիրին՝ «Ա՛խ, իմ փոքրիկ բուրաստան», Հավես՝ «Բոլոր երկրներեն ինձի համար», Պայծառն՝ «Իբրև Արաքս ես հոսում եմ» և այլն:

Այս շարքին են դասվում նաև այլաբանական հայրենասիրական երգերը, որոնք ունեն ոչ միայն շատ պատկերավոր ու խորքային արտահայտչականություն, այլև ցարական գրաքննությունից խույս տալու միտում: Դրանցից են, օրինակ՝ Ջիվանու «Աշխարհն ընդհանուր», «Անհոգ ես», «Առավոտը շատ մոտ է» երգերը:

Առավոտը շատ մոտ է, լույսը շողալուն քիչ մնաց,
Խավարը ընկավ գետին, արևի գալուն քիչ մնաց.
Համբերանքդ ծո՛վ արա, հույս ու հավատդ պի՛նդ պահիր,
Ո՛վ, գիշերի՛ց ձանձրացող, բախտիդ խաղալուն քիչ մնաց:⁶

⁵ Երնջակյան Լ. *Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական փոխառնչությունների համատեքստում*, Եր., 2009, էջ 6:

⁶ Բրուսյան Ա., նշվ. աշխ., էջ 35:

Ժողովածուում մեծաթիվ են նաև *քնարական երգերը*, որոնց մեջ հանդիպում են համբավվոր աշուղներ Ջիվանու, Շերամի, Պայծառեի, Շիրինի և այլոց հայտնի երգերը, այդ թվում Շիրինի «Ակնարկյա, ո՛վ իմ սիրուհի», Ջիվանու «Պաղ աղբյուրի մոտ», Շերամի «Պարտեզում վարդեր բացված», «Ճանապարհս ընկավ Տըփոլիս» և այլն:

Բարոյախրատական երգերի շարքում Ա.Բրուտյանն ընդգրկել է նաև քաղաքում մեծ տարածում ստացած քրիստոնեական, սուրբգրային դրույթներ քարոզող ու դրանցով դաստիարակող երգեր. Շիրինի՝ «Երբ գորաց տերն աստված», «Է՛յ, մոռ՛յլ Ուրբաթ».

Է՛յ, մոռյլ Ուրբաթ, քանի գաղտնիք քեզանում թաքցրին,
Որ նախարարք անունդ այդպես տխուր անվանեցին,
Գաղտնիքն աստվածային ծածկված մնաց մեջ գիշերիդ,
Հուդայի կեղծ համբույրով անմեղը բռնադատեցին:⁷

Հանդիպում են նաև *գինվորագրման երգեր* (Ջիվանի՝ «Ես հայի զավակ եմ»), *ողբերգեր* (Գիկո՝ «Թորկեր իմ խեղճ, տկլոր զիմ ճժեր»):

Երգերի ժանրային բազմազանությանը համադրվում է բանաստեղծական խոսքի տաղաչափական ձևերի հարստությունը: Ինչպես ընդունված է եղել աշուղական արվեստում, երգի ժանրային բովանդակությունն է մեծապես պայմանավորել տվյալ ոտանավորի տաղաչափական ձևը: Ժողովածուում հանդիպում են հետևյալ ձևերը՝ դյուբեիթ, վանաղզի, վանաղզի-մանի, մուհամմազ, մյուշտեզետ, դալայչի, շարքի, դաստան, սեմայի հնգյակ, սյուվերեկ, քյուրդիաստան-դյուբեիթ, եմենի, նավայի գազել, դալանդարի, ժողովրդական շարքի, ամրահի և այլն:

Անշուշտ, պետք է տարրորոշել աշուղական երգվող և չերգվող բանաստեղծությունը, քանի որ երգվող բանաստեղծությունը չի արտասանվել, այլ ստեղծվել է մեղեդու հետ անտարանջատ:⁸ Այս երգերի (հիմնականում՝ Ջիվանու ստեղծագործություններին) տաղաչափական առանձնահատկություններին ժամանակին անդրադարձել են Գ.Լևոնյանը, Մ.Աբեղյանը, Ա.Քոչարյանը, Կ.Խուդաբաշյանը: Վերջինս իր ուսումնասիրություններում կիրառել է վանկաչափական մեթոդիկան, որը հենվում է կվանտիտատիվ՝ երաժշտախոսքային տաղաչափական համակարգի վրա:⁹ «Նախ նշենք, - գրում է նա, - որ Ջիվանու երգերի տաղաչափական համակարգը շատ բարդ է ու բազմազան և չի համընկնում ամբողջությամբ ոչ հին հունական (որը դարձել է համաշխարհային) ո՛չ արուզի, ո՛չ էլ հայ ժողովրդական երգերի համակարգին /.../ Նրա ստեղծագործություններում երաժշտական տաղաչափության համակարգերը երկուսն են՝ վանկականը (սիլլաբիկ), որը արտահայտվում է ասերգային ձևի միջոցով, և չափականը, որը դրսևորվում է ձկուն մեղեդիով

⁷ Բրուտյան Ա., նշվ. աշխ., էջ 67:

⁸ Веселовский А. Три главы из исторической поэтики // Веселовский А. Историческая поэтика. М. 1989. С.155.

⁹ Худабашян К. Армянская музыка в аспекте сравнительного музыкознания. Ер. 2011. С. 186.

և պարզ արտահայտված ոտքերով: Կան երգեր, որոնց մեջ փոխեփոխ իրար են հաջորդում երկու համակարգերը»:¹⁰

Անդրադառնալով Ջիվանու կողմից օգտագործած չափական բազմաթիվ ոտքերին՝ Կ.Խուդաբաշյանը նշում է դրանցից առավել կիրառելիները՝ մեծավերջ, վերջատանջ, քողաքորբ, երկմեծավերջ, ավարտեղ, 4-րդ պեոն, համբույր, մեծասար-մեծավերջ, 1-ին խոնիկ, վերջատանջ-մեծավերջ և այլն: Չափական ոտքերի հաջորդականությունը բանաստեղծական տողերում նույնպես բազմազան է, ինչը նկատելի է նաև հայ ժողովրդական երգերում: Ըստ երաժշտագետի՝ դա ամեննին չի խանգարում երգի կայուն կշռույթի պահպանմանը, քանի որ տողի «խառնուրդը» նույնությամբ կրկնվում է մյուս տողում կամ տողամեջ: Բացի դրանից, երգվող բանաստեղծության կանոնավոր կշռույթը պահպանում է տողերի ամանակային հավասարատևությունը: Հենց այդ առանձնահատկությամբ են պայմանավորված Ջիվանու երգերի տաղաչափական կատարելությունը, ներդաշնակությունը և գեղակազմությունը:¹¹

Այս ուսումնասիրության հիմնադրույթները կարելի է ընդհանրացնել դիտարկվող ժողովածուի շատ երգերի համար՝ նկատի առնելով այն կարևոր հանգամանքը, որ Ալեքսանդրապոլի աշուղական համքարության մեջ Ջիվանին եղել է թե՛ վարպետաց վարպետ և թե՛ մեծահամբավ հեղինակություն իր ժամանակի բոլոր աշուղների համար: Հետևաբար, նրա ստեղծագործական սկզբունքներն ընդօրինակելի կամ դասական բնույթ են կրել:

Անդրադառնալով վերոնշյալ երգերի բուն մեղեդիական հորինվածքների երաժշտառձական առանձնահատկություններին՝ նախ պետք է կարևորել աշուղական համքարության մեջ ընդունված այն մոտեցումը, ըստ որի՝ այս կամ այն տաղաչափական ձև կրող բանաստեղծական խոսքը կարող էր եղանակավորվել մի քանի տարբերակներով: Այս մասին իր հուշերում արժեքավոր տեղեկություն է տալիս ալեքսանդրապոլցի աշուղ Խայաթը: Նա իր ասելիքը հստակեցնում է դոշմայի նկարագրության մեջ՝ նշելով, որ 11 վանկից բաղկացած այս ոտանավորի եղանակները մի քանիսը կարող էին լինել, ինչպես, օրինակ՝ Քեսիկ, Քեսիկ Քերեմի, շեքի, դալայի, կիրյանի: «Այս եղանակները երգելիս, - հստակեցնում է նա, - դոշմա կոչված ոտանավորներն էին կիրառում»:¹²

Ա.Բրուսյանի ժողովածուում հստակ երևում է աշուղական երգերի մեղեդիական բազմազանությունը, ինչը համապատասխանում է բանաստեղծության կերպարային, հուզական արտահայտչականությանը: Փորձենք դաստիարակել դրանք՝ հորինվածքային որոշակի չափորոշիչների կիրառմամբ:


¹⁰ Худабашян К., *նշվ. աշխ.*, էջ 187:

¹¹ Խուդաբաշյան Կ., *Աշուղ Ջիվանու տաղաչափական արվեստը*, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական չորրորդ գիտաժողովի զեկուցումների դրույթներ, Գյումրի, 2000, էջ 56:

¹² Խայաթ Զահրիյան, *Հիշողություններ աշուղների մասին, 1930, անտիպ ձեռագիր*, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, FF 1, 7829:

Հայ ժողովրդական երգին բնորոշ մեղեդիներ

Տիպական նմուշներից մեկը Ջիվանու «Ես հայի զավակ եմ» զինվորի երգը.



Փռուզիական քառալարում ծավալվող այս գոգոտրիկ երգը՝ մինիմալիստական պտույտներով, կրում է հայ գեղջուկ երգերի արտահայտչականության դրոշմ և ակնհայտորեն վկայում է աշուղի կողմից այդ երգերի արժեքավորման, ոճավորման մասին:

Նույն երևույթը կարելի է նկատել Ջիվանու «Երկու սիրուն եկան ջուրը» երգում: Սա հայ գեղջկական քնարական երգերից ուղղակի սերած նմուշ է: Կվինտային օժանդակ հենակետով էռլական միևնույն ծավալվող մեղեդուն բնորոշ են կրկնվող տերցիային քայլերը, վարընթաց սեկվենցիաները, տոնիկան հաստատող վերջնահանգերը.



Եվրոպական երգերին բնորոշ մեղեդիներ

Ինչպես հայտնի է, 19-րդ դարում ծավալվող հայ ազգային- ազատագրական պայքարի անբաժան ուղեկիցը հայրենասիրական երգերն էին, որոնք ծնվում էին քաղաքի մշակութային մթնոլորտում՝ եվրոպական համարժեք կամ համահունչ երգերի անմիջական ազդեցությամբ:¹³

Հայ աշուղները նույնպես ականջալուր էին այդ երգերին և երբեմն տուրք էին տալիս նմանատիպ երգերի հորինմանն ու կատարմանը: Ժողովածուում ևս մի

¹³ Դրանցից ամենատիպական օրինակը ՀՀ ազգային օրհներգն է՝ հորինված իտալական երգերի ոճով:

քանի նմուշ զետեղված է: Ամենահայտնի երգը Ջիվանու «Ավարայրի դաշտ»-ն է, որն այսօր էլ հաճախ կատարվում է: Տիպական օրինակ է նաև աշուղի «Այսքան տարի դու ննջեցիր» հայրենասիրական խրոխտ երգը:



B-Dur տոնայնության, 4/4 չափի մեջ անկաշկանդ ծավալվող, տիպական շեշտերով ու հանգավորումներով այս երգը, թվում է, կարող էր հորինել եվրոպայում երաժշտական կրթություն ստացած երգահանը: Ջիվանին վերստին համոզում է ունկնդրին իր լայնախոհության, ազատատենչության, հայրենասիրության վառ մղումով՝ դիմելով ժամանակակից դասական երաժշտաարտահայտչաձևերին:

Հայ միջնադարյան աշխարհիկ տաղերին բնորոշ մեղեդիներ

Ազատ մեղեդիական մտածողության վրա հիմնված մեծաքանակ երգերը թերևս ամենատիպականն են աշուղական քերթվածքների համար: Դրանք մեծածավալ հորինվածքներ են, որոնց առավել բնորոշ են հանկարծաստեղծ բնույթը, բազմակենտրոն ձայնակարգերն ու ճոխ զարդելիչները: Ա.Բրուսյանը գրի է առել Պետրոս Ղափանցու «Առավոտյան քաղցր և անուշ հովերն», Հավեսի «Բոլոր երկրներեն ինձի համար», Խայաթի «Ա՛խ, ե՛րբ պետք է երևաս», «Ա՛խ, իմ անուշ հայրենիք», Գյուլգյազյանի «Երանի թե շուտով ննջած լինեի», Կիկոյի «Թորկեր իմ խեղճ, տկլոր զիմ ճժեր», Ղարիպի «Խնդրում եմ, աղերսում եմ», ինչպես նաև Ջիվանու բազմաթիվ երգերը. «Ա՛գգ իմ, որքա՛ն նկուն մնաս», «Ավետաբեր խոսնակը հայուն», «Գնաց վրեժ առավ», «Դեռ գիշեր է» և այլն:

Տիպական օրինակներից մեկն է Ջիվանու «Դու այն երկրեն մի՛ հեռանա» հայրենասիրական երգը: Մեղեդիական հորինվածքի դրամատուրգիական լուծումները շատ խորքային են՝ կատարված երաժշտական բարձր վարպետությամբ: Ձայնակարգային հանգրվաններն այսպիսին են. երգը ծավալվում է g տոնիկայով հիպոդորիական-եոլական մինորում, սակայն բանաստեղծության յուրաքանչյուր տողը կրում է ինքնատիպ ձայնակարգային շարահյուսություն.

Առաջին տողը՝ a հիմքով փռուզիական-լոկրիական յոթնյակն է,

Երկրորդ տողը՝ g հիմքով եոլական դեկախորդը,

Երրորդ տողը՝ b հիմքով լիդիական-իոնական դեկախորդը,


Չորրորդ տողը՝ g հիմքով վերջնահաստատվող հիպոդորիական-եոլական մինորը, որտեղ *ալվա՜ն* բացականչությունը հնչում է անսպասելի ներթափանցաց

g-as-h-c² քառալարի տիրություն: Նշենք, որ քառալարերի այսպիսի հարաբերակցություն հանդիպում է հայոց շարականերգության մեջ՝ երրորդ ձայնեղանակի /Գիմ Ձա/ տիպական հարմոնիկ դարձվածքի համադրությամբ:

Չափավոր ՋիվԱՄԵԻ

Դու այն երկ - թեն մի հե - տա - -
 - նար, հա - յի ճուտ, հա - յի ճուտ,
 ուր որ նախ - նիք - - - - - նե - թեղ հի - -
 շա - - տակ - ներ կան, Մըր - տած ժա - -
 մա - - - - - նա - կըղ, կը - քա - - - - -
 ղես օ - գուտ, կը - քա - ղես օ - գուտ,
 ղես մոխ - ռի մեջ թաղ - ված հին
 կը - - - - - լակ - - - - - ներ կան:
 Մըր - տած ժա - մա - - - - - նա - կըղ, կը -
 քա - - - - - ղես օ - գուտ, ա - վա՛ղ,
 ղես մոխ - ռի մեջ
 թաղ - ված հին կը - - - - - լակ - - - - - ներ կան:

Ա. Բրուսյանի գրառումներն արժեքավորվում են նաև նրանով, որ այստեղ, բանահավաքի բարեխղճությամբ պայմանավորված, աշուղական միևնույն երգի մի քանի եղանակավոր տարբերակներ են ներկայացված: Դրանց մեջ ամենաուշագրավը Զիվանու «Ես մեկ ծառ եմ ծիրանի» երգի եղանակավորումներից մեկն է, որը ժամանակին տարածված է եղել Ալեքսանդրապոլում, սակայն հետագայում մոռացվել և մեզ է հասել այս գրառման շնորհիվ.



Ամփոփելով Ա.Բրուսյանի աշուղական երգերի գրառումների ընդհանուր բնութագիրը՝ կարող ենք ամրագրել.

Ալեքսանդրապոլի աշուղական երգերը հայ ժողովրդական երաժշտության դարավոր ավանդույթներին խարսխված ժառանգության մաս են կազմում:

Անդրադառնալով դիտարկվող ժողովածուի հայրենասիրական երգերի երաժշտական բաղադրիչի քննությանը, երաժշտագետ Ա.Բաղդասարյանը ևս նկատել է, «որ դրանց հատուկ է մեղեդիական խառը ոճը /41 նմուշ/: Վերջինիս գոյացման մեջ տվյալ դեպքում մեծ տեղ ունի վանկային մեղեդիական ոճը, որը զուգորդվում է մերթ ներվանկային ոճի, մերթ՝ և՛ ներվանկային, և՛ զարդուրդուն ոճերի հետ միաժամանակ: ...Երգերի բացարձակ մեծամասնությունը հորինված է հայ մուտղիկ երաժշտության ձայնակարգային համակարգում: Առկա են լայն ձայնածավալի՝ յոթնյակ, ութալար, իննալար, տասնալար ձայնակարգային կառույցները: Գերակշռում է դորիական-եոլական միները»:¹⁴

Դրանց մեջ յուրովի արտացոլվել, փոխակերպվել ու զարգացել են հայ ազգային երաժշտամտածողության բնորոշ շատ տարրեր ու սկզբունքներ: Մեր դիտարկումները ցույց տվեցին, որ մերձավորարևելյան ավանդույթի չափորոշիչների համատեքստում ստեղծված այդ ժառանգության մեջ ակներև են դառնում հայ ժողովրդական երգի, միջնադարյան տաղերգության, հոգևոր մոնոդիայի խորքային ակունքները և ազգային ինքնության հատկանիշները:

Պատահական չեն այդ երգերի մերօրյա մեծ ժողովրդականությունն ու ժամանակակիցների բարձր գնահատականները: Ամփոփենք ասվածը՝ մեջ բերելով հայ նշանավոր հոգևորականներից մեկի՝ հետևյալ գրառումը.

¹⁴ Բաղդասարյան Ա., Հայ աշուղական հայրենասիրական երգը Ալեքսանդրապոլում, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական վեցերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2004, էջ 101; Հայ արվեստի հարգեր, Եր., 2009, էջ 35:

«Աղեքսանդրապոլի յուշքերուս մէջ ինձ համար ամենէն աւելի նորն եւ ամենէն աւելի հայենակը, հետեւաբար ամենէն աւելի անմոռանալին է Հայ աշուղութիւնը: Պետք է շեշտեմ, որ Կովկասի մէջ, իմ տեսած հայաշատ Տփղիսի եւ Երեւանի համեմատութեամբ, Աղեքսանդրապոլի հայերը հաւատարիմ մնացած են հայրենի աւանդութիւններուն, հայրենի բարքերուն եւ Հայ աշուղութիւնն այդ պահպանուածներուն ամենէն արժեքաւորներէն մէկն է անշուշտ»:¹⁵

АШУТСКИЕ ПЕСНИ АЛЕКСАНДРОПОЛЯ В ЗАПИСЯХ АРШАКА БРУТЯНА

___ Резюме ___

___ А. Арутюнян ___

Школа ашугов Александрополя занимает исключительное место в истории армянской национальной музыки. Среди значительных образцов творческого наследия именитых ашугов, уникальными являются записи мелодий этих песен, который осуществил известный музыкант, общественный деятель Аршак Брутян. Нотированные образцы разножанровых песен около 30 ашугов, позволяют четко представить их жанровые, музыкально-стилистические, стихометрические особенности. Исследование этих записей ясно показывает наличие в этих песнях глубинные истоки армянской народной, средневековой таговой, духовной монодии и черты национальной идентичности в контексте критерий ближневосточных традиций.

Տեղեկություններ հեղինակի մասին

Հարությունյան Հասմիկ Հայկի – արվ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, E-mail: hasmik.har@mail.ru

¹⁵ Բարգէն եպիսկոպոս, Շիրակի մէջ. Աղեքսանդրապոլ, «Բիզանդիոն», թիւ 4/454, Կ. Պոլիս, յունիս 8-21, 1911:

«ԻՄ ՔԱՅԼԸ»՝ ԵԼԻՑ ԴՈՒՌ

Հայ իրականության մեջ՝ մերօրյա կյանքի վեկտորներում, 2018թ. ապրիլ-մայիսյան համաժողովրդական զարթոնքի վերաիմաստավորված ընկալումներն արդեն իսկ վկայում են նոր Հայաստանի քայլը, որ հազարավորների ու բյուրավորների քայլն էր՝ ինչ-որ բան փոխելու, հեղաշրջելու, կյանքն ավելի լավը դարձնելու և մեկընդմիջոտ նորը հաստատելու վճռականությամբ: Եվ շարժման մասնակիցներն անցյալի դեմքին շարտեցին այնքան հայտնի *այլևս երբեք*-ը: Այլևս երբեք անցյալին, որից մեզ բաժանում է երևելի ներկան, բոլոր ժամանակներում միշտ ներկա հայի հավաքական ոգին: Ուրեմն քայլել-շարժվել, ընդվզել-ըմբոստանալ ճահճացման ու մտածողության կարծրատիպերի, քաղաքական դիմակահանդեսի դեմ... Քայլել, մխրճվել նոր ժամանակի, նոր գաղափարների հոսանուտի մեջ, մինչև անգամ չհասցնել մխրճվել, քանզի ամեն ինչ այնքան արագ է փոխվում, որ երեկվա ցցունքով գլխարկդ այսօր գլուխդ այլևս չի ծածկում. իրադրություն է փոխվել բոլորի հետ, բոլորի համար ու բոլորի կողքին, ովքեր ծանծաղուտից քշեցին անցյալը մարմնավորող կլիշեավորված դեմքերն ու խոսեցին, բարձրաձայնեցին մարդկային, անսահման մարդկային մասին՝ հայի արժանապատիվ ինքնության պահանջը բերելով բաց ձեռքերի հրապարակ՝ ի հռչակումն թավշյա սիրո ու համերաշխության:

Մեզանից մեկն ի սկզբանե պատմում էր վերջում կատարվելիք բաների մասին: Խոսում էր «Իմ քայլ»-ից, յուրաքանչյուրի քայլից. ամեն մեկին հորդորում անել իր քայլը՝ որպես արարք ու արարմունք, որ տանելու էր դեպի ազատության ելից դուռ:

Այս պոթելուն ինքնահաստատման ֆենոմենը, անշուշտ, նորն է՝ ի դեմս երիտասարդության, որ բռնել է կյանքի զարկերակը և խոսում է այսօրվա արժեքներից: Եվ բնավ պատահական չէ, որ նորոգ մտածողության ու գաղափարախոսության արշավը բնութագրվում են հենց թարմ արյան, ներքին ուժերի ու հնարավորությունների գնահատման միանգամայն նոր չափականությամբ:

Այս համապատկերում ազգային-էթնիկ բնավորության պարադոքսներն ու բարդույթները միանգամայն արտամղված են *ես* հայեցակարգի գերակայությամբ, որտեղ *ես*-ը դրսևորվում է մենք-ի սկզբունքով:

Հատկանշական էր, որ քայլարշավն սկսվեց Զատիկին՝ Հիսուսի փառահեղ հարության տոնին, յոթնագնդեթ քաղաք Գյումրիից...

Այս զարթոնքն անկաշկանդ ու ազատ հայ քաղաքացու ինքնակայացում էր՝ արթնացման հեղափոխություն, նպատակի համար մինչև վերջ քայլողի, «երկրի հակառակ կողմը» տեսանողի պատմություն, որ գրվում է հենց հիմա, այս պահին (ու դեռ շարունակելու է գրվել), բայց վեր է այսրոպեական խորհրդից:

Իսկ ինչպե՞ս գորավիզ եղավ ավագ սերունդը, որի՝ տարիներով կաշկանդված, կրավորական կեցվածքն ու հայեցողական գոյակերպը տեղի տվեցին խոյաց-

ման՝ նոր սերնդի հետ դառնալով միասնական հայ ժողովուրդ՝ ազգային գիտակցությամբ: Նրանցից շատերը հրապարակում պարում էին, ոգեկոչում, գրկում ու փարվում ծանոթ-անծանոթ ջահելներին, շատերն էլ էկրանների առաջ շունչները պահած հետևում էին իրադարձությունների զարգացմանը: Նրանց՝ տառապանքից խորշումած, բայց իմաստուն դեմքերը շնչում էին մի հավատով՝ այս զարթոնքն ու թափը հնարավոր չէ կասեցնել. տերը ողջ ժողովուրդն է՝ «Մենք ենք տերը մեր երկրի» գիտակցմամբ:

Շարժման սկզբում կային նաև միայնակ կանգնած մարդիկ՝ հիասթափված, օտարված, «դատարկված բնի» համախտանիշով: Հանրային միայնության զգացումն աստիճանաբար վերածվեց հաղթողի ինքնագիտակցությամբ հավաքական ցնծության ու մտասրբանչության: Աստիճանաբար ձևավորվեց տոնի մշակույթ, որը վերացրեց միայնության զգացումը: Ոչ մեկն իր կանգնելու տարածքը չէր զիջում մյուսին. չէր տրտնջում, հոգնած, ուռած ոտքերով անգամ չէր ավստսում, որովհետև դա իր քայլն էր, ոչ ուրիշինը:

Հեղափոխությունը մի շերտի խնդիր չէր, այլ ողջ ժողովրդի: Հասարակության բոլոր սոցիալական շերտերը ներգրավված էին ընդհանուր շարժման մեջ՝ զարթոնքի մի ողջ սերունդ, մանկասայլակով մայրեր՝ դեպի ապագա տանող երեխաներով, հեծանվորդներ, հաշմանդամություն ունեցող անձինք, խաղաղապահ զինվորներ, Ապրիլյան պատերազմի հերոսական տղերք, ապա և հրապարակ մտան նաև հոգևորականները՝ իրենց հոգևոր կոչմանն ու առաքելությանը հավատարիմ՝ սահմանային իրավիճակներում ժողովրդի կողքին լինելու գիտակցմամբ: Ավելի հետո համաժողովրդական շարժմանը միացան նաև ոստիկանները, և այս միացումը բեկում մտցրեց հեղափոխության ընթացքի մեջ: Իսկ շարժմանը միացած սիրված, ժողովրդի կողմից չվարկաբեկված դեմքերը՝ արտիստներն ու երգիչները, նաև սփյուռքի հեռավոր ափերից հայրենիք եկած մշակութային անձինք ըստ էության համաժողովրդական սիրտ հերոսներ դարձան: Եվ բոլորի շուրթերը վանկարկում էին՝ «Քանի դեռ միասին ենք, մենք անպարտելի ենք»:

Միանգամայն աննախադեպ էր սփյուռքի ծավալային մասնակցությունը. համայն հայության արթնացումը նշանավորվեց նրանով, որ օրեր շարունակ հայ համայնքը՝ ի սփյուռս աշխարհի, ցույցերով ու հավաքներով հետևում էր հայրենիքում տեղի ունեցող հեղափոխական զարգացումներին՝ նույն պահանջների ոգով միանալով իր ժողովրդին: Վկայություն, որ հեղափոխությունը նաև համասփյուռքյան էր: Սփյուռքահայերի գնահատմամբ՝ մինչև իսկ Ապրիլի 24-ին հայերն այսքան համախմբված ու միասնական, այսքան զանգվածային չեն եղել: Ուրեմն սա վերածնունդ նախանշող ճանապարհ է, մեր երագած արդար հայրենիքի վերջնական հաղթանակի ճանապարհը:

Մինչև իսկ արտագնա աշխատանքի մեկնածներն ու տարագիրները հարգատների ձեռամբ պաստառներ էին պատվիրել (Վարդենիկ – Չեյաբինսկ, Գլենդել – Երևան...), որոնցով իրենց միաբան համերաշխությունն ու համակրանքն էին հայտնում հեռուներից որպես ուղերձ:

Համախումբ զանգվածը ինքնասպասարկվում էր, ոչ թե լուրջ էին մի տեղում, այլ միշտ շարժում կար, մեկը մշտապես լրացնում էր մյուսի տեղը, որ բացակա տարածք չլիներ:

Ոչ մի անգամ այսքան եռագույն չէր ծածանվել հայրենիքում և հայրենիքից դուրս: Ուշագրավ է խարիզմատիկ առաջնորդի գնահատականը. *«Վերջին քսան տարվա ընթացքում հայր հային այնքան չի սիրել, ինչքան այս օրերին է սիրում: Մա այլևս քաղաքական գործընթաց չէ, սա այլևս իշխանության խնդիր չէ. սա հայ ժողովրդի, ՀՀ քաղաքացիների փոխադարձ սերը և հարգանքը վերագտնելու փառասանծ, փառահեղ հաղթանակ է»:*^{*}

Բոլորիս աչքի առաջ ստեղծվեց զուգահեռ իրականությունների Հայաստան՝ հին Հայաստան և հեղափոխությամբ փրկված Հայաստան: Մինչ այս անսեռ, անգաղափար, արժեքային ճիշտ կողմնորոշում չունեցող հին համակարգը մշակութային ճիշտ արժեքներ կրողին վտարել էր լուսանցք: Հարկ էր ծառայել նոր իրողություններին, ամբողջատիրական մշակութազրկումից ծնել մշակութային հարալեզներ... Հնից եկող ոչ մի կարգախոս, անգամ ազգային-ազատագրական ոչ մի երգ, նոր Հայաստանում ծնվեցին նոր երգեր ու նոր կարգախոսներ...

Թավշյա, ոչ բռնի, ժողովրդական, սիրո ու համերաշխության այս շարժումը էպիկական տեքստ դարձավ ու ասքի նոր տարբերակ սերունդների համար: Անմիջապես ծնվեց թավշյա հեղափոխության հիմնը՝ «Ես այսօր անում եմ իմ քայլը...»:

Բազմաշերտ հավաքներն ու ցույցերն աչքի էին ընկնում բացառիկ ինքնակազմակերպվածությամբ, որոնք դրսևորվում էին բողոքի տարաբնույթ գործողություններով. ճանապարհներն ու կամուրջները փակելու և ազդանշան տալու, կանանց նախաձեռնած կաթսաների ու շերեփների միմյանց կեսգիշերին խփելու, նկարիչների նախաձեռնած «Արդարության գույներ» ցուցադրանք, երբ մեծածավալ կտավի վրա յուրաքանչյուր ցուցարար կարող էր յուրաներկով նկարել և ուղերձներ գրել... Ի վերջո, կտավը վերածվեց պեճկլտուն գույների ու ցանկությունների պաննոյի: Ռիթմիկ կրկնվող հանգերգ կար՝ «Վերադարձ հայրենիք»:¹

Հանրային նոր վարքի փոփոխությունները ձևավորվեցին ցանկության, հինն անհնազանդություն հայտնելու և դիմադարձելու ոգով, ու այս ամենը՝ մշակութային դրսևորումներով՝ երգ ու պարով, ծափերով ու դոփապարով, այսինքն՝ փոխվել է անհնազանդություն արտահայտելու երբեմնի մեթոդաբանությունը, քաղաքացիության ու սոցիալական անիրավության դեմ համերաշխության պայքարի դուրս եկածներն արտահայտվում էին արվեստի սուբլիմացիոն ձևերով (բողի արտ. եռագույնի իմիտացիոն կիրարկում՝ եռագույն, կաշուն թղթերով սրտիկներ՝ դեմքերին, թևերին, ակնոցների վրա եռագույնի դրոշմներ, եռագույնով փաթաթված նորամանուկներ փշալարի առջև համբուրվող զույգեր, փողոցում պառկած ջահելներ, որոնք պաշտպանում էին կյանքի ճանապարհը. էլ ինչպե՞ս կարելի էր նրանց վրայով անցնել):

^{*} Երևանի Ազատության հրապարակում 2018թ. ապրիլի 25-ին Ն. Փաշինյանի ունեցած ելույթից:

¹ Հովհաննիսյան Ռ., ԴԱՆ 2018, ապրիլ-մայիս, ըստ հանրահավաքների մասնակից Քնարիկ Գաբրիելյանի:

Շարժման ընթացքում տեղի ունեցավ առաջնորդի կերպարի բյուրեղացում և սիմվոլացում. փշալարերից խոցվեցին նրա թևերը, մարմինը. նա անցավ չարչարանքի ուղի՝ փշե պսակը գլխին: Աստիճանաբար աճեց այնքան, որ դարձավ ժողովրդի երազած հերոսը: Եվ ժողովուրդը դրսևորեց խելակորույս հավատ՝ նրա խարիզմատիկ կերպարի հանդեպ, որովհետև ոգեշնչված ամբոխն ամենագոր ուժ է, որը ծնում է մտածողության ու իրականության փոխակերպումներ: Նրան ոչինչ չի կարող սպառնալ այդ պահին: Մեծ հակում ունի գործնական քայլերի: Ինչ էլ լինի, իշխանությունը վաղ թե ուշ կընդունի ամբոխի ուժը:²

Գիտակցականը տարրալուծվեց ամբոխի մեջ, հեղափոխության հզոր ազդեցության ալիքի տակ խմբային արձագանք տեղի ունեցավ, թեև հազարավոր անհատներ միայնացից հեռու էին գտնվում: Ուշագրավ է, որ թեև ամբոխի մարդու մեջ գերակայում էր անգիտակցականը, բայց այն ամփոփում էր ողջ մարդկության փորձը: Անգիտակցականի հիմքերը խարխլվեցին, ու բոլորը դարձան միանման:

Գործեց հանրային պատասխանատվության զգացումը, և երբ շարժման գագաթնակետին մի օրով առաջնորդն ազատագրկվեց, ժողովուրդն ավելի համախմբվեց. դարձավ անհանդուրժող ու ավելի համառ: Անհնարն այլևս գոյություն չունեւ: Թափ առած շարժումն աննախադեպ ընդլայնեց աշխարհագրությունը. հայությունն սպաստական ակտիվ վիճակի մեջ էր և սկսեց հյուսել անհավանական պատումներ խարիզմատիկ հերոսի մասին: Իրենց սիրով ավելի ուժեղ դարձրին նրան: Սա արդեն տասն օր առաջվա Հայաստանը չէր:

Ամբոխը լույս է ճառագում, մշակույթի լույսը: Մենք կարծում ենք, թե ամբոխը գտնվում է անկանխատեսելիության սահմանագծին՝ ունենալով էներգիայի մեծ ներուժ: Ամբոխի ուժը առկա՝ այսօր և հիմա, լուրջության ուժն է, կլանելու և չեզոքացնելու ուժը, հենց այդ ուժն էլ գերակայում է նրա բոլոր հակումների ու միտումների մեջ:

Առաջնորդը հեղափոխական զանգվածին անընդհատ պահում էր իմաստային դաշտում, շարունակ տեղեկություն էր տրամադրում՝ ապահովելով նրա սոցիալականացումն ու մշակութային մակարդակի բարձրացումը: Առաջնորդը խրախուսում էր զանգվածների քաղաքացիական ակտիվությունը: Նա կանխիմացավ, որ ժողովուրդն սպառել է իր սոցիալական էներգիան, կլանեց ամեն տեսակ գործուն ակտիվություն ու վերստեղծեց մշակութային իմաստների արտադրություն: Նորի պահանջ, երբ իմաստը հերիք չի անում: Անհրաժեշտ էր ստեղծել իմաստի իրականություն: Ժողովուրդն ըստ էության ինքնահաստատվում է ճշմարտության և նոր արժեքների համատեքստում: Հրապարակում հավաքվածները կատարելության ուղիով տարան իրենց առաջնորդին: Նրանք ազդեցին միմյանց վրա և ստեղծեցին աֆեկտիվ դրդվածության բարձր մակարդակ: Սոցիալական ճնշման ներքո եղած անձը զանգվածի մեջ դարձավ համարձակ իր վարքում հերոսացումից մինչև տագնապ:

Հրապարակը դարձավ թատերաբեմ հավաքվածների համար, իսկ ժողովուրդը և՛ հերոս էր, և՛ հանդիսատես:

² Лебон Г. Психология масс. М. 2008. С. 43.

Իշխանությունը շարժման զարգացման ընթացքին անտեղյակ էր այնքան, որ չկարողացավ վերահսկել իրավիճակը: Այդ ամենը տեղի ունեցավ պայթյունային արագությամբ, վերահսկումից դուրս: Նախկին իշխանությունն իրականում չէր ուզում հրաժարվել իր հզորության պատրանքից, չէր ուզում տեսնել ավելի վտանգավոր զարգացումները: Բայց ժողովուրդը լուռ զանգված չէ, նրա լռությունը գործուն է: Նա, իր լռությամբ հանդերձ, արգելում է ուրիշներին խոսել իր անունից:

Այսքան եռագույն երբևէ չէր ծածանվել երկրում ու սփյուռքի այն համայնքներում, որտեղ ապրող ու երագող հայեր կան: Հայը գտել է իր ստեղծարար էությունը, և պայքարի ստեղծագործությունը նրանից անբաժան է:

Հայ ժողովրդի կամքը ուստեց և ապշեցրեց ողջ աշխարհին՝ մնալով քաղաքակրթության ոլորտում: Տեսնել էր պետք հրաշքի իրականություն դառնալը: *Ինչպես աստվածաշնչյան Մովսեսը 40 տարի առաջնորդեց իր ժողովրդին և նրան դուրս բերեց Եգիպտոսի գերությունից՝ տանելով Ավետյաց երկիր, այդպես էլ մեր նորօրյա առաջնորդը գերարագությունների այս ժամանակում, 40 տարին քառատուն օր դարձրած, ժողովրդին տարավ բաղձալի հաղթանակի:*

Նույնիսկ Նոր կտակարանում խարիզմատիկ առաջնորդը բնութագրվում է որպես սուրբ հոգով համակված, աստվածային նախասկիզբ ունեցող անձնավորություն, իսկ սուրբ հոգու պարզներն են խաղաղությունը, համբերատարությունը, ազնվությունն ու բարությունը, այս պարզների մեջ առավելագույնը սերն է: Մերը, հավատը և ջանքը հմայակերպարը բնութագրող մեծություններ են:

Հաղթանակի օրը ողջ հրապարակը սպիտակ վերնաշապիկներով էր. օրը պատմական էր. ծափերն ու շչակներն ազդարարում էին համայն հայության ցնծությունը՝ դիմելով ու թմբուկներով, շեփորով ու գալարափողերով: Զանգվածային տոն էր, հայտնվեցին պաստառներ՝ «Հայաստան՝ սիրո հեղափոխություն», «Ես եմ Նիկոլը»: «Ոչ մի զիջում»... Մարդիկ սկսեցին խոսել հույզերի ու զգացմունքների լեզվով: Անծանոթներն անգամ գրկափարվում էին: Ցուցարարներն ասում էին մեկմեկու՝ վերջապես տեսանք երջանիկ դեմքեր: Վանկարկում էին՝ «Ազա՛տ, ուրա՛խ Հայաստան»: «Վե՛րջ թալանին»: «Առանց զոհերի հաղթանակ»: Բոլորը միտված էին դեպի ապագա: Եկել էր շրջադարձերի ու պատմական վերելքի ժամանակը, և այդ ժամանակը բաց էր կյանքի հոսքի առաջ:

«Իմ քայլը» նախաձեռնությունը սիմվոլացնում էր արդարությունը, իրավունքը, ազատությունը, նաև արագությունը՝ մտասքանչության տարրով, բայց սա ոչ թե զվարճանք էր, այլ մասնակիցների պատասխանատվության զգացման բռնկում, կյանքը շապիկի մոտիկությամբ ու տաքությամբ զգալու, անձին հանրային կյանք ներգրավելու միտում:

Սիմվոլացված էր քայլն ավելի, քան քայլողը: Պատահական չէ, որ հեղափոխության սիմվոլներից մեկը՝ Լոռու մարզի Արջուտից քայլարշավին միացած Չալո շունը, վերանվանվեց Քայլո:

Քայլերթ ու ավտոերթ, բեռնատար մեքենաների թափքերին մարդիկ՝ երեխաները գրկերին, բարձրահարկ շենքերի տանիքներին հայտնված երիտասարդներ, ու բոլորը միակամ պահանջում էին նոր արժեքների հաստատում...

Շարժման սիմվոլացումն արտահայտվում էր երիտասարդների արագ ու նպատակային գործողություններով (քայլելու ընթացքում փակում էին ճանապարհները, տարածության մեջ արագ կողմնորոշվում՝ թվային տեխնոլոգիաների շնորհիվ տեղեկատվական էներգիան տարածելով): Նրանք էլ ցանկության հեղափոխության հեղինակներն էին, արարողները, որ մի վայրկյանում հայտնվում էին այլ տարածության ու չափումների մեջ և իրենց հետ տանում անտանելին. թվում է՝ հնից անպակելին՝ անցյալը մեկընդմիջտ մերժողի հազարավոր ռիթմիկ ձայների ու ծափերի ժայթքումով: Այո՛, իրապես *ծափերով հեղափոխություն* է՝ արգասաբեր և փոխհատուցող, արագ կողմնորոշմամբ:

Հրապարակում հնչում էին սովորական, հասարակ, ամենօրյա կյանքի պահանջի սրտամոտ կարգախոսներ՝ *«Մի մարդ կարող է փոխել իրականությունը, և այդ մարդը դո՛ւ ես: Հավատա՛ ինքդ քեզ»:* Այս հեղափոխությունը հնարավոր չէ կանգնեցնել, որովհետև տերը ժողովուրդն է:

Ոստիկաններին ուղղած կարգախոսներ՝ *«Ձե՛նքդ դիր, մերժի՛ր Մերժին»*, *«Ոստիկանը մերն է»:* *«Մենք պայքարում ենք հանուն քաղաքացիների հաղթանակի»:*

Այս հեղափոխության կարգախոսներն ու սիմվոլներն առավելապես մշակութային էին՝ քրիստոնեական բարոյաբանության հայեցակետից դիտված:

Ուշադրության արժանի է հատկապես ժողովրդի սիրո ընտրյալի հռետորաբանությունը, որին սոցցանցերում ու էլեկտրոնային պարբերականներում մշակութային ու քաղաքական կյանքի շատ վերլուծաբաններ արդեն հասցրել են անդրադառնալ: Նա միանգամայն նոր հռետորաբանություն բերեց. խորապես ըմբռնեց ու ճանաչեց երիտասարդությանը և չղավաճանեց նրա ընկալմանը, դարձավ նրանցից մեկը: Վերցրեց ուսապարկը, քայլաչափն ու *սելֆիի* ձողը և քայլեց նրանց կողքին:³

Առաջնորդը բարձր անհանգստության, ժողովրդին արթնացնելու, սոցիալական ու քաղաքական զգոնությունը չկորցնելու ուղերձ հղեց բոլորին՝ ասելով. *«Հայաստանի Հանրապետության հպա՛րտ ու արժանապատի՛վ քաղաքացիներ, դո՛ւրս եկեք փողոց ու տե՛ր կանգնեք ձեր ազատությանը, դո՛ւրս եկեք փողոց ու տե՛ր կանգնեք ձեր հայրենիքին, դո՛ւրս եկեք փողոց ու տե՛ր կանգնեք ձեր հաղթանակին»:* Ըստ էության, փողոցը դարձավ կյանքի ճանապարհ: Առաջնորդը ճիշտ օգտագործեց ժամանակի գիծը՝ մխրճվելով իրական ժամանակի մեջ: Հոգեբանական առումով նրա խոսքի ռազմավարությունը կառուցված էր միանգամայն նոր շեշտադրմամբ, ներագդու էր, ուստի և ծնվում էր այն, ինչ հնարավոր էր ու անհնար:

Միմվոլացված էին նաև շարժման մասնակիցների պահանջմունքները, սոցիալական դիրքորոշումները, զուտ անհատական, նաև խմբային ու մարդկային ցանկությունները: Ի վերջո սիմվոլացված են ազատության նորոքյա ընկալումը, ազատության գաղափարի ինքնիրացումը՝ տարբեր դրսևորումներով:

³ <http://thearmenians.am/hy/blog/tereri-u-vorberi-jamanaky-arayik-manukyan>

Այսպես՝ բեռնաթափով հրապարակ բերված Ալազյազի ձյունը՝ երազանքի իրականացման ու մաքրության խորհրդանիշ, անհաղթահարելի թվացող բարձունքի նվաճում:

Շարժման առաջնորդի ձեռքի վիրակապին սրտաձև արյան դրոշմը՝ անձնվիրումի խորհրդանիշ...

Նրա ազատ արձակվելուց հետո հրապարակից բաց թողնված աղավինների ճախրը երկնքում՝ ազատության նշանակ:

Մայրաքաղաքի հրապարակներից մեկում երթի մասնակիցների առջևից գնում էր փայտե մեծ խաչի տակ կքած, Հիսուսի կերպն առած երիտասարդը...

Սիմվոլացված կերպարներից էր նաև շարժման իմաստությունը կրող ժողովրդի տատը՝ Վրանուհի մայրիկը, որ ներքին հիացմունքով էր խոսում զարթոնքի մասին. «Այնքա՛ն ուրախ եմ. հենց մտնում եմ ժողովրդի մեջ, ուրախությունից բուժվում եմ»: Հրապարակում բարձրացել էր միջին թվաբանական երջանկությունը: Խորհրդանշական էր, որ հավաքների ժամանակ միմյանց կորցնողներն իրար գտնում էին հրապարակի մեծ ժամացույցի տակ: Սա ժամանակի հանդիպումն էր, սերունդների համերաշխության հանդիպումը:

Ամբողջը սիմվոլիկա էր և պաթոս: Անշուշտ, շարժման ընթացքում գեներացվում էին միմյանցից անբաժան ազգային գաղափարախոսությունն ու քրիստոնեական բարոյաբանությունը: Ըստ ազգագրագետ Հ. Խառատյանի՝ իրականում գաղափարախոսություն կա, որը կարելի է անվանել արժեքների փոփոխության գաղափարախոսություն: ...հայկական հեղափոխությունը կարելի է անվանել արժեքների հեղափոխություն: Հիմնական խնդիրը քաղաքական և հասարակական մշակույթի արժեքների փոփոխությունն է, որոնք արտացոլված են հեղափոխության արժեքային բնութագրիչներում՝ արդարության հեղափոխություն, վերածննդի հեղափոխություն, զարթոնքի հեղափոխություն, արժանապատվության հեղափոխություն, սիրո հեղափոխություն, սիրո և համերաշխության հեղափոխություն, սիրո և բաց սրտերի հեղափոխություն, ապրելու հեղափոխություն: Հեղափոխության գաղափարը նպատակը, իմաստը հասարակական նոր մշակույթի ձևավորումն է, և այն իսկապես կարելի է անվանել արդարության, մարդու արժանապատվության, կարևորման, արժևորման, հասարակական համաձայնության հեղափոխություն: ⁴

Բոլոր սիմվոլները քաղաքական բնույթի էին և դարձան մեծ նախաձեռնությունների հիմք:

Ներկայում առաջնահերթային հարց է՝ ինչպե՞ս պահպանել հեղափոխության արժեքներն ու դարձնել կենսամշակույթ:

Հայաստանում ժողովրդավարական սկզբունքների և արժեքների ձևավորման համար թավշյա հեղափոխությունն ունի շրջադարձային նշանակություն, սակայն հանրության շրջանում մտքի և վարքագծի հեղափոխությունն ունի հավասարազոր, եթե ոչ ավելի մեծ նշանակություն ժողովրդավարության ամրապնդ-

⁴<http://hetq.am/arm/news/88819/hranush-kharatyan%E2%80%A4-haykakan-hexapokhutyun-arzheqneri-hexapokhutyun-e.html>

ման ու կայացման համար: Հեղափոխության ժամանակ հռչակված արժեքների և սկզբունքների հաղթանակը Հայաստանում ամենօրյա գործընթաց է, որը պետք է իրականացնի ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի: Քաղաքական, համակարգային հատվածում տեղի ունեցող դրական տեղաշարժերը լիարժեք արդյունք չեն տա, եթե դրանց կրողը չդառնա քաղաքացին:⁵

Հետևաբար մտքի, վարքագծի, մտածողության հեղափոխությունը Հայաստանում այն երկար ու բարդ ճանապարհ ունի անցնելու...

Այսպիսով, հողվածում անդրադարձել ենք, թե ինչ ոգեբխում ունեցավ հրապարակում հավաքված մեր ժողովուրդը՝ 2018թ. ապրիլ-մայիսյան համաժողովրդական զարթոնքի օրերին՝ նոր ժամանակի, նոր գաղափարների ու արժեքների հռչակումով: Կյանքի նոր վեկտորներն ուղղորդվեցին դեպի ապագայի Հայաստան, ուր ազգային արժեքանության հավատո հանգանակը ազգ-մշակույթ դիրքորոշումն է: Ըստ էության *Իմ քայլը* հասարակական-քաղաքական շարժումը դարձավ Ելքի դուռ համայն հայության համար:

«МОЙ ШАГ» - ДВЕРЬ НА ВЫХОД

____ *Резюме* ____

____ *К. Саакян, Р. Оганнисян* ____

В статье рассматривается духоизъявление армянского народа, вышедшего на площадь в дни всенародного пробуждения в апреле-мае 2018 г., в контексте нового времени, новых идей и ценностей. Новые жизненные векторы были направлены в будущее Армении, где кредо идеологии национальных ценностей утвердился на позиции нация-культура. По сути, инициатива Мой шаг стала Дверью на выход для всего армянства.

Տեղեկություններ հեղինակների մասին

Սահակյան Կարինե Արամի – հ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի

հայագիտական հետազոտությունների կենտրոն, Շիրակի պետական համալսարան,

E-mail: sahakyanani@mail.ru

Հովհաննիսյան Ռոզա Պողոսի – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական

հետազոտությունների կենտրոն, E-mail: vard-rosa@mail.ru

⁵ <https://factor.am/60109.html>

Առաջին երեխան վերջին տիկնիկն է:
(ժողովրդական)

Տիկնիկը՝ որպես մանկանոցի ակտիվ կերպար, ունի կիրառական մեծ նշանակություն: Հատկանշական է վերջինիս մարդկային կերպարանքը՝ երեխայի նմանությամբ ստեղծված:

Ըստ էության, տիկնիկի մուտքը մանկաշխարհ, հատկապես մանկանոցի տարածք, պայմանավորված է մասնավորապես նրա փոքր լինելու իրողությամբ և երեխայանմանությամբ: Տիկնիկը՝ որպես ակտիվ *անդամ*, գերակա է թե՛ հայկական, թե՛ անգլալեզու միջավայրերում:

Երեխաների լեզվամտածողության մեջ տիկնիկն անձնավորված է, որին նա բնական շնչով, անկաշկանդ պատմում է իրեն հուզող երևույթների ու դեպքերի մասին: Տիկնիկը ներունակ ընկեր է ու ունկնդիր երեխայի համար: Այս համատեքստում ուշագրավ է *խաղալ տիկնիկի* հետ /play with a doll/ արտահայտությունը: Ի դեպ, հետ կապը ինչ-որ տեղ ևս անձնավորման երանգ է հաղորդում, թեև հիմնային իմաստով մատնանշում է միասնության, գործողության փոխադարձության գաղափար:

Ըստ ժողովրդական պատկերացման՝ գեղեցկադեմ մարդուն, հատկապես երեխային կարելի է *տիկնիկ* կոչել՝ հաշվի առնելով նրա նրբակազմ, փոքրամարմին լինելու իրողությունը: Համեմատություն ոճական հնարով այն կարող է հանդես գալ՝ *սիրուն է, ինչպես տիկնիկը, տիկնիկի պես կամ տիկնիկի /նման/ գեղեցկություն ունի* և այլն:

Մեր կատարած բանագիտական ուսումնասիրությունները վկայում են, որ տիկնիկն ունի երկակի նշանակություն.

- *երեխան որպես տիկնիկ մոր համար,*
- *տիկնիկը որպես երեխա երեխայի համար:*

Ուշագրավ է այն, որ երկու դեպքում էլ շեշտվում են թե՛ երեխան, թե՛ տիկնիկը: Լեզվաոճական տեսանկյունից այս ամենը կարող է այլ մեկնություն ունենալ: Առաջին դեպքում՝ *երեխան որպես տիկնիկ մոր համար* կարելի է համարել թե՛ որպես փոխանունություն, թե՛ որպես փոխաբերություն: Երկրորդի դեպքում երեխան անձնավորում է իր տիկնիկին:¹

Մեղմ անդրադառնանք *անձնավորում* ոճական հնարին, քանի որ մեր կողմից դիտարկված տեքստերում այն ամենահաճախ է հանդես գալիս: Անձնա-

¹ Մատիկյան Հ., Տիկնիկի գործառնությանն նշանակությունը մանկանոցում, «Մարդացած տիկնիկը ժողովրդական հեղինակային հրաշապատում հեքիաթում», 9-րդ հեքիաթագիտական գիտաժողով, 22-23 դեկտ., Եր., 2017, էջ 15:

վորումը ոճական այնպիսի հնար է, երբ իրերին, երևույթներին, կենդանիներին վերագրվում են մարդկային հատկանիշներ: Ֆ. Խլղաթյանի «Ոճաբանական տերմինների բառարան տեղեկատու»-ում նշվում է հիշյալ դարձույթի տարբերակման երեք տեսակ՝ *բարատնություն*, երբ առարկային մարդկային բարք, հոգեկան ապրումներ են վերագրում, *դիմատնություն*, երբ իրերն օժտվում են ներգործելու հատկությամբ, *կերպարատնություն*, երբ անցյալի երևույթները կամ անգո հասկացությունները կերպարանավորվում են²: Կարծում ենք՝ նշված տեսակներից երկուսը (*բարատնություն*, *դիմատնություն*) սերտ առնչություն ունեն մեր խնդրո առարկային:

✓ տիկնիկը ունակ է լաց լինելու, քնելու, խաղ կապելու,

✓ տիկնիկը հրաշագործ, օգնական կերպար է:

Հատկանշական է, որ վերոնշյալ դարձույթի չեզոքացման միտում է նկատվում, քանի որ նորոգյա տիկնիկները իրապես օժտված են խոսելու, ուտելու, երգելու, քնելու կարողություններով:

Տիկնիկ բառային միավորը հաճախ է հասցեագրվում մանկահասակ աղջիկ երեխային: Մանկական բանահյուսական տեքստերում, մասնավորապես օրորոցայիններում, վերջինս ունի առատ բաշխվածություն: Մեջբերենք օրինակներ՝ քաղված հայ և անգլալեզու օրորոցային տեքստերից.

Օրոր, օրոր, *իմ տիկնիկ՛կ*,

Օրոր, օրոր, սիրունի՛կ,

Թաթիկներդ մի՛ շարժիր:

Աչիկներդ պի՛նդ փակիր:

Տիկնի՛կ ջան, Շուշի՛կ ջան,

Նանի՛կ արա անուշիկ,

Տիկնի՛կ ջան, Շուշի՛կ ջան,

Նանի՛կ արա անուշիկ, ծիկ:³

Hushy baby, *my doll*, I pray I pray you don't cry,

And I'll give you some bread and some milk by and bye.

Տեքստերում նշված *տիկնիկ* դիմելաձևը փաղաքշանքի, գորովանքի միջավայր է ստեղծում:

Ուշագրավ է այն իրողությունը, որ երեխան օրորասացի նմանությամբ օրորոցային է երգում իր տիկնիկի համար՝ փորձելով ապահովել վերջինիս խաղաղ ու անորոքաբեր քունը: Բանահավաքչական աշխատանքների ընթացքում գրառել ենք երկուսից մինչև վեց տարեկան երեխաների տիկնիկախաղը, նրանց քնամուտի երգեր երգելը: Երեխաները մինչ տիկնիկներին քնեցնելը կատարում էին նախաքնային գործողություններ. Լողացնում էին նրանց, բարուր անում, փաղաքշանքի խոսքեր ասում և

² Խլղաթյան Ֆ., *Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու*, Եր., 1976, էջ 9:

³ Հայկական օրորոցային գոհարներ, Եր., 2015, էջ 25:

օրորոցային երգում: Ի դեպ, օրորոցային երգը հաճախ հնչյունային կամ մեղեդային էր մանկահասակ երեխաների շրջանում: Երեխաների երգած օրորը ներառում է ինչպես հայ, այնպես էլ այլալեզու բառային միավորներ: Նկատելի է մի հետաքրքիր հանգամանք. տիկնիկների՝ իբրև թե շնչավոր էակների հետ շփման ընթացքում երեխաներն ակտիվ ասացողի դերում են և հանպատրաստից երգային նյութեր են հորինում:

Տիկնիկը շնչավոր դիտելը մանկանոցի ամենակայուն հավատալիքներից է: Նորմանդիայում Նապոլեոն Երրորդի ժամանակներից պահպանվել է մի տիկնիկ, որի անձնական իրերի թվում են Փարիզից տիկնիկին նրա փոքրիկ տիրուհու ուղարկած դրոշմանիշներով նամակները: Այս անձնավորման–մարդացման շնորհիվ տիկնիկը նպաստում է այլաշխարհիկ իրականության ստեղծմանը, օգնում անձնատուր լինելու երևակայությանը և ապրելու մի ավելի կատարյալ՝ հորինված աշխարհում:⁴

Ըստ հեքիաթագետ Ա. Ջիվանյանի՝ մանկագրության մեջ կան ինչպես տիկնիկի մարդացման, այնպես էլ մարդու տիկնիկացման հնարներ: Կախված հեղինակի ասելիքից և ժանրային միջավայրից՝ այս մետամորֆոզները տարբեր բնույթ և դրսևորում ունեն:⁵

Մեջբերենք մեր գրառած հետևյալ նմուշը: Ասացողի դերում վեց տարեկան Գայանեն է, իսկ ունկնդիրը նրա երկու տարեկան տիկնիկը՝ Մարիշը:

Բայու, բայու, բայուշկի,

Տի մայա Մարուշկի:

Օրորոցային երգ ասացողը (տվյալ դեպքում՝ Գայանեն) տեքստում նշում է տիկնիկի անունը: Երեխա օրորասացը, ապրելով ռուս իրականության մեջ, օրորոցային տեքստը հյուսում է ռուսերենով: Ինչպես նկատելի է, տեքստը հանգավորված է:

Հարկ է նշել այն, որ տիկնիկը, բացի իր հիմնական գործառնությունից, ունեցել է նաև պահպանական նշանակություն: Հայ սովորութամշակութային կենցաղում հայտնի է ծոռտից, լաթից, բահից, փայտի ձողերից պատրաստված տիկնիկի ծիսական նշանակությունը. այն ունեցել է երեխայի պահպանման գործառնություն:⁶

Տիկնիկը աղջիկ երեխաների մենաշնորհն է, թեպետ կան և եղել են տիկնիկներ՝ տղա երեխաներին հասցեագրված:

Մանկահասակ աղջիկների մեծ մասի համար տիկնիկն ունի նաև ունկնդրի դեր: Այս հանգամանքը նկատելի է ինչպես բանահյուսական, այնպես էլ հեղինակային ստեղծագործություններում: Մեջբերենք վերը նշյալը հաստատող դրվագ Ս. Կապուտիկյանի *Ինձ լա՛վ լսիր, ա՛յ տիկնիկ* բանաստեղծությունից.

⁴ Ջիվանյան Ա., *Մետամորֆոզներ. Ոսկերեր տիկնիկներից մինչև «Կրակովի տիկնիկագործը»*, «Մարդացած տիկնիկը ժողովրդական և հեղինակային հրաշապատում հեքիաթում», 9-րդ հեքիաթագիտական գիտաժողով, 22-23 դեկտ. 2017, Եր., էջ 25:

⁵ Նույն տեղում:

⁶ Միմոնյան-Մելիքյան Լ., *Տոմարային ծիսաշար*, հ. 2, Եր., 2007, էջ 164:

Ինձ լա՛վ լսիր, ա՛յ տիկնիկ,
 Տես, թե ի՞նչ եմ ասում քեզ,
 Արդեն մեծ ես, մեծ աղջիկ,
 Բայց դեռ ոչինչ չգիտես:⁷
 Տիկնիկը լավ խաղընկեր է մանկանոցում.
 Տիկնիկ ունեմ՝ ծաղրածու է,
 Քիթը հավի ներկած ձու է,
 Հագնում է փքված մի շոր,
 Կոշիկներն են խոշո՛ր, խոշո՛ր:
 Երբ նրա հետ ես խաղում եմ՝
 Ուրախ-ուրախ ծիծաղում եմ:⁸

Տիկնիկն ունի գործառությանն նշանակություն մեր կողմից քննվող հեքիա-
 թանյութի շրջանակում. նրան վերագրվում են մարդկային գծեր:

Մեջքերենք հատվածներ *Տիկնիկ Չանթողիկը և աղջիկ Լիլիթը* հեքիաթից.

«Լիլիթը շատ տիկնիկներ ունի, բայց նա ամենից շատ սիրում է Չանթողի-
 կին: Ոչ միայն, որ նա շատ գեղեցիկ էր, այլև նրա համար, որ նա շատ մաքրասեր
 էր: Ոչ միայն մաքրասեր էր, այլ նաև կովարար չէր, ու ոչ մի վատ բառ բերանից
 դուրս չէր գալիս: Բոլորի հետ վարվում էր սիրով ու քնքշանքով: Այո՛, Չանթողիկը
 սովորական տիկնիկ չէր, նա հասկանում էր Լիլիթի ասածները և պատասխա-
 նում»:⁹

Հատկանշական է նաև տիկնիկների հանգստաբեր և քուն մաղթող գործա-
 ռույթը հեքիաթի հերոսների համար:

«- Մի՛ վախենա, սիրո՛ւն Վասիլիսա: Հաց կե՛ր, աղոթի՛ր ու քնի՛ր: Լույսը կգա,
 բարին՝ հետը»¹⁰:

Հայոց ազգագրական և բանահյուսական կենցաղում հայտնի է *Նուրի*
 անունով տիկնիկը: Այս տիկնիկը մանկանոցի տիրույթում փոխում է իր գործառու-
 թային նշանակությունը. այն հանգստաբեր, երազամույն կերպար է երեխաների
 համար: Ինչ-որ առումով նաև հանդես է գալիս որպես երգասաց-օրորասաց: Մի-
 ջաբերենք հետևյալ տողերը, որոնք բնորոշում են տիկնիկին.

*Նուրին բնության խորհրդանիշն էր, անձրև բերող բարի ոգի: Երեխաներից
 ոչ ոք նրան չի տեսնում, որովհետև այդ ժամին երեխաները քնած են լինում: Բայց
 Նուրին նրանց չի մոռանում: Կանգնում է բարի, խելոք ու կարգապահ երեխաների
 պատուհանների տակ ու երգում աշխարհի ամենազվարճալի երգը, և երեխաներն
 այդ գիշեր գունավոր երազներ են տեսնում»:¹¹*

⁷ Մանկական բանաստեղծությունների ընտրանի, կազմ.՝ Վ. Սահակյանը, Եր., 2011, էջ 54:

⁸ Նույն տեղում, էջ 55:

⁹ Բառնակյան Լ., Բարի լույս, փոքրիկս, Եր., 1972, էջ 164:

¹⁰ Թումանյան Հ., Հեքիաթներ (մշակեց և կազմեց Վ. Աբրահամյանը), Եր., 2011, էջ 172:

¹¹ Մարուխյան Ռ., Այս զարմանալի, այս հրաշալի տիկնիկները: Եր., 1980, էջ 4:

Ամփոփելով նշենք, որ տիկնիկը մանկանոցում ունի ակտիվ դերակատարում: Այն, բացի մարդակերպ խաղալիք լինելուց, որոշակի գործառույթ է իրականացնում երեխայի կյանքում:

КУКЛА КАК ПЕРСОНИФИЦИРОВАННЫЙ ОБРАЗ ДЕТСКОЙ КОМНАТЫ

___ *Резюме* ___

___ *А. Матикян* ___

Кукла – как активный персонаж пространства ребенка, имеет важное прикладное значение. Симптоматично, что она *создана по образу и подобию* ребенка. Игрушка-неизменный спутник *ребенка* с первых дней рождения. Вхождение куклы в мир ребенка обусловлено тем, что она идентична детскому образу. *Вхождения ребенка* в знаковый и символический мир куклы приоритетны как в армянской, так и англоязычной среде. В одном случае играет роль портнера, в другом – покровитель, защитный образ.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Մատիկյան Հասմիկ Համլետի – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, E-mail: hasvrej@msil.ru*

ՈՉԽԱՐԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔ ԵՎ ԱՆԱՐՅՈՒՆ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ
(ծիսական գործառնություններով առարկաների շուրջ)

Հնդեվրոպական ավանդություններում առանձնակի հատկանիշներով օժտված ոչխարի պաշտամունքը և անարյուն զոհաբերությունն արտացոլված են կենդանուն իմաստաբանորեն կապված առարկաների ծիսական գործառնություններում: Հնդեվրոպական բարբառներում «ոչխար» իմաստն արտահայտող *p(h)ek(h) արմատից են ձևավորվել «սանդերք, գեղմ, բուրդ, մագ» իմաստները¹:

Հնդեվրոպական արքայիկ ծեսերում ոչխարի (երբեմն՝ այծի) պաշտամունքի հետ սերտորեն կապված է պտղաբերության ծիսական խորհրդանիշ *գեղմը*²: Խաթական ավանդություններից³ եկող ոչխարի գեղմի պաշտամունքը հաճախ է զուգորդվում Տիեզերական սյան կամ Կենաց ծառի հետ: Պտղաբերության աստված Տելեպիևուսի անհետանալու և վերադառնալու մասին առասպելում բարձրացվում են Տիեզերական սյունը և ծիսական գործառնություն զոհասյուն, բարիքների մշտադալար *eya* ծառը, որից կախված է ոչխարի գեղմը՝ կյանքի ընթացքն ուղեկցող բոլոր տարրերով (հաջորդաբար դրված են յուրը, դաշտերի աստծու ցորենը, գինին, ցուլը և ոչխարը, կյանքի տևողությունը (երկար ժամանակ, երկարակեցություն), սերունդը՝ տղաներ, աղջիկներ, նաև մահկանացու մարդկանց, ցլերի և ոչխարների հասունությունը, քաջությունն ու հզորությունը, հավերժական կրակը, փափուկ մագով գառնուկները, լիակատար հնազանդությունը, աճը, ծաղկումը, հյութերի հագեցումը և այլն)⁴: Մեկ այլ տարբերակում գեղմը գտնվում է *Hanna**hanna* մայր դիցուհու պուրակում՝ աղբյուրի մոտ, *Telepinu*-ի առջև կանգնած *GISeia*-ծառի վրա⁵: Համանման մոտիվ կապված է նաև *eya*-ի ծիսական համարժեք *batalkišna*-ալոճենու հետ, որի տակ աստվածները հավաքվում են խորհրդի././Ալոճենու տակ երկարակեցությունն է/./Այնտեղ նստում են բոլոր աստվածները. աստվածուհի Իստուստայասը, պահապան աստվածուհիները, մայր աստվածուհիները, հացի աստվածը, հասունության աստվածը, Տելեպիևուսը, պահապան աստվածը և Հաբանթալի աստվածուհին⁶: Հունական դիցաբանության մեջ Կողքիսում՝ Արեսի սրբազան անտառում, սրբազան ծառից կախված ոսկեգեղմի տակ հուր ժայթքող սոսկալի վիշապն է⁷: Կելայնե քաղաքում՝ Մեանդրոս և Կատարրակտես գետի ափերի մոտ կախված էր Ապոլոնի կողմից մորթազերծ արված Միլենոս Մարս-

¹ Гамкрелидзе Т., Иванов В. Индоевропейский язык и индоевропрійцы II. Тб. Т. 2. 1984. С. 578.

² Ардзинба В. Ритуалы и мифы древней Анатолии. М. 1982. С. 10.

³ Նույնը:

⁴ Луна упавшая с неба. Перевод с древнемалоазиатских языков Вяч. Иванов. М. 1977. С. 61; Ардзинба В. Заметки к текстам хеттских ритуалов. ВДИ. 1977. №3. С. 119—120; Топоров В. Древо жизни. Мифы народов мира (այսուհետ՝ *МНМ*). Т. 1. М. 1991. С. 366.

⁵ Гамкрелидзе Т., Иванов В., նշվ. աշխ., էջ 582:

⁶ Луна упавшая с неба.... С. 58; Ардзинба В. 1977, С. 119-120:

⁷ Կուն Ն., Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Եր., 1979, էջ 307:

յուրասի մորթին⁸: Ըստ Քսենոփոնի՝ Ապոլոնը մորթազերծ էր արել Մարսիասին՝ հաղթելով նրան երաժշտական մրցույթում, և մորթին կախել քարայրում, որտեղ և գետի ակունքն էր⁹: GĩSei a-ծառի վրա զգված kurša- գեղմին համադրելի է սվանական Melia-Telepia ծեսը, որի ժամանակ զոհաբերում էին ցուլ կամ ոչխար և մորթին կախում սրբազան կաղնուց¹⁰: Օսական ամպրոպի աստծուն նվիրված տոնին ծիսական սյունից կախում էին զոհաբերված կենդանի՝ ցուլ, ոչխար կամ այծ¹¹: Գեղմի պաշտամունքի և ծիսական գործառույթի արձագանքներ պահպանված են հայոց չարխափան մի աղոթքում. «Գնացի Երուսաղեմ, տեսա մին ծառեր// Էդ ծառից դուրս էկաւ մին ճէղնը//Ընդրանից դուրս էկաւ մին ուրիշ ճէղնը// Ուրծնձի ճէղնիցը կախուեց մին ոչխար//Մօտրկացի, բռնեցի//Անդենակ մօրթեցի// Անջուր լուացի // Անկրակ եփեցի//Ես կերի սրտմնայ չըլի//Դու խէ՞ սրտմնալ իս ըլալ//Ընդրանից դուրս էկաւ մին ուրիշ ճէղնը...»¹²: Մեկ այլ վկայություն է հետևյալ ավանդագրույցը. Իսահակը վերցնում է իր համար ծառից կախված ոչխարի գույզ ոլորուն եղջյուրների մեջ գտնվող սրինգը և նվագում¹³: Ծառից կախված ոչխարը համարժեք է գեղմին:

Պաշտամունքի կարևորությունից է բխում գեղմին տաճար հատկացնելը, որի մասին հիշատակվում է խեթական տեքստերում, ինչպես գարնանային «Նուն-տարիյասհա» տոնին սրբազան գեղմի տաճարից ցորեն բերելը¹⁴: Գեղմը խորհրդանշել էր և պաշտպանության աստվածություն¹⁵, նաև Ինարա աստվածուհու պաշտամունքի հետ էր կապվում¹⁶: Խեթական գարնանային մեկ այլ՝ «Անտահշում» տոնի օրերին մի քաղաքից մյուսը գնալիս կառավարիչը և կառավարչուհին իրենց հետ տանում էին նաև գեղմն ու ծեսեր կատարում¹⁷:

Աստվածներին նվիրաբերվող զոհաբերության սրբազան ըմպելիք կոչվող մաքրագործող հեղուկը լցվում էր բրդի կամ գեղմի վրա: Նման ծես կատարում էին հին հնդիկները: Վեդաներում աստվածների ըմպելիք սոման քամում էին՝ գեղմի մեջ լցնելով¹⁸: Աստվածային կենդանու գեղմը նաև ապաքինող ուժ ուներ: Գեղմի

⁸ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Թարգմ.՝ Միմոն Կրկյաշարյանի, Եր., 1986, էջ 396:

⁹ Քսենոփոն, Անաբասիս, Թարգմ.՝ Միմոն Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 10: Лосев А. Марсий. МНМ, Т. 2, М., 1992, С. 120.

¹⁰ Մարտիրոսյան Հր., Լեռնային ակունքի ֆառեր, Արշալույսի դիցուհին և զլխի ու մորթու զոհածեսը վիշապակոթողների իմաստաբանության հենքում, «Վիշապ քարակոթողները», Հոդվածների ժողովածու, Եր., 2015, էջ 30:

¹¹ Նույն տեղում, էջ 31:

¹² Ազգագրական հանդես (այսուհետ՝ ԱՀ), Գիրք Բ, էջ 235-236:

¹³ Ղանալանյան Ա., Ավանդապատում, Եր., 1969, էջ 125, թիվ 344:

¹⁴ Նույն տեղում, էջ 37:

¹⁵ Ардвинда В., 1982, էջ 10:

¹⁶ Նույնը:

¹⁷ Նույն տեղում, էջ 17:

¹⁸ Топоров В. Сома. МНМ. Т. 2, М. 1992, С. 462.

մեջ փաթաթված հիվանդն առողջանում էր¹⁹: Պաշտամունքի հետևագույն վկայություն է մատաղի գառան մորթին դեն գցելու արգելանքը²⁰:

Գեղմի պաշտամունքն արտացոլված է բրդի հետ ծիսական գործառնություն կապված տարբեր ծեսերում, ավանդություններում և հավատալիքներում: Բուրդը կապված է աստվածուհու հետ: Խեթալովիական ծեսերում ոչխարը ծիսական հիմնական կենդանին է, որի հետ «*Օեր կինը*» կատարում էր «ղժբախտությունը» հեռացնելու մոգական տարբեր գործողություններ²¹: Խեթերը բուրդ նվիրաբերում էին կին-աստվածությանը՝ Կամուրսեպեին, նաև «*ոչխար խուզելու*» հատուկ ծես էին կատարում²², իսկ «*ամպրոպի աստծու մարդու*» կողմից երկնքից ընկած լուսնի առասպելը պատմելիս, ծեսի համար պատրաստվող անհրաժեշտ իրերի մեջ նշվում է նաև կարմիր, սև և սպիտակ բուրդ²³: Սպիտակ բուրդ մանելու ծեսը կատարվում էր պալատում: Թագավորի առջև նստած պալատի զավակները պահում էին թել մանելու հարմարանքը: Ջուլիականների վերակացուն պալատի զավակների վերակացուն տալիս էր ոլորած սպիտակ բուրդ: Նա մեկ անգամ ոլորում և փոխանցում էր թագավորին: Թագավորը երկու անգամ ոլորում էր և երկու անգամ պտտում թել ոլորելու հարմարանքը²⁴:

Հնդեվրոպական ընդհանրության հոգևոր պատկերացումներում սև այծին հաճախ փոխարինում էր նրա բրդից հյուսված ծածկոցը²⁵:

Բուրդը նվիրաբերման-գոհաբերման առարկա է և ծիսակարգում խորհրդանշում է ոչխարի անարյուն գոհաբերություն: Խեթական ծիսակարգում բուրդն օգտագործում էին բարեկեցություն և բերք պարգևելու համար կատարվող երկնքի, երկրի և ստորին աշխարհի «*Աստվածների կանչման*» ծեսում²⁶, հատուկ պատրաստված յուղը լցնելով կարմիր բրդի վրա, որպեսզի «*ինչպես որ բուրդն է պայծառացել, այնպես էլ պայծառ լինեն Մայրիների երկրի աստվածները*»²⁷: Խեթերը սև և սպիտակ բուրդ էին գոհաբերում օջախին²⁸: Բրդի գոհաբերության վկայություններ պահպանված են նաև ռուսական ավանդություններում: Հովհաննես Մկրտչին նվիրված «*Иван-камень*» կոչվող ծիսական քարի մոտ կատարվող տոնախմբության ավարտից հետո քարի վրա թողնում էին բրդի կտորներ կամ թելեր, իսկ Պսկովյան լճի ափին գտնվող նույնպես ծիսական քարի վրա սովորական օրերին թողնում

¹⁹ Հայկունի Ս., Խալանտար (ժողովրդական վեպ), Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Բ, Մոսկվա-Վաղարշապատ, 1901, էջ 76:

²⁰ ԴԱՆ, հեղինակի գրառումներից, Շիրակ:

²¹ Гамкрелидзе Т., Иванов В., նշվ. աշխ., էջ 581:

²² Նույն տեղում, էջ 582:

²³ Ардзинба В., 1982, էջ 82:

²⁴ Նույն տեղում, էջ 212:

²⁵ Иванов В., Топоров В. Исследования в области славянских древностей. М. 1974. С. 5,31-34,138.

²⁶ Луна упавшая с неба... С. 226, 230:

²⁷ Наговицын А. Магия хеттов. М. 2004, С. 88; Луна упавшая с неба... С. 229.

²⁸ Шаншиашвили Н. Происхождение и функции очажных подставок Куро-араксской культуры Археология, этнология и фольклористика Кавказа (материалы международной конференции посвященной Отара Лордкипанидзе). Первопрестольный святой Эчмиадзин. 2003, С. 59.

էին սև կամ սպիտակ բուրդ, իսկ տոներին՝ զոհաբերված ոչխարի գլուխ ու վերջույթներ²⁹: Ամպրոպամարտիկի հատկանիշներ կրող Հովհաննես Մկրտչին ոչխար կամ բուրդ զոհաբերելը զուգադիր է խեթական ծեսերում թագավորին ոչխարի ֆալոս մատուցելուն³⁰ և «Ռիզվեդա»-ում՝ «...բազմիցս կանչված, փառաբանված *Բնդրային*» ոչխար անվանելուն³¹:

Ուշագրավ է, որ ամպրոպի աստծու հետ բրդի կապն արտացոլված է Արցախի Ճարտար գյուղում կատարվող «մալանջ» կոչվող ծեսում: Որպեսզի ճշտեին, թե անձրև բերելու համար որտեղ զոհ մատուցեն, սանդերքի վրայից զգված բուրդը հանում էին կիսալուսնի ձևով³²:

Բուրդը (մազ) նաև պահպանակ է: Պտղաբերության ապահովման նպատակով Բուլանըխում պսակի հարիսայի համար ոչխար մորթելիս մի փունջ մազ էին պոկում և, կենդանու արյան մեջ թաթախելով, երեք տեղով հանգույց անելով, փակած կողպեքի հետ հանձնում էին փեսային, որ «չկապվեր»³³: Բռնի փայտի մի կտոր բրդի և աչքահուլունքի հետ կապում էին օրորոցից, նաև՝ ձիու վզից³⁴:

Աղթարքներում երկնքի հենարան սյուներ փոխարինված է «մազի սանդուխտով... ոչ երկնից սիւն և գետինն գերան, ոչ ափուց մէջ մազ բուսնի, և ոչ այս բանս խափանումն լինի. ամէն», և երկինք բարձրանալու համար դրված «մազի սանդուխտը» հենված է երկրին³⁵ (հմմտ. ձողի ծայրին կապված մալանջի հետ): Ըստ առասպելաբանական հնագույն ընկալումների՝ աշխարհը պատկերացվում էր ծառի կամ վեր պացող ծիսական կառույցի տեսքով, որը, ըստ արմատ, բուն, գագաթ համապատասխան հատվածների, բաժանված էր ստորին, միջին և վերին աշխարհների³⁶, միացնելով Տիեզերքի ամբողջականության ընդհանրական պատկերի երեք ոլորտները՝ երկինքը, երկիրը և ստորերկրայքը³⁷: Երկնքի և ստորերկրայքի հետ պաշտամունքային կապով մազը (բուրդ, մալանջ, մազփունջ...) միավորում է տիեզերական սյան վերին և ստորին մասերը:

Բրդի ծիսական գործառնությունների կրողը դառնում է նաև թելը: Խեթերի թագավորը կապում էր կարմիր և սպիտակ բրդից հյուսված գոտի, իսկ գլխանոցին՝ նույն գույներով բրդյա քուղ³⁸: Խեթական ծիսակարգում թագավորին ցավից, տառապանքից և վախերից ազատելու նպատակով թագուհին վերցնում էր հինգ գույնի՝ սպիտակ, սև, կարմիր, կանաչ և կապույտ մեկական թել ու կապում Տիե-

²⁹ Մարտիրոսյան Հր., նշվ. աշխ., էջ 24:

³⁰ Ардзинба В., 1982, էջ 101:

³¹ Ригведа, Мандалы I-X в переводе Т. Я. Елизаренковой. М. 1999, I, 1, 1:

³² Аванесян Л. Ковер из подземного царства (по мотивам армянской сказки „Девушка-лягушка,“). Центр поддержки арменистических исследований. Армянский гуманитарный вестник. 2-3-1. М.-Ер. 2009. С. 40.

³³ ԱՀ, Գիրք Ե, էջ 110:

³⁴ ԱՀ, Գիրք Բ, էջ 240:

³⁵ Օրաբաշյան Ա., Տիեզերաստեղծման առասպելի վերապրուկային տարրերն ախտարքում, Պատմաբանասիրական հանդես (այսուհետ՝ ՊԲՀ), 1986, 3, էջ 144:

³⁶ Гамкредидзе Т., Иванов В., նշվ. աշխ., էջ 485:

³⁷ Топоров В. Древо мировое. МНМ. Т.1. М. 1991. С. 399.

³⁸ Ардзинба В., 1982, էջ 56:

գերական ծառին՝ հինգ ճյուղ ունեցող³⁹։ Քանի որ թագավորը նաև աստված էր, ծառը կարող էր դիտվել որպես նրա բուսական կող կամ մարմնավորում։

Ծեսի գուգահեռները հայոց հավատալիքներում են։ Թել էին կապում քարից կամ ծառից։ Ղարաբաղում հիվանդությունը զգեստի կտորների հետ կախում էին կամ թելով կապում սուրբ ծառի ճյուղերից, աղբյուրի քարին կամ հենց տաճարից⁴⁰։ Ծառի ճյուղերին լաթեր կապելը համահունչ է ամպրոպի աստծու խորհրդանիշ քարի վրա գոհաբերություն կատարելուն։ «Պուկ-քար» կոչված ժայռից պոկված քարի մոտ ամուլ կանայք երեք անգամ թել էին փաթաթում և պտտվում քարի շուրջը, ապա տանում, գուլպա գործում, հագնում՝ հավատալով, որ կմայրանան⁴¹։ Գույնզգույն թելերով էին զարդարում հարսանեկան ծառի ճյուղերը⁴²։ Լեռնային Ղարաբաղում անասունի եղջյուրները ներկում էին, վրան խնձոր շարած թելեր զգում և դիոլ-գուռնայի ուղեկցությամբ մորթելու ուղարկում հարսի տուն⁴³։ Ծառերին լաթեր կապելու ավանդույթն այսօր էլ պահպանվում է։

Ըստ բանահյուսական նյութերի՝ հարսանեկան ծեսում կարմիր թել կապելը (կանաչ-կարմիր կապել) խորհրդանշում է կյանք, պտղաբերում։ Պտղաբերության հետ թելի կապի վկայություն են հարսի օժիտի մեջ դրվող տարբեր գործառնությունների համար նախատեսված գույնզգույն թելերը՝ ամանների ու ջվալների բերանները կապելու բրդե գունավոր թելերն ու լարանները, նաև՝ կանաչ-կարմիրով զարդարուն ձիու կապերը⁴⁴։ Եթե չարամիտ կանայք պսակի ժամանակ թել հանգուցեին, հարսն ամուլ կդառնար⁴⁵։ Այսինքն՝ մի դեպքում թել հանգուցելը կանխելու էր չարը, մյուս դեպքում հակառակը՝ նույն ուժերը հարսին զրկելու էին մայրանալուց։

Թելի ծիսական գործառնություն արտացոլված է նաև պտղաբերության պահպանական ծեսերում։ Հարսանիքի եզր մորթելիս թելով հանգույց էին անում, որպեսզի քաջքերը կապված մնային, նաև արյան մեջ կարմիր թել թաթախում և խնամքով պահում մինչև նորապսակների առագաստ մտնելու օրը⁴⁶։ *Գեղկապի* հմայական աղոթքներում տրեխի կամ գուլպայի վրա թելի յոթ հանգույց էին անում⁴⁷։ Թելի օգտագործմամբ պահպանական նման գործողություններ կատարվում էին նաև հղի կնոջ հետ։ Երբ ծննդկանն ուշաթափվելուց հետո ուշքի էր գալիս, նրան մի կծիկ էին տալիս կծկելու, որպեսզի նա զբաղվեր և քաջքերին ուշք չդարձներ⁴⁸, կամ տալիս էին այծի մազից գործած պարան, որպեսզի քանդեր⁴⁹։

³⁹ Ардзинба В., նշվ. աշխ., էջ 213։

⁴⁰ Լիսիցյան Ստ., Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, Եր., 1981, էջ 61։

⁴¹ ԱՀ, Գիրք Բ, էջ 188։

⁴² Նույն տեղում, էջ 129։

⁴³ Լիսիցյան Ստ., նշվ. աշխ., էջ 45։

⁴⁴ Ավագյան Ս., Արձակ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 8, Եր., 1978, էջ 70։

⁴⁵ ԱՀ, Գիրք Բ, էջ 136։

⁴⁶ Харатьян З. Культурные мотивы семейных обычаев и обрядов армян. Армянская этнография и фольклор, 17, Եր., 1989, С. 19։

⁴⁷ Աբեղյան Ս., Երկեր, Եր., 1975, էջ 93։ Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 44-45։

⁴⁸ ԱՀ, Գիրք Բ, էջ 146։

Ուշաթափությունը ժամանակավոր մահ է դիտվել, մահը՝ կյանքի թելի կտրվել, և կատարվել են կանխարգելիչ մոգական գործողություններ: Կծիկ կծկելը քանդելու հակառակ գործողություն է, այսինքն՝ վերադարձնել կյանք: Թելը (կյանքի թել) մահվան հետ կապելու ընկալումների վկայություն է, օրինակ՝ փեսացուի մահվան դեպքում հարսնացուի նշանի մատանին սև թելի վրա անցկացնելը⁵⁰:

Բուրդ-թել ծիսական գործառույթն արտացոլված է նաև *հյուսվածք-գործվածքի* հետ կապված հավատալիքներում և ծեսերում: Կոխի ժամանակ երեխային լողացնում էին հոր գուլպաների վրա⁵¹: Պահպանական նման գործառույթի հետ է կապված հարսի օժիտի մեջ սկեսրայրի, քավորի ու ամուսնու եղբոր համար գուլպայի պարտադիր լինելը⁵²: Գուլպա քանդելը տիրոջը մահ էր, և քանդողին համարժեք պատիժ էր սպասում: Մալաթիայում հավատում էին, որ «*հյուսված գուլպան ձեռքով քակողի տունը կավերվի*»⁵³: Գուլպան պիտի մաշվեր, ինչպես աստիճանաբար մաշվում և կարճանում է մարդու կյանքը:

Թելի ծիսական գործառույթը փոխանցվել է նաև *հյուսածո գոտուն*, գլխանոցի *բուրդին*, գլխակապ *թանթանա-պսակին*: Գոտու ծիսական գործառույթի վկայություն գտնում ենք Խորենացու մոտ: Արտաշեսը Սաթենիկին առնանգում է «...*ձգեալ գոսկեօղ շիկափոկ պարանն //Ընկեց ի մեջք օրհորդին ալանաց...*»⁵⁴: Բերված բանահյուսական պատառիկում օղակ-պարանը ծիսական գործառույթով զուգադիր է գոտուն: Պարանով մեջքն օղակելը նույն իմաստն ունի, ինչ պատկանելության նշան ամուսնական օղակ-մատանին, գոտին և օղակաձև մանյակը: Ասվածը հաստատում են հայոց հարսանեկան ծեսի արարողակարգերը: Մորթվող կենդանու պոչի մազերն իրար կապելով՝ գոտի էին սարքում և, արյան մեջ թաթախելով, կապում փեսայի մարմնի վրա՝ գոտկատեղին, որպեսզի «*չար աչք չկաշեր*»⁵⁵: Գոտի կապելը մարդու մարմինը շրջանի մեջ առնել է⁵⁶, դրանով արգելք ստեղծելով չար ուժերի համար: Պսակից հետո հարսը գնում էր փեսայի ետևից՝ նրա գոտուց կապած թաշկինակից բռնած⁵⁷: Միսիանում քավորը վերցնում էր հարսի գոտին, փաթաթում և երեք անգամ հարսի գլխով ձգում, ապա գետնից վերցնելով՝ ասում. «*Աստված տայ տղաբեր, սնամեր ինես, ռտակալուքը խեր ընի*» և հետո կապում⁵⁸: Գոտու ծիսական գործառույթի կարևորությամբ է պայմանավորված Ձանգեգուրում այրիների նշանադրությունը՝ միայն գոտիները փոխելով⁵⁹:

⁴⁹ ԱՀ, Գիրք Գ, էջ 238:

⁵⁰ ԱՀ, Գիրք Դ, էջ 102:

⁵¹ ԱՀ, Գիրք Բ, էջ 150:

⁵² Ավագյան Ս., նշվ. աշխ., էջ 70:

⁵³ Ավագյան Ն., Հայկական գուլպաներն ու տոնապանները, ՊԲՀ, 1967, № 4, էջ 257:

⁵⁴ Խորենացի, II, Ծ:

⁵⁵ Բարայելյան Հ., Հայաստանի պատմության պետական թանգարանի մանկական հմայիլների հավաքածուն, Թանգարան I, Եր., 2109, էջ 103:

⁵⁶ Пиготровский Б. Археология Закавказья. Л. 1949. С. 95:

⁵⁷ ԱՀ, Գիրք Բ, էջ 140:

⁵⁸ ԱՀ, Գիրք Գ, էջ 220:

⁵⁹ ԱՀ, Գիրք Դ, էջ 70:

Գոտին կապված է նաև թաղման ծեսի հետ: Անիում Տիգրան Հոնենցի ազգական մանկահասակ աղջկա գերեզմանում՝ հագուստների տակ, աճյունի գոտկատեղին եղել է դիմացից կրկնակի հանգույցով կապված մետաքսյա վարդագույն թելերից գոտի, և Հ. Օրբելին իրավացիորեն նկատել է, որ հագուստի հետ որևէ կապ չունեցող գոտին խորհրդանշել է աղջկա անմեղությունը⁶⁰:

Թել-հյուսվածք-գործվածքի հետ է կապվում նաև թելերից հյուսված պսակը: Խեթական ծիսակարգում աստվածուհու համար սպիտակ, կարմիր ու երկնագույն բոլոր թելերից պսակ էին պատրաստում⁶¹: Բերվածին զուգադիր է համշենահայերի հարսանեկան ծեսում հարսի և փեսայի գլխին ոլորած կարմիր թելից նարոտ կապելը⁶²: Բարձր Հայքում հարսը կապում էր սպիտակ, դեղին և կարմիր թելերից հյուսված գոտի ու «վարդ» կամ «թանթանա»՝ թելերից ասեղնագործ ծաղիկներով զարդարված ճակատնոց, որը համարժեք է Համբարձմանը աղջիկների գլխի ծաղկեպսակներին:

Գործվածքի բուրդ-թելի ծիսական գործառույթով են պայմանավորված անասուններին կտորի վրայով քշելու ավանդույթը⁶³, խեթական ծիսակարգում թագավորի և թագուհու ձեռքերը լվանալու ծեսում «նիզակի կտորով» ձեռքերը սրբելը, այնուհետև «պալատի զավակների» բերած ինչ-որ կտորով նրանց ծնկները ծածկելը⁶⁴: Ծիսակարգի բաղադրիչ է նաև թաշկինակը: Պսակադրության գնալիս հարսանեկան թափոն առաջնորդում էր մի երիտասարդ՝ ձեռքին՝ ծայրին մետաքսյա թաշկինակով ձող⁶⁵: Ի դեպ, ծայրին ծաղկեփունջ և գունավոր թաշկինակ կապած ձող էր տանում Համբարձման տոնի համար ընտրված, աղջիկների խմբի առջևից գնացող դրոշակակիրը⁶⁶: Ծառզարդարին պատավները մատողաշ ուռնու ճյուղը զարդարում էին նաև գույնզգույն լաթի կտորներով⁶⁷: Թելերը և լաթերը նույն գործառույթն ունեն, ինչ մազն ու մալանչը:

Երբ երեխան շատ էր լաց լինում, մայրը պատառոտում էր նրա շորերը և դեն գցում՝ ասելով՝ «*Էս ա քու փայր*», ապա թոնրի շշով գծում օրորոցի շուրջը և այծի մազից պարանով կապում օրորոցի լուծը⁶⁸: Հագուստի «մահով» և հաջորդող պահպանական գործողություններով «կանխվում» էր երեխայի մահը:

Թելը և կտորը որոշակի դեր ունեն նաև թաղման ծեսում. վկայություններ են ուշ բրոնզի դամբարաններում հայտնաբերված գործվածքների մնացորդները⁶⁹, Ագաթանգեղոսի վկայությամբ՝ հռիփսիմյան կույսերի թաղման համար բերում են.

⁶⁰ Орбели И. Избранные труды, Ер. 1963. С. 45.

⁶¹ Ардзинба В., 1982, С. 212-213:

⁶² ԱՀ, Գիրք Դ, էջ 141:

⁶³ Голан А., նշվ. աշխ., էջ 31:

⁶⁴ Ардзинба В., նշվ. աշխ., էջ 59:

⁶⁵ ԱՀ, Գիրք Բ, էջ 135:

⁶⁶ Բրդյան Վ., Հայկական աղամաններ, Եր., 1986, էջ 48:

⁶⁷ Լիսիցյան Ստ., 1981, էջ 71:

⁶⁸ ԱՀ, Գիրք Ա, էջ 232:

⁶⁹ Խնկիկյան Օ., Արհեստները բրոնզեդարյան Հայաստանում, Հայաստանի հնագիտական հուշարձանները 9, Բրոնզեդարյան հուշարձաններ, Պրակ III, Եր., 1977, էջ 76: Հայկական գորգավեստ, Եր., 2012, էջ 11: Хачатрян Т. Артикский некрополь. Ер. 1979. С. 33, 146.

«պատանքի գույնզգույն նարտուներ ու մետաքսահյուս ոսկեթել կերպասներ...»⁷⁰: Անիի Տիգրան Հոնենցի ազգականի մի դամբարանում, աղջկա աճյունի տակ փռված է եղել ասեղնագործ մետաքսյա կարմիր կտոր⁷¹: Պատանք կտրում էին կտավից⁷²: Երիտասարդ հանգուցյալին պատանելիս նույն կտորից գոտի և ուսկապ էին կապում⁷³, երեսին կարմիր կամ կանաչ շոր քաշում⁷⁴: Հարուստ ննջեցյալին պատանելիս հագուստի վրայից գոտկատեղին բամբակի թել կապում⁷⁵:

Բրդի ծիսական գործառույթի կրողը նաև խորհրդանշական զարդանախշերով սրբազնացված *գորգն* է. Պազիթիկյան դամբարանաբլուրից գտնված հայկական հնագույն գորգը (մ.թ.ա. V դ.)⁷⁶: Անդրաշխարհի հետ բրդի կապի վկայություն է դադար գորգի վրա դնելու ավանդույթը: Թարգմանչաց ավետարանի «Աստվածամոր նինջը» նկարում Աստվածամոր դադար գորգի վրա է դրված⁷⁷: Ավանդույթը պահպանված է նաև ազգագրական նյութերում և թաղման մեթոդյա ծեսում⁷⁸: Գորգի ծիսական գործառույթը քրիստոնեությանը անցնելու վկայություն է մյուսոն եփելու ծեսը գորգի վրա կատարելը⁷⁹:

Ծիսական գործառույթով համարժեք գեղմը, բուրդը, մալանչը, մազը, թելը, կտորը, հյուսվածքը, գորգը մաստվ ներկայացնում են ամբողջը:

Ոչխարի պաշտամունքը զուգակցվում է բրդի մշակմանն առնչվող աշխատանքային գործիքների՝ *սանդերքի*, *իլիկի*, *ճախարակի* (=անիվ), դազգահի (տորք) հետ:

Սանդերքի ծիսական գործառույթի վկայությունը դրսում մնացած մարդկանց և կենդանիներին գայլի բաժին դառնալուց փրկելու հմայական արարողություններով ուղեկցվող հայոց «գելկապի» կամ «գայլկապի» կոչվող աղոթքներում է⁸⁰: Աղոթքներից մեկում, տրեխի կամ գուլպայի վրա թելի յոթ հանգույց անելով, կացինը սանդերքի երկշար ատամների մեջ էին դնում⁸¹: Մեկ այլ տարբերակում շերեփը սև պարանով կապում էին տան պունից, դանակը ծալում, կամ տրեխի թելին յոթ հանգույց անում, գցում էին սանդերքի ատամների արանքը՝ վրան դնելով կացին և նման իրեր: Եվ քանի դեռ կապանքը քանդված չէր, գայլը չէր վնասի⁸²: Հմայական գործողություններում բրդի հետ կապված սանդերքի ցցուն մեխերը հավանաբար համադրվել են գայլի երախին:

⁷⁰ Ագաթանգեղոս, 761:

⁷¹ Орбели И., նշվ. աշխ., էջ 45:

⁷² ԱՀ, Գիրք X., էջ 168-169:

⁷³ Նույնը:

⁷⁴ ԱՀ, Գիրք Գ, էջ 244:

⁷⁵ ԱՀ, Գիրք Դ, էջ 101:

⁷⁶ Հայկական գորգարվեստ, Հայաստանի պատմության թանգարան, Եր., 2012, էջ 11:

⁷⁷ Պողոսյան Ա., նշվ. աշխ., էջ 178:

⁷⁸ ԱՀ, Գ.12, էջ 219:

⁷⁹ Պողոսյան Ա., Գորգի ծիսապաշտամունքային նշանակության աղթիվ, ՊԲՀ, 2000, №1, էջ 177:

⁸⁰ Հարությունյան Մ., Գայլի հնագույն պաշտամունքի արտացոլումները հայոց «գելկապի» աղոթքներում, ՀՀ 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, զեկուցումների թեզեր, Եր., 1996, էջ 44:

⁸¹ Նույն տեղում, էջ 44-45:

⁸² Աբեղյան Մ., Երկեր, հ. Է, Եր., 1975, էջ 93:

Տորքը գորգագործության փայտե մեծ շրջանակն է⁸³: Հայկազյան բառարանում «տոռն» - «չուան, լար, կապանք» է նշանակում⁸⁴: Մշո բարբառում «տոռ»-է կոչվում «շան վզի կապը»⁸⁵: Տորք (torques- բառացի՝ «ուլորուն, հյուսածո») մանյակի կելտական հնագույն անվանումն է⁸⁶: Ենթադրվում է, որ տորք-մանյակը սկզբնապես պատրաստվել է մագափնջից կամ բրդից և կապ ունի խաթախեթական ու հունական դիցաբանություններում «կյանքի թել հյուսողների» հետ⁸⁷: Տորք-դագահ և տորք-մանյակ անվանումների հիմքում նույն կապել իմաստն է: Հայաստանի հնագիտական հնավայրերից հայտնի են վզին տորք-մանյակով աստվածության խորհրդանիշ կենդանիների արձանիկներ⁸⁸: Մանյակի կամ հնագույն ծիսակարգի ուլորուն թելի համարժեքներ են մկրտվողի պարանոցին որպես աստծու դրոշմի խորհուրդ ուլորուն գույնզգույն թել՝ նարնոտ, մատաղացու կենդանու վզին կարմիր թել կապելը և խորհրդանշում են աստծուն պատկանելը: Նույն խորհուրդն ունի զոհին, նաև հանգուցային կապելը: Աստվածաշնչում Աբրահամն իր որդուն՝ Իսահակին, զոհաբերության պատրաստելիս կապում է⁸⁹: Պատանելուց առաջ ննջեցյալի ոտքերի բուրձ մատերը կապում էին իրար⁹⁰: Գորգը հյուսվում է թելերը հանգույցներ անելով՝ կապելով, որն էլ տորքի և գորգի ծիսական գործառնությունների հիմքում է:

Դամբարանային նյութերում իլիկների գլուխների փաստումները⁹¹, նաև զոհաբերությունների համատեքստում վկայությունները, հավատալիքներն ու ծեսերը կապված են ծիսական որոշակի գործառնության հետ: Ծիսակարգում բուրդը և իլիկը ստորին աշխարհի ու նրա բնակիչ օձի հետ են կապված⁹²: Իլիկը պահպանակ է, որը դնում էին ծննդկանի գլխի տակ⁹³:

Հայոց հավատալիքներում ճախարակն անվանվում է «բախտի անիվ»⁹⁴:

⁸³ Բարսեղյան Խ., Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Եր., 1973, էջ 904:

⁸⁴ Նոր բառգիրք հայկազան լեզուի, հ.2, Եր., 1981, էջ 889:

⁸⁵ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV, Եր., 1979, էջ 422 :

⁸⁶ Арешян Г. Индоевропейский сюжет в мифологии населения междуречья Куры и Аракса II тысячелетия до н.э.. ВДИ. №4. 1988. С. 96.

⁸⁷ Арешян Г., նշվ. աշխ., էջ 96:

⁸⁸ Տե՛ս Խաչատրյան Դ. Артикский некрополь. Եր. 1978. С. 142, 394; Նույնի՝ Древняя культура Ширака. Եր. 1975. рис. 128а, рис. 129; Դևեջյան Ս., Եղջերվի պաշտամունքի հետքեր հին Հայաստանում, ՊԲՀ, 1982, №2, էջ 145; Arménie. Trésors de l' Arménie ancienne. Somogy Editions d art. Paris. 1996. f. 52, 56, 83, 85; Հայացք բրոնզի դարից, Եր., 2010, նկ. 60, 95;

⁸⁹ Աստվածաշունչ, Գիրք Ծննդոց, գլ. իբ, 6, 11:

⁹⁰ Լիսիցյան Ստ., Ջանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 291:

⁹¹ Եզանյան Լ., Վաղբրոնզեդարյան իլիկների գլուխներ Մեծ Սեպասարից և դրանց ծիսապաշտամունքային համատեքստը, «Արագածի թիկունքում» Հնագիտական հետազոտություններ Տ. Խաչատրյանի հիշատակին, Եր., 2018, էջ 33:

⁹² Гамкрелидзе Т., Иванов В., նշվ. աշխ., էջ 582:

⁹³ Լիսիցյան Ստ., Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Հայ ազգագրություն և բանահյուսություն 12, Եր., 1981, էջ 50:

⁹⁴ Սրվանձտյանց Գ., Երկեր, Եր., 1978, էջ 88:

Շրջանաձև տարբեր առարկաները, մասնավորապես պտտվող իլիկը և անիվը կարող էին համադրվել երկնքին և արևին: Հավանաբար նման համադրումից է ձևավորվել ոսկորից իլիկի գլուխներն արևի խորհրդանիշ համարելը⁹⁵, նաև այն պատկերացումը, թե բախտի աստվածուհին ձեռքով արագ պտտում է աշխարհի անիվը⁹⁶: Երկնքի տիրակալուհի Մայր աստվածուհին պատկերացվում էր մանող կամ ջուլիակուհի: Երկնքի աստվածուհի, «աստղերի մայր, աստվածներ ծնող» երկնային կով Հաթորի հետ նույնացվող, աստվածների և մարդկանց նախամայր, հանգուցյալների պաշտամունքի հետ կապված եգիպտական Նուբը⁹⁷ պատկերացվում էր ջուլիակուհի կամ մանող կին⁹⁸: Միաժամանակ Նուբը կապված է նաև հանգուցյալների պաշտամունքի հետ: Նրա պատկերը՝ որպես պահպանակ, դրվում էր սարկոֆագի կափարիչի տակ՝ դեմքով դեպի հանգուցյալը⁹⁹: Բերվածին համադրելի է դամբարաններում Մեծ մոր կամ Նախամայր աստվածուհու խորհրդանիշ իլիկների առկայությունը, որոնք հավանաբար անդրաշխարհի չար ուժերին վնասող պահպանակ էին¹⁰⁰: Գործառույթով Նուբին մոտ է հին հնդկական դիցաբանության մեջ արևի և պտղաբերության հետ կապված, ճանապարհների պահպան, մարդկանց կեղծ ուղիներից փրկող, ճիշտ ուղին գիտեցող, նաև հանգուցյալներին նախնիների ճանապարհով ուղեկցող¹⁰¹, «ոչխարներից հագուստ հյուսող» Պուշանը¹⁰²: Հունական դիցաբանության մեջ նման կին-աստվածություններ են Օլիմպոսում ապրող ճակատագրի անողոք երեք մոյրաները: Կլոտոն մանում էր մարդու կյանքի թելը՝ որոշելով նրա տևողությունը, Լաքեզիսն այդ թելն անցկացնում էր մարդու կյանքի խորդուբորդություններով, իսկ Ատրոպան՝ կտրում այն¹⁰³: Սպիտակ հագած մոյրաները երգում էին. Լաքեզիսը եղածի, Կլոտոն՝ ներկայի, Անտրոպոսը՝ ապագայի մասին՝ մեկընդմերթ դիպչելով իլիկին: Կլոտոն՝ աջ, Անտրոպոսը՝ ձախ, Լեքեզիսը՝ երկու ձեռքերով¹⁰⁴: Մոյրաների (բառացի՝ մաս, բաժին, ճակատագիր, որ յուրաքանչյուր ոք ստանում է ծնվելիս) ձեռքերում մարդու ողջ կյանքն է, հատկապես նշանակալից պահերը՝ ծնունդը, ամուսնությունը, մահը¹⁰⁵: Մոյրա էր նաև Աֆրոդիտեն: Պավսիանոսի վկայությամբ՝ Աթենքում, Աֆրոդիտեի տաճարում քառանիստ հերմայի (գլխի քանդակ կամ կիսանդրի դնելու պոն) վրա գրված է եղել, որ Աֆրոդիտեն մոյրաներից հնագույնն է¹⁰⁶: Կյանքի տևողությունը և մահը աստվածուհու հետ են կապում նաև վեդայական դիցաբա-

⁹⁵ Киквидзе Я. Земледелие и земледельческий культ в древней Грузии. Тбилиси. 1988. С. 164-166.

⁹⁶ Հովերու, Բլիական, գրաբարից թարգ.՝ Մկրտիչ Խերանյան, Եր., 1987, Ծանոթագրություններ, էջ 476:

⁹⁷ Пиотровский М., նշվ. աշխ., էջ 230:

⁹⁸ Голан А. Миф и символ. М. 1993. С. 180.

⁹⁹ Пиотровский М., նշվ. աշխ., էջ 230:

¹⁰⁰ Եզանյան Լ., 2018, էջ 33:

¹⁰¹ Топоров В. Пушан. МНМ. Т. 2. М. 1992. С. 353.

¹⁰² Ригведа. X. 26, 6.

¹⁰³ Կուլն Ն., նշվ. աշխ., էջ 25; Лосев А. Мойры. МНМ. Т. 2. М. 1992. С. 169.

¹⁰⁴ Кобылина М. Об изображениях мойр в Северном Причерноморье. С.А. 1971. № 3. С. 252.

¹⁰⁵ Կուլն Ն., նշվ. աշխ., էջ 25: Лосев А., նշվ. աշխ., էջ 169.

¹⁰⁶ Кобылина М., նշվ. աշխ., էջ 256:

նության մեջ: «Ռիգվեդա»-ում» մահկանացուի կյանքի ժամանակը ծերացող աստվածուհին է¹⁰⁷: Սկանդինավյան դիցաբանության մեջ մոյրաների գործառույթ ունեն ճակատագիրը հյուսող, կյանքի տևողությունը և մահը սահմանող նորները¹⁰⁸: Նման գործառույթ ունեն հին կրետական աստվածուհի Արիադեն (կծիկը Թեսսին հանձնելով՝ օգնում է դուրս գալ լաբիրինթոսից)¹⁰⁹, իլիկ մանող և մանածագործուհիներին հսկող ու հովանավորող աստվածուհիներ գերմանական Հոլդան և Բերխթան¹¹⁰, իրանական Arədvī Sūrā Anāhitā-ն և գիշերները թել մանող, ջուլհակության և մանածագործության հովանավոր, մեծ գլխով և երկար ձեռքերով, սլավոնական Մոկոշը¹¹¹, Պարասկա Պյատնիցան, որին գոհ էին մատուցում՝ ջրհորի մեջ թել և մալանչ գցելով: Հայկական հեքիաթներից մեկում հայոց Անահիտը գորգագործուհի է¹¹², որը բացահայտում է աստվածուհու ճակատագրի տնօրինող լինելը:

Բրդի և իլիկի հետ կապված հնագույն ծեսերում հաճախ հանդես են գալիս ոչ թե աստվածուհիները, այլ մոգական գործողություններ իրականացնող պառավը: Նոր խեթալուվիական ծիսակարգում նկարագրվում է հաճախորդին աղոթելու Թուննավի «Պառավ կնոջ» ծեսը¹¹³: Խեթական ծիսակարգում պառավ կինը սեռական անկարողություն ունեցողի ականջները փակում էր սև բրդով, հազցնում սև հագուստ: Ծեսի վերջում պառավը պատառտելով հանում էր բուժվողի հագուստը, ոտնամանները, գուլպաները, ականջներից՝ սև բուրդը և գետը գցում այն ամենը, ինչին դիպել էր հիվանդը, կամ փոս փորում ու թաղում¹¹⁴: Մեկ այլ դեպքում պառավը հիվանդի ձեռքը տալիս էր հայելի և իլիկ, ու նա անցնում էր դարպասի տակով, իսկ երբ դուրս էր գալիս, պառավը խլում էր հայելին և իլիկը՝ փոխարենը տալով աղեղ: Համարվում էր, որ այդ գործողություններով հիվանդն ապաքինվում էր¹¹⁵:

Հայկական հեքիաթներում հայտնի է մեծ կրծքերով, թեշիկ մանող պառավ դևը¹¹⁶: Ակնհայտ է, որ դևի տակ ծալված է երկնքի տիրակալուհի, նախամայր աստվածուհին՝ Մեծ մայրը կամ Մայր աստվածուհին:

Բրդի, թելի և իլիկի հետ անդրաշխարհի կապից, հետևաբար նաև սպասվող վտանգից ելնելով՝ սահմանված էին արգելանքներ: Մեծ պահքի առաջին երեք օրերին կանայք բուրդ չէին գզում, գուլպա չէին հյուսում¹¹⁷, Զատիկից մինչև Համ-

¹⁰⁷ Ригведа, I, 92, 10.

¹⁰⁸ Мелитинский Е. Норны. МНМ. Т. 2. М. 1992. С. 226.

¹⁰⁹ Чուն Ն., նշվ. աշխ., էջ 250:

¹¹⁰ Потебня А. Собрание трудов. Символ и миф в народной культуре. М. 2000. С. 158-159.

¹¹¹ Гамкрелидзе Т., Иванов В., նշվ. աշխ., էջ 582: Иванов В., Топоров В. 1992. С. 169:

¹¹² Աղաշյան Ղ., Երկեր, Եր., 1979, էջ 343-382:

¹¹³ Иванов В. Древнебалканский и общеевропейский текст мифа о герое-убийце пса и евразийские параллели, в кн: Избранные труды по семантике и истории культуры. Т. V. Мифология и фольклор. М. 2009. С. 97.

¹¹⁴ Герни О. Хетты. Перевод с англ. Н. Лозинской и Н. Толстого. М. 1987. С. 73.

¹¹⁵ Նույնը:

¹¹⁶ Մարտիրոսյան Հր., նշվ. աշխ., էջ 156:

¹¹⁷ Ավագյան Ս., նշվ. աշխ., էջ 94:

բարձում երեկոյան ժամերին նույնպես չէին հյուսում, որ «հավկուր» չլինեն¹¹⁸, այսինքն՝ որպեսզի չգրկվեն արևը մայր մտելուց հետո տեսնելու կարողությունից¹¹⁹։ Երեկոյան ժամերին լույսի պակասը կարող էր նաև հյուսվածքում սխալ թույլ տալու պատճառ լինել ու ճակատագրական դառնալ։

Այսպիսով, պայմանավորված տնտեսության մեջ ոչխարի դերի առանձնակի կարևորությամբ՝ գեղմը, բուրդը, թելը, հյուսվածքը՝ գորգ, գուլպա, գոտի, կտոր (հագուստ, թաշկինակ, պատան և այլն) դիցաբանության մեջ և հավատալիքներում որպես ոչխարի պաշտամունքային դերի ու իմաստի կրողներ, սանդերքի, իլիկի, տորքի, ճախարակի ու անիվի հետ ծիսական գործառույթների իրականացման միջոցներ են։ Հավատալիքները և ծիսական գործողություններն իրականացվել են անհատի կյանքի տարբեր փուլերին (ծնունդ, հարսանիք, պտղաբերում, հիվանդություն, մահ) և տոներին (Նավասարդ, Բարեկենդան, Համբարձում) կատարվող ծիսական արարողություններում։

КУЛЬТ ОВЦЫ И БЕСКРОВНОЕ ЖЕРТВОПРИНОШЕНИЕ

(о предметах с ритуальными функциями)

____ Резюме ____

____ Л. Еганян ____

В статье рассмотривается почитание овца и отражения бескровного жертвоприношения в мифологии, обычаях и верованиях армянского народа.

Овен (баран) является одним из основных жертвенных животных, посвящаемых богам. На основе его особой культовой и ритуальной функция в индоевропейских традициях предметами культа становятся руно, шерсть, прясла, веретено, ковер, нить, ткань.

На основе культа «овцы» и сакральной роли «шерсти» имевшей широкое применение в хозяйстве, возникли представления о богине-женщине держащей веретено и символически прядущей шерсть. Веретено - отрибут женского божества «Нижнего мира» и символизирующее хозяйственную функцию «божества». В армянских верованиях женские божества, определяющие судьбу людей при рождении, представляют собой старая женщина -богиня подземного мира- прядущая судьбу и дочь (или жена) громовержца Арамазда- богиня любви и плодородия, ткачиха Анаит.

Женские божества определяют судьбу людей при рождении, а предопределение и судьба повинуются мужскому божеству Тиру и вестнику богов-Торк Ангеху.

Տեղեկություններ հեղինակի մասին

Եզանյան Լարիսա Գրիշայի- պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոն,
E-mail: smuseum@web.am.

¹¹⁸ ԱՀ, Գիրք Բ, էջ 274:

¹¹⁹ Նույնը:

Արածանիի վերնագավառում՝ Ալաշկերտ բնակավայրի մոտերքում հայտնաբերված ուրարտական արձանագրության համաձայն, Ուրարտուի Իշպուինի թագավորը (մ.թ.ա. 825–810թթ.) իր որդի Մենուայի հետ այստեղ պարտության էր մատնել Էթիունյան վիտիբուխի, լուշա և կաթարգա ցեղերի՝ ուրարտական տարածք ներխուժած աշխարհագորին։¹ Հյուսնենց գյուղի (Վանի մոտ) արձանագրության² մեջ այդ առթիվ ասվում է. «Արշավեցին Իշպուինե Սարդուրորդին (և) Մինուա Իշպուինորդին։ Վանեցին Վիտերուխե, Լուշա (և) Կաթարգա դաշնակից արքաներին Էթիունյան, (որ) փախչում էին (...): Հատկացրին արձանագրություն Անաշե (քաղաքին)»։³ Անաշե քաղաքը համարում են կա՛մ Ալաշկերտը, կա՛մ տեղադրում նրա մոտերքում։⁴ Այս հանգամանքը հիմք է տվել ենթադրելու, որ Ալաշկերտի շրջանը մասն է կազմել դաշնակից ցեղերից առաջինը հիշատակված վիտիբուխցիների նույնանուն երկրի։⁵ Քանի որ արձանագրությունները պատմում են տեղի ունեցած ճակատամարտում էթիունցիներին վանելու,⁶ այլ ոչ թե ուրարտական բանակի՝ Վիտիբուխի երկրի տարածք ներխուժելու մասին, ուստի դրանք հիմք չեն կարող ծառայել Ալաշկերտի շրջանը Վիտիբուխի ցեղային երկրի կազմում տեսնելու համար։

Վիտիբուխի ցեղային երկրի տեղորոշումը Ալաշկերտի շրջանից բացի, նաև Հայկական պար լեռնաշղթայից և Արաքս գետից հարավ ընկած շրջաններում,⁷ պայմանավորված է եղել նրանով, որ Արգիշտի I-ի (մ.թ.ա. 786–764թթ.) Խորխոռյան տարեգրության մեջ այն, ի թիվս այլոց, հիշատակված է Էրիախի և Աբունի (սա արշավանքի վերջնակետն էր) երկրների հետ միասին։⁸ Վերջինս նույնացնելով Արաքսի վերնագավառում՝ գետի աջ ափին գտնված հետագա Հավնունիք գավառի հետ՝ Վիտիբուխին տեղորոշում են նաև նրա հարևանությամբ։ Նախ՝ ինչու տեղորոշման համար ուղենիշ դարձնել Աբունի/Հավնունիքը և ոչ թե շիրակյան Էրիախին, ապա՝ դրանից ոչ մի կերպ չի բխում, թե Վիտիբուխին նաև Արաքս գետից հարավ ընկած շրջաններն էր ներառում։ Էրիախի երկրից (հետագա Շիրակի կենտրոնական և արևելյան մասում) մինչև Աբունի/Հավնունիք՝ արշավանքի վերջնակետ, ձգված տարածքը ներառում էր Արաքսից հյուսիս, ոչ թե՛ հարավ

* Սույն հոդվածի հիմնադրույթները տպագրվել են «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» խորագրով միջազգային գիտաժողովի (Գյումրի, 4-6 հոկտեմբերի 2013թ.) զեկուցումների հիմնադրույթներում, Եր., 2013, էջ 116-118:

¹ Меликишвили Г. Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН). М., 1960, N 23.

² УКН, N 20.

³ Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա. Հնագույն ժամանակներից մինչև 9-րդ դարի կեսերը (այսուհետև՝ ՀԺՊՔ), հ. I, Եր., 1981, էջ 42:

⁴ Ադոնց Ն., Հայաստանի պատմություն. ակունքները. 10-6-րդ դդ. մ. թ. ա., Եր., 1972, էջ 203: Арутюнян Н. Топонимика Урарту. Хурриты и урарты (այսուհետև՝ ТУ), I, Եր., 1985, С. 27; ՀԺՊՔ, հ. I, էջ 42, ծան. 3:

⁵ ТУ, С. 27, 202.

⁶ Дьяконов И. Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500 по 500 г. до н. э., Եր., 1968, С. 155, пр. 207.

⁷ ТУ, С. 201-203.

⁸ УКН, N 127 I.

ընկած շրջանները: Արգիշտի I-ի Խորխոռոյան տարեգրության երկրորդ տարվա երկու արշավանքների⁹ համեմատությունից պարզվում է, որ Վիտիրուխին գտնվել է Արաքսից հյուսիս՝ Ախուրյանի ավազանի հարավում՝ Էրիախիի հարևանությամբ:

Վիտիրուխիի, Լուշայի և Կաթարգայի տեղորոշումը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում¹⁰ կամ Գուգարքում¹¹ նույնպես փաստական հաստատում չունի: Արգիշտի I-ի բանակը Ախուրյանի ավազան էր մտել Դիաուխիից (հետագա Տայքը), ապա՝ թափանցել Արաքսի վերին հոսանքի շրջանում գտնվող Աբունի, բնականաբար, մինչ այդ նվաճված Վիտիրուխին չէր կարող գտնվել հյուսիս-արևմուտքում կամ հյուսիսում՝ Գուգարքում, որոնց հասնելու համար արշավանքի այլ ուղղություններ էին պետք: Վիտիրուխիի ընդարձակ կամ հեռավոր այսպիսի տեղորոշումների գործում իր բացասական դերն է ունեցել նրա դաշնակից Կաթարգայի հյուսիսային տեղադրման փորձը: Անունների հնչյունական նմանության հիման վրա, սա նույնացրել են հետագա Գողերձականի, իսկ վերջինս՝ Ճորոխի ստորին հոսանքից արևելք գտնված հետագա Կղարջք գավառի (Արտվին քաղաքի շրջանը ներառյալ) հետ:¹²

Հակառակ տարածում գտած այս տեսակետի՝ Կաթարգան չէր կարող նույնանալ հետագա Կղարջքի կամ Գողերձականի հետ, որովհետև արձանագրությունները ցույց են տալիս, որ վիտիրուխի, լուշա և կաթարգա ցեղերը դաշնակիցներ (հավանաբար, նաև ազգակիցներ) էին և բնակվում էին Էրիախիի (Շիրակում) հարևանությամբ: Էթիունյան ցեղերի այս եռյակը զբաղեցրել է ենթադրվածից շատ ավելի փոքր մի տարածք: Պետք է ի նկատի առնել, որ բազմացել (բայց ոչ բազմալեզու) էթիունիի ցեղերից յուրաքանչյուրը փոքր տարածք էր զբաղեցնում: Օրինակ, «Աշխարհացոյց»-ի Գեղարքունիք գավառի տարածքում ուրարտական արձանագրությունները հիշատակում են չորս (երբեմն ավելի) ցեղային երկիր,¹³ երբ նրա զբաղեցրած տարածքը կրկնակի փոքր էր Շիրակից: Կաթարգա ցեղային երկիրն ընդգրկել է հետագայում *Արջոն-առիճ* (իսկ այժմ՝ Ալաջա) կոչվող լեռնազանգվածն ու նրա շրջակայքը: Իր անվամբ նա պարտական է լեռանը, որովհետև Kat-arza նշանակում է «բարձունք արջի»: Լեռնանվան առաջին բաղադրիչի համար հմնտ. հայ. *կատար* «լեռան գագաթ», *կատաղունի* «եկեղեցու վերնատուն» և *կատիկ* «մակալեզու» բառերի **կատ* «վերին, բարձրի» արմատը, իսկ -arza բաղադրիչը *արջ* բառի սեպագիր վերարտադրությունն է:¹⁴

^{1/KUR} Միտիր(ս)/Միտեր(ս) ցեղանուն-երկրանունը արտացոլում է **Միտ-ero* նախաձևը: Մրա երկրորդ բաղադրիչը կա՛մ ցեղանվանակերտ է, կա՛մ երկու հակադիր հասկացություններ (օրինակ, «արջ» և «եղջերավոր կենդանի») արտահայ-

⁹ YKH, NN 127 I, 127 V, 128 B, ՀԺՊԲ, հ. I, էջ 65:

¹⁰ ՀԺՊԲ, հ. I, էջ 42, ծան. 1:

¹¹ Կարագեոզեան Յ., Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում) «Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում» (այսուհետև՝ Կարագեոզեան), հ. I, գիրք 1, Եր., 1998, էջ 40-41, 186:

¹² TY, C. 89, 106: Արտվինի շրջանը Գողերձականում չէր: Մեծ Հայքի ծայր հյուսիսային Գողերձական նահանգը՝ Պոդոմենսի Cotarzenae region-ն, Կղարջքի հյուսիսային հարևան էր և ոչ թե Կղարջքը (Երևմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի»-ի, այսուհետև՝ Աշխարհացոյց, Եր., 1963, էջ 59):

¹³ Աշխարհացոյց, էջ 47, 73-74, հմնտ. TY, C. 198-199.

¹⁴ Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., Արարատի, Արագածի և մոտակա լեռների սեպագրային անունների շուրջ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XII, Եր., 2009, էջ 59:

տող հ.-ե. *-er> հայ. -իր վերջածանցը:¹⁵ Ցեղանվան *xit- արմատն իր հնչյունական տարբերակներով առկա է հայերեն հետևյալ բառերում. 1. *վիր* «այծյամ», որից՝ *վիրիկ* (<վիր-իկ) «եղնիկի հորթ», 2. *վիրոն* (<վիր-ոն) «վայրի արու ա յծ», 3. *վիր*. «աստյուն, ցատկ», որից բրբ. *վիրվիր քալել* «թռչկոտելով քայլել», 4. բրբ. *վիտվիտ* «ցատկոտող»//«այծ»:¹⁶ *Վիտիրու* (*իսի*) ցեղանուն-երկրանվանն արմատակից վերաբերյալ բառերը չեն ենթարկվել հայերենի օրինաչափի *v->q հնչյունափոխությանը պաշտամունքային ոլորտին վերաբերող երբեմնի սրբազան բառեր համարվելու պատճառով: Ըստ այսմ, պահպանել են այդ բառերի նախնական՝ *վ*-ով, արտասանությունը (*վ/զ* համարժեքության համար հմմտ. *արեւ/արեզ, առու/առոզել, կով/կոզի, հով/հոզի* արմատակից գույգերը):

Էրիախիի և Կաթարգայի հարևաններից Վիտիրուիսին ընդգրկել է հետագա Շիրակի հարավարևմտյան մասը և հետագա Արագածոտնի՝ դրան հարող հատվածը: Ինչպես առաջինում, այնպես էլ երկրորդում կան «եղջերավոր» ստուգաբանությամբ մի շարք տեղանուններ՝ պայմանավորված դրանց բնակիչներին բնորոշ եղջերավոր-խոտաճարակ կենդանիների տոտեմական պաշտամունքով: Դրա մասին է խոսում Վիտիրուիսի ցեղապետ-արքայի երկրորդ նստավայրի անունը: Առաջինը Ուրեյունին էր,¹⁷ բայց Խորխոյան տարեգրությունում հիշատակված է նաև «Ամիգու քաղաքն արքայական Վիտերուխեական (երկրի), (որ) ամրացված էր»:¹⁸ Ըստ երևույթին, Արգիշտի I-ի կողմից Ուրեյունիի գրավումից և ավերումից հետո Վիտիրուիսի ցեղապետ-արքան տեղափոխվել էր բարձրադիր Ամիգու ամրոցը: ^{URU}Amigu¹⁹ տեղանվան մեջ մենք տեսնում ենք արտացոլումը հայերեն *ամիկ* «մի տարեկան արու ուլ» բառի նախաձևի: Սա կազմված է *ամ* «տարի» (<հ.-ե. *sama-) արմատից հանրահայտ *-իկ* վերջածանցով (հ.-ե. *g>հայ. *կ* օրինաչափ անցումով):²⁰

Amigu տեղանվան «ամիկ» ստուգաբանությունը հարիր է Արտին լեռան/սեպագր. Arfini²¹ անվան «եղջերավոր» բնույթին: *Արտ-ին* բաղադրիչները պարունակող լեռնանվան հիմք **արտ* արմատն առկա է ինչպես *արտորալ* «շտապել, փութալ» (< հ.-ե. *drā-<der- «վազել»),²² այնպես էլ *արտի*//*արտիկ* «վայրի մաքի»²³ բառերում: Հմմտ. նույնարմատ ալբան. dreñi «եղնիկ» բառը և թրակ. Drevis նույնիմաստ անձնանունը:²⁴ *Արտին* լեռնանվան *-ին* բաղադրիչը հայերեն *-ին* վերջածանցն է, որով են կազմված *ամուսին, գետին, դարբին, լուսին* բառերը, *Դուին* (<*Դիւ-ին), *Թալին, Կարին, Պաղին* տեղանունները: Հավանաբար, Թալինից արևմուտք գտնվող Արտին լեռան վրա է գտնվել Վիտիրուիսի երկրորդ արքայանիստ Ամիգու բերդը:

¹⁵ Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Եր., 1957, էջ 110:

¹⁶ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. IV, Եր., 1979, էջ 338: Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. IV, Եր., 1945, էջ 338, 339: Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1965, էջ 207:

¹⁷ YKH, NN 127 I, 155 D; TY, C. 210.

¹⁸ ՀԺՊՔ, հ. I, էջ 65:

¹⁹ YKH, N 127 V.

²⁰ ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 143:

²¹ Կարազեղեղեան, էջ 166, 251, YKH, N 462.

²² Ջահուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 13:

²³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, Եր., 1979, էջ 382: Պետրոսյան Ս., «Շարայի ցեղամիությունը» Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ.թ.ա. VI-VIII), Լրաբեր հասարակական գիտությունների, 1979, թիվ 12, էջ 71:

²⁴ Георгиев В. Исследования по сравнительно-историческому языкознанию. М. 1958. С. 118, 120.

Արևմուտքում Վիսիթուսին ներառում էր Տեկոր/Տիկոր (այժմ՝ Դիգոր)²⁵ գետի ավազանը։ Հետագա Շիրակի հարավ-արևմուտքում գտնվող այս գետի և նրա ավազանը բնակավայրի *Տեկոր/Տիկոր* անուններում *տիկ արմատին հավելվել է *-որ* վերջածանցը. հմմտ. *բեկ-որ, բոլ-որ, հատ-որ, մոլ-որ*²⁶ և այլն։ Տեղանվան *տիկ/*տեկ- արմատը նույնական է *տիկ* «տկճոր, պարկապուկ» բառի հետ (հ.-ե. *dig- «այծ»), բայց իր նախնական «այծ» իմաստով։ Հայերեն բառի արմատակիցներն են հուն. δίζα «այծ», հին բարձր գերմ. ziga «այծ», zicki «ուլ», անգլսաքս. ticcen «ուլ, այծիկ» բառերը²⁷։ Ըստ այսմ, *Տեկոր/Տիկոր* նշանակում է «Այծային(գետ)»։ Իմաստի տեսանկյունից հմմտ. արմատակից Dignat//Diglat «Տիգրիս» (<*dig- «այծ») գետանունը և Տիգրիսի վտակ Բաթմանաջրի *Քաղիթթ* (< քաղ «նոխագ») անունը²⁸։

Հնագույն Շիրակի տարածքում եղջերավոր խոտաճարակների պաշտամունքի արգասիք է նաև Սարգուրի II-ի (մ.թ.ա. 764-735թթ.) կողմից հիշատակված ^{KUR}Buzunia երկրանունը²⁹։ Այս ցեղային երկիրը տեղորոշվում է Ծովակ (Չլդըր) լճից հարավ-արևելք՝ Իգանի (հետագա Վանանդի հյուսիսում) և Էրիախի ցեղային երկրների միջև,³⁰ այսինքն՝ հետագա Շիրակի հյուսիս-արևմուտքում։ Buz-տ-ia բաղադրիչները պարունակող այս երկրանվան -ia բաղադրիչը ծագում է հ.-ե. *-(i)ā նախաձևից և Հայկական լեռնաշխարհի տեղանուններում վկայված է ինչպես ուրարտական (հմմտ. Alia, Alluria, Alqania, Aršana և այլն), այնպես էլ խեթական (հմմտ. Alzija, Arnija, Arzija, Maldija և այլն) սեպագրությամբ։ Այս վերջածանցը հետագա հայերենում ստացել է *-ի* տեսքը (հմմտ. *ալի-ք, այգի, բարդի, կոզի, հոզի* և այլն)³¹ և հայտնի է բազմաթիվ տեղանուններից. հմմտ. *Լոռի, Կարբի, Կումայրի/Կումիրի* (>Կումրի>Գումրի), *Հաղի, Մանի, Փարպի*։ Քննության առարկա տեղանվան -տ- բաղադրիչը նույնն է լինելու հայերենի հնդեվրոպական ծագումով *-ուն* վերջածանցի հետ (հմմտ. *արթուն, բեղուն, ձեղուն, փայլուն* և այլն),³² իսկ buz-արմատը՝ *բուծ* «ուլիկ, գառնուկ» (<հ.-ե. bhus-*o-*)³³ բառի հետ։ Վերջինի հնչյունական տարբերակներն են առկա *Բզնունիք* (<*բուծ-ն-ունի-ք կամ *բուծ-ն-ունի-ք) և *Բուծունիք* (<*բուծ- ունի-ք. հմմտ. մանկ. թոթովանքի բոժ<*բուծ-ն) գավառանուններում³⁴։

Հնագույն Շիրակի վերոբերյալ տեղանունների և ցեղանունների «եղջերավոր» բնույթի ստուգաբանությունների լույսի ներքո կարիք կա նորից անդրադառնալու նրա կենտրոնական և արևելյան մեծ մասն զբաղեցրած ցեղային երկրի սեպագրային ^IKUR Eriahi անվանը³⁵։ Գր. Ղափանցյանի ենթադրությունը այս ցեղանուն-երկրանվան Eri- բաղադրիչի հին իրանցիների *արի* «արիացի» ինքնանվան

²⁵ Աշխարհացոյց, էջ 71։

²⁶ Մուրադյան Մ., Բառագիտություն, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Եր., 1975, էջ 90։

²⁷ ՀԱԲ, հ. IV, էջ 405։

²⁸ Պետրոսյան Մ., Դրախտի գետերի և Խավիյա, Քուշ երկրների տեղադրության շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, 2006, թիվ. 2, էջ 243-246։

²⁹ YKH, N 155 F.

³⁰ TY, C. 21, 59-60, 236,

³¹ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 231։

³² Նույն տեղում, էջ 234։

³³ ՀԱԲ, հ. I, էջ 482։

³⁴ Աշխարհացոյց, էջ 45։

³⁵ TY, C. 258-259։

հետ ունեցած կապի վերաբերյալ³⁶ այդպես էլ իր հիմնավորումը չգտավ լեզվաբանական, պատմական կամ հնագիտական որևէ փաստի միջոցով: Ժամանակին մենք երկու հնարավոր ստուգաբանություն էինք առաջարկել ցեղանուն-երկրանվան Eri- բաղադրիչի վերաբերյալ՝ նրա հիմքում տեսնել կա մ հ.-ե. *er(i)- «եղջերավոր կենդանի, այծ, ոչխար» բառը,³⁷ կա մ հայերեն *երեք* բառի *երի* արմատը:³⁸

Այժմ ընդունելի կարելի է համարել առաջին առաջարկը: Ավելի վաղ կարծիք էր հայտնվել *երինջ* «եզ որթ արջառոյ չափահաս»³⁹ բառի արմատն հ.-ե. *er(i)-ն համարելու վերաբերյալ: Այդ արմատից են այժմ բխեցնում հուն. ἔριφος «ուլ», լատին. aries «խոյ», հին իռլ. heirp «այծ», իռլ. erb «կով», լիտվ. eras «գառնուկ» բառերը, նաև՝ հայ. *որոջ*/*արոջ* «գառնուկ» բառը:⁴⁰ Ըստ այսմ, հայ. *երինջ* <*եր-ինջ, *երի-ինջ. (հմմտ. *բաղլինջ* <*բաղ-իլ-ինջ և *կողինջ* <*կող-ինջ): Սրա արմատակիցն է *երէ* բառը՝ «վայրի կենդանի չորքոտանի՝ որսալի և ուտելի»⁴¹, «պախրա»:⁴² Ըստ Հ. Կարապետյանի՝ սեպագրային Eriahi//Eriahē// *Երիաիսե* երկրանվան վերջնաձայն հնչյունը եղել է կիսաձայն *ը*, կամ «թերևս, չի էլ ընթերցվել»:⁴³ Այս դեպքում Eri-ah(i) բաղադրիչներից բաղկացած երկրանվան երկրորդ մասը կարելի է համարել *-աիս* տեղանվանակերտի սեպագրի դրսևորումը. հմմտ. *Արցաիս*//*Արձաիս*, *Բջնաիս*, *Կամաիս*, *Կարծաիս*, *Շատաիս*, *Քաշաիս* տեղանուններում առկա *-աիս* տեղանվանակերտ վերջածանցը: Այդուհանդերձ, բացառված չէ, որ երկրանվան բուն արտասանությունը եղել է Eria-, իսկ *-he*//*-hi* վերջնամասը ուրարտական սեպագրության լեզվի հավելումն է: Այս դեպքում Eria <*Er(i)-ia՝ հնդեվրոպական ծագումով *-ia* տեղանվանակերտի հավելումով. հմմտ. հարևան երկրներից Buzunia և Quria երկրանունները:

Շիրակի և շրջակայքի բնակչության պաշտամունքի առարկա Արագած լեռան անունը ևս խոսում է Հայկական լեռնաշխարհի այս մասում եղջերավոր կենդանիների նախնադարյան պաշտամունքի մասին:⁴⁴ Քրիստոնեական ավանդազրույցներում Արագածին է առնչվում Գ. Լուսավորչի մշտավառ կանթեղը՝ *անպարան* կախված երկնքից, որից էլ իբր գավառն ստացել է իր *Ապարան* անունը:⁴⁵ Այսպիսի ավանդազրույցների հնադարյան ակունքների բացահայտիչներից մեկը Արագածի ստորոտին գտնված հին հայկական *Նիզ* (նաև *Նիզատուն*) գավառի անունն է,⁴⁶ որովհետև գրաբարում նրա հիմք *Նիզ* բառը ոչ միայն «լինզ» էր նշանակում, այլև «ձողաձև կամ գերանաձև լույս, որ երևում է ամպերում»:⁴⁷ Սա ևս հայերենի հնդեվրոպական միջուկին պատկանող բառերից է՝ ծագած հ.-ե. *knigʰ-

³⁶ Капанцян Г. Историко-лингвистические работы, т. II, Ер., 1975, С. 68-69.

³⁷ Гамкрелидзе Т., Иванов В. Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тб., 1984, С. 584.

³⁸ Պետրոսյան Ս., Արջի և եղջերվի հակադրամիասնական պաշտամունքի արտացոլումը հնագույն Շիրակի տեղանուններում, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական II գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 46: Նույնի, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 236-237:

³⁹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, էջ 684: ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 56:

⁴⁰ Гамкрелидзе Т., Иванов В., նշվ. աշխ., հ. II, էջ 584:

⁴¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, էջ 682:

⁴² Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի (այսուհետև՝ «Բառգիրք հայոց»), Եր., 1975, էջ 94:

⁴³ Կարազեղեղեան, էջ 240:

⁴⁴ Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 303-305:

⁴⁵ Ղանալանյան Ա., Ավանդապատում, Եր., 1969, էջ 368:

⁴⁶ Աշխարհացոյց, էջ 72, 111:

⁴⁷ ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 450:

/*kneig^h- «ծել, թեքել» նախաձևից:⁴⁸ Քարիդարյան մարդու առաջին լինգը եղել է քարայծի եղջյուրը, որը, ինչպես ստորև կտեսնենք, եղել է պաշտամունքի առարկա և համարվել լույսի աղբյուր:

Ինչպես են լծորդվել ու գուգորդվել «եղջյուր» և «լույս» հասկացությունները: Խոր նախնադարից սկսած՝ Հայկական լեռնաշխարհի բնակիչների պատկերացումներում լեռները քարացած եղջերավորներ էին, իսկ լեռնագագաթները՝ նրանց եղջյուրները: Լուսաբացին նախնառաջ լուսավորվում են լեռնագագաթները, որով այն տպավորությունն է ստեղծվում, թե երկնային լույսն առաջինն իրենք են ընդունում ու տարածում: Ըստ այդմ, մեր նախնիների առասպելաբանական պատկերացումներում տեղի է ունեցել «լեռնագագաթ»/«եղջյուր»/«լույս» հասկացությունների գուգորդում: Թե ինչքան վաղ կարող էր տեղի ունենալ դա, ցույց է տալիս վաղինդեվրոպական DY արմատի ժառանգորդ բառերի իմաստների տարբերակվածությունը հնդեվրոպական զանազան լեզուներում: Մի դեպքում այդ արմատին հանգող բառերը «այծ» են նշանակում, մյուսում՝ «լույս», «աստված» և այլն:⁴⁹ Հայերենում ունենք *տիկ* (<հ.-ե. *dig- «այծ») «տիկ, տկճոր», «պարկապուկ»,⁵⁰ *տիւ* (<հ.-ե. *diu-) «ցերեկ, օրվա լույս մասը»⁵¹ բառերը և *Տիւր* (<*տիւ-ր) դիցանունը:⁵² «Այծ»/«Լույս» առասպելաբանական գուգորդման համար հմմտ. նաև *բուծ* «ուլիկ, զառնուկ» (< հ.-ե. *bhug o-) և «*Բուզի*-արեգակն»⁵³ (< հ.-ե. *bhug' - (i)ā):

Այդպիսի առասպելաբանական գուգորդումների արգասիքներից մեկն էլ *Արագած* <*ա-րագ-ած լեռնանունն է, որում առկա է *րագ<հ.-ե. *ragh- «եղջյուր» արմատը՝ -ր-ից առաջ հայերենին բնորոշ ա- նախահավելվածով և -ատ (*ած) վերջածանցով:⁵⁴ Լեռնանվան վերջնամասի -ատ/-ած համարժեքության համար հմմտ. Մասիս լեռան երկրորդ անվան *Արարատ* և *Արարած* տարբերակները՝ «Մասեայ-Արարած»/«Մասսեայ. Արարած»:⁵⁵ Լեռնանվան *արագ- (<հ.-ե. *ragh-) արմատի զուգահեռ-արմատակից բառերից նախնառաջ հիշատակելի են հունարենները, որոնց բուն «եղջյուր» իմաստը կորսված է (ինչպես հայերեն *Արագած* լեռնանվան մեջ), սակայն փոխաբերաբար առկա է հետևյալ բառերում՝ ῥάχις «լեռնագագաթ,

⁴⁸ ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 450: Հայ ժողովրդական հեքիաթներից մեկում «թեքված > կամարաձև» իմաստի պատճառով և «եղջյուր»/«լույս» առասպելաբանական գուգորդման հենքի վրա նույնացված են ծիածանը՝ որպես երկնքի ու երկրի միջև կամուրջ և տիեզերական լեռան մարմնավորում այծի եղջյուրները: Ահա դրա նկարագրությունը. «Ճամփին մի էծ տեհա, պոզերն էնդդար վենձացել են, որ երգնքին դեմ են էլալ, էլ կարում չի զլուխը կռացնել ու խոտ թածել... էծը չոքում. մարդը նրա մեջքն ա ըլում, պոզերովը բծրանում, գնում աստծու կուշտը» (Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VIII, Եր., 1977, էջ 66):

⁴⁹ Андреев Н. Раннеиндоевропейский праязык. Л. 1986. С. 86-87.

⁵⁰ ՀԱԲ, հ. IV, էջ 405:

⁵¹ Նույն տեղում, էջ 410:

⁵² Աղայան Է., Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 148-150:

⁵³ Բաղդիրք հայոց, էջ 58:

⁵⁴ Պետրոսյան Ս., «Շարայի ցեղամիությունը»..., էջ 69-70: «Մի բան ունենալը, մի բանից լինելը» նշանակությունը տվող -ատ վերջածանցի համար հմմտ. արմատ, խորխորատ, հեղեղատ, հրատ և այլն (Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, էջ 75-76), իսկ որպես տեղանվանակերտ՝ հմմտ. Այրարատ, Լմբատ, Հաղբատ, Որթուատ, Պաշատ, Տամբատ:

⁵⁵ Բաղդիրք հայոց, էջ 209, 405 ծան. 154: Հայերենում տ/ծ համարժեքության համար հմմտ. «Օժ, տօ» միջարկություն կոչական, նաև առբայ» (նույն տեղում, էջ 154): Հմմտ. նաև խայտ/խայծ, անտառ/ծառ, բուտ/բուծանել, կեղտ/կեղծ, մուտ/մուծանել, պղտոր/պիղծ՝ իրենց հիմքում նույնական զույգերը (Джаукян Г. Очерки по истории дописьменного периода армянского языка. Ер. 1967. С. 302-303):

լեռնաշղթա» (>«ողնաշար, մեջք»), ραχ(α «ժայռոտ ծովեզր, առափնյա ժայռ», ραχ(α «ողնաշարը ջարդել» (>«ջախջախել, ոչնչացնել»):⁵⁶ «Լեռնաշղթա»/ «ողնաշար» առասպելաբանական գուգորդման համար հմմտ. անգլ. back «մեջք» և «Քլրի գագաթ», spine «ողնաշար» և «լեռնագագաթ», ռուս. хребет «մեջք, կոնակ, ուս» և «լեռնաշղթա» (> хребтовѣй «ողնաշարի» և «լեռնաշղթայի»): Հայերեն և հունարեն բառերի արմատակիցներից է օսերեն ragʷan «կախիչ» (<«եղջյուրե կախիչ») բառը՝ նույնպես նախնական իմաստի կորստով, ինչպես նաև արմատի բուն իմաստը պահած բայթիկ- սլավոնական լեզուների հետևյալ բառերը. հին սլավ. roǵъ, ռուս. por «եղջյուր» (> роговина, роговье «լեռնաշղթա, հրվանդան»), լիտվ. rūgas, լատիշ. rags, պրուս. ragis «եղջյուր»:⁵⁷

Արագածի ընկալումը՝ որպես երկնային կանթեղի լեռի, պայմանավորված էր նաև կենցաղային և լեզվական որոշակի գործոններով: Ի նկատի առնենք, որ եղջյուրները մանավանդ քարայծիներ, նաև առաջին ջահերն էին: Մնամեջ եղջյուրի մեջ լցված ճրագուի հալվելու միջոցով այն ներծծած պատրույզը վառվելով շարունակում էր լույս տալ: Լեզվական գործոնի դեպքում պետք է ի նկատի առնել, որ հնագույն հայերենում ինչ-որ ժամանակ նույն կերպ են արտասանվել *արագ «եղջյուր» (<հ.-ե. *ragh) բառը և արեգ «արև, արեգակ» (<հ.-ե. *rey-) բառի արագ տարբերակը, որից, ինչպես Հ. Աճառյանն է գրում, «յ նախդիրով ունենք հին և ընտիր մի բառ յարագել «արևի առաջ դնել»:⁵⁸ Արագածի կատարի սրբազան լույսի պաշտամունքը համահայկական բնույթ է ունեցել: Եթե նրա անվամբ Արագած է կոչվել հին հայկական տոմարի 20-րդ օրը,⁵⁹ ուրեմն, յուրաքանչյուր ամսի այդ օրը ձևավորված է եղել լեռան և նրա սրբազան լույսի պաշտամունքին:

Հայ ժողովրդական հեքիաթները պահպանել են առասպելաբանված եղջերավորների և նրանց եղջյուրների մասին բազմաթիվ վկայություններ: Դրանցից մեկում առասպելաբանված կենդանին նկարագրվում է հետևյալ կերպ. «Էտ էծին աշկերը հենց ար լիա ծովին ձուրը, պոզերն էլ հենց ար լիա կրեռ-կրեռ թորը, լիա պոզվատ, լիա ալմաստ, հենց շողշողում ար»:⁶⁰ Սյունյաց Ուղտասար լեռան ներքոբերյալ ժայռապատկերը ներկայացնում է արդեն մարդակերպ, բայց դեռևս եղջերավոր մի աստվածություն:⁶¹ Սրա լուսեղեն բնույթի վկան աջ ձեռքից արձակված նիզակն է՝ կայծակի խորհրդանիշը, և ձախ ձեռքին պահված սկավառակը կամ գունդը՝ արևի խորհրդանշանը: Աստվածության եղջյուրներն ավարտվում են գնդիկներով, որոնք ընդհանրապես լույսի աղբյուրներ են խորհրդանշում, իսկ այս դեպքում՝ ժայռապատկերի աստվածության լուսարձակ եղջյուրները:

Հայկական քարայծի (բեզուարյան այծ) ընտանի տեսակի՝ Հայկական լեռնաշխարհից հարևան երկրներ տարածվելուն զուգընթաց,



⁵⁶ Древнегреческо-русский словарь. т. II. М. 1958. С. 1450.

⁵⁷ Абаев В. Историко-этимологический словарь осетинского языка. т. II. Л.- М. 1974. С. 345; Фасмер М. Этимологический словарь русского языка. т. III. М. 1971. С. 489.

⁵⁸ ՀԱԲ, հ. I, էջ 311:

⁵⁹ Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 78:

⁶⁰ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. V, Եր., 1966, էջ 144:

⁶¹ Կարախանյան Գ., Սաֆյան Պ., Սյունիքի ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, 4. Եր., 1970, աղ. 63, նկ. 2:

տարածվել է նաև «եղջուր»/«լույս» առասպելաբանական զուգորդումը: Պատահական չէ, որ սեմական նախալեզվի *karn «եղջուր» բառը հնդեվրոպական նախալեզվից կատարված փոխառություն է՝ ծագած հ.-ե. *ker-n-(<*ker- «եղջուր, եղջերավոր կենդանի») նախաձևից,⁶² իսկ սեմական նախաձևին հանգող եբրայերեն keren «եղջուր» բառը ըմբռնվել է նաև «լույսի ճառագայթ» իմաստով: Հրեաների Մովսես նահապետի հանրահայտ քանդակում Միքելանջելոն նրան օժտել է եղջուրներով, իսկ Ֆրա Անջելիկոյի և Ռաֆայելի նկարներում դրանց փոխարեն մենք տեսնում ենք երկու փնջաձև ճառագայթ:⁶³

Վիտիրուխիի ցեղապետ արքայի երկրորդ նստավայրի՝ Ամիգուի գրավումից և ավերումից հետո երկիրը վարչական կենտրոն չունեւ: Սարդուրի II-ը այդպիսին դարձրել էր վերաշինված Ուրայանին (Ուրեյունին): Իր տարեգրության մեջ նա ասում է. «Հենց այդ տարում երրորդ անգամ արշավեցի Վիտերուխե (երկրի) վրա: Երեք զավառապետ ապստամբած (...) էին, երեք տեղերում արշավանք կատարեցի: Խալդյան մեծությամբ երկիրը վերապաշարեցի, մեկ օրում նվաճեցի: Երկիրը կերա (=յուրացրի), մարդ, կին քջեցի: Ուրայա ամրոցը կառուցեցի, բերդակալ այնտեղ նստեցրի (...): Վիտերուխեյան ժողովրդին (...) այնտեղ բնակեցրի»:⁶⁴ Սարդուրի II-ը այդպես վարվել էր, հավանաբար, ի նկատի առնելով երկրի կյանքում Ուրեյունիի ունեցած առաջնային դերը: Ըստ երևույթին, Ուրեյունին եղել է Վիտիրուխիի նաև կրոնական կենտրոնը: Իսկ Արարատյան դաշտում ամրապնդված Ուրարտուի համար նրան մոտ գտնվող Ուրեյունին նաև ռազմավարական նշանակություն էր ունենալու՝ որպես Ախուրյանի ավազան թափանցելու հենակետ:

Ուրեյանի բնակավայրի պաշտամունքային բնույթն ուղղակի կապի մեջ էր լինելու Սիֆու(hi) անվան և «եղջուր»/«լույս» առասպելաբանական զուգորդման հետ: Արգիշտի I-ի կողմից Ureiu(ni) և Սարդուրի II-ի կողմից Uraia(ni) տեսքով բերված տեղանվան բուն ձևը եղել է *Ureja-/*Uraia- (ուղղ. հոլով) և *Ureio-/*Uraio (սեռ. հոլով). հմմտ. հին հայկական Ուրմի (<*Ուրմ-ի) տեղանվան Ուրմիա (ուղղ. հոլով) և Ուրմիա (սեռ. հոլով) ձևերը: Հայերենի -ի վերջածանցի հ.-ե. *-(i)ā նախաձևից սերելու և -ի տեղանվանակերտի հետ նույնը լինելու վերաբերյալ խոսք եղավ վերևում՝ Buzunia երկրանվան առնչությամբ: Քննության առարկա տեղանվան *Urei-/Urai- հիմքը ևս բաղադրյալ է՝ կազմված *ur- արմատից և ei-/ai վերջածանցից: Ընդ որում, դրանք համարժեքներ են, ինչն իր արտացոլումն է գտել գրաբարում (-jē-/-ā). հմմտ. բորայ/բորէ «բորենի», երայ/երէ «որսի խոտաճարակ կենդանի», կրայ/կրիայ, պախրայ/պախրէ բառերի զույգ տարբերակների վերջածանցները: Տեղանվան հիմք բառի *ur- արմատը, մեր կարծիքով, նշանակում է «լույս» և առկա է նաև միջնադարյան «Բառգիրք հայոց»-ի «Ուռնայ-լուսոյ յարութիւն, կամ լոյս վերահայեաց» բառում.⁶⁵ հմմտ. «Ուրիա-լոյս իմ, կամ հուր տեառն, կամ վկայութիւն»⁶⁶ և ռուսն «աշտարակ կամ վառարան, հրարան»⁶⁷ բառերը (վերջին բառը, Գր. Ղա-

⁶² Гамкрелидзе Т., Иванов В., նշվ. աշխ. հ., II, էջ 876:

⁶³ Мурьянов М. К семантическим закономерностям в лексике старославянского языка (рогъ и его связи), Вопросы языкознания. 1979. N 2. С. 103, 106.

⁶⁴ УКН. N 155 D; ՀԺՊԲ, հ. I, էջ 77: Ըստ երևույթին, Արգիշտի I-ը նվաճված Վիտիրուխի, Լուշա, Կաթարգա երկրներից Վիտիրուխիի գլխավորությամբ վարչական մի միավոր էր ստեղծել: Ըստ այսմ, Սարդուրի II-ը Վիտիրուխիի երեք զավառապետներ ասելով կարող էր ի նկատի ունենալ նախկին Վիտիրուխիի, Լուշայի և Կաթարգայի տարածքներում նշանակված կառավարիչներին:

⁶⁵ Բառգիրք հայոց, էջ 261:

⁶⁶ Նույն տեղում, էջ 262:

⁶⁷ ՀԱԲ, հ. III, էջ 608:

փանցյանի կարծիքով, *վառ* արմատի տարբերակն է և իր հիմքում ունի խեթերեն *ur-/yar-* «վառել, այրել» արմատը):⁶⁸ Այս դեպքում, *Ureju(ni)/Uraja(ni)* տեղանունն ունեցել է «լուսե, լուսեղեն» կամ դրան մոտ ինչ-որ իմաստ: Հիշենք Արագածին առնչվող Լուսավորչի *մշտավառ կանթեղի* ավանդազրույցը և *Նիզ* գավառանունը:

Հին հայկական ազգասերման ավանդազրույցների համաձայն՝ Շիրակի և Հայկական լեռնաշխարհի, հյուսիսարևելյան կեսի շատ շրջանների բնակչության նախահայրն էր Հայկի ավագ որդի Արամանյակը:⁶⁹ Իր անվամբ արորային հողագործությանն առնչվելով հանդերձ (*Արամանեակ<*Արա-ման-եակ* հմմտ. *արոր<արար<հ.-ե. *arə-tro*)՝ Արամանյակը համարվել է «եղջերավոր» Արագած լեռան և Արագածոտն գավառի անվանադիրը, ուրեմն, նաև «եղջերավոր» տոտեմ ունեցող կերպար:⁷⁰ Նրա թոռ Շարան անվանադիրն էր Շիրակի և նախահայրը ինչպես Շիրակի, այնպես էլ Աշոցքի, Տաշիրի, Զավախքի, Գուգարքի մեծ մասի բնակչության:⁷¹ Շարայի վիպական կերպարի «եղջերավոր» նախատիպ ունենալու մասին է խոսում *շարապայ* բառը: *Շարապայ<*Շարայ-պայ*, որի երկրորդ մասը նույնն է *պայ* բառի⁷² հետ: Սա նշանակում է առասպելական այն էակը, «որ մարդուց է առաջանում և երեների հետ է արածում» (հմմտ. *տնպայն* «տան պահապան բարի ոգի»):⁷³ Միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում *շարապայ* բառն ունի «հորթոյ պատկեր» բացատրությունը:⁷⁴

Շարայի վիպական կերպարի հողագործական-հացահատիկային բնույթը ներդաշնակ է նրա՝ եղջերավոր կենդանու տեսքով տոտեմ նախնի լինելու հետ, որովհետև բրիչային հողագործությունից արորայինին անցումը նշանավորվեց հողագործական աշխատանքներում խոշոր եղջերավոր անասունի ներգրավումով, որով վերջինի պաշտամունքը նոր բովանդակություն ձեռք բերեց: Հողագործ ու հացահատիկ մշակող հայը անցյալ դարասկզբին ևս ասում էր. «Հաց, հացի հրիշտակ./*Արդար եզան* վաստակ./ Զրգի արժանի էղնին»:⁷⁵ «Եղջերավոր»-ի և Շարայի հողագործական-հացահատիկային պաշտամունքները սերտաճած են եղել այնպես, ինչպես եղել է նաև ծագումնաբանորեն նրան մոտ կերպարների ուրարտա-մուծածիրային Խալդի և փոքրասիական-հունական Դիոնիսոս աստվածների դեպքում: Հայտնի է, որ Խալդիին ոչ միայն ուլեր և ցուլեր էին զոհաբերում, այլ նաև հաց և գինի, ուստի «Մերբար թեփերի ընծայական թիթեղների վրա Խալդին երբեմն պատկերված է լինում հացերով լեցուն սեղանի առջև»:⁷⁶ Ի դեպ, Խալդի աստծու նախատիպը, ինչպես նրա անունն էլ է ցույց տալիս,⁷⁷ դիցայծ է

⁶⁸ Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան, Եր., 1961, էջ 353:

⁶⁹ Սովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց, Եր., 1981, գիրք. Ա, գլ. ժա:

⁷⁰ Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 177-178, 365-366:

⁷¹ Խորենացի Բ, ք, Պետրոսյան Ս., «Շարային ցեղամիությունը»..., էջ 69-70:

⁷² Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 57:

⁷³ ՀԱԲ, հ. IV, էջ 15-16:

⁷⁴ Բառգիրք հայոց, էջ 248:

⁷⁵ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. X, Եր., 1967, էջ 464:

⁷⁶ Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 36, 107 ծան. 39:

⁷⁷ Hal-di դիցանվան *խալ//խաղ «այծ» և *դի//դի-ք «աստված» բաղադրիչների վերաբերյալ տե՛ս Պետրոսյան Ս., Խալդի դիցայծի և գինու պաշտամունքի շուրջ, Հանդես ամսօրեայ, Վիեննա, 1977: Պետրոսյան Ս., Պետրոսյան Օ., Հնագույն Օռփքի դիցական գլխավոր եռյակի շուրջ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IV, Գյումրի, 2001, էջ 90-91: Պետրոսյան Ս., Քոչարի պարի ծիսական հենքը, Արվեստ և ժամանակ. հայացք Գյումրուց, Գյումրի, 2010, էջ 28:

եղել: Ինչ վերաբերում է Դիոնիսոսին, ապա խաղողի և գինու աստված լինելուց բացի, նա հողագործության հովանավոր աստված էր և հացահատիկի անձնավորում: Նա «առաջինն էր եզները լծել արորին, որը մինչ այդ մարդիկ ձեռքով էին քարշ տալիս: Ոմանք գտնում են, որ այդ պնդումը բանալի է տալիս հասկանալու, թե Դիոնիսոսին...ինչու՞ էին պատկերում եզան գլխով» - գրում է Ջ. Ջ. Ֆրեզերը:⁷⁸

Շիրակի, Աշոցքի, Տաշիրի, Ջավախքի և Գուգարքի հնագույն բնակիչները միայն իրենց «եղջերավոր» տոտեմի շնորհիվ չէ, որ համարվել են Շարայի և Գուշարի սերունդներ, ուրեմն, նաև Հայկազուններ՝ նախահայր Հայկի սերունդներ:⁷⁹ Այս դեպքում կարևորվել է նաև լեզվական գործոնի դերը: Հայկազն Շարայի սերունդները համարված հայության հատվածը ավանդազրույցների միջոցով հիշողություններ է պահպանած եղել իր նախնիների՝ հիշյալ շրջանների ցեղերի հայախոս լինելու, հայկական էթնոսին պատկանելու վերաբերյալ: Այդ իրողությունն են փաստում նաև տեղի սեպագրային (և ավելի ուշ ավանդված) ցեղանուններից ու տեղանուններից հոդվածում բերվածների հնդեվրոպական-հայկական ստուգաբանությունները:

О ЛОКАЛИЗАЦИИ КЛИНОПИСНОЙ СТРАНЫ ՄԻՒՐԱ(Մ)Ի

___ Резюме ___

___ С. Петросян ___

Страна Витирухи включила в себе юго-западную часть гавара Ширак и примыкающие к нему земли. В основе этнонима Витиру(хи) лежит корень **uit-*, ср. арм. *վիթ* “газель, серна”, *վթիկ* “теленочек оленя”, *վիտվիտ* “прыгающий” > “козель”. Тотемными животными для древнейших жителей Ширака являлись эти и другие рогатые. Именно они дали свои имена племенам и странам. Оронимы *Արագած* и *Արтин* также имеют индоевропейское происхождение. *Արագած* < **rag-at-*, где **rag-* < и.-е. **ragh-* “рог”, а *Արտին* < **dren-* < и.-е. **drā-* “бегать” (ср. фрак. личн. им. *Drenis* и албан. *dreni* “олень, лань”). Как видно из древнеармянских эпических сказаний, Шара является эпонимом Ширака и его древних жителей. Его имя лежит в основе слова *շարիշիշ* “статуя теленка”, которое говорит о том, что и для Шара тотемным животным послужил какой-то рогатый. В древнеармянских эпических сказаниях деда Шара-Арамаяка считали эпонимом горы Арагац и гавара Арагацотн. Одно-временно он-старший сын этнарха армян Хайка. Если древние жители Ширака и Арагацотна считали себе потомством Шара и Арамаяка, значит они сохранили кое-какие воспоминания о том, что их предки, в том числе и витирухийцы, принадлежали к армянскому этническому обществу. Вышеупомянутые этнонимы и топонимы из Ширака и Арагацотна подтверждают этот факт, так как они этимологизируются на индоевропейско-армянской почве.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պետրոսյան Սարգիս Գարեգինի - պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, Շիրակի պետական համալսարան,
E-mail: Vahe1996@mail.ru

⁷⁸ Ֆրեզեր Ջ., Ոսկե ճյուղը. մոգության և կրոնի ուսումնասիրություն, Եր., 1989, էջ 456:

⁷⁹ Խորենացի, Ա, ժա, Բ, ք:

Հայերենի պատմության հնագույն շրջաններից ի վեր բառակրկնության ճանապարհով ստեղծվել են զգալի քանակությամբ բառեր, որոնք լեզվի բառային կազմի հետ փոխանցվել են հին հայերենին: Հինգերորդ դարի թարգմանական գործերում և մատենագրական երկերում հանդիպում են կրկնավոր մի շարք բարդություններ, որոնք արտացոլում են բառակազմական այդ եղանակի համաժամանակյա կաղապարներն ու մասնակաղապարները:

Հինգերորդ դարում շարունակվում է վաղնջահայերենից կամ հնագույն շրջանից եկող կրկնավորների գործածությունը, սակայն դրանց կաղապարների մի մասը դառնում է քիչ գործուն, մյուսը՝ ոչ գործուն և անարդյունավետ: Մյուսն փոխարեն սկսում են հանդես գալ կրկնության նոր կաղապարներ և նոր տիպեր¹:

Հին հայերենին փոխանցված և լեզվի այդ գոյավիճակում կազմավորված կրկնավոր բարդությունները լայն գործածություն են ունեցել Աստվածաշնչի թարգմանական գրքերում և հինգերորդ դարի մատենագրական հուշարձաններում²:

Նկատի ունենալով, որ Աստվածաշունչ մատյանը հայերեն առաջին (թարգմանական) աշխատանքն է՝ մեզ հետաքրքրում է, թե հնագույն շրջանից ավանդված կրկնավոր բարդությունները բառակազմական ինչպիսի տիպերով են հանդիպում մատյանի թարգմանական գրքերում³:

Մեր կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Աստվածաշունչ մատյանի թարգմանական գրքերում գործածված կրկնավորները հանդես են գալիս բառակազմական որոշակի տիպերով: Բառակազմական տիպը որոշվում է ըստ այն սկզբունքի, թե ինչ գործոններ են ընկած կրկնավոր բարդության ձևավորման հիմքում⁴: Ըստ այդմ, Աստվածաշունչ մատյանում կարելի է առանձնացնել արմատակրկնության հետևյալ բառակազմական տիպերը՝ *արմատական տիպ* (գոյնագոյն, գունդագունդ, աղխաղխել, աղտաղտին, այլայլել, արծարծել...), *ձայնդարձով և հերթագայությամբ տիպ* (բարբառ, թթափել, կարկատել, սպառսպուռ...), *աճականով և նախդրավոր (շաղկապավոր) տիպ* (աղջամուղջ, արհա-

¹ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 364:

² Ըստ Հր.Աճառյանի՝ հայերենի կրկնավորների թիվը հասնում է շուրջ 500-ի (տե՛ս Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. 3, Եր., 1957, էջ 83-93):

³ Քննության բնագիր ենք ընտրել Հայաստանի աստվածաշնչային ընկերության՝ 1997-ի հրատարակած բնագիրը՝ «Աստվածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց»:

⁴ Գրաբարի կրկնավոր բարդությունների հիմնական տիպերի մասին տե՛ս Туманян Э. Древнеармянский язык. М. 1971. С. 168-170:

մարիել, կոկորդ, մրմնջել, դեմ ընդ դեմ, խառն ի խառն...), *հնչյունաանկումով տիպ* (թաթալել, սասանել, խաբեբա, խաղաղ, գժուձ, խլխլել...):

Այժմ դիտարկենք մեր ընտրանքում եղած *աճականով* և *նախդիրներով* (շաղկապներով) *ձևավորված կրկնավորները* և ցույց տանք դրանց բառակազմական յուրահատկություններն ու իրացումներն Աստվածաշունչ մատյանի հայերեն թարգմանական զրբերում:

Ա. Աճականով տիպի կրկնավորներ

Գ.Զահուկյանը, դիտարկելով կրկնությունների ժամանակագրական փուլերը, նկատում է, որ հնդեվրոպական շրջանից եկող և դրանց նմանակությամբ հետհնդեվրոպական շրջանում կազմված բառերի համար բնորոշ է մասնական կրկնությունը, որ հաճախ ուղեկցվում է ձայնորդային հերթագայությամբ և երբեմն վերջահավելական տարրերով՝ աճականով⁵:

Այս կարգի կրկնավորների արտահայտության պլանում աճական ստանում է բառի երկրորդ բաղադրիչը՝ կրկնորդը: Աճականը, առանձին վերցրած, հնչյուն է կամ հնչյունական տարր, որ սովորաբար ունենում է անորոշ ծագում ու նշանակություն, և որը կարող է իմաստային նոր երանգ հաղորդել բառին, երբեմն էլ փոխել նրա իմաստը⁶: Աճականը ձևական ցուցիչ է, բառակազմական բաղադրիչների տարբերակման նշույթ, որ առանձնահատուկ դրսևորում ունի բառակազմության ժամանակ⁷: Արմատակրկնության դեպքում աճականը, ավելանալով բարդության երկրորդ բաղադրիչին, առաջ է բերում կա՛մ արմատահնչյունի հերթագայություն, կա՛մ արմատի ծավալում⁸: Աճականն արմատակրկնության դեպքում կարող է ունենալ իմաստի սաստկացման դեր:

Աստվածաշնչում աճականի բառակազմական կառուցատիպով հանդիպում են *աղջամուղջ, արհամարհել, կոկորդ, մրմնջել, տատասկ, տրտունջ և ճաճանչ* բառերը, ինչպես նաև նրանցով բաղադրված կազմությունները:

Այս բառերի արտահայտության պլանի քննությունը ցույց է տալիս, որ դրանք բաժանվում են երկու՝ հոդակապով և անհոդակապ տեսակների:

ա) Հոդակապով բարդություններ

Հոդակապով կրկնավորների երկրորդ բաղադրիչն ստանում է հավելվածային հնչյունական տարր, մյուս կողմից՝ բարդության սերող հիմքը կարող է մնալ անփոփոխ կամ էլ ենթարկվել հնչյունափոխության (ձայնդարձի)⁹: Այդ կառուցատիպին բավարարում են *արհամարհել և աղջամուղջ* բառերը:

⁵ Տե՛ս Զահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 215:

⁶ Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազյուկյան Թ., Լեզվաբանական բառարան, Եր., 1975, էջ 8: Աճականի մասին հանգամանորեն տե՛ս Ն.Սուքիասյան, Աճականը հայերենում, Եր., 2016:

⁷ Զահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 215:

⁸ Ахманова О. Словарь лингвистических терминов. М. 1969. С. 129.

⁹ Գ. Զահուկյանն այս տիպի կրկնությունները համարում է նորակազմություններ, որ կապված է –ա- հոդակապի գործածության հետ: Հոդակապավոր կրկնությունների մեջ առանձնացնում է այն տեսակը, որ բնութագրվում է երկրորդ կրկնորդի սկզբնային պարտադիր մ բաղաձայնով՝ առաջին կրկնորդի մեջ բաղաձայնի բացակայության կամ մի այլ բաղաձայնի առկայության պայմաններում՝ աղխամաղխ, արհամարհել, խառնամառն (Հայոց լեզվի

Արհամարհել կրկնավորի հիմնական բաղադրիչն է *արհ* ձևությամբ (< իրանյան *ahr*)¹⁰: Բարդության արտահայտության պլանում *արհ* արմատն ստացել է *մ* հավելվածային տարրը (մարհ)՝ պահպանելով բառապատկերի ամբողջականությունը:

Բայական բարդությունը՝ *արհամարհել*, ունի «խոտելի՝ անարգ համարել, բանի տեղ չդնել» իմաստներ և այդ նշանակություններով հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Տեր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց, եւ *արհամարհէ* Տեր զխորհուրդս իշխանաց (Սաղ., ԼԲ. 10):

Աստվածաշնչում գործածված է *արհամարհելով* *արհամարհել* ոճական ավելադրությունը՝ իմաստի սաստկացման նպատակով, հմմտ. Անձն եթէ ոք մեղիցէ, եւ *արհամարհելով* *արհամարհիցէ* զպատուիրանս Տեառն... (Ղեւտ., Զ. 2):

Արհամարհ սերող հիմքով Աստվածաշնչում հանդիպում են *արհամարհանք*, *արհամարհող*, *արհամարհոտ*, *արհամարհութիւն* բառերը: Օրինակ՝ Յորժամ լսեն *զարհամարհանս* կնոջ թագաւորին, համարձակին իշխել և անարգել զարս իւրեանց (Եսթեր, Ա. 18): Կատարելութիւն ուղղոց առաջնորդեսցէ նոցա, եւ զայթակղութիւն *արհամարհողաց* աւերեսցէ զնոսա (Առակ., ԺԱ. 3): Գուցէ շոշափիցէ զիս հայր իմ, եւ լինիցիմ առաջի նորա իբրեւ *արհամարհոտ* (Օնն., ԻԷ. 12): Եւ տես, հայր իմ ... զի ոչ գոյ ի ձեռին իմում չարութիւն եւ ոչ *արհամարհութիւն* եւ ոչ ամպարշտութիւն, եւ ոչ մեղայ ինչ քեզ (Ա.Թագ., ԻԴ. 12):

Աղջամուղջ կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը՝ *աղջ*, ծագումնաբանորեն հանգում է բնիկ հնդեվրոպական **agh-* «մութ ամպ, խավար» արմատին¹¹: Արմատակրկնության դեպքում երկրորդ բաղադրիչն ստացել է հավելվածային *մ* աճականը, ինչպես նաև կատարվել է նրա արմատական ձայնավորի ձայնդարձ (ա>ու):

Աղջամուղջ բարդությունը «մթնշաղ, կիսախավար. մթություն. մեգ» իմաստներով գործածվում է գրաբարում և այդ իմաստներով հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Այսոքիկ են աղբերք անջրդիք եւ մեգք վարեալք ի մրկէ, որոց *աղջամուղջք* խաւարին յաւիտեան պահեալ կան (Բ. Ղեւտ., Բ. 17):

Հոդակապավոր կրկնավոր բարդությունների այս տիպը սահմանափակ գործածություն ունի Աստվածաշնչում:

բ) Անհոդակապ բարդություններ

պատմություն, էջ 364): Այս կարգի կրկնավորների վերաբերյալ Ա.Բագրատունին նկատում է. «Երբեմն երկրորդ բառին սկիզբն փոխի ի մ, կամ թէ ձայնաւոր իցէ՝ յաւելու մ, և կամ տառ ինչ փոխի. որպէս, խառնամառն, շեղտամեղտ, աղիսամաղիս, աղջամուղջ, խաժամուժ, հաստամեստ.- բարձրաբերձ, ժանտաժուտ, խաղտախուղտ» (Բագրատունի Ա., Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 661-662):

¹⁰ Աճառյան Հր., Հայերէն արմատական բառարան, հ. 1, Եր., 1971, էջ 323: Գ. Զահուկյանը, հնարավոր համարելով բառի կրկնավոր կազմությունը, միաժամանակ հավանական է համարում, որ այն փոխառություն է իրանական աղբյուրից՝ *ahramarhi* < **adra* (h)*mr*vya «աննշան համարված, ստոր համարված, արհամարհելի» իմաստով: (Զահուկյան Գ., Մոուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 92):

¹¹ Զահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 39:

Այս կառուցատիպի բարդությունները հետևյալ յուրահատկությունն են դրսևորում. աճական ստանում է արմատական երկրորդ բաղադրիչը, իսկ առաջինը ենթարկվում է հնչյունաանկման: Անհոդակապ բարդությունների այս տիպին պատկանում են *տատասկ* և *կոկորդ* բառերը:

Տատասկ կրկնավորի արմատական բաղադրիչն է *տաա*. ենթադրվում է՝ այն հանգում է բնիկ հնդեվրոպական *dek' - *dēk' «պատռել, պատառտել» արմատին, որ կարող է լինել *denk' «կծել» արմատի ոչ ռեզային ձևը՝ -կ աճականով¹²: Բաղադրության առաջին բաղադրիչը կորցրել է վերջնահնչյուն -ս տարրը, և բարդությունն ստացել է *տատասկ* ձևը:

Աստվածաշնչում այն գործածվել է «սուր և խոշոր փուշ» իմաստով, հմմտ. *Տատասկ* եւ որոգայթ ի ճանապարհս թիրաց, իսկ որ զգոյշ կայ անձին իւրում՝ մերժեսցի ի նոցանէ (Առակ., ԻԲ. 5): Աստվածաշնչում հաճախադեպ է *փուշ* և *տատասկ* հոմանիշ բառերի հարադրական գործածությունը՝ իմաստի սաստկացման նպատակով: Հմմտ. *Փուշ եւ տատասկ* բուսցէ քեզ, եւ կերիցես զբանջար վայրի (Օնն., Գ. 18): Իսկ որ բերէ *փուշ* եւ *տատասկ*, անպիտան է եւ մերձ յանէծս, եւ վախճան նորա յայրումն (Եբրա., Զ. 8):

Կոկորդ բարդությունը կրկնավոր կազմություն է. նրա արմատական բաղադրիչը՝ *կոր*, ձայնդարձով տարբերակն է *կեր* «ուտել» արմատի: Ստուգաբանորեն այն հանգում է բնիկ հնդեվրոպական *g'her- «կլանել, կուլ տալ» արմատին¹³: Արմատակրկնության ժամանակ առաջին արմատական բաղադրիչը կորցրել է -ր ձայնորդը, իսկ երկրորդ բաղադրիչն ստացել է -դ աճականը¹⁴:

Կոկորդ կրկնավոր բարդությունը «խոչակ, բուկ» իմաստով կենսունակ գործածություն ունի Աստվածաշնչում, հմմտ. Ձի ունկն զբանս քննէ, եւ *կոկորդ* զկերակուրս ճաշակէ (Յովք., ԼԴ. 3): Աստվածաշնչում փոխաբերական գործածությամբ ունի հետևյալ իմաստները. 1. «քիմք». Ձի ճշմարտութիւն խոկասցէ *կոկորդ* իմ (Առակ., Ը. 7): 2. «բերան». Պտուղ նորա քաղցր է *ի կոկորդի* իմում (Եբգ., Բ. 3): 3. «երախ, կերակրափող». Որպէս գերեզման բաց են *կոկորդք* նոցա (Մադ., Ե. 11):

Անհոդակապ կրկնավորների այս տիպը նույնպես սահմանափակ գործածություն ունի Աստվածաշնչում:

Բ. Նախդրավոր և շաղկապավոր տիպ

Գ.Ջահուկյանը գրավոր հայերենի շրջանում նոր հանդես եկած կրկնությունների մեկ այլ տեսակ է համարում նախդրավորների տիպը, «որոնց մեջ թեն նախդիրներն իրենց հիմնական արժեքը պահպանում են, բայց ողջ կրկնությունն ստանում է բառային մեկ միավորի արժեք՝ մասամբ հանդես գալով իբրև մեկ ամբողջություն (խառնիխուռն), մասամբ իր ներսում պահպանելով բաղադրիչների որոշ ինքնուրույնություն (մերթ ընդ մերթ)»¹⁵:

¹² Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 723:

¹³ Աճառյան Հր., նշվ. աշխ., հ. 2, էջ 619: Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 416:

¹⁴ Հմմտ. -դ աճականը՝ մարդ բառի արտահայտության պլանում. հնիւ. mer «մեռանել» արմատից՝ ձայնդարձով՝ մար + to > d:

¹⁵ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն..., էջ 364:

Այդ կարգի կրկնությունները (հնագույն և նոր) համեմատաբար սահմանափակ գործածություն են ստացել Աստվածաշունչ մատյանում: Այդպիսի կրկնավոր բարդությունների բաղադրիչները միացած են նախդիրներով, հազվադեպ՝ շաղկապներով: Այս կարգի կրկնավորները, ի տարբերություն բառակազմական մյուս տիպերի, վերլուծական բարդություններ են, որոնց բաղադրիչները հիմնականում տեղանիշ կամ ժամանականիշ բառեր են. նրանց բովանդակային պլանում բաղադրիչների կրկնությունն ունի իմաստի սաստկացման դեր: Այդ բառերն են՝ *աջ ընդ աջմէ, դէմ ընդ դէմ, խառն ի խուռն, օր ըստ օրէ, լու ի լու, օն եւ օն*:

Դիտարկենք այդ բառերի իմաստակառուցվածքային և գործառական առանձնահատկությունները:

Դէմ ընդ դէմ հարադրությունը կազմված է կրկնվող *դէմ* արմատից՝ *ընդ* նախդրով: *Դէմ* արմատը ստուգաբանորեն հանգում է պարսկական աղբյուրին՝ dēm «կերպարանք, ձև» իմաստով¹⁶: *Դէմ* արմատը բազմիմաստ բառ է (հաճախ՝ անեզական գործածությամբ). «դէմք, երես, երեսակողմ. անձ, աչք, տեսողություն. դեպի»: Հարադրության կազմում արտահայտում է տեղի իմաստ «փրար դէմ՝ դիմաց՝ հանդեպ. երես առ երես», այդ իմաստով այն գործածված է Աստվածաշնչում, հիմնականում. Ելանիցէք մերկք՝ միմեանց *դէմ ընդ դէմ*, եւ անկանիցիք ի լերինն Ռեմանայ (Ամովս. Դ. 3):

Խառն ի խուռն հարադրության արմատական բաղադրիչն է *խառն* ձևույթը, որ համարվում է խեթական փոխառություն *harna* «շարժել, խառնել, խռովել, գրգռել» բառից¹⁷: Գրաբարում *խառն* արմատը գործածական է «1. խառնված, անմիատարր, ոչ պարզ, 2. փխր. պիղծ, խառնակ» բառական նշանակություններով: Այդ իմաստներով հանդիպում է Աստվածաշնչում, հիմնականում. 1. Եկն եւ Նիկողեմոս ... եւ երբ գմուռս *խառն* ընդ հալուէս իբրեւ լտերս հարեւր (Յովհ., ԺԹ. 39): 2. Իբրեւ ի տուրնջեան զգաստացեալք շրջեսցուք, մի՛ անառակութեամբք եւ արբեցութեամբք, եւ մի *խառն* անկողնովք եւ պղծութեամբք (Հռոմ., ԺԳ. 13):

Խառն արմատի ձայնդարձով ձևավորվել է *խուռն* տարբերակը՝ «ամբոխ, խառն բազմություն» իմաստով, հիմնականում. Եւ արքայ կացոյց զսպառազէնն, եւ կոխեաց զնա ի *խառնն* ժողովուրդն առ դրանն, եւ մեռաւ (Դ. Թագ., Է. 17):

Արմատակրկնությամբ և ի նախդրով կազմվել է *խառն ի խուռն (խառնի-խուռն)* բարդությունը՝ «անկարգ, խառնափնթոր, վայրիվերո վիճակում» նշանակություններով: Այդ իմաստներով գործածված է Աստվածաշնչում, հիմնականում. Եւ ամենայն ինչ խառն ի խուռն. արիւն եւ սպանութիւն, զողութիւն եւ նենգութիւն (Իմաս., ԺԴ. 25):

Օր ըստ օրէ կրկնավոր բարդությունը կազմված է *օր* հիմնական բաղադրիչի կրկնությամբ և *ըստ* նախդրով: *Օր* բաղադրիչը ստուգաբանորեն հանգում է բնիկ հնդեվրոպական *āmōr «օր» արմատին¹⁸: Գրաբարում այն նշանակում է «գիշերը և ցերեկը միասին, ցերեկ, ցերեկվա տևողություն. ժամանակ, տարի, փխր.

¹⁶ Աճառյան Հր., նշվ. աշխ., հ. 1, էջ 660:

¹⁷ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 318:

¹⁸ Աճառյան Հր., նշվ. աշխ., հ. 4, էջ 616: Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 104:

կյանք»։ Նախդրավոր կապակցությունը՝ *որ ըստ օրէ*, նշանակում է «1. օրեցօր, հետզհետե, 2. ամենօրյա»։ այդ իմաստներով այն գործածված է Աստվածաշնչում, հմմտ. 1. Օրհնեցէ՛ք զՏէր, ամենայն երկիր, պատմեցէ՛ք *որ ըստ օրէ* զփրկութիւն նորա (Ա. Մնա., ԺԶ. 23)։ 2. Զհաց մեր յանապագորդ տո՛ւր մեզ *գորըստօրէն* (Ղուկ., ԺԱ. 3)։

Լու ի լու նախդրավոր բարդությունը կազմված է *լսեմ* բայի երկրորդ հիմքի կրկնությամբ՝ *լու* : *Լսեմ* բայն ստուգաբանորեն հանգում է բնիկ հնդեվրոպական *k¹leu արմատին՝ նույն նշանակությամբ¹⁹։ *Լու* հիմքը բառակազմական հիմնական ձևույթ է որոշ բառերում, ինչպես՝ *հլու* («լավ լսող, խոնարհ») ²⁰, *լուր* (ը աճականով), *լուռ* (ո աճականով) և այլն։

Գրաբարում հանդես է գալիս հարադրությունների կազմում, ինչպես՝ *լու առնել* «լսելի դարձնել», *լու լինել* «լսելի լինել. հռչակել»։ Բայական այդ հարադրությունները համապատասխան իմաստներով գործածական են Աստվածաշնչում։ Հմմտ. Պատմեցէ՛ք յագգս, եւ *լու՛ արարէք*, նշա՛ն կանգնեցէք, լսելի՛ արարէք. մի՛ ծածկիցէք... (Մնն., Ծ. 2)։ Եւ յորժամ *լու եղէ* հրաման թագաւորին, ժողովեցան աղջկունք բազումք ի Միսան քաղաք (Եսթ., Բ. 8)։

Լու ի լու կրկնավոր բարդությունն ունի «լսելով, լսելի լինելով» մակբայական նշանակություն. այդ իմաստով հաճախադեպ գործածություն ունի Աստվածաշնչում, հմմտ. Պատասխանի ետ Եփրոն Քետացի Աբրահամու եւ ասէ *լու ի լու* որդւոցն Քետայ եւ ամենեցուն, որ մտանէին ընդ դուռն քաղաքին նորա (Մնն., ԻԳ. 10)։ Լուարո՛ւք, լուարո՛ւք բանից իմոց, զի պատմեցից ձեզ *լու ի լու* (Յովբ., ԺԳ. 17)։

Աստվածաշնչում հազվադեպ է կրկնավոր այլ կարգի վերլուծական բարդության գործածություն՝ բաղադրիչների շաղկապական միացությամբ. այդպիսին է՝ *օն եւ օն* կրկնավոր բարդությունը։ Նրա ենթադրյալ արմատական բաղադրիչը՝ *օն*, «շո՛ւտ, ապա՛, հապա՛, դէ՛» իմաստով, որպես բացականչություն, գործածվում է գրաբարում։ Ծագումն անհայտ է. հավանական է համարվում բնաձայնական լինելը²¹։

Օն եւ օն կրկնավոր բարդությունն Աստվածաշնչում գործածված է որպես երդման ձև՝ «Աստված (ինձ) այսպես՝ այնպես անի» նշանակությամբ²²։ Քննության ենթակա բնագրում այն հանդիպում է 11 անգամ՝ *օն եւ օն արասցէ // արասցեն* շարահյուսական կառույցով. շարահյուսական այդ միավորի համար ենթակա են դառնում *Տէր, Աստուած, դիք* սրբայնացած անվանումները։ Հմմտ. Եւ երդուաւ արքայ Սողոմոն ի Տէր եւ ասէ. *Օն եւ օն* արասցէ ինձ Աստուած եւ *օն եւ օն* յաւելցէ՛ եթէ ոչ հակառակ անձին իւրոյ խօսեցաւ Ադոնիա զբանդ զայդ (Գ. Թագ., Բ. 23)։

Կրկնավոր բարդությունների նախդրավոր և շաղկապավոր տիպերի մեջ շաղկապավոր տեսակը համեմատաբար նվազ հաճախականություն ունի Աստվածաշնչում։

¹⁹ Աճառյան Հր., նշվ. աշխ., հ. 2, էջ 306-307։ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 304։

²⁰ Հու մեռած արմատն ունեցել է «լավ» նշանակություն, հմմտ. հզօր (լավ զորեղ), հմուտ (լավ մտնող՝ «ընկալելու» իմաստով) և այլն։

²¹ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 103։

²² Աճառյան Հր., նշվ. աշխ., հ. 4, էջ 614։

Այսպիսով, Աստվածաշնչի թարգմանական գրքերում հանդիպող բառակազմական տիպերի համատեքստում որոշակիորեն սահմանափակ խումբ են կազմում աճականով և նախդիրներով (շաղկապներով) ձևավորված տիպերը, որոնք բնութագրվում են՝

ա) բաղադրիչների հավելական հնչյունատարրերով (աճականով),

բ) նախդիրների հիմնական արժեքի պահպանումով,

գ) շաղկապների միավորիչ դերով,

դ) ինչպես նաև բարդությունների համադրական և վերլուծական կառուցատիպերով:

Աճականով և նախդիրներով (շաղկապներով) տիպերի բառակազմական բաղադրիչները (արմատահիմքերը) բնիկ հայկական կամ հնդեվրոպական փոխառյալ արմատներ են: Այդ կարգի կազմությունների ուսումնասիրությունը բացահայտում է հին հայերենի բառակազմական հնարավորությունները լեզվի համաժամանակյա մակարդակում: Մյուս կողմից՝ պատմական բառակազմության եղանակով հնարավոր է բացահայտել այդ կազմությունների մի մասի՝ նախագրային ժառանգության հարցը:

Աստվածաշնչի բառային կազմում աճականով և նախդիրներով (շաղկապներով) բարդությունների իմաստակառուցվածքային համաժամանակյա քննությունը կարող է հիմք հանդիսանալ բառակազմական տվյալ իրողության տարժամանակյա ուսումնասիրության համար:

Համառոտագրություններ «Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց» աշխատության

Ամովս. - Ամովս:

Առակ. - Առակք Սողոմոնի:

Երգ - Երգ երգոց:

Եսթ. - Եսթեր:

Ա. Թագ. - Գիրք Թագաւորութեանց Ա:

Գ. Թագ. - Գիրք Թագաւորութեանց Գ:

Իմաս. - Իմաստութիւն Սողոմոնի:

Մեն. - Մենդոց:

Ղեստ. - Ղեստական:

Յովբ. - Յովբ:

Յովի. - Աւետարան ըստ Յովիաննու:

Հռոմ. - Թուղթ Պաւղոսի Առաքելոյ առ Հռովմայեցիս:

Ղուկ. - Աւետարան ըստ Ղուկասու:

Բ. Պետ. - Թուղթ Պետրոսի Առաքելոյ Բ:

Սաղ. - Գիրք Սաղմոսաց:

РЕДУПЛИКАТИВНЫЕ СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЕ ТИПЫ С ДЕТЕРМИНАТИВОМ И ПРЕДЛОГОМ В БИБЛИИ

Резюме

Л. Хачатрян

Исследование словарного состава армянского перевода Библии показывает, что в рамках словообразовательных типов значительное место занимает тип редупликации с детерминативом и предлогом. Редупликативные слова с детерминативом характеризуются следующими формообразующими факторами:

а/ редупликативные слова с соединительным гласным (*արհաւարհել*, *աղջաւուղջ* и т.д.),

б/ редупликативные слова без соединительного гласного (*կոկորդ*, *սրմնջել*, *ուշուշիւ*, *տրտմնջ*, *ճաճանչ* и т.д.).

Редупликативные слова с предлогом являются аналитическими формами, компоненты которых выявляют лексическое значение места и времени. В содержательном плане редупликация играет роль градации. В Библии встречаются следующие слова: *աջ ընդ աջմէ*, *դէմ ընդ դէմ*, *խառն ի խառն*, *օր ըստ օրէ*, *լու ի լու* и т.д.

Компоненты редупликативных слов с детерминативом и предлогом выступают как исконно армянскими, так и индоевропейскими заимствованными морфемами.

Изучение редупликативных слов в книгах Библии с детерминативом и предлогом может выявить словообразовательную особенность армянского языка в синхронном срезе. С другой стороны – в рамках редупликативных слов возможны диахронические /дописменные/ образования, вопрос которых можно решать путем исторической лексикологии.

Տեղեկություններ հեղինակի մասին

Խաչատրյան Լալիկ Մնացականի – բ. գ. դ., պրոֆեսոր

Email: linguala151@mail.ru

«ԳԼՈՒԽ» ԲԱՂԱԴԻՉՈՎ ՍՈՄԱՏԻԿ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ

Սոմատիզմը բառապաշարային-դարձվածաբանական դաշտին բնորոշ հասկացություն է, որն ունի «մարմնի մաս» նշանակությունը: Բառապաշարի սոմատիկ շերտը լեզվաբանների ուսումնասիրության առարկա է դարձել 20-րդ դարի վերջում և 21-րդ դարի սկզբում¹: «Սոմատիզմ» եզրույթն առաջին անգամ գործածել է էստոնացի լեզվաբան Ֆ. Գակկը²:

Հաղորդակցական գործընթացներում կարևոր դեր են կատարում սոմատիկ դարձվածային միավորները (ՄԴ), որոնց բաղադրիչներից մեկը մարդու կամ կենդանու մարմնի մասի անվանում է: Մարմնի մասեր անվանող բառերը դարձվածքների կազմության մեջ ամենից հաճախ գործառվող բաղադրիչներից են: Սոմատիզմների առատությունը գրեթե բոլոր լեզուների դարձվածաբանական համակարգերի բնորոշ առանձնահատկություններից է³:

Դարձվածաբանական միավորների կազմում մեծ թվով սոմատիզմներ են կիրառվում, քանի որ սոմատիզմները լեզուների բառապաշարի հնագույն շերտերից են և լեզվի հիմնական բառաֆոնդի մաս են կազմում:

ՄԴ-ների գործածությունը պայմանավորված է նրանց բովանդակության ակտուալությամբ, ընդգծված պատկերավորությամբ, ազգային մտածելակերպի յուրահատկությամբ, քերականական պարզ կազմությամբ և ոճական բազմազանությամբ:

Մարմնի մասերի անվանումները հանդես են գալիս որպես փոխաբերություններ, քանի որ նոր երևույթներ անվանելու համար դրանք ասոցիացիաներ են առաջացնում նախնառաջ մարդուն մոտ գտնվող առարկաների հետ: Առաջին հերթին մարդը շրջապատող առարկաները համեմատում է իր հետ, իր մարմնի մասերի հետ: Սա սիմվոլիկայի դրսևորումներից մեկն է, որը նույնպես դարձվածային միավորների առանձնահատկություններից է⁴:

ՄԴ-ների արտահայտության պլանում գործառական մեծ հաճախականություն ունի *գլուխ* բաղադրիչը: Այդ բաղադրիչով ՄԴ-ները իմաստակառուցվածքային յուրահատկություններ են դրսևորում տարբեր լեզուներում, ուստի այդ կարգի

¹ Аверина М., Болдырева Е. Соматизм как компонент фразеологической еденицы русского и английского языков. Челябинская область. Альманах современной науки и образования. № 6 (73) 2013, С.11:

² Федорова М., Никонюк М. Фразеологические соматизмы как средство вторичной номинации лексико- семантической системы немецкого языка, Беларусь, Журнал Гродненского государственного медицинского университета, №3, 2012, С.81:

³ Նույնը:

⁴ Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 110:

միավորների զուգադրական քննությունը լեզվաբանական տիպաբանության կարևոր խնդիրներից է:

Սույն հոդվածում մենք կանդրադառնանք հայերենի և պարսկերենի՝ «գլուխ» բառով կազմված սոմատիկ դարձվածքների քննությանը:

Հայերենի և պարսկերենի ՄԴ-ներն ըստ ձևակազմական-քերականական հատկանիշների կարելի է ներկայացնել *անվանողական* և *հաղորդակցական* տեսակներով: Անվանողական բնույթի դարձվածքները արտահայտության պլանում համընկնում են բառակապակցության կառուցվածքային տիպերին, իսկ հաղորդակցական դարձվածքները՝ նախադասությանը⁵:

Ա. «Գլուխ» բառով կազմված սոմատիկ անվանողական դարձվածքների շարքում առանձնացրել ենք ածականական և բայական դարձվածային տիպերը:

1) *Ածականական դարձվածքներն* արտահայտում են հասկացություն, ունեն անվանողական արժեք, գուրկ են հաղորդակցական բնույթից: Նման կապակցություններն առնչվում են ածականին կամ հատկանշային գործառույթ կատարող այլ խոսքի մասերի: Գ. Գոլևան նշում է, որ պարսկերենում բուն ածականական դարձվածքները համեմատաբար քիչ են գոյականական դարձվածքներից⁶: Հայերենում, ի տարբերություն պարսկերենի, «գլուխ» բաղադրիչով կազմված ածականական դարձվածքները ավելի մեծ թիվ են կազմում: Օրինակ,

գլուխը դատարկ	یک تخته اش کم است Yek taxte-aš kam ast
գլուխը կախ	سر به زیر sar be zir
գլուխը տաք	سرش گرم است Sar-aš garm ast
գլուխը խառը	سرش شلوغ است Sar-aš šoluğ ast

Առաջին՝ *գլուխը դատարկ* դարձվածքը պարսկերենում իմաստային համարժեք ունի, որը կառուցվածքային պլանում նախադասություն է, այսինքն՝ հաղորդակցական դարձվածք է, ինչպես՝ yek taxte-aš kam ast: Հայերենում այն արտահայտվում է *տախտակը պակաս* կամ *ծալը պակաս* դարձվածքների բառային տարբերակներով: *Գլուխը տաք* և *գլուխը խառը* դարձվածքների իմաստային համարժեքները պարսկերենում դարձվածք նախադասություններ են և առանց ast՝ «է» օժանդակ բայի չեն օգտագործվում, ինչպես՝ sar-aš garm ast, sar-aš šoluğ ast : *Գլուխը տաք* դարձվածքը բառացի թարգմանությամբ համընկնում է պարսկերենին, սակայն պարսկերենում ունի «զբաղված լինել» իմաստը: «Գլուխ» բաղադրիչով կազմված ածականական դարձվածքների շարքում պարսկերենում հանդի-

⁵ Խաչատրյան Լ., Ավետիսյան Լ., Համեմատություն դարձվածային արտահայտությունները հայերենում (5-16-րդ դդ.), Եր., 2015, էջ 28:

⁶ Голева Г. Фразеология современного персидского языка. М. 2006. С.104-109.

պում է *sar be havā* – به هوا – կապակցությունը, որն ունի «դատարկ, անուշադիր, ցրված» իմաստը:

2) *Բայական դարձվածքների* գերադաս բաղադրիչն արտահայտված է բայ խոսքի մասով: Այս կապակցությունները կարող են լինել երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ:

1. Երկբաղադրիչ դարձվածքներ

զլուխը տալ	سر دادن / سر نهادن sar dādan/sar nahādan
զլուխ տալ զլուխ խոնարհել	سر سپردن sar sepordan
զլուխը քաշել	سر کشیدن sar kešidan
զլուխը քորել	سر خاراندن sar xārāndan

Հայերենի *զլուխ տալ* դարձվածքը պարսկերենում հանդես է գալիս բառային տարբերակների համարժեքներով: Պարսկերենում այս դարձվածքի տարբերակները կազմվել են ոչ հոմանիշ *dadān* «տալ» և *nahādan* «դնել» անցողական բայ-բաղադրիչներով: *Զլուխ տալ* և *զլուխ խոնարհել* դարձվածային միավորները հայերենում դարձվածային բառային տարբերակներ են, որոնք պարսկերենում ունեն մեկ համարժեք: Այդ համարժեքը՝ *sar sepordan* և՛ բառացի թարգմանություն, և՛ ընդհանուր իմաստով համապատասխանում է հայերենի *զլուխ խոնարհել* տարբերակին: *Զլուխ քորել* կապակցության մեջ *քորել* բայ-բաղադրիչը հայերենում պարզ է, իսկ պարսկերենում՝ պատճառական (պարսկերենում պատճառական բայերը կազմվում են ներկայի հիմքին ավելացնելով *-ān* ածանցը և *-dan* կամ *-idan* վերջավորությունը: Օրինակ, *xāridan* քոր գալ - *xārāndan* = *xār*+*ān*+*dan* քորել, *xordan* ուտել - *xorāndan* = *xor*+*ān*+*dan* կեղցնել):

Բավական հետաքրքիր են պարսկերենի *sar zadan* سر زدن -, *sar-e kasi zadan* - به سر کسی آمدن դարձվածքները: *Sar zadan* (բոց. զլուխ խփել) նշանակում է «այցելել, գնալ», իսկ *sar-e kasi zadan*՝ «մեկի մազերը կտրել»: Առաջին հայացքից սրանք նույն դարձվածքներն են՝ *sar* «զլուխ» և *zadan* «խփել, զարկել» բաղադրիչներով: Երկրորդ կապակցությունը վերածվել է այլ դարձվածքի, քանի որ կազմվել է շրջանակային կառույցով: Պարսկերենի այս դարձվածքները հայերենում իմաստային-կառուցվածքային համարժեքներ չունեն:

Հայերենում կան երկկազմ դարձվածքներ, որոնք պարսկերենում ունեն երկուսից ավել բաղադրիչներ: Օրինակ,

զլխին գալ	به سر کسی آمدن be sar-e kasi āmadan
զլուխը տաքացնել 1. «հարբել, հարբեցնել» 2. «ոգևորել»	سر کسی گرم کردن sar-e kasi garm kardan سر کسی گرداندن

	sar-e kasi gardāndan سر کسی دواندن sar-e kasi davāndan
գլուխը տանել	سر کسی را بردن sar-e kasi rā bordan
գլուխը կորցնել	سر از پا نشناختن sar az pā našenāxtan سر از پا ندانستن sar az pā nadānestan سر از پا و پا از سر نشناختن sar az pā va pā az sar našenāxtan
գլխին թափվել	سر کسی را خرب شدن sar-e kasi rā xarab šodan

Այս դարձվածքների կառուցվածքային յուրահատկությունն այն է, որ պարսկերենում բայական շրջանակային կառույց են ձևավորում: Պարսկերենի շրջանակային կառույցն ընդգրկում է ինչպես ազատ բարդ բայական կապակցությունները, այնպես էլ բայական դարձվածային միավորները: Շրջանակային կառույցը պատկանում է ոճաբանական միջոցների ոլորտին, մյուս կողմից՝ այն մի շարք դարձվածաբանական միավորների կառուցվածքային մոդելն է⁷: Պարսկերենի բայական դարձվածաբանական միավորները կազմվում են տարբեր կառուցվածքային քերականական մոդելներով: Մեծ մասամբ մոդելավորվում են անցողական բայ-բաղադրիչներով բայական դարձվածաբանական միավորները⁸: Հոդվածում բերված պարսկերեն օրինակները կազմված են *գոյական+kasi (čizi)+(rā)ուղիղ խնդրի ցուցիչը* + *պարզ կամ բաղադրյալ բայ* մոդելով: Միայն առաջին օրինակում գոյականը գործածվել է նախդիրի հետ, իսկ չորրորդ դարձվածքը շրջանակային կառույց չի ձևավորել: Այս դարձվածքը՝ *գլուխը կորցնել*, հայերենում չունի տարբերակներ, իսկ պարսկերենում առկա են բառային և քանակային տարբերակները, ինչպես՝ *sar az pā našenāxtan*, *sar az pā nadānestan*, *sar az pā va pā az sar našenāxtan*: Երկրորդ դարձվածքը՝ *գլուխը տաքացնել*, բառացի թարգմանությամբ համընկնում է պարսկերեն տարբերակին՝ *sar-e kasi garm kardan*: Այս դարձվածքը պարսկերենում ունի այլ իմաստ՝ *զբաղեցնել, զվարճացնել*: *Sar-e kasi garm kardan* դարձվածքը հանդես է գալիս բառային տարբերակներով, ինչպես՝ *sar-e kasi gardāndan*, *sar-e kasi davāndan*: Հայերեն ՄԴ-ների բայ բաղադրիչները պարզ են կամ սոսկածանցավոր:

⁷ Рубинчик Ю. Грамматика современного персидского литературного языка. М. 2001. С.229:

⁸ Голева Г. Фразеология современного персидского языка. М. 2006. С.72:

2. Բազմաբաղադրիչ դարձվածքներ

զլուխը բարձր բռնել	سر بلند کردن sar boland kardan
զլխին գդակ դնել – «տղամարդ դառնալ»	سر کسی کلاه گذاشتن sar-e kasi kolah gozāštan «խաբել»
մեկի զլուխն ուտել	سر کسی را خوردن sar-e kasi rā xordan
զլխի վրա դնել	روی سر گذاشتن کسی را ru-ye sar gozāštan kasi rā
զլուխը քարին / պատին գալ	سر به سنگ خوردن سر به دیوار آمدن ⁹ sar be sang xordan sar be divār āmadan

Հայերենի և պարսկերենի վերոնշյալ դարձվածքները իմաստաբանորեն համարժեքներ են: Բաղադրիչների քանակով տարբերվում են 2-րդ և 4-րդ դարձվածքները: Հայերենում այդ ՄԴ-ները եռաբաղադրիչ են, իսկ պարսկերենում՝ քառաբաղադրիչ: Չնայած 2-րդ դարձվածքների բաղադրիչներն իմաստաբանորեն համարժեք են, այնուամենայնիվ իմաստային առումով դրանք երկու տարբեր դարձվածքներ են:

Բ. Հաղորդակցական ՄԴ-ներն ունեն նախադասության կառուցատիպ: Հայերենում նախադասություն դարձվածքները կառուցվածքային առանձին տիպ են ներկայացնում¹⁰: Պարսկերենում այս տիպի դարձվածքները դեռևս հստակ դասակարգում չեն ստացել: Յու. Ռուբինչիկը նշում է, որ իրանական մասնագիտական գրականության մեջ այս դարձվածքները որպես առանձին կառուցվածքային խումբ չեն դիտարկվում¹¹:

«Գլուխ» բաղադրիչով կազմված հաղորդակցական ՄԴ-ները ավելի մեծ թիվ են կազմում պարսկերենում, քան հայերենում:

Ինչպես բոլոր նախադասություններին, այնպես էլ հաղորդակցական ՄԴ-ներին բնորոշ են ստորոգումը, հնչերանգային ավարտվածությունը, երանգավորումը և շարադասությունը: Չնայած հաղորդակցական դարձվածք-նախադասությունները կազմվում են նույն սկզբունքով, ինչ ազատ նախադասությունները,

⁹ Dehkhoda A., *Amsāl va hekam, jeld-e 2, Tehrān, 1363, էջ 906*: Այս դարձվածքը հանդիպում է 12-րդ դարի բանաստեղծ Ջահիր Ֆարյաբիի ստեղծագործություններից մեկում.

گفتم که مگر دل بر دلدارید تا در غم و شادیش مرا باز آید اکنون جو برون نهاد از دایره پا بگذارم تا سرش بدیوار آید Goftam ke magar del bar deldār āyad, Tā dar ġam o šādiš marā bāz āyad, Aknun ċu borun nahād az dāyere pā, Bogzāram tā saraš be divār āyad.	(բոց.) Ասացի, որ հնարավոր է սիրտս հետևի սիրեցյալին, Մինչև որ ուրախությունն ու տխրությունը ինձ նորից կայցելեն, Հիմա, քանի որ ոտքը շրջանից դուրս է դրել (լքել է ինձ), Թողնեմ, որ զլուխը պատին գալ:
--	---

¹⁰ Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 180:

¹¹ Рубинчик Ю. Грамматика современного персидского литературного языка. М. 2001. С.202:

այնուհանդերձ դրանք ունեն յուրահատուկ որոշ գծեր: Նախադասություն-դարձվածքներն ունեն բաղադրիչների հստակ և գրեթե անփոփոխ քանակ: Ենթական հիմնականում զեղչված է լինում, սակայն այն ընկալվում է ստորոգյալի դեմքից և թվից: Օրինակ, հայ. Գլխիդ մատաղ: Գլուխդ թաղեմ:

պրակ.

سرش از خودش نیست. Saraš az xodaš nist.	Խելքը իրենը չի: (Բոց. Գլուխն իրենը չի:)
سرش بی کلاه ماند. Saraš bi kolāh mänd.	Մնաց դատարկաձեռն, մնաց ձեռնունայն: (Բոց. Գլուխը մնաց առանց գլխարկ:)
سرش را می گیری، دمش را بر می آید. Saraš rā mi giri, damaš rā bar mi āyad.	Շատ թույլ է: (Բոց. Գլուխը բռնես, շունչը կկտրվի: ¹²)

Հաղորդակցական ՄԴ-ների քերականական առանձնահատկություններից են բայի եղանակաժամանակային ձևերի որոշակի սահմանափակումները: Բայ-ստորոգյալը կարող է հանդես գալ՝

ա) *սահմանական եղանակով*, օրինակ, հայ. Գլուխդ պատով էս տալիս: պրակ.

سر بی صاحب می تراشد. Sar bi sāheb mi terāšad.	Իր գործի մեջ շատ հմուտ է: (Բոց. Առանց տեր գլուխ է սափրում:)
--	--

բ) *ըղձական եղանակով*, օրինակ, հայ. Գլուխդ ծանր լինի: պրակ.

سر باشد، کلاه بسپار است. Sar bāšad, kolāh besyār ast.	Եթե արժանի մեկը լինի, հարմար առիթ միշտ կա: (Բոց. Գլուխ լինի, գլխարկ շատ կա:)
--	---

գ) *պայմանական եղանակով*, օրինակ, հայ. Ողջ տեղդ գլուխդ կթողնեմ: պրակ.

سرش برود، قولش نمی رود. Saraš beravad, qolaš nemi ravad.	Իր խոսքի տերն է: (Բոց. Գլուխը գնա, խոսքը չի գնա:)
---	--

դ) *հրամայական եղանակով*, օրինակ, հայ. Գլուխդ պատով տուր: Հայերենում այս դարձվածքի բայ-բաղադրիչը կարող է գործածվել նաև այլ եղանակով: Օրինակ, Դեսուդեն էր ընկնում, գլուխը պատերին (պատեպատ) խփում՝ մի գործ ճարելու համար¹³:

¹² Հայերենում այս դարձվածքի իմաստային համարժեքն է քիթը բռնես՝ շունչը կտա դարձվածքը:

¹³ Քեդիրյան Պ. Ս., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Եր., 2011, էջ 316:

արսկ.

سرم را بشکن، نرخم را نشکن. ¹⁴ Saram rā bešekan, nerxam rā našekan.	Ինչ էլ լինի, խոսքիս տերն եմ: (Բոց. Գլուխս կոտրի՛ր, գինս մի՛ կոտրիր:)
--	--

Հաղորդակցական ՄԴ-ները հանդես են գալիս հիմնականում որպես պատմողական, հարցական, մասամբ բացականչական երանգի նախադասու-թյուն-դարձվածքներ:

ա) *պատմողական երանգի*, օրինակ, հայ. Գլուխս խելք չի մնացել:
արսկ.

سرش توی حساب است. Saraš tu-ye hesāb ast.	Գիտի՛ ինչ է անում:
---	--------------------

բ) *հարցական երանգի*, օրինակ, հայ. Գլուխդ թակոդ հո չկա՞:
արսկ.

سر کچال و عرفچین؟ Sar-e kačāl va aračč'in?	Ճաղատ գլխին գլխա՞րկ:
---	----------------------

գ) *բացականչական երանգի*, օրինակ, հայ. Գլուխդ ծա՛նր լինի:
արսկ.

سر بریده سخن نمیگوید. ¹⁵ Sar-e boride soxan nemi guyad.	Կտրած գլուխը չի խոսում:
---	-------------------------

Հանդիպում են «գլուխ» բաղադրիչով որոշակի ՄԴ-ներ, որոնք հայերենում և պարսկերենում իրենց համարժեքները չունեն:

Հայերենում դրանք հիմնականում ածականական և բայական դարձվածք-ներ են: Օրինակ, *գլուխը լիքը* (բանիմաց), *գլուխը պինդ* (համառ), *գլուխը ցից* (գոռոզ), *գլուխը բարձր*, *անգղակ գլուխ* (սեփական կարծիք չունեցող), *ամպրոպ գլուխ* (դատարկագլուխ), *ամուր գլուխ* (դժվար հասկացող), *դղում գլուխ* (հիմար), *գլխի ընկնել*, *գլխի գցել*, *գլխին ամպեր կուտակվել*, *գլխին ավետարան կարդալ*, *գլխի ճարը տեսնել* են:

Պարսկերենի այն դարձվածքները, որոնք հայերենում իրենց համարժեք-ները չունեն, հիմնականում հաղորդակցական բնույթի են: Օրինակ,

¹⁴ Այս դարձվածքը շատ գործածական է ժողովրդախոսակցական ոճում (շուկայական խոսակցություններում), երբ հաճախորդները ջանասիրաբար, քաղցր լեզվով փորձում են ապրանքի գինը իջեցնել: Դարձվածքը ունի նաև *سرم را بشکن نرخم را نشکن* «գլուխս կոտրիր, խոսքս մի կոտրիր» բառային տարբերակը: *Slī 'u, Rahmāndust M., Fut-e kuzegari, Masalhā-ye fārsi va dāstānhā-ye ān, jeld-e 2, Tehrān, 1386, էջ 639:*

¹⁵ Վարսավիրը մի օր մի մեծահարուստի մագերն էր կտրում: Հանկարծ ձեռքը դողաց և մեծահարուստի գլուխը կտրեց: Մեծահարուստը գոռաց, թե՛ գլուխս կտրեցիր: Վարսավիրը՝ «Կտրած գլուխը չի խոսում»: *Slī 'u Zolfagāri H., Dāstānhā-ye amsāl, Māziār, Tehrān, 1396, p. 585:*

سر از ماء، سنگ از شما. Sar az mā, sang az šomā.	Ինչ որ ասեք, կանենք: (Բռց. Գլուխը մեզանից, քարը ձեզանից:)
سر بزرگ، درد بزرگ هم دارد. Sar-e bozorg, dard-e bozorg ham dārad.	Խելացի մարդը շատ մտածմունք ունի: (Բռց. Մեծ գլուխը մեծ ցավ էլ ունի:)
سر بی گناه پای دار می رود، اما بالای دار نمی رود. Sar-e bi gonāh pā-ye dār mi ravad, amā bālā-ye dār nemi ravad.	Մարդու անմեղությունը միշտ ապացուցվում է: (Բռց. Անմեղ գլուխը կախաղանի տակով կգնա, բայց չի բարձրանա կախաղան:)
سر را کاشی می شکند، تاوانش را قمی میدهد. Sar rā kāši mi šekanad, tāvānaš rā qomi midahad.	Պատասխան տալ չարած գործի համար: (Բռց. Գլուխը քաշանցին է կոտրում, փոխհատուցումը տալիս է դոմցին ¹⁶ :)
سرش به تنش زیادتی می کند. Saraš be tanaš ziādati mi konad.	Ի վերջո գլխին փորձանք կբերի: (Բռց. Գլուխը մարմնին շատություն է անում:)
سر ما نداری، سر خویش گیر. Sar-e mā nadāri, sar-e xiš gir.	Եթե մեզ հետ համաձայն չես, քո գործով զբաղվիր: (Բռց. Մեր գլուխը չունես, քո գլուխը բռնիր:)
سر از خواب برداشتن. Sar az xāb bardāštan.	Արթնանալ (Բռց. Գլուխը քնից վերցնել)
سر به زمین گذاشتن. Sar be zamin gozāštan.	Մահանալ (Բռց. Գլուխը գետին դնել)

Ուսումնասիրելով հայերենի և պարսկերենի «գլուխ» բաղադրիչով ՄԴ-ների արտահայտության և բովանդակության պլանների հարաբերակցությունը՝ նկատում ենք, որ՝

1. Երկու լեզուներում էլ, ըստ քերականական հատկանիշների, ՄԴ-ները դասակարգվում են անվանողական (ածականական և բայական) և հաղորդակցական տեսակների:
2. Հայերենում ածականական կապակցությունները գերակշռում են: Հայերենին իմաստային տեսակետից համարժեք պարսկերեն դարձվածքները հաղորդակցական բնույթի են:
3. Երկու լեզուներում էլ բայական դարձվածքները երկբաղադրիչ կամ բազմաբաղադրիչ են:
4. Հաղորդակցական ՄԴ-ները պարսկերենում համեմատաբար մեծ թիվ են կազմում: Այդ կարգի դարձվածքներին բոնորշ են ստորոգումը, հնչերանգային ավարտվածությունը, երանգավորումը և շարադասությունը: Ենթական հիմնա-

¹⁶ Քաշանը և Ղոմը Իրանի հայտնի քաղաքներից են:

կանում գեղջված է լինում, սակայն ընկալվում է բայ-ստորոգյալի դեմքից և թվից: Ստորոգյալը կարող է հանդես գալ սահմանական, ըղձական, պայմանական, հրամայական եղանակներով: Վերոնշյալ կապակցությունները հանդես են գալիս հիմնականում որպես պատմողական, հարցական, մասամբ բացականչական երանգի նախադասություն-դարձվածքներ:

5. Երկու լեզուներում էլ, բացի համարժեք ՄԴ-երից, կան նաև այնպիսի կառույցներ, որոնք հատուկ են միայն կա՛մ հայերենին, կա՛մ պարսկերենին: Սա վկայում է այն մասին, որ ինչքան էլ հայերն ու իրանցիները լեզվամտածողությամբ իրար մոտ են, այնուամենայնիվ ունեն իրենց հատուկ ազգային մտածողությունն ու լեզվափիլիսոփայությունը, որոնք արտացոլվում են այդ լեզուների ձևաբանական և շարահյուսական տիպաբանության ոլորտներում:

СОМАТИЧЕСКИЕ ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ С КОМПОНЕНТОМ «ГОЛОВА» В АРМЯНСКОМ И ПЕРСИДСКОМ ЯЗЫКАХ

___ Резюме ___

___ Р.Торосян ___

В данной статье рассматриваются соматические фразеологические единицы с компонентом «голова» в армянском и персидском языках. Согласно структурно-грамматическим особенностям и в армянском и в персидском различаются субстантивные и коммуникативные фразеологические сочетания.

В армянском обладают адъективные фразеологические единицы. В персидском фразеологические сочетания, которые имеют семантические аналоги в армянском, являются коммуникативными. Адъективные фразеологизмы делятся на двухкомпонентные и многокомпонентные. В персидском по количеству обладают коммуникативные фразеологизмы. Эти единицы характеризуются неполной парадигмой-ограниченными возможностями реализации модально-временных форм, а также категории лица и числа.

Տեղեկություններ հեղինակի մասին

Թորոսյան Հոփսիսիմե Վահեի - ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի տնվ.

լեզվի ինստիտուտ, E-mail: hripsimehtorosyan@yahoo.com

ՈՃԱԿԱՆ ԲԱՆԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ ՆԱՐ-ԴՈՍԻ «ՄԵՐ ԹԱՂԸ»
ՊԱՏՄՎԱԾԱՇԱՐՈՒՄ

Գեղարվեստական խոսքը ոչ թե սովորական տեղեկատվություն է կամ դեպքերի պարզունակ նկարագրություն, այլ պատկեր է: Նար-Դոս գեղագետն էլ իր ընթերցողի հետ խոսում է գեղարվեստական բովանդակալից պատկերներով՝ գործադրելով իր երկերում պատկերավորման միջոցների ինքնատիպ համակարգ, որի շնորհիվ խոսքի առարկան դառնում է տեսանելի, շոշափելի, պատկերվող իրողությունն ու երևույթները՝ գունեղ, տպավորիչ, պատկերավոր, հուզական ու արտահայտիչ, խոսքի բովանդակությունը՝ զգայապես ընկալունակ:

Լ.Եզեկյանը լեզվի պատկերավորման միջոցների մեջ առանձին խումբ է դիտում շարահյուսական բանադարձումները՝ կրկնություններ, աստիճանավորում, հակադրություն, շրջադասություն, անշաղկապություն (շարահարություն), ճարտասանական հարցում, խոսքի ընդհատում և գեղչում¹:

Կրկնությունն այն բանադարձումն է, որի դեպքում միևնույն բառը, բառակապակցությունը կամ նախադասությունը ոճական որոշակի նկատառումներով գործածվում են երկու կամ ավելի անգամ: Մրանք իրենց բազմազանությամբ, յուրահատուկ ձևերով և իմաստային բովանդակությամբ ուժեղացնում են խոսքի հուզականությունն ու արտահայտչականությունը: Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարում կրկնությունները հաճախակի հանդիպող լեզվական իրողություններ են, ընդ որում, Նար-Դոսը կարողացել է իր խոսքի արտահայտչականությունն ապահովել ոչ միայն արվեստավոր կերտված կրկնությունների, այլև սովորական կրկնություններով և հասկապես՝ բառակրկնություններով²: Այս տեսակետից ուշագրավ են պատմվածաշարում գրողի կողմից բավականին հաջող կիրառված սովորական կրկնության այն դրսևորումները, երբ կրկնվում են նույն բառով արտահայտված անդամները՝ միևնույն նախադասության մեջ դրվելով տարբեր լրացյալների վրա՝ դրանով իսկ նպաստելով խոսքի ներքին կշռույթի (ռիթմի) ուժեղացմանը, համապատասխան իմաստի կամ հատկանիշի շեշտմանն ու ընդգծմանը: Այսպես՝ «*Բան ունես, բան ասա*» (ՍՈՒԳ, 11), «*Քսան մանեթն էլ որ տալիս եմ, Սաքուլ ջան, հոգուս խաթեր եմ տալիս, չունքի լալ մարդ ես, լալ ուստա ես, ինձ հմար շատ ես բանել, համ էլ խմող չես*» (ն.տ., 12), «*Թաղի կանայք երկարատև օրվա չարքաշ աշխատանքից հետո խումբ-խումբ նստոտած էին դռների առջև՝ մերկ ոտներով մերկ գետնին*» (Հ, 62):

Բազմաթիվ սովորական կրկնություններ պատմվածաշարում հեղինակի կամ հերոսների ներքին ապրումների ու զգացողությունների բնութագրիչ արտահայտություններ, ինչպես՝ «*Այժմ ծերացել էր, շատ էր ծերացել, մեջքը կորա-*

¹ Եզեկյան Լ., *Հայոց լեզվի ոճագիտություն*, Եր., 2003, էջ 333:

² Նար-Դոս, «Մեր թաղը», Եր., 1982:

ցել, կուզ էր դարձել...» (ԻԲ, 17), «Ա՛խ, *որդի, որդի...* - հառաչեց պառավ Մարանը և շուտ եկավ մյուս կողքի վրա» (ՄՓՏ, 48), «*Վաղուց, շատ վաղուց* էր մեռել մարդը» (ն.տ., 48), «Օրեր ու շաբաթներ խաչերի դռանն անցկացրին, մատաղներ մորթեցին, կարմիր ու սպիտակ հագցրին, բայց և այնպես *ոչի՛ նչ, ոչի՛ նչ* չօգնեց» (ՄՈւԳ, 4): Երբեմն նման կրկնությունները գրողը գործածում է կոչական հնչերանգով՝ որպես հորդոր, առաջարկ. «- *Նստի՛, բալա՛ ջան, նստի՛*» (ԻԲ, 19): Դիմավոր բայերի շատ սովորական կրկնություններ էլ գործածվել են սաստկական երանգ հաղորդելու խոսքին, շեշտելու տվյալ գործողությունը, ինչպես՝ «Ամբողջ օրն *աշխատում էր, աշխատում* առանց դադար առնելու» (ԻԲ, 17), «Ասում եմ *ճարեցեք՝ ճարեցեք*, թե չէ, էս ա, կթողնեմ կզնամ» (ն.տ., 26), «*Սպանեց* էն խեղճին, *սպանեց* ծեծելով» (ն.տ., 28), «*Ողողեց, ողողեց* օդու շիշը, հետո գլխին քաշեց և սկսեց ծծել» (ՀՎՀ, 37):

Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարում բազմազան են շարահյուսական կրկնությունները՝ հարակրկնություն, կցուրդ, վերջույթ, երբեմն էլ՝ օղակ, շրջույթ, որոնք գերազանցապես արվեստավոր կրկնություններ են, որոնցով գրողը նպատակ է հետապնդել համապատասխան խոսքային իրադրության մեջ ապահովելու խոսքի արտահայտչականությունը, հուզականությունը և ներքին ռիթմը: Վերջինս առավել ցայտուն է դրսևորվել *կցուրդի* շնորհիվ: Կրկնության այս տեսակը բնորոշ է հիմնականում ժողովրդական կենդանի խոսքին: Սրա առանձնահատկությունն այն է, որ նախորդ տողի՝ էական նշանակություն ունեցող բառը կամ արտահայտությունը կրկնվում է հաջորդ տողի սկզբում: Ինչպես՝ «Ինչ Մային ոտ էր դրել ամուսնու տունը, ոչ մի լավ օր չէր տեսել, միշտ ծեծ ու հայիոյանք, միշտ *հայիոյանք ու ծեծ: Ծեծն ու հայիոյանքն* էլի վնաս չունի,- այդ բանին այսպես թե այնպես դեռ կարելի էր դիմանալ, - բայց գոնե տան և երեխաների հոգսը քաշեր, այդ էլ չկար (ՀՎՀ, 34)», «Նա արագորեն մոտեցավ պատի մեջ գտնված պահարանին, բաց արեց, հանեց օդու դատարկ շիշը, կուլայից մի գավաթի չափ ջուր ածեց մեջը և սկսեց *ողողել: Ողողեց, ողողեց* օդու շիշը, հետո գլխին քաշեց և սկսեց *ծծել: Ծծում էր* աչքերը փակ և շրթունքները պինդ սեղմած շի պոնկին» (ն.տ., 37), «Նրա թուլացած ձեռքերը բաց թողին *երեխային: Երեխան* նրա գոգից զլորվեց ընկավ գետին և սկսեց ավելի ճչալ» (ն.տ., 42), «Ըսօր էլի *գժվե՞ց: Գժվեց* թե ընե՛նց» (ն.տ., 44): «Այդ ճիչն այնքան սարսափելի էր, որ ծերունի հայրը համարյա թե երիտասարդական կորովով վեր թռավ տեղից և *ներս ընկավ: Ու ներս ընկնելուն* պես իրեն գտավ աղջկա գրկի մեջ» (ԻԲ, 18):

Պատմվածաշարում Նար-Դոսը նախընտրել է հատկապես դիմավոր բայերի կցուրդ կրկնությունը, որն, ինչ խոսք, առավել շարժուն ու կենդանի է դարձրել խոսքը, ուժեղացրել ներքին կշռույթը: Օրինակ՝ «Բայց նա ոչինչ *չէր զգում, զգում էր* միայն մի բան - սիրուհու չափ տենչալի և մահվան չափ անդիմադրելի, *զգում էր* ծարավ, ոգելից խմիչքի անհուն ծարավ» (ՀՎՀ, 32), «Ամբողջ օրն *աշխատում էր, աշխատում* առանց դադար առնելու» (ԻԲ, 17):

Պատմվածաշարի լեզվում երեք տասնյակից ավելի են հարակրկնությունները՝ ոճական կրկնության սովորաբար ամենագործածական տեսակը, երբ իրար հաջորդող կառույցներն սկսվում են միևնույն շարահյուսական միավորներով՝

միևնույն բառով, բառակապակցությամբ կամ նախադասությամբ: Հարակրկնությունը նկարագրվող տեսարանը դարձնում է ազդեցիկ, նախադասության մեջ ունեցած իր սկզբնային դիրքի շնորհիվ ու կրկնվելու պատճառով ընդգծվելով որպես հիմնական բովանդակությունն արտահայտող միավոր, անընդհատ գտնվում է ուշադրության կենտրոնում. ինչպես՝ «*Եննա* սապուն *կառնեմ*, կլվանամ քնու փոխնորդն էլ, իմն էլ: *Եննա* նավթ *կառնեմ*, որ գիշերը գաս՝ վառեմ: *Եննա* չափաքար *կառնեմ*, մի քիչ էլ գործի, որ առավոտը վեր կենաս, չայ խմացնեմ: *Եննա...*» (ՄՓՏ, 52), «*Վո՛ւյ, չէ՛, չէ՛, լավն ես, լավը, Արտեմ ջան: Վո՛ւյ, արևդ ապրի, Արտեմ ջան: Վո՛ւյ, խնդաս ու մխիթարվես*» (ն.տ., 53), «... երեխաները քաղցած են, *պետք է աշխատել*, երեխաները տկլոր են, *պետք է աշխատել*» (ՀՎՀ, 35), «... *ցավ ու կրակ եք ինձ հմար, ցավ ու կրակ* գա ձեր գլխին» (ն.տ., 34): «*Ու չէր հիշում, թե երբվանից էր*, որ դազգահը, կարծես խոր քուն մտած, կանգնած էր երդիկի տակ իր ցից-ցից պուններով, առանց հինածի, որպես մի կմախք, *չէր հիշում, թե երբվանից էր*, որ ջահրան իր ծոված անիվով ընկած էր անկյունում անգործ, *չէր հիշում, թե երբվանից էր*, որ մասրաները փռնեթաթախ ընկած էին մութ պատի տակ թիթեղյա այն փոքրիկ լամպի հետ, որ գիշերները միտում էր դազգահի մոտ» (ԻԲ, 17), «*Ա՛յ քեզ...* տասը կտոր շաքարից ութն ես թողել, ութ կտոր դառնաս դու... *ա՛յ քեզ, ա՛յ, ա՛յ...* շատ էժան ենք առնում, հա՞, *ա՛յ քեզ, ա՛յ, ա՛յ...*» (ԹԻԵ, 41), «*Հոպոպ հա Հոպոպ: Տո, Հոպոպը...* (հայիոյանք երեխաների հասցեին): *Հոպոպը* ձեր թայն ա՞» (Հ, 64):

Հաճախ հարակրկնությունները գործածվել են շրջույթ հնարանքի հետ՝ ստեղծելով բազմակրկնություն, որի դեպքում կրկնվող միավորը նախորդ միավորի հակառակ շարադասությամբ է հանդես գալիս. ինչպես՝ «Ինչ Մային ոտ էր դրել ամուսնու տունը, ոչ մի լավ օր չէր տեսել, միշտ ծեծ ու հայիոյանք, միշտ *հայիոյանք ու ծեծ: Օ՛հ ծն ու հայիոյանքն* էլի վնաս չունի, - այդ բանին այսպես թե այնպես դեռ կարելի էր դիմանալ» (ՀՎՀ, 34), «Բայց նա *ոչինչ չէր զգում, զգում էր* միայն մի բան - սիրուհու չափ տենչալի և մահվան չափ անդիմադրելի, *զգում էր* ծարավ, ոգելից խմիչքի անհուն ծարավ» (ն.տ., 32), «... ջանդ խո քոր չի գալիս: Թե քոր ա գալիս, քորեմ...» (ն.տ., 37):

Երբեմն Նար-Դոսը հարակրկնությունները վարպետորեն մեկտեղում է նաև այլ արտահայտչամիջոցների հետ: Օրինակ՝ պատկերավոր արտահայտություն հաղորդելու համար գյուղի հարուստներից մեկի՝ Բագրատի հանդեպ «Հոպոպ» նովելի համանուն հերոսի տածած քամահրական վերաբերմունքին՝ իր կնոջն ուղղված նրա արհամարհական ու սպառնալից խոսքում գրողը գործածում է ն՝ հարակրկնություն, ն՝ վերջույթ, ն՝ ճարտասանական հարց: Այսպես՝ «*Տո՛, ես քու...* (հայիոյանք)... անտեր-մունդո՞ւկ *ես մնացել, քաղցած-տկլո՞ւր ես մնացել*, որ ուրիշների հմար լվացք ես անում: *Հաս՛: Բա* ես չկա՞մ, *բա* իմ գլուխը շներն ու գելերն են կերե՞լ: *Հաս՛: Տո՛*, իմ կնիկն ընչի՞ պտի ուրիշի *լվացքն անի, հը՛: Տո՛, Բագրատն ո՞ւմ շունն ա*, որ *իմ կնիկը գնա նրա հմար լվացք անի, հը՛: Տո՛, Բագրատի* պես հարուրին կառնեմ-կծախեմ, ու *իմ կնիկը պտի գնա նրա հմար լվացք անի՞: Ի՞նչ անենք, թե գդակին կակարդ ունի ցցած, ես նրա...*» (67)

Մեկ այլ նովելում՝ «Հոգուն վրա հասավ»-ում, մեկտեղվել են հարակրկնությունն ու կցուրդը, հարակրկնությունն ու վերջույթը: Այսպես՝ «Բայց նա ոչինչ չէր գգում, գգում էր միայն մի բան - սիրուհու չափ տենչալի և մահվան չափ անդամադրելի, գգում էր ծարավ, ոգելից խմիչքի անհուն ծարավ, որից լեզուն ցամաքել էր բերանում»(32), «... երեխաները քաղցած են, պետք է աշխատել, երեխաները տկլոր են, պետք է աշխատել, տանտերը պահանջում է վարձը, պետք է աշխատել»(35): Հարակրկնության և վերջույթի մեկտեղման դրսևորում կա նաև «Մե փողերի տոկոսը» նովելում: Այսպես՝ «- Վո՛ւյ, չէ՛, չէ՛, լավն ես, լավը, Արտե՛մ ջան: Վո՛ւյ, արևդ ապրի, Արտե՛մ ջան»(53):

Վերջույթի միջոցով սովորաբար ապահովվում է խոսքի ներքին հանգ ու երաժշտականություն: Այս դեպքում բառը կամ կապակցությունը կրկնվում է համապատասխան շարահյուսական միավորի վերջում՝ ծառայելով շարահյուսական միավորի համաչափ բաշխմանն ու հավասար, միանման ելևէջումին: Կրկնության այս տեսակը՝ որպես հանգավորման հիմնական միջոց, բնորոշ է հատկապես աշուղական բանաստեղծությանն ու չափածոյին ընդհանրապես, այնուհանդերձ հանդիպում է նաև արձակում, նաև Նար-Դոսի պատմվածաշարում, մասնավորաբար քնարական շնչով հագեցած որոշ հատվածներում, որոնք, շնորհիվ ոճական վերջույթների գործածման, ունեն ներքին մեղեդայնություն ու որոշակի հանգավորում: Այսպես՝ «Ձմեռնամուտ էր. Տուն շինողը շինել պրծել էր, վերանորոգողը վերանորոգել պրծել...» (ՀՎՀ, 32), «Հոպոպն ինքն էր հոտած, կարծում էր, թե բույնն է հոտած» (Հ, 65), «Հը՞, սուտ ա ... էլի կասե՞ս սուտ ա...» (ն.տ., 67), «Ջանիս վրա էլ տեղ չմնաց, որ արինվիկ չարեց, էլ գլխիս վրա մազ չմնաց, ... էլ գլխումս դուղ չմնաց, էնքան թակեց... մինչև ե՛րբ...» (ԹԻԵ, 44):

Նար-Դոսը երբեմն դիմել է նաև *օղակի* եղանակին, որի դեպքում տողը կամ շարահյուսական համապատասխան միավորը կանոնավոր շրջանակվում է նույն կրկնվող միավորով՝ շղթայելով սկիզբն ու վերջը. ինչպես՝ «- Նստի՛, բալա՛ ջան, նստի՛» (ԻԲ, 18), «Ընե՛ նց վախեցա, որ... ընե՛ նց վախեցա...» (ն.տ., 19), «Դեսն արի հլա, դեսը...» (Հ, 67), «Հասի, հա՛, Հոպոպ, հասի, հա՛» (ն.տ., 68):

Այսպիսով՝ կրկնություններն իրենց բազմազանությամբ տարբեր երանգավորում են հաղորդում խոսքին՝ հանդիսավորություն, քնարական շունչ, հուզակնություն ու մեղեդայնություն, իսկ քնությունը ցույց է տալիս հեղինակի՝ կրկնության արվեստին տիրապետելու և դրանից հմտորեն օգտվելու վարպետությունը:

Պատմվածաշարում տեղ գտած արտահայտչամիջոցների մեջ ուրույն տեղ ունի *աստիճանավորումը* (*գրադացիա*): Սա ոճական հնարանք է, որի դեպքում իրար են հաջորդում իմաստով մերձավոր բառեր՝ իմաստի աստիճանական ուժեղացմամբ ընդգծելով նկարագրվող առարկայի կամ երևույթի աստիճանական զարգացումը, սաստկացումը: Պրոֆեսոր Լ. Եզեկյանը նկատում է, որ «աստիճանավորումը համանիշ բառերի զուգադրումն է իմաստի ուժեղացման կամ թուլացման եղանակով, լինում է բարձրացող և իջնող»³:

³ Եզեկյան Լ., նշվ. աշխ., էջ 17:

Նար-Դոսի պատմվածաշարում անփոխարինելի է այս արտահայտչամիջոցի դերը: Հեղինակը ձգտել է հոմանիշ բառերով շեշտել, ուշադրության կենտրոնում պահել այն հասկանիշը, երևույթը, իրողությունը կամ գործողությունը, որն առանցքային, կարևոր նշանակություն ունի տվյալ խոսքաշարում: Շատ անգամ նրա գործածած աստիճանական տարբերություններով հոմանիշները պատկանում են լեզվի տարբերակային այլ ձևերի: Այսպես՝ «*Մեռել ե՞ք, սատկել ե՞ք*, - գոռաց նա սարսափելի հայհոյանքներ թափելով» (ՀՎՀ, 34), «*Ինքը ծեծել ջարդել, մսերս զզզել ա, հերիք չի, տղեն էլ հարբած, տրաքված էկել ա, պակասը թամա-ցրել*» (ԹԻԵ, 44), «...կգնամ Քուռը կընգնեմ, *կխեղդվեմ, հոգիս սատանի փայ կանեմ* ու ընտել չեմ գնա» (ն.տ., 44):

Նար-Դոսը հիմնականում գործածել է բարձրացող աստիճանավորում, որով ներկայացրել է երևույթի, իրողության աստիճանական աճը, սաստկացումը, նման դեպքերում «յուրաքանչյուր հաջորդող արտահայտություն կամ դարձվածք ավելի հազեցած է իմաստով, ավելի ուժգին և արտահայտիչ է, քան նախորդը»⁴, որով էլ ասելիքը պահում է ուշադրության կենտրոնում՝ այն դարձնելով ազդու և տպավորիչ: Այսպես՝ «Երեկոյան դեմ երկինքը *թխպեց*, արագորեն *սևացավ*» (ՍՈՒԳ, 13), «... սիրտը հովացնելու համար ուզում էր, որ Անանը *ճչար, աղաղակեր, լաց լիներ, օգնություն կանչեր*» (ԹԻԵ, 42), «Շատ լվացք անելուց և թոնրի մեջ հաց կոդտալուց նրա դեմքի և ձեռքերի կաշին եռացրած ջրի և թոնրի կրակի մեջ *մրկվել, չորացել, ճաքճաքել, մազադաթ էր դարձել*» (ն.տ., 43), «... ոնց որ մի կատաղած շուն վրա պրծավ ու ջանիս վրա մի սաղ տեղ չթողաց *-խփեց, զզզեց, ծակծկեց...*» (ն.տ., 44), «Հոռոացող փողոցը հանկարծ *լռեց* և *քարացավ*» (Հ, 69):

Նար-Դոսի պատմվածաշարում ուրույն ոճական-արտահայտչական արժեք ունի *հակադրությունը*: Սա շարահյուսական այնպիսի դարձույթ է, որի դեպքում միևնույն խոսքաշարում գործ են ածվում իրար հակադիր նշանակություն ունեցող բառեր (հիմնականում հականիշներ)՝ դրանով ավելի ընդգծելով, շեշտելով արտահայտվող միտքը, ուշադրությունը կենտրոնացնելով հակադրվող բառերի և նրանցով արտահայտված բովանդակության վրա: Այսպես՝ «Աշնան քամին ոռնում էր *դուրսը*: Շուշանը տնքում էր *ներսը*» (Ս, 56), Նույն այդ աղքատությունն էր պատճառը, որ մինչև այժմ ծնած բոլոր երեխաներն ամիսներով *«հարան»* էին մնացել.- մարդ չէր ճարվում, որ *«հալալեք»* - կնքահայր դառնար (ն.տ., 60), «*Կգնաս*, աստծու օղորմութենով կլավանաս, *կգաս* կբանես, պարտքդ էրկու շաբթումը կտաս» (ՍՈՒԳ, 10), «Ամառվան ու աշնան աշխատանքի փողն օր *գալիս* էր, օր *գնում»* (ՀՎՀ, 33), «Ես մեկ սրա *աղոթքին* եմ հավատում, մեկ էլ *անեծքից* վախենում» (ԻԲ, 31):

Գեղարվեստական գրականության մեջ հաճախ է պատահում, երբ հեղինակը խոսքի մեջ առարկան կամ երևույթն ուղղակի անվանելու փոխարեն տալիս է նրա նկարագրական բնութագիրը, որն ավելի պատկերավոր և տպավորիչ է

⁴ Խլղայան Ֆ., Ոճաբանական բառարան, էջ 17:

դարձնում խոսքը: Ոճական այս հնարանքը հայտնի է *շրջասույթ*⁵ անունով: Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարում շրջասույթների տեղին և ճաշակով գործածվածությունը, շրջասության ոճական-արտահայտչական արժեքն այն է, որ առարկան կամ հատկանիշն անվանելով անուղղակիորեն, կապակցությամբ, հեղինակը նշում է հանրահայտը, որը միաժամանակ այլ մտածողության արտահայտություն է բնութագրում և այս տեսանկյունից դառնում է խոսքի համառոտման միջոց⁶:

«Կինն առաջին անգամ բարձրացրեց գլուխը, նայեց նրան, հետևից մի *չանչ արալ* և նորից շարունակեց կարը» (ՀՎՀ, 37):

Չանչ անել- նախատինք, արհամարհանք արտահայտել⁷:

«-Է՛հ, երեխեք ես, էլի, ուստա՛ Ասատուր, ի՞նչ ես *անգաջ դնում*, - ասաց ծանոթը շտապ քայլելով նրա առջևից» (Հ, 64):

Ականջ դնել- կարևորություն տալ, բանի տեղ դնել⁸:

«Ը՛ր, տափը դնեմ քեզ, տափը, ոնց որ փետացել ես էդ տափին, - մրթմրթաց նա» (ԹԻԵ, 41):

Տափը դնել - գետինը մտնել, մեռնել:

«... շատ էժան ենք առնում, հա, որ քոռ ու փուճ ես անում, քոռանաս ու փճանաս դու... » (ն.տ., 41):

Քոռուփուչ անել-աննպատակ, անտեղի վատնել⁹:

Պատմվածաշարի լեզուն հարուստ է նաև ոճական այլ հնարքներով: Դրանցից է հատկապես խոսակցական լեզվին բնորոշ *շարահարություն* (*անշաղկապություն*) բանադարձումը, որն օգտագործվում է խոսքին աշխուժություն տալու, այն ավելի դինամիկ դարձնելու, արտահայտչականությունն ավելացնելու և այլ նպատակներով:

«...տունը սրբած էր, կինն ու երեխաները՝ տկլոր, ինքը՝ դառը ու դատարկ» (ՀՎՀ, 33), «Դուք խո ինձ հմար կնիկ ու որդիք չեք, ցավ ու կրակ եք ինձ համար, ցավ ու կրակ գա ձեր գլխին» (ն., 34):

Հոդվածում քննության են առնված կրկնության, աստիճանավորման, հակադրության, շրջասույթի, անշաղկապության (շարահարության), դրսևորումները Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարի լեզվում:

Վերոնշյալ շարահյուսական բանադարձումները՝ որպես ոճական հնարներ, առատորեն են գործածվում պատմվածաշարում՝ արտահայտելով ժողովրդական լեզվամտածողության մի շարք առանձնահատկություններ, նպաստելով գրողի լեզվի գեղարվեստականացմանը, ժողովրդայնացմանը, հուզականությանը,

⁵ Շրջասույթի մասին մանրամասն տե՛ս Բեդիրյան Պ., Հայերեն շրջասույթունների բառարան, Եր., 2006:

⁶ Տե՛ս Հարությունյան Հ., Գեղարվեստական խոսք, Եր., 1986, էջ 154:

⁷ Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Եր., 2011, էջ 1063:

⁸ Նույն տեղում, էջ 17:

⁹ Նույն տեղում, էջ 1367:

կերպարների տիպականացմանը, տիրող վարք ու բարքի, «խավարի» մթնոլորտի վերարտադրմանը:

Համառոտագրություններ

Օրինակները Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարի /Եր., 1982թ. «Սովետական գրող» հրատ./ հետևյալ նովելներից են.

1. ՍՈՒԳ – «Սաքուլն ուխտ գնաց»,
2. ՍՓՏ – «Սև փողերի տոկոսը»,
3. ԻԲ – «Ինչպես բժշկեցին»,
4. ՀՎՀ – «Հոգուն վրա հասավ»,
5. ԹԻԵ – «Թե ինչ եղավ հետո, երբ շաքարամանից երկու կտոր շաքար պակասեց»,
6. Հ – «Հոսքով»:

СТИЛИСТИЧЕСКИЕ ПРИЕМЫ В ЦИКЛЕ НОВЕЛЛОВ НАР-ДОСА "НАШ КВАРТАЛ"

____ *Резюме* ____

____ *К. Никогосян* ____

В статье рассмотрены проявления повторов, произведений, противопоставления, перифраза, бессоюзности в языке цикла новеллов Нар-Доса «Наш квартал».

Вышеуказанные синтаксические приемы как стилистические приемы щедро применяются в цикле новеллов, проявляя целый ряд особенностей народного языкового мышления, способствуя охудожествованию, популяризации языка писателя, его эмоциональности, типизации образов, воспроизведению царящих устоев, атмосферы «тьмы».

Տեղեկություններ հեղինակի մասին

Նիկողոսյան Քրիստինե Գագիկի – Շիրակի պետական համալսարան,

E-mail: qristinenikoghosyan@mail.ru

ԱՅԳԻ-ՊԱՐՏԵԳՆԵՐ ԵՎ ՍՐԲԱՎԱՅՐ-ԱՐԳԵԼԱՆՈՑՆԵՐ
ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Այգի-պարտեզները բնության և մշակույթի մի համադրություն են, որոնք ունեցել են մարդու նյութական և հոգևոր պահանջները բավարարելու գործառույթ: Այստեղ բնությունն ի հայտ է գալիս իր ողջ հմայքով՝ անուշաբույր բուսականությամբ, բազմագույն ներկապնակով և դյուրիշ մեղեդայնությամբ: Պարտեզը մի դրախտ է մարդու հինգ զգայարանների համար:¹ Պարտեզներն ունեն նաև ինչ-որ փիլիսոփայություն. նրանք տալիս են աշխարհի մասին գեղագիտական պատկերացում, ընդգծում են մարդու վերաբերմունքը բնության հանդեպ, դրանք միկրո-աշխարհ են իրենց կատարյալ դրսևորմամբ:² Դրանք նաև այս կամ երկրի, ինչ-որ ժամանակաշրջանի մշակութային կողի վառ վկաներն են, սերտ կապի մեջ են պետությունների պատմության, նրանց բնակչության կենցաղի, առօրյա կյանքի, աշխարհայեցողության հետ:³

Դարերի ընթացքում հարմարվելով մարդկության զարգացման գործընթացներին՝ այգի-պարտեզները ծառայում էին թե՛ որպես գյուղատնտեսական նպատակներին ծառայող տարածք, թե՛ պաշտամունքի վայր ու սրբատեղի, թե՛ զվարճանքների, զորավարժությունների ու որսորդության վայր, թե՛ յուրօրինակ ծառատեսակների, ծաղիկների ու կենդանիների արգելանոց և թե՛ հանգստի գոտի՝ մեղմ ու առողջարար օդով: Դժվար է վերջնականապես պնդել, թե դրանցից որն է կոնկրետ ժամանակահատվածում ունեցել առաջնային նշանակություն: Ի տարբերություն ճարտարապետական քարաշեն կառույցների, պարտեզները բաց երկնքի տակ մնալով, ավելի անպաշտպան էին և շարունակական խնամքի կարիք ունեին: Կենդանական աշխարհի ներգործությամբ ենթարկվելով բնության վերաձևումներին այգի-պարտեզներն աստիճանաբար ձուլվել են շրջակա միջավայրին՝ խաթարվելով ու կորցնելով իրենց նախնական տեսքն ու նշանակությունը: Պարտեզներն անխուսափելի անհետացումից փրկելու միակ միջոցը թերևս տեղանքը նորովի օգտագործելն էր:

Թեև պարտեզների առաջացումը կապված է քաղաքակրթությունների ձևավորման և ուրբանիզացիայի հետ, սակայն նրանց նախատիպերը ծնունդ են առել դեռևս մինչքաղաքակրթական շրջանում:⁴ Տեսակետ կա նաև, որ մարդկու-

¹ Козлова С. Предшественники ренессансных садов в идеальном преображении природы. Издание Московской художественно-промышленной академии имени С. Строганова. 2011. № 3 (0,5 а.л.). Стр. 60.

² Лихачев Д. Поэзия садов: к семантике садово-парковых стилей. М. 1998. Стр. 11.

³ Махлина С. Сады и парки как коды культуры. Стр. 57, <https://cvberleninka.ru/article/v/sadv-i-parki-kak-kody-kultury> (հասանելի է 31.05.2018թ. դրությամբ):

⁴ Соколова М. К вопросу об истории садов и парков. Стр. 10, <https://cvberleninka.ru/article/v/k-voprosu-ob-istorii-sadov-i-parkov> (հասանելի է 31.05.2018թ. դրությամբ):

թյան՝ նստակեցության անցնելուն զուգընթաց է սկիզբ առել պարտեզ-այգիների կարգավորումը, ինչի նպատակը բնակավայրի մոտ օգտակար ու պիտանի բույսեր աճեցնելն է եղել:⁵ Հնարավոր է, որ սկզբնական շրջանում դրանք ունեցել են նաև պաշտամունքային բնույթ: Հինչինական սովորույթի համաձայն՝ սրբազան եռյակի բաղադրիչներ ծառերը, քարերը և ջուրը պարտադիր մաս էին կազմում այգիների ու պարտեզների: Այսուհանդերձ, մի բան ակնհայտ է, որ ժամանակի հետ այս պարզունակ այգիներին փոխարինելու եկան ավելի ընդարձակներն ու նշանակալիները: Արքաներն ու մեծատոռնիկներն սկսեցին պարտեզներ կառուցել հանգստի ու զվարճանքների համար:

Հին Արևելքում պարտեզների գոյության ու մարդու կյանքում դրանց ունեցած նշանակության մասին պատկերացում կազմում ենք սեպագիր արձանագրությունների, պապիրուսների, արվեստի գործերի (բարձրաքանդակների, որմնանկարների, գորգերի) և պատմիչների վկայությունների շնորհիվ: Հայտնի է, որ եգիպտական պարտեզները զարդարում էին շատրվանները, տաղավարները, անուշահոտ տարատեսակ ծաղիկներն ու բույսերը, էկզոտիկ թռչունները, կենդանաբանական այգիները: Տարածված էին կախովի այգիները, լողավազանները, արհեստական լճակներն ու ջրանցքները: Միայն Ռամզես 2-րդը (մոտավորապես մ.թ.ա. 1279-1213թթ.) տաճարներին նվիրել է 500 այգի:

Միջագետքում էին գտնվում Շամիրամի հայտնի կախովի այգիները՝ աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը: Նորբաբելոնյան շրջանի թագավորական այգիներն այնքան ընդարձակ էին, որ այնտեղ ոչ միայն որսորդությամբ էին զբաղվում այլ նաև գորավարժություններ էին անցկացնում: Դրանք արդեն դարձել էին տիրակալների հպարտության առարկան: Ասորեստանի Թիգլաթպալասար 1-ին (մ.թ.ա. 1115-1077թթ.) թագավորը հիացմունքով է խոսում իր ստեղծած բուսաբանական այգու մասին և պարծենում, որ նման բազմազան ծառատեսակներ ձեռք բերել դեռ չէր հաջողվել իր նախորդներից և ոչ մեկին: Իսկ Մինախներիբը (Մենեքերիս, մ.թ.ա. 701-681թթ.) մեծաբանում էր, թե իր այգիներում են աճում աշխարհի բոլոր տեսակի պտուղները: Չինաստանում ևս բարձր մակարդակի էր հասել պարտեզային մշակույթը: Հան դինաստիայի կառավարման տարիներին (մ.թ.ա. 206-մ.թ. 220 թթ.) հսկայական կայսերական այգիներում հատուկ տեղ էր հատկացված վայրի կենդանիներին նրանց նախկին բնակատեղերի նմանությամբ: Այսինքն՝ արդեն ստեղծվում էին պարտեզ-այգիներ՝ իրական բնապատկերով: Հնդկաստանում կարելի է հանդիպել հետագա հասարակական պուրակների նախատիպերը: Հին հնդկական Այոդիյա քաղաքի նկարագրության մեջ կարդում ենք. «Քաղաքի տարբեր տեղերում հանդիպում էին հրապարակներ, այգիներ, պուրակներ՝ լողավազաններով... Երեկոյան այգիներում շրջում էին մարդկային մեծ զագվածներ»:⁶

⁵ Махлина С., նշվ. աշխ., էջ 48, <https://cvberleninka.ru/article/v/sadv-i-parki-kak-kodv-kultury> (հասանելի է 31.05.2018թ. դրությամբ):

⁶ Рамаяна, книга II, Айдохья. (часть пятнадцатая (Сумантра во дворце Рамы) <http://izbakurnog.historic.ru/books/item/f00/s00/z0000009/st020.shtml> (հասանելի է 09.06.2018թ. դրությամբ):

Այգիներին ու որսատեղի-պարտեզներին մեծ ուշադրություն էին դարձնում պարսից թագավորները: Քսենոփոնը հիացմունքով է հիշատակում Պարսկաստանում Կյուրոս 2-րդի (մ.թ.ա. 559-530 թթ.) կարգավորած այգու մասին: Ընդհանրապես, մեծատոհմիկ պարսիկների որդիները մանկուց սովորում էին ծառեր տնկել և օգտվել պիտանի բույսերից՝ միաժամանակ զգուշանալով վնասակարներից: Պարսիկների կրոնական պատկերացումների համաձայն՝ ծառն ընկալվում էր որպես բնության կենսատու ուժ, սրբություն և միայն հույժ անհրաժեշտության դեպքում էին այն հատում: Հարգի էր հատկապես նոճին՝ իր բրգաձևության պատճառով և համարվում էր աստվածային կրակի խորհրդանիշ: Հերոդոտոսը վկայում է ծառերի պաշտամունքի մի ծայրահեղ դրսևորման մասին. «Այս ճանապարհով գնալիս Քսերքսեսը (մ.թ.ա. 486-465թթ. իշխած պարսից թագավոր – Լ.Պ.) պատահեց սոսու, նրա գեղեցկության պատճառով, նա ընծայեց ոսկե զարդ, և նրա պահպանումը հանձնեց անմահներից»⁷ մեկին: Հաջորդ օրը նա հասավ Լյուդիայի մայրաքաղաք»:⁸

Ընդհանրապես, ծառերի հանդեպ յուրահատուկ վերաբերմունք ու ակնածանք դրսևորելը բնորոշ է եղել հնդեվրոպական տոհմածառից սերած ժողովուրդներին: Այսպես, օրինակ, Հռոմում երկրպագում էին Հռոմուլոսի սրբազան թզենուն: Բավական է, որ նա թառամելու նշաններ ցույց տար, որպեսզի ամբողջ քաղաքին համակեր սարսափը: Իսկ Պալատինյան բլրի լանջերին աճում էր մի հոնի ծառ, որը Հռոմում համարվում էր ամենասրբազան առարկաներից մեկը: Եթե անցորդներից որևէ մեկին թվում էր, թե այդ ծառը խոնարհվել է, նա կարեկցալի բղավում էր, որին ձայնակցում էին փողոցով անցնող մարդիկ և շատ չանցած կարելի էր տեսնել, թե մարդկային ամբոխն ինչպես է ջրով լցված ամաններով բոլոր կողմերից աճապարանքով վազում, կարծես շտապում է հրդեհ հանգցնելու:⁹ Պատկերացում կար անգամ, որ ծառերը շնչավոր են և օժտված են զգայականությամբ: Դրանք կտրելը նուրբ վիրահատության է վերածվել, որը պետք է կատարվեր խնամառուի զգացողության նկատմամբ առավելագույն ուշադրություն ցուցաբերելով, հակառակ դեպքում ծառը կարող էր պատառ-պատառ անել անզգույշ և ապաշնորհ վիրաբույժին: Երբ կաղնին տապալում էին, նա աղիոդորմ ճիչեր ու հառաչանքներ էր արձակում, որոնք լսվում էին մի մղոնի վրա: Համոզմունք կար, որ դա կաղնու հովանավոր ոգին է եղել, որը բողոքել է¹⁰:

Հանրածանոթ է, որ պարսկական պարտեզ-այգիները կոչվում էին «պարադիզ», որը ստուգաբանվում է որպես «pairidaeza»՝ «պատով շրջապատված հողամաս», այսինքն՝ պարսպատված, ցանկապատված տարածք: Հօգուտ այս տեսակետի է խոսում հնագետների հայտնաբերած ուշաքեմենյան ժամանակների (մ.թ.ա. V դարի վերջ – մ.թ.ա. IV դարի վերջ) պալատներին կից պարսպատված հողամասերը, որոնք պետք է որ նախատեսված լինեին այգիների համար: Նմանատիպ

⁷ Պարսից 10.000-անոց ընտիր գորամասի ազնվատոհմիկ զինվոր:

⁸ Herod. VII, 31 (Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Մ. Կրկյաշարյանի, Եր., 1986, էջ 398):

⁹ Ֆրեզեր Ջ., Ոսկե ճյուղը. Մոգության և կրոնի ուսումնասիրություն, Եր., 1989, էջ 136:

¹⁰ Նույն տեղում, էջ 138-139:

պարսպապատ տարածքների մնացորդներ հայտնաբերվել են Շոշից: Հակառակ սրան, Պասարգադի այգի-պարտեզը պարսպատվածների շարքին չի դասվում: Ըստ երևույթին, մ.թ.ա. V դարի վերջերին արքեմենյանների մոտեցումները այգի-պարտեզներ կարգավորելու հարցում փոփոխության է ենթարկվել:

Հնագիտական պեղումները և անտիկ հեղինակների վկայությունները թույլ են տալիս մ.թ.ա. V–IV դդ. Աքեմենյան Պարսկաստանում առանձնացնել այգի-պարտեզների երկու տեսակ: Մի տեսակը ծառայել է որպես արգելանոց կամ որսատեղի հեծյալ որսով զբաղվելու համար և ունեցել է մեծ, կանոնավոր հարդարված տարածք: Հնարավոր է, որ նման վայր ընտրելիս հաշվի էին առել մոտակայքում աղբյուրի առկայությունը՝ կենդանիներին ջրով ապահովելու համար: Հատկանշական է, որ Քսենոփոն իր կալվածքում Մելիտուն գետի ափին ընդարձակ պարտեզ էր ստեղծել պուրակներով ու մարգագետինով, որտեղ զբաղվում էր վարակների, վիթերի, եղնիկների որսով: Գուցե Քսենոփոնի այս այգի-պարտեզը նմանակն էր արքեմենյան որսատեղիների:¹¹ Այգի-պարտեզի երկրորդ տեսակը՝ ուշաքեմենյան շրջանի պարսպապատված այգի-պարտեզն է, որն ավելի հավաք տեսք ուներ և պալատական համալիրի բաղկացուցիչ մասն էր:

Հին Հայաստանում թագավորական նստավայրին կից հանգստյան ընդարձակ գոտու ստեղծումը ևս տարածված երևույթ է եղել: Վանի թագավորության արքաների մեծագործությունների ցանկում հատկապես կարևորվում է քաղաքաշինությունը, և առանձնահատուկ ընդգծվում քաղաք+ջրանցք+խաղողուտ+անտառ (այգի)+ապարանք (ամրոց)=համալիր կառույցի բաղադրիչների միասնությունը՝ որպես քաղաքաշինական ամբողջություն: Ըստ Գ. Քոչարյանի՝ այս համակարգում իր որոշակի տեղն ունի նաև մերձքաղաքային «արքունի ծառագարդ ապարանքը», ամենայն հավանականությամբ, վայրի կենդանիների որսատեղ-արգելոցով հանդերձ: «Թեպետ վերջին պարագան սեպագիր աղբյուրներում դեռևս բացահայտված չէ, այսուհանդերձ, Վանի թագավորության և նախորդ շրջանի հանրահայտ բրոնզե գոտիների ու խեցանոթների պատկերագրության մեջ արքայական որսի վեհաշուք, հանդիսավոր տեսարանը դրա գոյության առավել քան համոզիչ վկայությունն է», - գրում է նա¹²:

Անդրադառնանք սեպագիր աղբյուրների վկայություններին: Չնայած Հայկական լեռնաշխարհում այգի-պարտեզների գոյության մասին սեպագիր աղբյուրներում պարզորոշ տեղեկություններ չկան, այնուամենայնիվ որոշ աղոտ պատկերացում կարելի է կազմել, օրինակ, Գիլգամեշի մասին միջագետքյան էպոսից: Դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակից Գիլգամեշի (մ.թ.ա. մոտավորապես 2600թ.)՝ շումերական Ուրուկ քաղաքի կառավարչի մասին էպոսում հիշատակվում է դրախտային այգու մասին: Ուտնապիշմիին գտնելու և նրանից կյանքի ու մահվան խորհուրդն իմանալու հույսով Գիլգամեշը Ճանապարհ էր ընկել դեպի Հայկական

¹¹ Xen. Anab., V, III, 7–11 (Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 116–117):

¹² Քոչարյան Գ., «Արքունի ծառագարդ ապարանքը» Երվանդակերտից առաջ և հետո, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. II, Գյումրի, 1999, էջ 123:

լեռնաշխարհի (Միջագետքից հյուսիս Հայկական լեռնաշխարհն էր ձգված): Երկարատև դեգերումներից հետո «Գիլգամեշ հեռվեն նշմարեց աստվածներուն պարտեզը և անոր քով փութաց: Որթնատունկերը պատած էին զայն, և խաղողի ողկույզները կախված էին անկե: Լաջվարդն ալ տերն և գեղեցիկ տեսքով պտուղներ ուներ: Դարավոր մայրիներուն և կասկենիներուն վրայեն կախված ազնիվ քարերը կշողշողային: Կանաչ զմրուխտը ծովասեզի նման ծառերուն ստորոտը տարածված էր: Հոս քեսի և ուղտափուշի տեղ գույնզգույն ազնիվ քարեր կփայլէին: Պտուղի կուտը շափուղա էր: Գիլգամեշ պահ մը կդանդաղեցնէ իր քայլերը և աչքերը կդարձնէ աստվածներուն պարտեզի կողմը: Դիցուհի Սիդուրին, ծովեզրի գահին վրա բազմած, աստվածներու պարտեզին կհսկէ»:¹³ Դյուցազնավեպի այս դրվագում առկա են Հայկական լեռնաշխարհի խաղողի այգիների և գինեգործության վերաբերյալ շումերների ունեցած պատկերացումների արձագանքները: Արմավիրի պեղումների ժամանակ հայտնաբերված կավե սալիկներից մեկի էլամերեն տեքստը պարունակում է մի հին հատված «Գիլգամեշ» դյուցազնավեպից: Ընդ որում, դա Գիլգամեշի և Սիդուրի դիցուհու հանդիպման դրվագն է: Ս.Հմայակյանի կարծիքով, ներկայացումը բեմադրվել է ուրարտական թագավորի կամ թագածառանգի պսակադրության առթիվ¹⁴: Բայց քանի որ Սիդուրին նաև մատուցակ էր, Ս. Պետրոսյանը հակված է Ուրարտում կայացած այդ ներկայացմանը տալու այլ բացատրություն: Նա գրում է. «Ի պաշտոնե Սիդուրին կոչվում էր նաև *sābītu* «մատուցակ»: Վերջինովս է պայմանավորված եղել այն հանգամանքը, որ Ուրարտու ժամանած էլամցի դերասանները Գիլգամեշի և Սիդուրի դիցուհու հանդիպման տեսարանը ներկայացնեն խաղողագործության և գինեգործության հայրենիք համարված ուրարտական դարաշրջանի Ուազա (*Aza*) երկրում, նրա կենտրոնատեղի Արգիշտիխինիլի-Արմավիրում»¹⁵: Այս երկրանունը *Aza/Uza/Uza*, Ն.Հարությունյանը ստուգաբանում է *վազ* «խաղողի որթ» բառի միջոցով, այն հասկանալով որպես «խաղողի վազերի (երկիր)»¹⁶:

Արմավիր քաղաքի՝ սրբավայր լինելու և սոսի ծառերից բաղկացած սուրբ պուրակ ունենալու հետ կապված տեղին կլինի հիշել նաև Անուշավան Մոսանվերին վերաբերող Մովսես Խորենացու վկայությունը. «Արայեանն Արայ մեռանի ընդ Շամիրամայ ի պատերազմին, թողլով արու զաւակ ամենահարուստ և շատահանճար յիր և ի բան՝ զԱնուշաւանն Սօսանուէր: Քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիսն Արամենակայ որ յԱրմաւիր. Զորոց զսաղարթոյնս սօսաւիւն, ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օդոյն, և թէ ուստի շարժումն՝ սովորեցան ի հմայս յաշխարհիս Հայկազանց, և այս ցբագում ժամանակս»¹⁷: Ինչպես տեսանք, հնդեվրոպական մյուս ժողովուրդների նման մեր նախնիներին ևս հարիր է եղել ծա-

¹³ Մարտիրոսյան Ն., Գիլգամեշ. Հին Արևելքի դյուցազնավեպ, Եր., 1963, էջ 78-79:

¹⁴ Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 98-99, ծան. 76:

¹⁵ Պետրոսյան Ս., «Արարատյան դրախտը» սեպագիր աղբյուրներում, ՊԲՀ, N 2-3, Եր., 2009, էջ 255-256:

¹⁶ Арутюнян Н., Новые урартские надписи Кармир Блуга, Ер., 1996, стр. 91, пр. 43.

¹⁷ Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց, քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի (այսուհետև՝ Խորենացի), Եր., 1981, գիրք Ա, գլ. ի:

ռերի պաշտամունքը: Մանրակրկիտ և ուշադիր քննության դեպքում մեր պատմիչների և ազգագրագետների աշխատություններում կհանդիպենք Հայաստանում պարտեզ-պուրակ-սրբավայրերի առկայության մասին այլ վկայությունների ևս: Օրինակ՝ քչերին է հայտնի, որ Բարձր Հայքի Դարանաղի գավառի Թորդան բնակավայրում Գրիգոր Լուսավորիչն ունեցել է, անշուշտ, այդպիսի մի պարտեզ¹⁸:

Պաշտամունքային և բուժիչ նպատակներով հիմնադրված այդպիսի համալիր էլ եղել է Բասենում: Բասենցի Գ.Հակոբյանի վկայությամբ. «Դեպի Բազմուղ տանող ճանապարհի ձախ կողմը, Վարդերեսենց ջրաղացի շուրջը կար գեղովեղ բարդիների մի փոքրիկ պուրակ: Այդ բարդիների մեջ կար մի մեծ ու երկար բարդի, որը կոչվում էր կապույտ բարդի: Այսպես էր կոչում ժողովուրդը նրա համար, որ կապույտհազ և առհասարակ հազ ունեցող հիվանդներին բերում էին այս պուրակը, սրանց վզին կապում կապույտ հազի շոր կամ այդ սուրբ համարվող ծառի փոքրիկ ճյուղերից և ծառի տակ քնեցնում»¹⁹: «Առանձնապես սուրբ էին համարվում ուռենի, բարդի և սոսի ծառերը»²⁰: Իսկ Արցախի Վարանդա գավառում, ըստ Ե. Լալայանի, երբ «ուզում են գուշակություններ անել, առավելապես աղջիկները ճյուղի (ճինճի) են ձգում այդ սրբազան ծառերի վրա... Մի որոշ բան մտները դնելով՝ նրանք լարում են իրենց բոլոր ուժը և ճյուղիով բարձրանալով՝ աշխատում մի տերև կտրել և իրենց հետ բերել (պաշար բերել): Եթե հաջողում են, դա ապացույց է, որ իրենց մտադրած բանը կատարվելու է, լավ է և այլն, իսկ եթե չեն հաջողում, նշանակում է, թե չպիտի կատարվի, լավ չէ և այլն»²¹: Հայաստանում սուրբ էին համարվում առհասարակ բարդին, սոսին, ուռենին և մասրենին, «կեչի ծառն էլ մտնում էր պաշտամունքի ենթակա ծառերի մեջ»²²:

Երվանդունի թագավորների հոգաձության առարկաներից մեկն է եղել հենց այդպիսի տաքածքների հարդարումը: Հայաստանում ևս դրանք շրջակայքի կլիմայի առողջացման և պաշտամունքային կարիքների բավարարման նպատակներ էին հետապնդում: Վերջին դեպքում, դրանց ստեղծումը ուղղակի առնչության մեջ էր դրվում բերրիության և պտղաբերության անձնավորում, բուսական և կենդանական աշխարհի հովանավոր Մայր դիցուհու պաշտամունքի հետ: Դրանք փաստորեն վերածվում էին արքունի արգելանոց-սրբավայրերի: Դրանք ստեղծող առաջիններից մեկը լինելու էր Հայաստանի նախկին սատրապ և նորընծա թագավոր Օրոնտես-Երվանդը, որի գործունեության այս բնագավառը ևս Մովսես Խորենացին վերագրում է ավանդական Վաղարշակ թագավորին: Ըստ նրա՝ Վաղարշակը «դառնայ զհիւսիսեաւ առ ստորոտովն Պարխարայ ընդ մէջ Տայոց, ի գիջին եւ ի մառախլուտ տեղիս մայրեաց եւ ի յօռաւէտս. գեղեցիկ իմն կարգելով գերկիրն... ամառնային ժամանակին հովանոցս պատրաստելով, յորժամ զհիւսիսեաւ երթիցէ: Գոմս գերկուս տափարակսն անտառախիտս հանդերձ լերամբքն կազմելով, եւ որ-

¹⁸ Հակոբյան Թ., Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. II, Եր., 1988, էջ 475:

¹⁹ Հակոբյան Գ., Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Եր., 1974, էջ 263:

²⁰ Նույնը:

²¹ Լալայան Ե., Երկեր, հ. II, Եր., 1988, էջ 161:

²² Հակոբյան Գ., Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, էջ 264:

սոց տեղիս, եւ զջերմութիւնն Կողայ՝ ի մարմանդս այգեաց եւ բուրաստանաց».²³ Ստ. Մալխասյանցը բացատրում է. «Պատմահոր միտքն այն է, թե... տափարակ ջերմոտ տեղերում երկու գոմ է հիմնում անասունների համար: Այս տափարակ ջերմոտ տեղերը կծառայեն իբրև ձմեռոց-ղշլա, իսկ դրանց մոտի լեռները կծառայեն իբրև ամառանոց-յայլա և որսատեղ: Կողայի ջերմ տեղերում էլ այգիներ ու բուրաստաններ է տնկում, որոնք օդը մեղմացնում են».²⁴ Ամենայն հավանականությամբ, այս վերջինը եղել է սրբավայր-արգելանոց և գտնվել է Պարտիզաց փոքր գավառում, որովհետև Պարտիզաց փոքր գավառի անունը նշանակում է «պարտեզների ձոր, ձորագավառ», իսկ նրա կենտրոն Պարտեզ բնակավայրի²⁵ անունը՝ ուղղակի «պարտեզ, այգի, ծաղկանոց, մրգաստան».²⁶

Եւս մի արգելանոց-որսատեղիի ստեղծում կապված է Երվանդ Վերջինի անվան հետ: Ըստ Մովսես Խորենացու՝ Մեծ Հայքի Երվանդ Վերջին թագավորը. «Տնկել եւ մայրի մեծ ի հիւսիսոյ կողմանէ գետոյն (Արաքսի – Լ.Պ.), եւ որմովք ամրացուցանէ, արգելելով ի ներքս այծեմունս երագունս, եւ զեղանց եւ զեղջերուաց ազգ, եւ ցիռս եւ վարագս. որք ի բազմութիւն աճեցեալ լցին զանտառն, որովք ուրախանայր թագաւորն յաւուրս որսոց: Եւ անուանէ զանտառն՝ Ծննդոց».²⁷ Երվանդակերտ ձեռակերտի խորենացիական նկարագրությունը կասկած չի թողնում, որ նրան կից ստեղծված այս սրբավայր-արգելանոցը ձևավորվել է եղել բուսաշխարհի և կենդանական աշխարհի հովանավոր Մայր դիցուհուն: Ահա այն. «Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ եւ պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիր: Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց եւ հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբոսն զայլ բոլորակութիւն ական: Իսկ զբազմութիւն այգեստանոյ՝ իբր զարտեւանանց խիտ եւ զեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձեւ՝ արդարեւ զեղաւոր կուսից յօնից դարաւանդաց համեմատ: Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնօտից պարզութեան զեղեցկութիւն: Իսկ գետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ զերկթերթիսն նշանակել շրթունս... եւ արդարեւ բերրի եւ թագաւորական դաստակերտն».²⁸ Երվանդ Վերջինի կողմից նորաստունկ անտառին տրված Ծննդոց անունը ևս վկայությունն է նրա՝ Մայր դիցուհուն ձևավորված սրբավայր-արգելանոց լինելու, որովհետև Անահիտ մայր դիցուհին ոչ միայն կենդանական ու բուսական աշխարհների, այլև մայրության, մանկածնության²⁹ և, առհասարակ, բոլոր ծնունդների հովանավորն էր:

Միապետի կամ կառավարչի նստավայրը վարչաքաղաքական կենտրոնի հետ քաղաքի մյուս մասերից առանձնացնելը Արևելքի հելլենիստական քաղաքներ-

²³ Խորենացի, Բ, գ:

²⁴ Խորենացի, էջ 479, ծան. 114:

²⁵ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 77, 110: Ալիշան Ղ., Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 10:

²⁶ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. IV, Եր., 1979, էջ 69-70:

²⁷ Խորենացի, Բ, խա:

²⁸ Խորենացի, Բ, խբ:

²⁹ Հայ ժողովրդի պատմություն, ՀՄՄՀ ԳԱ հրատ., հ. 1, Եր., 1971, էջ 903: Вардумян Г. Дохристианские культы армян. «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», հ. 18, Եր., 1991, էջ 107:

րի (Անտիոք, Ալեքսանդրիա, Դուրա-Նվրոս, Պերգամոն) բնորոշ գծերից էր, որ պաշտամունքային գլխավոր համալիրները նույնպես կառուցվում էին առանձնացած տեղերում: Այս առումով ուշագրավ է Երվանդի կողմից մայրաքաղաքը Արմավիրից Երվանդաշատ, իսկ կուռքերին Բագարան տեղափոխելը:³⁰ Մայրաքաղաքից դուրս կառուցված սրբավայր-քաղաքն, այսուհանդերձ, նրանից հեռու գտնվել չէր կարող, որովհետև դրանում նախնառաջ իրագործվում էր թագավորի դինաստիական աստվածների և աստվածացված նախնիների հելլենիստական պաշտամունքը: Բնականաբար, նրանց պաշտամունքն իրագործվելու էր սրբավայր-քաղաքի գլխավոր տաճարում: Երվանդունիների հետևորդ Արտաշիսյանները ևս, շարունակելով իրենց նախորդների ավանդույթները, ուշադիր են եղել նույնատիպ համալիրների ստեղծման հարցում: Ապպիանոսի վկայությամբ, Տիգրան Մեծը իր «Քաղաքի արվարձանում կառուցեց մի պալատ, ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով»:³¹ Մ.Կրկյաշարյանը նկատել է տալիս, որ այդպիսիք բնորոշ էին նաև Հայաստանի մյուս խոշոր քաղաքներին՝ Արմավիրին, Երվանդաշատին և Արտաշատին:³²

Արտաշիսյանների հետևորդ Արշակունիներից Խոսրով 3-րդը՝ Կոտակը, նույնպիսի քայլեր է ձեռնարկել՝ ստեղծելով Խոսրովակերտ անտառը և թարմացնելով նույն վայրում գտնվող և ավելի վաղ գոյություն ունեցած սրբավայր-արգելանոցը: Ըստ Փավստոս Բուզանդի՝ այն Գառնի բերդից տարածվում էր «մինչև ի դաշտն Մեծամորի ի բլուրն, որ անուանեալ կոչի Դուին, որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգետն խոնարհ մինչև յապարանսն Տիկնունի՝ տնկեցին զկաղնին: Եւ կոչեցին զանուն նորա Տաճար մայրի: Եւ միւս ի մայրեացն յեղեգնաբերանին ի նմանէ ի հարաւակոյս լցին զդաշտն կաղնատուն տնկով. եւ կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ... Եւ ապա զամենայն էրէս եւ զգազանս հրամայեաց ժողովել թագաւորն, եւ լնուլ զքաղաքորմսն, զի լիցին նոցա տեղիք որսոց զբոսանաց ուրախութեան թագաւորութեան նորա»:³³ Ուշագրավ է, որ առաջին անտառը ձգվում էր «մինչև յապարանսն Տիկնունի» և կոչվում էր «Տաճար մայրի»: Իսկ այդ անունները հստակ հեթանոսական բնույթի են, ուստի, ի տարբերություն Խոսրովակերտ անտառի, «Տաճար մայրի» կոչված անտառը քրիստոնյա Խոսրով 3-րդից առաջ գոյություն ունեցել է: Իսկ այստեղ գտնված ապարանքի Տիկնունի (<տիկին-ունի) անունը ցույց է տալիս, թե ում է ձուլված եղել այդ սրբավայր-արգելանոցը: *Տիկին*-ը մայր դիցուհի Անահիտի հայտնի մականիւն էր:

«Ավանդապատում»-ը մեզ է փոխանցում Հայաստանում ծառերի ու, ընդհանրապես, այգի-պարտեզների գոյությունը փաստող դրվագային պատմություն-

³⁰ Խաչատրյան Ժ., Հայաստանի անտիկ շրջանի քաղաքներն ու քաղաքաշինությունը ըստ Մ.Խորենացու «Հայոց պատմության», ՊԲՀ, 1998, թիվ 1-2, էջ 182:

³¹ Аппиан, Митридатовы войны, https://royallib.com/read/appian/mitridatovi_vovni.html#204800 (հասանելի է 09.06.2018թ. դրությամբ):

³² Կրկյաշարյան Մ., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Եր., 1970, էջ 118:

³³ Փավստոսի Բիզանդացու պատմություն Հայոց, Բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմ. և ծան. Մտ. Մալխասյանի, Եր., 1987, Գ, ք:

ներ: Այստեղից մենք իմանում ենք, որ Հայոց ձորի Հնդստան գյուղի մոտակայքում «Մուրբ ծառերի պուրակ»³⁴ է եղել և հավատացել են, թե այդտեղի ծառերը հատելիս՝ դրանցից արյուն է հոսել: Իսկ Դերսիմի շրջանում գոյություն է ունեցել «Տրդատի մորի» անունով մի «անմատչելի ու անթափանց պուրակ», որտեղ Աստծու պատիժը կրած Տրդատ 3-րդ թագավորն (298-330թթ.) էր պատսպարվել³⁵: Խորենացու մոտ Տիրան թագավորի (338-350թթ.) կողմից պարսիկ Դրվասպին այգի-պարտեզ նվիրելու մի հպանցիկ նկարագրություն է պահպանվել: Այնտեղ կարդում ենք. «ԳՐՈՒԱՍՍ ռմն պարսիկ զմտերիմ իւր, որ խնամեցեալ էր ընդ նախարարս Վասպուրականի, որում տուեալ էր զաւանն Տատեօնս հանդերձ ագարակօքն, և զայգին մեծ, յոր մտանէր առուն գետ, հանեալ ի ծովէն Գայլատուայ»³⁶:

Ուշագրավ են որսորդության առնչվող Մեծ Հայքի *Որսիքանք* և *Վարաժնունիք* գավառների անունները: Թերևս սրանք էլ արքունի սրբավայր-արգելանոցներ են եղել: *Որսիքանք*-ը Կորճայք նահանգի գավառներից էր.³⁷ Անվան առաջին բաղադրիչը *որս* բառն է, երկրորդը՝ *-իք* վերջածանցը, որոնք վեր են հանում **որսիք* «որսորդ» բառը՝ հոգնակի թվով՝ «որսորդներ»// *Որսիքանք*: Վարաժնունիք անունով երեք գավառներ՝ ա. Այրարատում («այժմյան Հրազդանի, Սևանի, Դիլիջանի և Կարմիրի շրջանների մեծ մասը»³⁸)՝ ներկայիս Դիլիջանի արգելանոցը ներառյալ, բ. Վասպուրականում՝ Խանասորի լեռնանցքին հարող տարածքում³⁹, գ. Տավրուբերանում՝ Խնուս գետի հովտում⁴⁰: Վասպուրականի Վարաժնունիք տոհմանվան առնչությունը արքունի արգելանոց-որսատեղերի հետ բացահայտվում է Խորենացու հետևյալ հաղորդումների միջոցով: 1. Գեղամի Գառնիկ թոռը. «Ի սորա ծննդոց... ռմն Վարաժ անուն պատանի լեալ, աջող յորս եղջերուաց եւ այծեմանց եւ վարագուց. Դիպաձգութեամբ նետից կորովի. Ջսա ի վերայ որսոց արքունականաց կարգե (Արտաշէս արքայ), եւ շէնս պարգեւէ նմա առ եզերք գետոյն, որ անուանեալ կոչի Հրազդան: Եւ ի սմանէ ասէն լինել զտունն Վարաժնունի»⁴¹: 2. Վաղարշակ արքան «Իսկ զԴատ ի զաւակէ Գառնիկայ, որ ի Գեղամայ, ի վերայ որսոց արքունականաց կարգե: Որոյ որդի եղել Վարժ՝ յանուն նորա անուանի ազգն, բայց այս զկնի, յաւուրս Արտաշէսի»⁴²: 3. Պատանի Վարաժը էր «նշաւակ ի նետաձգութիւն կորովութեան... Ջնա իշխան արքունականացն արարեալ որսոց, եւ շէնս պարգեւեալ նմա զՀրազդան գետով՝ յանուն նորա կոչի ազգն Վարաժնունի»⁴³:

Նույնպիսի որսատեղ-արգելանոցի մասին տեղեկություն պահպանվել է Ագաթանգեղոսի մոտ. «Ապա յետ այսորիկ ժամ տուեալ *որսոյ*՝ ամենայն զօրաց

³⁴ Դանալանյան Ա., *Ավանդապատում*, Եր., 1969, էջ 391:

³⁵ Նույն տեղում, էջ 394:

³⁶ Խորենացի, Բ, կբ: Գայլատվա ծովը մի փոքր լիճ Դիադինից (Տատեոն) հյուսիս-արևմուտք, Մասիսից արևմուտք և այժմ կոչվում է Բալըղ-գյոլ (ձկան լիճ) (Խորենացի, էջ 498, ծան. 190):

³⁷ Աշխարհացոյց, էջ 75, 108:

³⁸ Աշխարհացոյց, էջ 82, 111:

³⁹ Աշխարհացոյց, էջ 82, 109:

⁴⁰ Աշխարհացոյց, էջ 82, 107:

⁴¹ Խորենացի, Ա, ժբ:

⁴² Խորենացի, Բ, է:

⁴³ Խորենացի, Բ, ժա:

ածել կուտել զպառականն, խուճապական սփռեալ, երագազ տուեալ, թակարդ ձգեալ, կամեցեալ որս առնել, երթեալ ի դաշտն *Փառական Շենակաց*»⁴⁴։ Իսկ Անանուն պատմիչը Մասիսներին առնչելով աստվածաշնչային Աբրահամի հարձին, գրում է. «Եւ լինին նորա երեք որդիք. Փառոխ՝ նա է Եղիազար, եւ Փառոխտ կոչեն զտեղի բնակութեանն, եւ *Փառականն դաշտ որսոց* եւ արշաւանաց նոցին, որ խառնին յազգ Արամենակայ»⁴⁵։ Փառոխը ըստ Մովսէս Խորենացու բերած հին հայոց ավանդազրույցների, Մասիսի անվանադիր Ամասիայի որդին էր, իսկ նրա նստավայրը՝ իր անունը կրող Փառախտուն էր Մասիսի հյուսիսային լանջին⁴⁶։ Վերջինիս մոտերքում էլ գտնվելու էր *Փառական* կոչված «որսոց եւ արշաւանաց» դաշտը։ Հ. Աճառյանը սա նույնը համարելով Ազաթանգեղոսի հիշատակած «Փառական շենակաց»-ի հետ, ավելացնում է. «*Փառական*՝ դաշտի հատուկ անուն է, իսկ *շենակ* նշանակում է «որս»⁴⁷։ Իսկ Բ. Չուգասզյանը հետևյալ կարծիքն է հայտնում. «Հայ. *պառակ*=*փառակ* «կող, եզր, քղանցք, ծոպ, փեշ», «ստորոտ, լեռան լանջ», «որսը շրջապատելու համար օղակաձև դասավորված հեծյալ կամ հետիոտն զորք»⁴⁸։ Այսինքն՝ *Փառական* հատուկ անունը նշանակում է այնպիսի որսավայր, որտեղ որսի ելած իշխանավորներին օգնել են նաև շուրջկալող խմբեր։

Մովսէս Խորենացու և Ազաթանգեղոսի վերոբերյալ հաղորդումներից պարզվում է, որ Մասիսի ստորոտին գտնված Փառական դաշտն արքունի որսատեղի է եղել։ Դրա մնացորդները որպես որսատեղի են ծառայել հետագա դարերում նա։ Արաբ մատենագիրներից Աբու-լ-Ֆիդայի հաղորդմամբ. «Կանունի մեջ կարդում ենք, թե Հարաթի (իմա՝ Արարատի, Մեծ Մասիսի) գագաթը շատ դժվարամատչելի է. Այնտեղ մշտական ձյուն է նստած։ Նրանից ցած կա մի ուրիշ սար, որ կոչվում է ալ-Հուայրաթ կամ Փոքր Հարաթ (իմա՝ Փոքր Արարատ, Փոքր Մասիս)։ Այդ փոքր սարն է, որ շրջապատի բնակիչներին ջուր է հայթայթում, ինչպես և փայտ ու որսի երե»⁴⁹։ Ռուսական դիվանագետ, ծագումով գերմանացի Մ. Ֆրեյզանը նա իր 1812թ. ուղեգրություններում անդրադարձել է Մասիսների ստորոտի որսատեղիին. «Ընդարձակ մի դաշտ տարածվում է լեռան ստորոտին, որ դեպի որոշ բարձրության ծածկված է անտառներով՝ լի ապշեցուցիչ թվով վայրի կենդանիներով»⁵⁰։ Ծագումով գերմանացի, ռուսական բանակի մեկ ուրիշ սպա՝ Մ. Ֆոն Կոցեբուն, ավելացնում է. «Արարատում գտնվում են բազմաթիվ գազաններ և հսկա մեծությամբ օձեր»⁵¹։ Փաստորեն, այս արքունի որսատեղին նախաքրիստոնեական

⁴⁴ Ազաթանգեղայ «Պատմություն Հայոց», Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի, Եր., 1983, Ի, 211, էջ 120։

⁴⁵ Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն, բաղդատուրեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանի և ծանոթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց, Եր., 1939, գլ. Ա, էջ 7։

⁴⁶ Խորենացի, Ա, Ժբ

⁴⁷ Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. III, Եր., 1977, էջ 509։

⁴⁸ Չուգասզյան Բ., Բառաքնական դիտողություններ, Լրաբեր հասարակական գիտությունների, 1981, N 2, էջ 36։

⁴⁹ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, Եր., 1965, էջ 154-155, ծան. 138։

⁵⁰ Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 6, Եր., 1934, էջ 404։

⁵¹ Նույն տեղում, էջ 545։

դարերում նաև արգելոց-սրբավայր է եղել, ինչպիսին Երվանդ Վերջինի հիմնադրած և Մայր դիցուհուն ձուլված Ծննդոց անտառն էր:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ հնագույն ժամանակներից ինչպես Հին Արևելքի մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում գոյություն են ունեցել հատուկ պահպանվող տարածքներ, որոնք թագավորների ու նրանց մերձավորների համար ծառայել են ոչ միայն որպես արքունի պարտեզներ, պուրակ-սրբավայրեր, այլև որպես արգելանոց-որսատեղիներ և զվարճանքի ու զորավարժությունների համար նախատեսված վայրեր: Դրանցից հանրաձանոթ են ա. Արգիշտիխինիլի-Արմավիրի Սոսիների պուրակը, բ. Երվանդ Վերջինի բարեկարգած «Ծննդոց անտառ»-ը, գ. Տիգրանակերտի մերձակայքում Տիգրան Մեծի կառուցած այգի-պարտեզը, դ. Խոսրով Կոտակի հիմնած Խոսրովակերտ անտառը և կարգավորած «Տաճար մայրի»-ն, իսկ մոռացվածների կամ անտեսվածների շարքին կարելի է դասել հետևյալները.

1. Տայքի Պարտիզաց փոքր գավառի այգի-պարտեզը,
2. Բարձր Հայքի Դարանաղի գավառում Թորդան բնակավայրի այգի-պարտեզը,
3. Այրարատ նահանգի Բասեն գավառի պուրակը,
4. Արցախ նահանգի Վարանդա գավառի պուրակը,
5. Վասպուրականի Հայոց ձոր գավառում Հնդստան գյուղի «Սուրբ ծառերի պուրակ»-ը,
6. Ծովք նահանգի Դերսիմի շրջանում «Տրդատի մորի» պուրակը,
7. Այրարատի Ծաղկոտն գավառի Տասյոնք (Դիաղին) ավանի այգին,
8. Կորճայք նահանգի Որսիքանք գավառի արգելանոց-որսատեղին
9. Վասպուրական, Այրարատ, Տուրուբերան նահանգների Վարաժնունիք անունով գավառների արգելանոց-որսատեղիները,
10. Այրարատի Մասյացոտն գավառում Մասիսի լանջին գտնվող «Փառական Շեմակաց» արգելանոց-որսատեղին:

ПАРКИ-САДЫ И СВЯТИЛИЩА-ЗАПОВЕДНИКИ В ДРЕВНЕМ ВОСТОКЕ И В АРМЕНИИ

___ Резюме ___

___ Л. Петросян ___

С древних времен, подобно другим странам древнего Востока, в Армении также существовали особо охраняемые природные территории, которые служили не только святилищами и святынями, но и царскими садами, охотничьими угодьями, заповедниками, местами для развлечения и тренировки. Из них популярны а) “Сосац пурак (“Парк платанов”) в Аргиштихинили-Армавире, б) “Цяндоз антар” (“Лес родов”), который упорядочил царь Ерванд Последний, в) сад-парк, построенный Тиграном Великим около Тигранакерта, г) “Тачар майри”

(“Собор кедров”) и д) роща Хосровакерт царя Хосрова Котака. Этот список мы расширили с учетом более десятка малоизвестных садов и парков, информация про которых является отрывочной и нуждается в дальнейшем подтверждении. Ими являются: 1. сад-парк в гаваре Партизац пор (ущелье парков), 2. сад-парк у населенного пункта Тордан в гаваре Даранаги, 3. парк в гаваре Басен, 4. парк в гаваре Варанда, 5. «Сад святых деревьев» в селе Индстан в гаваре Айоц дзор (Армянское ущелье), 6. парк “Трдати мори” (“роща Трдата”) в гаваре Дерсим, 7. сад у поселка Диадин в гаваре Цахкотн, 8. охотничье угодье-заповедник в гаваре Ворсиранк (слово *ворс* - арм. охота) 9. охотничье угодьи-заповедники в гаварах Варажнуник, 10. охотничье угодье-заповедник “Паракан шемакац” в гаваре Масацотн на склоне горы Масис (Арарат).

Տեղեկություններ հեղինակի մասին

*Պետրոսյան Լուսինե Սարգսի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, Շիրակի պետական համալսարան,
E-mail: Vahe1996@mail.ru*

ԹՈՐԹՈՒՄԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 1830-1878 թթ.¹

Թորթումի գավառը տեղագրվում է պատմական Մեծ Հայքի Տայք աշխարհի Ոքաղե և Ագոդդացիոր գավառներում՝ Թորթում գետի և նրա վտակների ավազանում: Որպես Էրզրումի նահանգի հյուսիսային գավառ՝ Թորթումի գավառը ձևավորվել է XVI դ. երկրորդ կեսին: Հարավից այն սահմանակից էր Էրզրումի նահանգի Էրզրումի և Վերին Բասենի, հարավ-արևելքից՝ Մամրվանի, հյուսիս-արևելքից՝ Օլթիի, հյուսիսից՝ Թավուսքարի, հյուսիս-արևմուտքից՝ Կիսկիմի և արևմուտքից Մայերի գավառներին:

Գավառակենտրոն Թորթում ավանը գտնվում էր Էրզրում քաղաքից մոտ 55 կմ հեռավորության վրա՝ Թորթում գետի վերին հոսանքի շրջանում՝ Հարկևոր լեռան ձորահովտում: 1831 թ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած վարչական փոփոխությունների հետևանքով Թորթումի գավառը հայտնվում է Էրզրումի նահանգի նույնանուն սանջակի կազմի մեջ՝ իբրև Թորթումի կազա (գավառակ)²:

XIX դարասկզբին Ղ. Ինճիճյանը Թորթումի գավառի կազմում հիշատակում էր 30 գյուղ³: 1835 թ. օսմանյան մի վիճակագրության համաձայն՝ գավառն ուներ շուրջ 7 տասնյակ բնակավայր⁴: XIX դ. կեսերին 70 գյուղ է հիշատակում նաև Ղ. Ալիշանը⁵: XIX դ. վերջին քառորդին գավառն ուներ 73 բնակավայր⁶, որոնց մի մասը, սակայն, փոքրիկ յայլաններ կամ կիսալքված բնակատեղիներ էին:

XIX դ. սկզբներին Թորթումի գավառի բնակչության ճնշող մեծամասնությունը հայերն ու հայկական ծագմամբ մահմեդականներն էին՝ կեսկեսները⁷: 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը և 1830 թ. արևմտահայության վերա-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 16YR-6A035 ծածկագրով՝ գիտական թեմայի շրջանակներում:

² Karpal K., *Ottoman Population, 1830-1914. Demographic and Social Characteristics* (= *Turkish and Ottoman Studies*), Madison: University of Wisconsin Press, 1985, p. 14. Վարչական այսպիսի բաժանումը երկարաժամկետ չի լինում, իսկ Էրզրումի նահանգը XIX դ. ընթացքում պարբերաբար ենթարկվում է վարչական վերաբաժանումների: 1878 թ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում տեղի ունեցած վարչատարածքային փոփոխությունների հետևանքով, երբ Մամրվանի գավառի հյուսիսային մասն անցավ Ռուսական կայսրությանը, հարավային մասն ընդգրկվեց Թորթումի կազայի կազմի մեջ, վարչամիավորը բաժանվեց հետևյալ գյուղախմբերի՝ Նիխադ, Ադաձոր, Ագոդդ, Օխիկ, Օղեկ, Խախու, Քջխա, Կիսպենեք, Արդու, Նիկուջիք, Բդ, Աղնառնո: Տե՛ս Cuinet V., *La Turquie d'Asie: géographie administrative, statistique, descriptive et raisonnée de chaque province de l'Asie-Mineure*, tome premier. Paris: 1892, p. 134.

³ Ինճիճեան Ղ, *Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասս Ա, հ. Ա, Ասիա, Վենետիկ, 1806, էջ 93-94*:

⁴ Özger Yunus, XIX. Yüzyılda Tortum'un nüfus durumu// Atatürk üniversitesi sosyal bilimler enstitüsü dergisi, cilt 8, sayı 2 (2006), s. 117:

⁵ Ալիշան Ղ., *Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1856, էջ 37*:

⁶ Էփրիկյան Ս., *Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ, 1907, էջ 51*:

⁷ Ինճիճեան Ղ, նշվ. աշխ., էջ 93-94:

բնակեցումն ամենածանր հետևանքները թողեցին Թորթումի վրա, որի հայ առաքելական և կաթոլիկ բնակչության մեծ մասը Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու և Եփրեմ վարդապետ Մեթյանի գլխավորությամբ 1830 թ. մայիսի 10-ին բռնեց գաղթի ճանապարհը: Մայիսի 15-ից հունիսի 5-ը դատարկվեց Թորթումի գավառի հայաբնակ գյուղերի մի մասը, որի մասին վկայում է Է.Սմիթը⁸: Թորթումի առանձին գյուղերից, սակայն, արտագաղթ տեղի չունեցավ, քանի որ Ադրիանուպոլսի հաշտության պայմանագրի կնքումից անմիջապես հետո ռուսներն այնտեղից դուրս էին եկել, իսկ թուրքական իշխանությունները զենքով ստիպել էին հայերին մնալ տեղերում⁹: Տեղի ունեցած վերաբնակեցման պատճառով գավառը զրկվեց հայ քրիստոնյա բնակչության մեծ մասից, որի հետևանքը դարձավ կեսկեսների թուրքացման գործընթացի ակտիվացումը: Բազմաթիվ հայկական բնակավայրերից Թորթումի գավառում հայաբնակ մնացին Ագրակը, Ապոնեսը, Գառնկոթը (Գարրնկոս), Գորքերը, Խախուն, Խոզպրակը, Ծաղկին, Կոչանցը, Նորշենը, Շիփերը, Պարը, Ռաբաթը, Վախթիկանցը, Վերինգեղը, Տանձուտը, Քցխան և Օշկը¹⁰: Եթե մինչև վերաբնակեցումը Թորթումի գավառի քրիստոնյա հայության թիվը հասնում էր 5440-ի¹¹, ապա վերաբնակեցումից հետո հայաբնակ գյուղերն առավազն կիսով չափ հայաթափվեցին¹²:

Թե ի՞նչ աղետալի հետևանքներ ունեցավ հայության վերաբնակեցումը Թորթումի գավառի էթնոկրոնական պատկերի վրա, հստակ երևում է, երբ ուսում-

⁸ Smith E., Smith E. *Researches of the rev. E. Smith and rev. H. G. O. Dwight in Armenia: Including a journey through Asia Minor, and into Georgia and Persia with a visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas*, vol. 1. Boston; New-York, Crocker a.o., 1833, p. 124.

⁹ Տե՛ս Մելքոնյան Ա., *Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դ. առաջին երեսնամյակին*, Եր., 1994, էջ 140-141:

¹⁰ Տե՛ս Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Թ. Ազատյանի ֆոնդ, Բաժին IV, վավ. 224, էջ 147: Ա. Մելքոնյանի կարծիքով՝ Ջավախքի Բալխո գյուղ տեղափոխված երզրուցիները Թորթումի Մեղրագոմ գյուղից են, իսկ Դամալա գյուղում հաստատված արևմտահայերի մեծագույն մասը Թորթումի Շիփեք, Գառնկոթ և Ռաբաթ գյուղերից են: Տե՛ս Մելքոնյան Ա., *Ջավախքը XIX դ. և XX դ. I քառորդին*, Եր., 2003, էջ 193:

¹¹ Մելքոնյան Ա., *Էրզրում*, էջ 116:

¹² Ցավոք, սկզբնաղբյուրներն աղքատիկ տեղեկություններ են հաղորդում Օսմանյան կայսրությունում ապրող ժողովուրդների և մասնավորապես Արևմտյան Հայաստանի հայերի թվաքանակի մասին: Անկատար են և անճիշտ թուրքական պաշտոնական արձանագրությունների տվյալները: Թերություններով լի էին նուֆուս իդարեսիի գրքերը՝ մարդահամարներն ըստ սեռի, որոնք հաճախ հաշվի չէին առնում կրոնական պատկանելությունը: Անկատար էին նաև ծխամատյանները, որոնք ծառայում էին պատրիարքական տեղեկագիր կազմելու համար, և որտեղ կառավարությանը հաղորդած մասերում նվազեցված էր ժողովրդի կամ ծխականների իսկական թիվը՝ հարկերը թեթևացնելու նպատակով: Ճշգրիտ չի կարելի համարել նաև պաշտոնական տվյալները, որոնցում հաշվարկները կատարված են ծխերի թվի համեմատ, քանի որ հարեմական ռեժիմը չափահաս որդուն ամուսնության օրից հայրական տնից հեռացնում է, որի պատճառով մահմեդական ընտանիքը 5 հոգուց ավել հազվադեպ է լինում, այնինչ հայ ընտանիքներն ավելի բազմամարդ են (միջինը՝ 8 անձ): Մյուս ավելացրած՝ պաշտոնյաները բավականանում էին մահմեդական բնակչության մասին տանուտերերի հաղորդած չափազանցված տվյալներով: Տե՛ս Երիցյան Ա., Թե Տաճկական Հայաստանում որքան հայ կա, Փորձ, 1880, հունիս-հուլիս, էջ 216-217:

նասիրում ենք XIX դ. կեսերի սկզբնաղբյուրները: Եթե Ղ. Ինձիճյանի օրոք Թորթումի գավառի գյուղերը «ըստ մասին բնակեալ ի Հայոց եւ ըստ մասին ի տաճկաց»¹³, ապա 1830 թ. վերաբնակեցումից հետո քրիստոնյա հայության թիվը զգալիորեն կրճատվեց: Այս գործընթացին զուգահեռ՝ մեծ թափով ավելանում էր մահմեդական բնակչության թիվը: Դա ակնհայտ երևում է 1835 թ. օսմանյան վիճակագրության մեջ, որը թեպետ լի է թերություններով, սակայն թույլ է տալիս ընդհանուր պատկերացում կազմել գավառի բնակչության թվի և կազմի վերաբերյալ¹⁴.

Աղյուսակ 1: Թորթումի գավառի արական սեռի մահմեդական բնակչությունը (1835 թ.)

№	Բնակավայրը	Երիտասարդ	Երեխա	Ծեր	Ընդամենը
1	Քցիա	160	151	86	397
2	Քցիադուռ	46	53	17	116
3	Ապոնես	79	60	37	176
4	Ավշեն	26	25	15	66
5	Աղբյուրիկ	18	21	10	49
6	Մաքիձոր	24	61	25	110
7	Չանկրես	17	19	10	46
8	Աղջրիկ	14	8	0	22
9	Գյոքդերե	19	15	7	41
10	Բարթնոց	22	18	8	48
11	Վերինգեղ	36	43	16	95
12	Իս	20	34	8	62
13	Քուվանց	19	11	8	38
14	Խոզքրիկ	19	25	8	52
15	Տանքար	7	20	6	33
16	Զինավուր	23	28	13	64
17	Պոչենց	25	34	5	64
18	Կասիրիկ	5	9	3	17
19	Մեղուս	19	20	10	49
20	Սաղեր	25	42	20	87
21	Ռաբաթ	2	5	2	9
22	Չիֆթլիք	12	28	6	46
23	Այգեկ	39	47	30	116
24	Վանք	26	48	14	88
25	Վարնիշեն	13	32	5	50
26	Նորշեն	6	12	7	25
27	Վախթիկանց	32	24	14	70
28	Գեղիկ	21	26	21	68
29	Քյոչեքդերե	62	55	19	136
30	Վերին Լսկավ	53	75	32	160

¹³ Ինձիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 93-94

¹⁴ Տե՛ս Özger Yunus, նշվ. աշխ., էջ 126-127.

31	Նիխաղ	60	85	32	177
32	Մեղուջուր	4	3	2	9
33	Աղասար	13	16	9	38
34	Բեթղար	26	28	11	65
35	Ղազարենց	19	23	8	50
36	Շիփեք	2	8	6	16
37	Վերին Խնձորիկ	20	48	12	80
38	Ներքին Խնձորիկ	12	17	3	32
39	Բար	27	63	24	114
40	Թորթում	43	57	26	126
41	Էգրեք	23	33	13	69
42	Աղբուձոր	69	71	35	175
43	Բշնկոց	46	24	14	84
44	Չինեչոր	9	15	5	29
45	Ներքին Լսկավ	57	95	35	187
46	Թև	17	31	13	61
47	Ծիսիկ	62	66	18	146
48	Խարս	65	62	15	142
49	Լյոհենք	28	47	21	96
50	Օշկ	55	65	21	141
51	Ճալա	10	11	3	24
52	Օսեթ	72	63	26	161
53	Օշկվանք	36	49	15	100
54	Ընկուզեք	74	81	25	180
55	Բլուր	7	11	1	19
56	Օթղա	85	108	65	258
57	Վիսիկ	89	94	41	224
58	Էշքիձոր	66	77	39	182
59	Մուրթոհան	110	139	48	297
60	Խարթխա	105	139	70	314
61	Օղեք /Հոսիկ/	145	175	67	387
62	Ազոբոլ	156	124	70	350
63	Խախու	148	155	43	346
64	Քարընկոս	8	5	5	18
65	Մխտորուտ	3	2	2	7
66	Անիլիս	6	6	1	13
Total		2.666	3.145	1.306	7.117

Թորթումի գավառի բնակավայրերի բնակչության թվաքանակի վերաբերյալ Հ. Տաշյանն իրավացիորեն նշում է, որ գյուղացիները, հատկապես մահմեդականները, բնավ չէին հետաքրքրվում իրենց թվաքանակով՝ հետաքրքրվողներին շատ հաճախ պատասխանելով՝ Աստված գիտի: Շատ էին դեպքերը, երբ նրանք գիտեին որևէ մի թիվ, որը պարբերաբար կրկնում էին, այնինչ իրական թվերը կա-

րող էին Բավականին փոփոխված լինել¹⁵: Այսուհանդերձ, մեր կարծիքով, վերոհիշյալ վիճակագրությունն օգտակար է գավառի մահմեդական բնակչության տեղաբաշխումը պարզելու գործում, իսկ եթե հաշվի առնենք, որ այդ մահմեդականների ճնշող մեծամասնությունը կեսկես էր, ապա վիճակագրությունը դառնում է նաև արժեքավոր:

Եթե ընդունենք, որ մահմեդական բնակչության թվի վերաբերյալ 1835թ. վիճակագրության տվյալները մոտ են իրականությանը (7117 հոգի, որոնց գումարվում են նաև 152 հոգի՝ քրդական աշիրեթների ներկայացուցիչներ), ապա կստացվի, որ Թորթումի գավառում բնակվում էր 14-15 հազար մահմեդական:

Այն, որ Թորթումի գավառի մահմեդական ազգաբնակչությունը գերազանցապես կրոնափոխված հայեր էին, երևում է այն իրողությունից, որ նրանք ծանոթ էին հայկական տեղանուններին, այդ թվում մահմեդական գյուղերի, նրանց գյուղամասերի և թաղերի անվանումներին: Հայկական էին նաև աշխարհագրական օբյեկտների անվանումները: Արտաքնապես օտարականին կարող էր թվալ, թե երկրի մեծ մասը թրքախոս է: Սակայն հայ մահմեդականն ստիպված էր «խորշիլ հայության արտաքին երևույթներին» և չհալածվելու համար թուրքերեն խոսել, հատկապես օտարականների մոտ¹⁶: Ամեն դեպքում, Թորթումի գավառի հայ մահմեդականները խիստ տարբերվում էին իրենց թուրք կրոնակիցներից: Նրանք խոսում կամ լիովին հասկանում էին հայերեն, չունեին խիստ մահմեդական սովորություններ և բարեկամական հարաբերությունների մեջ էին քրիստոնյա հայության հետ¹⁷: Այսուհանդերձ, խուսափելու համար կրոնակիցների ճնշումներից, կեսկեսները նախընտրում էին իրենց ծագման մասին չխոսել. «Մեր յաճախակի հարցմանց ի Թորթում եւ այլուր, թէ ի՞նչ են իրենք իրականին՝ պատասխանը կըլլար նախ միշտ մահմետականացածներուն այն հաստատատիպ խօսքը թէ «իսլամ ենք»: Մեր այն հարցմանց թէ իրենք ուրեմն՝ «թու՞րք» էին, լա՞վ թէ այլ ինչ, բացորոշ կը ժխտեին՝ ըսելով թէ իրենք ո՛չ թուրք են, ո՛չ լազ, ո՛չ «կիւրճի», ո՛չ քուրդ, ո՛չ չերքեզ, միով բանիւ ո՛չ ազգ ու ցեղ մը՝ որ հոս կրնար ի նկատի առնուիլ: Բայց նաեւ «հայ ենք» չեն կրնար ըսել. որովհետեւ «հայ» եւ «քրիստոնեայ» համագոր բառեր եղած են հոս»¹⁸:

XIX դ. կեսերին հայ մահմեդականների սոցիալ-տնտեսական կացությունը քիչ էր տարբերվում քրիստոնյա հայերից: Այս առիթով Հ. Տաշյանը գրում է. «Հայ մահմետականը կրօնափոխ եղած է բռնության ներքեւ. բայց իւր վիճակը աւելի բարուքած չէ այսօր քան քրիստոնէիին: Անշուշտ վերջնայն կրած այլեւայլ տառապանքներէն զերծ է. բայց այլուստ աւելի եւս անոք ու ստրուկ եղած է յաճախ ինքնակոչ բեկերու ձեռքը: Հոս լազ բեկերն այն դերը կը խաղան՝ ինչ որ քուրդ բեկեր ուրիշ տեղեր գործակցութեամբ թուրք պաշտօնէութեան»¹⁹:

¹⁵ Տաշեան Յ., *Տայք, դրացիք և Խոտորջուր*, հ. Բ, Վիեննա, 1980, էջ 219:

¹⁶ Տաշեան Յ., *Հայ բնակչութիւնը Մեւ ծովէն մինչեւ Կարին*, էջ 79:

¹⁷ Տաշեան Յ., *Տայք, դրացիք և Խոտորջուր*, հ. Բ, էջ 290:

¹⁸ Տաշեան Յ., *Հայ բնակչութիւնը Մեւ ծովէն մինչեւ Կարին*, էջ 82:

¹⁹ Նույն տեղում, էջ 83:

Թորթումի գավառի ոչ մահմեդական ազգաբնակչությունը ներկայացված էր հայերով: Համաձայն 1835 թ. օսմանյան վիճակագրության՝ Թորթումի գավառն ուներ ընդամենը 7 հայաբնակ գյուղ՝ 204 արական սեռի բնակիչներով: Այդ գյուղերն էին Պարը (14 հոգի), Քարընկոսը (7 հոգի), Կասերիկը (3 հոգի), Նորշենը (99 հոգի), Ռաբաթը (26 հոգի), Շիփեքը (13 հոգի) և Վերինգեղը (42 հոգի)²⁰:

Օսմանյան այս վիճակագրությունը, որից հետևում է, որ Թորթումի գավառի հայերի թիվը մոտ 400 է, անշուշտ, չի դիմանում որևէ քննադատության, քանի որ այստեղ գավառի հայ քրիստոնյա բնակչության վերաբերյալ տեղեկությունները խիստ թերի են ներկայացված: Առաջին հերթին վիճակագրության մեջ չեն երևում մի շարք հայաբնակ գյուղեր, ինչպիսիք են Կոչանցը, Վախթիկանցը, Խոզբրիկը, Խախուն, Քցխան, Ապոնեսը, Գորբերը: Դրա վկայությունը թերևս այս վիճակագրության համեմատությունն է հետագա տարիների հայ և օտարազգի հեղինակների հաղորդած տեղեկությունների հետ: Հետագա գրեթե բոլոր հեղինակների մոտ հայաբնակ գյուղերը և հայ քրիստոնյա բնակչությունը ներկայացված են անհամեմատ ավելի մեծ թվով, այնինչ պետք է փաստել, որ XIX դ. կեսերին հայ բնակչության թվաքանակի աննախադեպ աճի համար նախադրյալներ չեն եղել: Ավելին, XIX դ. կեսերին առկա էր հակառակը՝ գավառի քրիստոնյա հայության թվի կրճատման միտումը՝ կապված մահմեդականացման, արտագաղթի և այլ երևույթների հետ: Դրան էր նպաստում նաև 1840-1860-ական թթ. հայտնի լազ ավազակապետեր Կիսլանչի, Կրճելի, Ղարաղերելի Օնբաշու, իսկ 1870-ական թթ. նաև Շարիֆօղլի Հուսեին բեգի հանցախմբերի գործունեությունը Թորթումում, որը կատարյալ չարիք էր դարձել ինչպես գավառի քրիստոնյա, այնպես էլ մահմեդական բնակչության համար²¹: Այն, որ 1835 թ. վիճակագրությունը չի արտացոլում քրիստոնյա բնակչության իրական թիվը, երևում է գոնե Ղ. Ալիշանի բերած եզակի տվյալներով գավառի հայաբնակ գյուղերից մեկի՝ Նորշենի վերաբերյալ, համաձայն որի՝ գյուղն ուներ 40-րդ (ավելի քան 300 հոգի) «հռովմեական» հայ²²:

Ինչպես վերևում նշվեց, 1830 թ. վերաբնակեցումից հետո Թորթումի գավառում մնացած հայերի թիվը մոտ 2500 էր: Այսինքն՝ ստացվում է, որ գավառի քրիստոնյա և մահմեդական բնակչության թիվն անցնում էր 16 հազարից: Ուշագրավ է, որ 16-17 հազարի սահմաններում է ներկայացվում նաև Թորթումի գավառի բնակչության թիվը հետագա տասնամյակների ընթացքում: Այսպես, Ա.Երիցյանի վկայությամբ՝ 1872 թ. Թորթումի գավառն ուներ 16722 բնակչություն²³, իսկ 1881 թ. Էրզրումի վիլայեթի տարեգրքի համաձայն՝ գավառում կար 16000 մարդ²⁴:

XIX դ. երկրորդ կեսի Թորթումի գավառի ժողովրդագրական կացությանն են անդրադառնում ինչպես թուրքական պաշտոնական տարեգրքերը՝ Էրզրումի

²⁰ Sté u Özger Yunus, նշվ. աշխ., էջ 119:

²¹ Sté u Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1407, ց. 2, գ. 17, էջ 2, 5:

²² Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 38:

²³ Ерицов А. Список населенных пунктов бывшей Эрзерумской области, находившейся во временном управлении России. Известия Кавказского отдела императорского русского географического общества, т. 8, Тифлис, 1884-85. Дополнения, с. 31.

²⁴ Erzurum Vilayet Salnâmesi, 1299, s. 319.

վիլայեթի սալնամեները, այնպես էլ հայ և թուրք մի շարք հեղինակներ: Համաձայն Էրզրումի վիլայեթի 1881 թ. տարեգրքի՝ Թորթումի գավառն ուներ 117 բնակավայր, որտեղ առկա 16000 բնակչությունից 890-ը ոչ մահմեդականներ էին²⁵: Այլ տեղեկությունների ենք հանդիպում Ս. Էփրիկյանի մոտ, որի վիճակագրությունը Հ. Տաշյանը որակում է իբրև «1880-ին մոտ ստեղծուած»: Այս վիճակագրությունը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է մինչև Բեռլինի վեհաժողովն ընկած ժամանակաշրջանին, քանի որ գավառի բնակավայրերի շարքում չեն հիշատակվում Մամրվանի գավառի հարավային հատվածի բնակավայրերը, որոնք Թորթումի գավառին միացվեցին 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, և որը հստակ երևում է 1881 թ. Էրզրումի գավառի տարեգրքի մեջ: Ըստ Ս. Էփրիկյանի՝ Թորթումի գավառն ուներ 73 գյուղ²⁶:

Աղյուսակ 2: Թորթումի գավառի բնակչությունն ըստ 1878 թ. վիճակագրության

Հ/հ	Բնակավայրը	հայերի թիվը	մահմեդականների թիվը	Հ/հ	Բնակավայրը	հայերի թիվը	մահմեդականների թիվը
1	Խախու	467	210	38	Սխտորուտ	-	55
2	Շիփեք	250	46	39	Վխիկ	-	225
3	Պար	24	130	40	Էրտեք	-	460
4	Բեթղար	-	96	41	Քուչուկդերե	-	144
5	Վերին Խնձորիկ	-	48	42	Բարդոսանց	-	49
6	Վարին Խնձորիկ	-	70	43	Բյույուք բախչե	-	148
7	Աղասեր	-	91	44	Սուրբ Օհան	-	265
8	Նիխաղ	-	69	45	Գորքեր	89	-
9	Սամսար	-	72	46	Չաթախ	-	16
10	Մոխուրթավ	-	67	47	Լիստերես	-	14
11	Ղալետիայի	-	68	48	Վերինգեղ	104	245
12	Թորթում	-	130	49	Ընկուզեք	-	280
13	Սաղեր	-	121	50	Ագորդ	-	270
14	Ռաբաթ	95	-	51	Օսեթ	-	72
15	Պոչենց	-	45	52	Օշկ	-	99
16	Մեղուս	-	65	53	Էշկիձոր	-	164
17	Քարրնկոս	60	-	54	Օշկվանք	-	145
18	Մնավոր	-	150	55	Ծխիկ	-	224
19	Տանքար	-	48	56	Խարս	-	176
20	Կոչանց	176	-	57	Իս	-	58
21	Վախթիկանց	80	75	58	Օթղա	-	254
22	Խոզբրիկ	104	-	59	Խարթղա	-	180
23	Նորշեն	300	6	60	Թև	-	149
24	Գեղիկ	-	118	61	Լեք	-	44
25	Աղբրիկ	-	46	62	Ասպիշեն	-	64
26	Աղջրիկ	-	69	63	Կալա	-	32

²⁵Erzurum Vilayet Salnâmesi, 1299, s. 319.

²⁶ Էփրիկյան Ս., նշվ. աշխ., էջ 51:

27	Մաքրձոր	-	160	64	Բլուր	-	16
28	Քցխա	800	-	65	Ղազարենց	-	69
29	Քցխադուռ	-	55	66	Գյոքղերե	-	74
30	Տելլեաթաղ	-	8	67	Աղուշեն	-	60
31	Ապոնես	280	-	68	Կարսիկ	-	120
32	Աղբրձոր	-	375	69	Մեղրագոմ	-	44
33	Էզրեք	-	114	70	Քլագոմ	-	24
34	Բըշնկոց	-	68	71	Էքեք	-	69
35	Ձկնաջուր	-	74	72	Խաշուտ	-	160
36	Վերին Լակավ	-	390	73	Վարդաշեն	-	98
37	Վարին Լակավ	-	346	Ընդամենը		2829	7996

XIX դ. վերջին քառորդին Թորթումի գավառի հայ քրիստոնյա բնակչության թիվը կազմում էր 2829 հոգի, որին եթե գումարենք նաև 1872 թ. Ա.Երիցյանի տվյալներն առ այն, որ գավառի Մեղրագոմ գյուղում բնակվում էր 12 հայ ընտանիք (մոտ 100 հոգի)²⁷, ապա ստացվում է, որ գավառի հայության թիվն ընդհուպ մոտենում էր 3000-ի:

Առնվազն տարօրինակ է Թորթումի գավառում տեսնել ընդամենը 7996 մահմեդականի: Համեմատելով այլ սկզբնաղբյուրների հետ՝ տեսնում ենք, որ Էփրիկյանի վիճակագրության մեջ ներկայացված մահմեդականների թվաքանակը մոտ է այլ հեղինակների մոտ ներկայացված մահմեդականների՝ միայն արական սեռի ներկայացուցիչների թվին: Ուստի, չենք բացառում, որ Էփրիկյանի վիճակագրության մեջ արտացոլված մահմեդականների թիվը վերաբերում է միայն արական սեռի ներկայացուցիչներին: Այս տրամաբանությամբ, գավառի մահմեդական բնակչության իրական թիվը 15 հազարի սահմաններում է:

Թորթումի գավառի մի շարք քրիստոնյա հայկական գյուղերի առկայությունը տևական ժամանակ դանդաղեցնում էր կեսկեսների վերջնական թուրքացման գործընթացը: Թորթում գետի աջակողմյան ակունքի շրջանում գտնվող Երբեմնի հայախոծ Պար գյուղը հայտնի էր իր մերձակայքի աղահանքերով²⁸: Օսմանյան տիրապետության շրջանում գյուղը հայտնվեց հեշտ ապրելու մարմաջով լցված մահմեդականների ուշադրության կենտրոնում, որոնց ճնշման ներքո XIX դարի երկրորդ կեսին գյուղը գրեթե դատարկվեց հայությունից: Այսուհանդերձ, 24 հայկական ընտանիքների պարագայում անգամ գյուղում գործում էին եկեղեցի և վարժարան²⁹:

Պար գյուղից մի քանի կմ արևմուտք գտնվում էր Շիփեկ գյուղը: Այն հայտնի էր Մբ Գևորգ եկեղեցով³⁰ և նրան կից գործող Սմբատյան վարժարանով, որն

²⁷ Տե՛ս Էրիցով Ա., նշվ. աշխ., էջ 80:

²⁸ Տե՛ս Մարգիսեան Ն., Տեղագրությունք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 85:

²⁹ Տե՛ս Զատիկյան Հ., Կարինի նահանգը XIX դարի երկրորդ կեսին, Եր., 2013, էջ 225:

³⁰ Տե՛ս Թեղլիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իւր հօտին աղէտայի 1915 տարիին, Թեհրան, 2014, էջ 234:

ուներ 25 աշակերտ³¹: 1870 թ.-ից մինչև Հայոց Մեծ եղեռնը գյուղի հոգևոր սպասավորն էր Հակոբ քահանա Քեշիշյանը³²:

Ռապատ գյուղը ևս հայտնի էր իր մերձակայքի աղահանքերով³³: Գյուղը թեև դիմացավ բռնի մահմեդականացման քաղաքականությանը, սակայն դավանափոխվեց՝ նախընտրելով կաթոլիկությունը՝ այդ կերպ պահպանելով ազգային նկարագիրը: Ռապատ գյուղում ևս գործել են վարժարան և եկեղեցի³⁴: 1864 թ.-ից մինչև Մեծ եղեռնի օրերը գյուղի եկեղեցու հոգևոր սպասավորն էր Հ. Մարտիրոս Վ. Ղազարյանը³⁵:

Գավառի հայտնի գյուղերից էր Նորշենը: Այս գյուղը, ինչպես նաև հայ կաթոլիկ մյուս գյուղերը, ստանալով ֆրանսիական հյուպատոսների և կաթոլիկ քարոզիչների որոշ աջակցությունը, կարողանում էին մասամբ հեռու մնալ բռնի մահմեդականացումից և բնակչության շրջանում նկատվող արտագաղթի ընդհանուր միտումներից: Գյուղն ունեցել է Սբ Հակոբ եկեղեցի և վարժարան: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ³⁶: XIX դարավերջից մինչև 1915 թ. նահատակությունը գյուղի երեցն էր Հ. Ստեփան Վ. Գրիգորյանը³⁷:

Գավառի ամենախոշոր գյուղը Քցխան էր: Այն գտնվում էր ձորի մեջ և քրիստոնյաների գերակշռության պատճառով անվանվում էր «քրիստոնյա ձոր»: Սկսած միջնադարից՝ Քցխան կարողացավ դիմագրավել մահմեդականացման վտանգին և մինչև 19-րդ դարի վերջերը պահպանեց այդ վիճակը: Համաձայն Ատրպետի՝ գոյություն են ունեցել երկու Քցխաններ՝ արևմտյան և արևելյան, որոնք տեղավորված էին ձորի հարավային և հյուսիսային կողմերում: Քցխանների վերաբերյալ Ատրպետը գրում է, որ Թորթումի արևելյան և արևմտյան այս կրկնակի Քցխաները հին ժամանակներից սկսած ջանացել են իրար գերազանցել: Ձախակողմյան Քցխան երկրորդական դիրք է գրավել, աջակողմյանը՝ բարձր հռչակ, որին մինչև այսօր «Քիշ ոստան» են անվանում բնիկները³⁸: Քցխան ունեցել է եկեղեցի, վարժարան, իսկ բնակչությունը զբաղվում էր անասնապահությամբ, երկրագործությամբ, այգեգործությամբ, արհեստներով և առևտրով³⁹:

Թորթումի գավառի նշանավոր հայաբնակ գյուղերից էր Վերինգեղը: Մ.Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագրերից մեկը, որը գրվել էր 1663 թ. Վերինգեղում Աբրահամ քահանայի ձեռամբ, վկայում էր այնտեղ կաթոլիկ եկեղեցու առկայության մասին⁴⁰: Բնակչությունն զբաղվում էր անասնապահությամբ, երկրագործությամբ, այգեգործությամբ, արհեստներով, մասամբ նաև՝

³¹ ՀԱԱ, ֆ.476, ց.1, գ.873, էջ 104:

³² Տե՛ս թեղոցիկ, նշվ. աշխ., էջ 234:

³³ Տե՛ս Սարգիսեան Ն., նշվ. աշխ., էջ 85

³⁴ Տե՛ս Ջատիկյան Հ., նշվ. աշխ., էջ 225:

³⁵ Տե՛ս թեղոցիկ, նշվ. աշխ., էջ 234:

³⁶ Տե՛ս Ջատիկյան Հ., նշվ. աշխ., էջ 224:

³⁷ Տե՛ս թեղոցիկ, նշվ. աշխ., էջ 234:

³⁸ Ատրպետ, Ճորոխի առաջանք, Վիեննա, 1929, էջ 168:

³⁹ Տե՛ս Ջատիկյան Հ., նշվ. աշխ., էջ 227:

⁴⁰ Տե՛ս Մատենադարան, Ձեռագիր N 8624, էջ 96բ:

առևտրով: Գյուղն ուներ Մուշեղյան վարժարան⁴¹, իսկ Մբ Աստվածածին եկեղեցում XIX դարավերջից մինչև 1915 թ. մարտիրոսացումը հոգևոր ծառայություն էր կատարում Գյուտ քահանա Ծատուրյանը⁴²:

Խախուի կիրճում էր գտնվում նույնանուն հայաշատ գյուղն իր հռչակավոր վանքով: Գյուղը տարածվում էր մրգատու ծառերով հարուստ կիրճի ամբողջ երկարությամբ՝ Խախու առվակի երկու ափերին: Վանքը, որը կառուցված էր կիրճի կենտրոնական մասում, շրջապատված էր 8 փոքր եկեղեցիներով⁴³: Վանքի ներսում պահպանված հայերեն արձանագրությունների մնացորդները վկայում են այն մասին, որ վանքի Մբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է 868 թ.⁴⁴, իսկ համալիրը հիմնադրել է Դավիթ Կյուրապաղատը X դարում:

Խախուից հյուսիս՝ Թորթումի լճի հարավային հատվածից 8 կմ արևմուտք, գտնվում էր Օշկ (հնում՝ Աշունք, թուրք.՝ Էօշք) գյուղը, որից 2 կմ հեռավորության վրա պահպանվում է Օշկի նշանավոր վանքը: Վանքի անունով էլ հաճախ Օշկ գյուղն անվանվում էր ուղղակի Վանք կամ Օշկվանք: Իր ճարտարապետությամբ այն լավագույններից էր Տայոց աշխարհում և համարվում էր «Տայքի յոթ հրաշալիքներից մեկը»⁴⁵:

Գավառի հայաբնակ գյուղերից էին նաև Քարընկոսը, Գորքերը, Ապոնեսը, Խոզբրիկը և Կոչանցը, որոնք ևս ունեին սեփական եկեղեցիներ ու վարժարաններ, իսկ բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ և առևտրով⁴⁶:

Այսպիսով, 1830 թ. վերաբնակեցումը նույն խիստ բացասական հետևանքները թողեց Թորթումի գավառի էթնոժողովրդագրական պատկերի վրա, ինչպես նախորդ դարերի հայության բռնի մահմեդականացումը: Տասնամյակներ անհրաժեշտ եղան, որպեսզի փոքր ինչ մեղմվեն վերաբնակեցման ծանրագույն հետևանքները: Գավառի երեք հազարի հասնող քրիստոնյա հայ բնակչությունը, որը տեղաբաշխված էր մեկ տասնյակից ավել գյուղերում, հերոսաբար դիմադրում էր մահմեդականացման համընդհանուր դարձած միտումներին՝ մինչև Հայոց Մեծ եղեռնը պահպանելով էթնոկրոնական նկարագիրը: Միաժամանակ, XIX դ. 30-ական թթ.-ից ակտիվացավ մահմեդական հայերի ազգային ակունքներից հեռացման և թուրքացման գործընթացը:

⁴¹ Տե՛ս Զատիկյան Հ., նշվ. աշխ., էջ 227:

⁴² Տե՛ս Թեղդիկ, նշվ. աշխ., էջ 234:

⁴³ Տե՛ս Կապիշվիլի Է. *Археологическая экспедиция 1918 года в Южные провинции Грузии.* - Тбилиси. 1952. С. 68.

⁴⁴ Տե՛ս Էփրիկյան Ս., նշվ. աշխ., էջ 125:

⁴⁵ Ատրպետ, նշվ. աշխ., էջ 171:

⁴⁶ Տե՛ս Զատիկյան Հ., նշվ. աշխ., էջ 223-225:

АРМЯНСКОЕ НАСЕЛЕНИЕ ТОРТУМСКОЙ ОБЛАСТИ В 30-70-Х ГГ. XIX ВЕКА

___ Резюме ___

___ А. Акопов ___

В 1831 г. в Османской империи произошли административные перемены, в результате которых одна из провинций исторической Великой Армении – Тайк полностью вошла в состав Эрзурумского эялета. Среди тайкских регионов одной из армянозаселенных была Тортумская каза (область), которая располагалась в бассейне реки Тортум. Известные армянские селения Тортумской казы – Хаху, Кцха, Апрнес, Норшен, Рабат, Пар, Хозбрик, Верингех, Шипек, Гарнкос и тд., были в значительной степени лишены коренного армянского населения в результате переселения армян в Российскую империю в 1830 году.

В середине XIX в. состояние армян Тортумской области ухудшалось. Лишь несколько селений – Рабат, Гарнкос, Горкер, Апрнес и тд., были полностью заселены армянами, а в остальных селениях армяне проживали рядом с мусульманскими: Согласно историческим источникам и архивным материалам, во второй половине XIX века в Тортумской области проживало около 3000 армян (католиков и апостольских). Одновременно, мусульмане области в подавляющем большинстве не только имели армянские корни, но владели армянским языком и имели добрососедские отношения с армянами-христианами. Таких мусульман называли “кескесами” (на половину армяне, на половину турки-мусульмане).

Տեղեկություններ հեղինակի մասին

Արկադի Արկադի Արկադով – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի

հայազգիտական հետազոտությունների կենտրոն,

E-mail: arkadone@mail.ru

*XVIII-XIX ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՅ*

XVIII-XIX դարերում Հյուսիսային Ամերիկայում (1763-1783թթ.) և Ֆրանսիայում (1789-1794թթ.) տեղի ունեցող հեղափոխությունները, «ժողովուրդների զարույթ»,¹ Ռուսաստանի՝ Օսմանյան կայսրության² և Պարսկաստանի³ դեմ մղած հաղթական պատերազմները թարմացրին հայ ազգային-քաղաքական միտքը: Այդ հանգամանքում պակաս դեր չունեցան քաղաքական ազգայնականության դրսևորումներն Արևելյան Եվրոպայում և Բալկաններում (սերբեր, հույներ, լեհեր): Հայ մանուկներին ուղղված «համառոտ ոտանաւորում» մադրասաբնակ քահանա Թադեոս Սոգինյանը գրում է.

*«Հայեցարուք՝ զիտմբ ազգացն, անգլիական.
որք ի բնէ՝ ձկնորսք էին, և ապաբան.
Զարթեան ի քնոյ՝ տեսին զինքեանս թէ որպէս կան
և զքաղցրութիւն՝ ազատութեան, մտօք ծանեան:
Ուստի ջանիւ՝ իմաստութեան, հետնեցան.
և զծուլութիւն՝ յինքեանց թողին, միանգամայն:
Զերկիւղ մահու՝ ի բաց թողլով, արհացան.
մինչև գտին՝ զփափակ սրտից, զոր տենչացան:
Այսօր փայլին՝ ի մէջ ազգաց, իբր կարկեհան.
Իմաստութեամբ՝ և զօրութեամբ, յոյժ ճոխացան:
Զսպանիայն ի միտ առէք՝ զմեր ազգական.
որպէս եմք մեր նոքա քան զմեզ առաւելան:
Բ ծուլական ախտից նոքայ որպէս կորեան.
դարձեալ ջանիւք արիութեամբ ևս զօրացան»»:⁴*

Ամեն դեպքում հայերի կոլեկտիվ պատմական հիշողության արդիակա-նացման սկզբունքային կարգավորիչները նաև հայ ժողովրդի ազատասիրական ներքին և քաղաքական ինքնիշխանությունը, հայոց թագավորությունը վերականգ-նելու ժամանակակից ձգտումներն էին: Դրանք մարմնավորվեցին քաղաքական խորհրդանիշներում՝ զինանշան, ազգային թեմաներով պատկերներ և այլն:

Լինելով հայ ազգային-ազատագրական պայքարը մոտիվացնող լավա-գույն միջոցներից՝ քաղաքական խորհրդանիշները թեթևացրին այդ գործով զբաղ-վող Մխիթարյան միաբանության հայրերի և վարդի ու սոխակի այլաբանությամբ իրենց ասելիքը հասարակությանը տեղ հասցնող նոր ժամանակի տաղասացների

¹ 1848-1849թթ. հեղափոխական գործընթացները Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում և Ավստրիայում:

² 1768-1774թթ., 1787-1791թթ., 1806-1812թթ., 1828-1829թթ., 1877-1878թթ.:

³ 1796թ., 1804-1813թթ., 1826-1828թթ.:

⁴ Սօգինեանց Թ., Տետրակ որ կոչի ողբ Հայաստանեաց, Մադրաս, 1791, էջ 13:

բեր: Խորհրդանիշներով ավելի դյուրին էին մարդկանց զգացմունքների վրա ազդելը, Արևելյան հարցով «զբաղվող» (Ռուսաստան, Ֆրանսիա, Անգլիա, Ավստրիա) և «մեկենաս» պետությունների (Օսմանյան կայսրություն, Պարսկաստան) ղեկավարներին քաղաքական ուղերձներ փոխանցելը:

Հայ ազգային-քաղաքական խորհրդանիշը, որը հային ստիպելու էր հայրենիքում կարոտել իր հայրենիքը, պետք է՝

- համապատասխաներ հայրենիքի և պետության վերաբերյալ հայ ժողովրդի ավանդական պատկերացումներին,
- արտացոլեր սովորության իրավունքի համակարգը,
- համահունչ լիներ ժամանակի ոգուն,
- ունենար հոգեբանական ազդեցության բարձր գործակից,
- պարունակեր առարկայական հիշողություն,
- ունենար տեսողական գրավչություն,
- ապագայի նկատմամբ հավատ ներշնչեր,
- ընդգծեր ազգային անարատությունը:

Նոր ժամանակի ազգային-քաղաքական խորհրդանիշներից ամենանշանավորը «Մայր Հայաստան» պատկերն է՝ մի քանի տարբերակով (նկ. 1-5): Հայ հասարակության գիտակցության վրա վիթխարի նշանակություն ունեցած նկարը XX-XXI դարերում (գորգի, արձանի, հեռախոսների (սմարթֆոն) կողագարդի տեսքով) շարունակում է պահպանել տեղեկատվական-հաղորդակցական, քաղաքականության հանրայնացման, քաղաքական նույնականացման⁵ և խաղարկային գործառույթները:

Պատկերաշարը ցույց է տալիս, թե ժամանակի ընթացքում ի՞նչ փոխակերպումների են ենթարկվել հայ ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, հայոց պետության վերականգնման ռազմավարությունը: Պատկերաշարի պահպանված ձևերից երեքը գեղարվեստական ուրույն լուծումներով ուշագրավ նմանություն ունեն ֆրանսիացի նկարիչ Էժեն Դելակրուայի հունական ազատամարտի (1821-1830թթ.) խորհրդանիշ համարվող «Հունաստանը Միսսոլոնգիի ավերակների վրա» նկարին (1826թ., նկ. 2,4) և ԱՄՆ-ի խորհրդանիշներից մեկի՝ ֆրանսիացի քանդակագործ Ֆրեդերիկ Օգյուստ Բարտոլդիի «Ազատության արձանին» (1865-1876թթ., նկ. 5): Արվեստաբանական մեկնությունները թողնելով մասնագետներին՝ նշենք միայն, որ այդ բոլոր ստեղծագործությունների մտահղացքի ակունքը ռոմանտիկական պատմափիլիսոփայությունն է:

«Մայր Հայաստան» պատկերաշարի նախնական տարբերակը «Աշխարհ Հայոց» անվանմամբ պահպանվել է մադրասաբնակ քահանա Թ. Սոգինյանցի «Տեսրակ որ կոչի ողբ Հայաստանեաց» գրքույկում (նկ.1): Դրախտ-տեսարանում ազգային տարազով հայուհին խորհրդանշում է ծաղկուն և շեն Հայոց աշխարհը, որտեղ իրենց լավ են զգում նույնիսկ վայրի ու ընտանի կենդանիները:

⁵ Роговцов Д. Роль и место символов в политике. Политическая сфера. Минск-Вильня. 2003. № 2. С.37.



Նկ. 1

թշնամին հայոց աշխարհում՝ ավերելով հայրենի պալատներն ու տաճարները: Չնայած դրան՝ կանգուն են հայոց հնագույն քաղաքներից մեկի՝ Բագրատունիների մայրաքաղաք Անիի մուտքի դուռն ու պարսպի մի հատվածը: Երևում են հայոց պետության խորհրդանիշները՝ զինանշանը (հպարտ կեցվածքով, թռչափ պատրաստ արծիվ) և դրոշմը: Նկարում խոտերով պատված քարակույտերը, կիսականգուն շինություններն ունեն Հայաստանի վերստին շենանալու հնարավորության խորհուրդը: Այս պատկերը, ըստ էության, Մեծ Հայքի պատմաաշխարհագրական մանրամասն բնութագիրը տվող Ղ.Բնձիճյանի եզրակացությունն է՝ դրա գեղագիտականի և պատմափիլիսոփայականի համադրությամբ:

«Մայր Հայաստան»-ի վեներտիկյան հրատարակության երկրորդ տեսարանը՝ «Սուրբ Ղազարի այգուց» վերտառությամբ, զարդարում է հանճարեղ հայկաբան Ղևոնդ Ալիշանի «Տեղագիր Հայոց Մեծաց» երկի սկզբնամասը (նկարիչ՝ Դ.Բելեֆ) (նկ.3):⁸ Տեսարանում Հին (նախաքրիստոնական) և Նոր (քրիստոնեական) Հայաստանները փարվում են իրար: Վիմագրողը, միջին վարպետությամբ Արարատը, Նոյյան տապանը, Տիրոջը, եկեղեցի, խաչ պատկերելով՝ անդրադարձել է Հայաստանում Աստծո արարչագոր-

«Ձի այգիներ՝ մեծն Հայաստան՝
զարդարեցեալ.
որ ոչ ուրեք՝ աշխարհէր նմայ, նմանեցեալ:
Ճոխ իշխանաւ՝ և տէրութեամբ
ցանկապատեալ.
և բարձարերձ՝ գեղեցկաշէնք զտունս
հիմնեցեալ:
Բազմագետտովք՝ և աղբերօք, առատ լըցեալ.
արգասալիք՝ և ծառախիտ, ուռճացուցեալ».⁶

Պատկերաշարի երկրորդ տարբերակը դրոշմված է բանասեր, աշխարհագրագետ Ղուկաս Բնձիճյանի «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» աշխատության առաջին հրատարակության տիտղոսաթերթին (նկ.2):⁷ Նկարում արտաավոդ կինը՝ Աստվածամոր կերպարով, աջ ձեռքով մատնացույց է անում դիտողին, թե ինչ վայրագություններ է գործել



Նկ. 2

⁶ Սոգինեանց Թ., նշվ. աշխ., էջ 8:

⁷ Բնձիճեան Ղ., Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822:

⁸ Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 7:

ծությամբ և վրձնել հային՝ քաղաքակրթությունների հոսքում քրիստոնեական բարոյականության դրոշակակրին: Աստվածամայր Մարիամի տեսքով կնոջ ականջին քնարերգուն լուսնի և ծիածանի ներկայությամբ երևի շնչում է հայոց երկրի կորսված փառքի մասին: Տեսարանի քնարերգուն ինքը՝ երիտասարդ Ղ. Ալիշանն է, որի «Ոգի Հայաստանեայց» բանաստեղծության համապատասխան տողերը բյուրեղացնում են դիտողի տպավորությունները.

*«Նըստի լըռիկ Հայաստանեայց վեհ Ոգին
Ձեռն ի ծնօտի, յեց արմրկամբն ի տապան՝
Թաւալ ի գոգս իւր ունելով հին մատենան,
Թագն ի վարսից ի ծայր շարժի վայրապար.
Վայրընկեցիկ կայ գաւազանն առ սընար.
Չորք առ ոտիւքն արծուներշան դրնին դոշք
Վարագակնիքք եւ առիւծունք ու ապարօշք»:⁹*



Հաջորդը (նկ. 4) տպագրիչ, հրապարակախոս Ճանիկ Արամյանի գեղարվեստական մշակումն է, որ կոչվում է «Ոգի Հայաստանի»: Նկարը նրա հեղինակած «Դասարան Հայկազն մանկանց» դասագրքի հետևյալ հատվածից առաջ է. «Ֆռակուլ¹⁰ եւ այլ իշխանաց մատնությունը վերջ տուաւ Հայաստանի ազատութեան եւ Դաւթ յետոյ չերեցաւ Օրինաւոր իշխանութիւն եւ ո՛չ մէկ սահմանի մէջ: Իսկ Հայաստանի Ոգին ողջ մնաց. հսկէ նա Հայկազեան, Արշակունեան, Բագրատունեան եւ Ռուբինեան աւերակաց վրայ, արտասուալից, բայց լուսասփիւռ աչօք»:¹¹



Այս նկարի կենտրոնական մասում պատմուճանն ուսերին գցած, գլուխն աջ ձեռքին հենած, երկար վարսերով կին է՝ քարակույտին նստած: Խորապատկերում տեսնում ենք Մեծ և Փոքր Մասիսները: Կնոջ կողքին ընկած են հայոց պետության խորհրդանիշները՝ թագ և դրոշակ, զենքեր: Չորացած բուսականությունը, պալատների, տաճարների և բնակելի համալիրների ավերակները դիտողին համակում են տխրությամբ:¹²

Հեղինակի սոցիոլոգիական հայեցակետը սրանով չի ավարտվում:

⁹ Նուագը Հ. Ղևոնդեայ Մ. Ալիշանեան Մխիթարեան վարդապետի, Գ. Վենետիկ, 1867, էջ 167:

¹⁰ 1724թ. Երցիվանակի մելիք Ֆրանգյուլի դավաճանության պատճառով սպանվում են Դավիթ բեկի գորական Թորոս բեկն ու հայոց գորքի մեծ մասը:

¹¹ Արամեան Ճ., Դասարան Հայկազն մանկանց, Փարիզ, 1860, էջ 94:

¹² Հմմտ. Տեղագրություն Անի քաղաքին որ է Բագրատունեաց թագաւորութեան մայրաքաղաքը: Խմբագրեաց Յովհաննէս Տէր-Աբրահամեան, ի Թէոդոսիա, 1863, էջ 60: Կովաչ Բ., Հայոց մայրաքաղաք Անին՝ որպէս հիշողության վայր ('Lieu de memoire'), Պատմություն և հասարակագիտություն: Տարեգիրք (Գիտական հոդվածների ժողովածու), №1, Եր., 2015, էջ 106:

1860թ. մայիսի 24-ին Կ.Պոլսի Ազգային ժողովի կողմից ընդունված «Ազգային Մահմանադրություն»-ի նկատի ունենալով՝ նա դասագրքի 95-րդ էջին տեղադրում է Միջերկրական ծովից Կասպից ծով ձգվող Հայաստանի քարտեզը: 96-րդ էջին կրկին «Ոգի Հայաստանեայց»-ն է: Նոր պատկերը ներկայացնում է հեզասահ, գեղանի, ոտաբոբիկ առաջ քայլող մի օրհորդի՝ հայկական Մարիաննային:¹³ Հայոց դաշտերն արդեն հերկված են, շինությունները՝ կանգուն, շուրջը լողը՝ բարեկարգ: Նկարն աչքի է ընկնում թեթևությամբ և անուշահոտ լավատեսությամբ: Ճ.Արամյանի ստեղծած պատկերների շարքը՝ քարակույտին նստած արտասովոր կին-Հայաստանի քարտեզ-նուրբ պչրանքով հայուհի, խորհրդանշում է Հայաստանի վերածնունդը:

«Մայր Հայաստան» պատկերաշարի մեր ուսումնասիրած վերջին տարբերակը զետեղված է «Օրացոյց Հայկազանց»-ում (նկարիչ՝ Մանուկեան) (նկ.5):¹⁴ «Կոյս»-ի ձախ ձեռքում խաչազուլի ձողով սպիտակափառ հաղթագիր է՝ սեր և Աստված, իսկ աջ ձեռքից շանթեր են ցայտում (խորհրդանշում է Նոր Հայաստանը): Պատմաճանն ուսերին գցած կնոջ դեմքին ժպիտ չկա (ոգևորությունը մեծ է, բայց քաղաքական իրական հանգամանքները թերահավատություն են դրոշմել «Հայաստան»-ի դեմքին): Ոտքերի մոտ նկատելի են մարդկային գանգ և ոսկորներ (խորհրդանշում է մահին և ավերին զոհ գնացած նախնիների աճյունները): Չնայած դրան՝ հայկական դիմագծերով գեղեցկուհին կանգնած է, գլուխը շողարձակում է (խորհրդանշում է խույր):

«Ոգի Հայաստանի» նկարը Հայաստանում առաջին անգամ զանգվածաբար ցուցադրվել է 1865թ. մայիսի 23-ին՝ նույն օրը և՛ Ալեքսանդրապոլում՝ Հ.Կարինյանցի «Շուշանիկ» պատմական ողբերգության բեմադրության ժամանակ, և՛ Վարազա վանքում՝ «Ազգային Մահմանադրության» տարեդարձի կապակցությամբ:¹⁵ Քաղաքական հույզերով կազմակերպված միջոցառումների նպատակը հասարակության մեջ խղճահարություն, արժանապատվություն, ամստանք, ցավ, պատվախնդրություն, սեփական երկրին տեր կանգնելու ցանկություն առաջ բերելն էր:



¹³ Ֆրանսիայի առաջին հանրապետության (1792-1804թթ.) խորհրդանիշ:

¹⁴ Օրացոյց Հայկազանց և գուշակութիւնք օրոց 1872 նահանջ թուականին Քրիստոսի և Ազգիս Հայոց ՌՅԲԱ-1321, Կ.Պոլիս:

¹⁵ Քոչարեանց Մ., Հայկական թատրոն Ալեքսանդրապոլում, «Հայկական աշխարհի կրունկ», Թիֆլիս, 1865, №5 մարտ և №6 ապրիլ, էջ 183: «Արծուիկ Տարօնոյ», ի Տարօն, Մր Կարապետ, 1865, թիւ 46, էջ 86:

XVIII-XIX դարերում պատմաաշխարհագրական խորհրդանիշները՝ Հայաստան, Արաքս, Արարատ, «մայր» էութենական բառով ներկայացնելիս հայ հոգևորականները, բանաստեղծներն ու հրապարակախոսները սերմանում էին հայրենապաշտություն՝ վերահաստատելով այն տիպական ճշմարտությունը, որ հին աշխարհի, համաշխարհային պատմական Ոգու¹⁶ մի մաս Հայկական լեռնաշխարհում երկրի, մայր հողի պաշտամունքը հնագույն արմատներ է ունեցել և ունի: Մոր կերպարի այլաբանությունը խորհրդանշում էր ինքնագոյություն, մարդասիրություն, արդիականացում, հնագանդություն, կուսականություն, արյունակցական կապեր (տոհմ, ազգ) և միասնականություն: Մայրական ոգով դաստիարակված քաղաքացիները, ըստ ազգային-քաղաքական մտքի ներկայացուցիչների, ի վերջո հռչակելու էին Հայաստանի քաղաքական անկախությունը:

Այսպիսով, Մադրասում, Վենետիկում, Փարիզում և Կ.Պոլսում «Մայր Հայաստան» նկարի ստեղծումը, կատարելագործումը և կիրառումը քաղաքական տեխնոլոգիաներ էին: Աստվածաշնչյան կնոջ «ազատ ոգի» տեսակը¹⁷ խորհրդանշում էր հայոց հայրենիքն ու ազգային-ազատագրական պայքարը: Նկարները հայերի ժամանակակից ազգ լինելու հզոր փաստարկ են և վկայում են ազգային ինքնագիտակցության բարձր մակարդակը:

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ПОЛИТИЧЕСКОЙ СИМВОЛИКИ XVIII-XIX ВЕКОВ

___ Резюме ___

___ Г. Айвазян ___

В эпоху Нового времени, начиная со второй половины XVII в., важной политической задачей национальных сил было объединение народа с целью освобождения Армении от господства Ирана и Османской империи. В этом деле большую роль предоставлялась национально-политическим символам.

На формирование самоидентичности нации колоссальное значение имела серия картин «Мать Армении»-армянка сидит на обломках Армении. Фигура-аллегория никого не оставляет безучастным. Серия картин показывает как в течение времени преобразовались идеология армянской освободительной борьбы и доктрина восстановления армянского государства.

Хорошо продуманные картины являются результатом романтической историсофии. Она обобщает в себе опыт научных знаний национально-политических деятелей о мировых исторических процессах.

Տեղեկություններ հեղինակի մասին

Այվազյան Գևորգ Ստեփանի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, E-mail: ayg.84@mail.ru

¹⁶ Ոսկանյան Ա., Չարենցի ժամանակը, Եր., 2017:

¹⁷ Շարունյան Հ., Աստվածաշնչյան կանանց կերպարները համաշխարհային գրականության մեջ, «Վէմ», Եր., 2016, թիվ 4 (56), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 106:

*ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ԳԱՎԱՌՈՒՄ 1918թ. ՄԱՅԻՍ-ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄԻՄՆԵՐԻՆ*

Թուրքական զորքերի կողմից Ալեքսանդրապոլի գավառի առաջին զինագրավմանը հայ պատմագիտությունն անդրադարձել է հիմնականում Մայիսյան հերոսամարտերի համատեքստում: Հնչել են տարբեր կարծիքներ ու տեսակետներ երկրամասի ընդհանուր ռազմաքաղաքական դրության ու առանձին գործիչների մասին, հրատարակվել են հուշագրություններ, գիտական մենագրություններ ու փաստաթղթերի ժողովածուներ: Մինչդեռ շատ կարևոր հիմնահարցեր՝ ինչպես, օրինակ, զինագրավված գավառի ազգաբնակչության հանդեպ իրագործված ցեղասպանական քաղաքականության քննությունը դուրս է մնացել հայագետների ուշադրությունից:

Այս հոդվածի շրջանակներում արխիվային նորահայտ վավերագրերի, գիտական գրականության, դեպքերին ականատեսների հուշագրությունների և պարբերական մամուլի հաղորդումների համադրմամբ կկատարվի վերոհիշյալ խնդրի հանգամանալի քննություն, ինչը հնարավորություն կտա փակելու հայ պատմագիտության մեջ առկա բացը և միաժամանակ հանրային սեփականություն դարձնելու մեր հարևան պետության հանցավոր պատմության ևս մեկ էջ:

1918թ. գարնանն աշխարհամարտի Կովկասյան ճակատում ռազմաքաղաքական իրավիճակը կտրուկ փոխվեց: Ապրիլի 12-ին Կարսի խայտառակ հանձնմանը¹ մայիսի 15-ին հաջորդեց Ալեքսանդրապոլի անսպասելի անկումը:

Գիտակցելով իրենց հաջողության ժամանակավոր բնույթը՝ թուրքերը, տեղական մահմեդական խուժանի գործուն աջակցությամբ զինագրավված գավառի տարածքում ձեռնամուխ եղան արևելահայության ֆիզիկական բնաջնջման քաղաքականությանը: Սոցյություն և հարակից գյուղերում կազմակերպված դիմադրության հանդիպելուց, ապա Մարդարապատում և Բաշ-Ապարանում խայտառակ պարտություն կրելուց հետո զազազած թուրքական հրամանատարությունն իր ուշադրությունը սևեռեց Արևելյան Շիրակի և Փամբակի գյուղերի վրա և ձեռնամուխ եղավ այստեղ կուտակված հայության բնաջնջմանը:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ մայիսի 15-ից մինչև դեկտեմբեր Ալեքսանդրապոլի գավառի 122 գյուղերում (առանց գավառակենտրոնի) թուրքական զազանություններին զոհ գնաց 10300 մարդ, այդ թվում կոտորվեց 5086-ը, գերվեց 4660-ը, գերությունից վերադարձավ 257-ը (չափազանց հյուծված լինելով սրանց մած մասը մի քանի օր անց մահացավ), անհետ կորավ 483-ը²:

¹ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, док. 103, С. 225:

² ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 1, գործ 91, թ.179: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Լեոյի ֆոնդ, ցուցակ 1, գործ 253, թ.1:

1919թ. հոկտեմբերին այս տվյալները Հայաստանի խորհրդարանի պատգամավոր Հակոբ Տեր-Հակոբյանի (Իրազեկ) խմբագրությամբ ու մեկնաբանություններով հրապարակվեցին «Յառաջ» օրաթերթում և հայ պատմագրության մեջ շուրջ մեկ հարյուրամյակ մնացին իբրև բացարձակ ճշմարտություն³, այն դեպքում, երբ ժամանակակիցների կողմից դրանք չընդունվեցին: Ալեքսանդրապոլում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի հավաստմամբ, այդ տվյալները նվազեցված էին գրեթե երեք անգամ: Դեռևս 1918թ. հոկտեմբերի սկզբներին ՀՀ ԱԳՆ ներկայացրած իր զեկուցագրերում Խոյեցյանը գրում էր, թե միայն Ալեքսանդրապոլ քաղաքում և Արևելյան Շիրակի գյուղերում թուրքերը կոտորել են մոտ 20000 մարդ և 10000-ին էլ գերի քշել⁴:

Հայ պատմագիտությունն առաջին անգամ խնդրին անդրադարձավ միայն ինը տասնամյակ անց: Ալեքսանդրապոլի գավառում 1918թ. մայիս-նոյեմբեր ամիսներին օսմանյան իշխանությունների վարած վարչաժողովրդագրական քաղաքականության ուսումնասիրության նպատակով Ռ. Գրիգորյանը «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի էջերում վերահրապարակեց Իրազեկի հոդվածը, վերահաշվեց ցուցակները և թվային մի քանի մանր անճշտություններ հայտնաբերելով՝ դրանք որակեց իբրև լրագրային վրիպում:

Ցավոք, հարգարժան ուսումնասիրողը չփորձեց վերլուծել գավառ գործուղված հանձնաժողովների աշխատանքը, չնկատեց թույլ տրված բացթողումներն ու թերացումները, ուստի և թուրքական վայրագությունների մասշտաբների մասին պաշտոնական տվյալներն ընդունեց որպես բացարձակ ճշմարտություն:

Վիճակագրական տեղեկություններ օսմանյան տիրապետության ամիսներին Ալեքսանդրապոլի գավառին հասցված մարդկային վնասների մասին⁵

N	բնակավայրի անունը	սպանված	գերված	վերադարձված	անհետ կորած	N	բնակավայրի անունը	սպանված	գերված	վերադարձված	անհետ կորած
Ա Ռ Ա Ջ Ի Ն Գ Ա Վ Ա Ռ Ա Մ Ա Ս											
1.	Ալեքսանդրապոլ	84	33	9	--	15.	Ջաջուռ	27	45	---	---
2.	Դահարլի	130	36	8	--	16.	Աղբիլիսա	---	24	2	---
3.	Բայանդուր	12	15	6	--	17.	Արրխվալի 3-րդ	1	35	1	---
4.	Ճլովխան	17	17	1	--	18.	Ղոնախդրան	20	88	8	---
5.	Ղարաքիլիսա Խլի	400	577	44	--	19.	Մարյար	5	47	5	---

³ Իրազեկ, Տաճկական վայրագությունները Ալեքսանդրապոլի գավառում, «Յառաջ» օրաթերթ, Եր., 1919, N, 17 հոկտեմբերի, էջ 3:

⁴ ՀԱՍ, ֆոնդ 221, ցուցակ 1, գործ 89, թթ. 60-61:

⁵ Հայաստանի ազգային արխիվում պահվող փաստաթղթի, «Յառաջ» օրաթերթում Իրազեկի կողմից հրապարակված ցուցակների և «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի էջերում վերահրատարակված ցուցակների համադրմամբ մենք ստացանք ստորև բերված վիճակագրական պատկերը: Մեզ համար անհասկանալի հաշվումների արդյունքում միևնույն ցուցակներն ուսումնասիրած Ռ. Գրիգորյանն ստացել է հետևյալ թվային պատկերը՝ սպանված 4745, գերված 4596, վերադարձված 263 և անհետ կորած 370 հոգի (Տե՛ս Գրիգորյան Ռ., Թուրք-մուսավաթական զորքերի ոճրագործությունները Անդրկովկասի հայաբնակ շրջաններում 1918-1920թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1996, N 1, էջ 111):

	(Փոքր)										
6.	Թափաղույակ	2	90	7	16	20.	Թուփարի	5	47	5	7
7.	Ղուգբյանդ	4	30	7	--	21.	Օրթաքիլիսա	9	27	4	---
8.	Դիրաքլար	17	48	6	--	22.	Քեյթի Մեծ	43	19	---	---
9.	Քյափանակ Մեծ	5	166	13	--	23.	Քեյթի Փոքր	14	26	---	---
10.	Քյափանակ Փոքր	5	10	---	--	24.	Դարբանդ	27	14	---	---
11.	Չրավի	4	15 7	10	-- -	25.	Ղանլիջա Ներքին	22	1	---	---
12.	Բաղդատ- Ղուլթախտ (եզդի)	2	33	2	-- -	26.	Ղանլիջա Վերին	70	36	---	---
13.	Խանկալի	---	32	7	--	27.	Կապս	51	27	2	---
14.	Հաջի Նազար	3	53	8	--						
ԸՆԴԱՄԵՆԸ								979	1733	155	23
Ե Ր Կ Ր Ո Ր Դ Գ Ա Վ Ա Ռ Ա Մ Ա Ս											
1.	Իլիսիարի	7	41	5	--	19.	Ջանգիթափա	3	18	---	---
2.	Քյալթառլի	5	24	1	--	20.	Մանջուլի	1	49	7	---
3.	Ղազանչի	4	10	---	--	21.	Քեշիշքենդ	3	8	---	---
4.	Պարնի Փոքր	1	12	---	--	22.	Մելիքքենդ	10	5	---	---
5.	Ղասմայի	2	29	---	--	23.	Ախդուլա	2	42	5	---
6.	Ղուլիջան	1	4	---	--	24.	Ղրբիս-Ղաղ	11	91	7	---
7.	Ղուլդաթ	2	9	1	--	25.	Քոռքուլաղ	13	66	8	---
8.	Նորաշեն	4	60	---	--	26.	Քիչիկ-Ջանգի	21	67	7	---
9.	Արբիվալի Մեծ	5	53	6	--	27.	Միրաք Մեծ	8	140	---	---
10.	Արբիվալի Փոքր	5	24	3	--	28.	Միրաք Փոքր	չկա	չկա	---	---
11.	Գյոզալդարա Հայկական	4	15	---	--	29.	Ղոնդաղսազ	2	11	---	---
12.	Եզանլար	7	72	---	--	30.	Ջոմուշի Մեծ	95	5	---	---
13.	Արթիկ	30	80	7	--	31.	Ջոմուշի Փոքր	չկա	16	1	---
14.	Ղիչաղ	38	5	1	--	32.	Չոբանգերաքմազ	15	35	---	---
15.	Ղարաքիլիսա	չկա	3	---	--	33.	Փամպ Բրդական	7	61	4	---
16.	Բաշգյուղ	15	25	---	--	34.	Ղոտիբոդազ	20	չկա	---	---
17.	Հաջի Խալիլ	10	42	3	--	35.	Ջարջառիս	3	38	---	---
18.	Դանազիրմազ	5	14	---	--	36.	Քարվանսարա	35	18	6	---
ԸՆԴԱՄԵՆԸ								39 4	119 2	72	---
Ե Ր Ր Ո Ր Դ Գ Ա Վ Ա Ռ Ա Մ Ա Ս											
1.	Գյուրջիյոլ	2	21	1	-- -	14.	Ղալդուլի- Ղազանչի	8	48	1	22
2.	Ճգրիվար	17	28	---	15	15.	Քոռաղբյուր	16	23	1	---
3.	Փալուքլի	5	6	---	3	16.	Դարաքյոյ	10	6	3	---
4.	Բանդևան Մեծ	82	22	---	--	17.	Ղզրլոռ	14	14	---	11
5.	Բանդևան Փոքր	35	27	2	--	18.	Գյուլիսարաբա	8	38	---	2
6.	Չոռլի	8	10	---	--	19.	Բոզլիսուշ	8	12	1	---
7.	Ալլաքիլիսա	4	4	---	--	20.	Բաշգյուղ 2-րդ	8	1	1	---
8.	Թաքնալի	7	35	3	--	21.	Կեֆլի	չկա	1	---	---
9.	Իլի Դարաքիլիսա	40	18	---	--	22.	Սարյար Փոքր	1	7	---	---
10.	Ղզրլիսա 2-րդ	5	35	4	--	23.	Սամուրի	չկա	չկա	---	---
11.	Գյուլլիբուլաղ	2	4	---	--	24.	Ալիխան	չկա	չկա	---	---
12.	Չիֆթալի	12	24	---	--	25.	Ղարաքիլիսա 3-րդ	3	չկա	---	---
13.	Շիշթափա	7	14	2	12						
ԸՆԴԱՄԵՆԸ								302	398	19	65
Չ Ո Ր Ո Ր Դ Գ Ա Վ Ա Ռ Ա Մ Ա Ս											
1.	Ղափլի	60	47	1	--	18.	Ղրբիս	---	22	---	---
2.	Ղազարապատ	17	5	---	--	19.	Մոզլուքի	180	113	---	---
3.	Տավշանդշաղ	71	16	---	--	20.	Փիլթիքյան	30	25	---	---
4.	Սվանվերդի	202	128	---	--	21.	Աղիյաման	148	79	---	---
5.	Քյալալի	55	3	---	--	22.	Մոլլա Գոկչա	35	71	---	---

6.	Ադին	465	30	---	--	23.	Բողազքյասան	25	20	---	---
7.	Բաբրդի	34	5	---	--	24.	Շիրվանջուղ	218	36	---	---
8.	Բոգդողան	75	45	---	--	25.	Սահմուղջուղ	177	14	---	---
9.	Ղեղաշ	70	42	---	--	26.	Արմուլի	156	86	6	50
10.	Զրբիլի	66	25	---	--	27.	Սարիբաշ	10	5	---	25
11.	Ղզրլիլիսա	30	51	---	--	28.	Հոռոմ	100	7	---	120
12.	Ենիքոյ (Խարկով)	35	29	---	--	29.	Մեջիթլի	78	41	---	---
13.	Բուղդաշեն	15	38	---	--	30.	Թումարդաշ	30	20	---	---
14.	Զարնջի	60	28	---	--	31.	Իմրիսան	60	11	---	20
15.	Արթիկ Նոր	60	85	---	--	32.	Սոնգյուրլի	30	40	---	18
16.	Զիթիանքով	455	51	---	--	33.	Թալիբօղլի	4	4	---	---
17.	Տաշդալա	21	48	---	--	34.	Ղուրնիղշլաղ	չկա	1	---	---
ԸՆԴԱՄԵՆԸ								3072	1271	7	233
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ								4747	4594	253	321

Մինչդեռ թերացումներ կային, և դրանք էական ազդեցություն ունեցան վիճակագրական ստույգ տեղեկությունների հայթայթման ու ճշգրտման վրա:

Դրանցից առաջինը վերաբերում է գավառի տարածքին՝ «հին ու նոր գավառներ» հասկացությանը:

1918-1920թթ. իրադարձությունները լուսաբանող արխիվային վավերագրերում և գիտական գրականության մեջ հաճախ կարելի է հանդիպել «Ալեքսանդրապոլի գավառն իր ներկա փոքրացած սահմաններով» արտահայտությանը: Բացատրությունը մեկն է. աշխարհամարտում պարտված Օսմանյան կայսրությունն աշխարհի վերջերից սկսեց դուրս բերել իր զորքերը զինագրավված տարածքներից: Թուրքերի հեռանալուց հետո ՀՀ-ին անցած շրջաններում ստեղծվեցին գավառային վարչության նոր մարմիններ: Օրինակ, Ալեքսանդրապոլի գավառի Մեծ Ղարաքիլիսայի տեղամասը (Փամբակ) իր 30 գյուղերով ՀՀ Մինիստրների խորհրդի հոկտեմբերի 7-ի որոշմամբ ժամանակավորապես (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.) հանվեց գավառի կազմից և Դիլիջանի ու Քարվանսարայի տեղամասերի հետ միավորվելով՝ դարձավ նոր ձևավորված Դիլիջանի գավառի մաս⁶: Դեկտեմբերի սկզբներին թուրքերից մաքրվեց նաև Արևելյան Շիրակի տարածքը, սակայն, Ալեքսանդրապոլի նախկին գավառի տարածքային ամբողջականությունն ինչ-ինչ պատճառներով այլևս չվերականգնվեց (նոր գավառն ուներ 4 տեղամաս և նախկին 160-ի փոխարեն 129 գյուղ)⁷: Մա առիթ տվեց Արևելյան Շիրակ և Փամբակ գործուղված հանձնաժողովների մի մասին, իսկ հետո նաև ուսումնասիրողներին թուրքական վայրագությունների մասին վիճակագրական տվյալները դիտարկել անջատ՝ առանձին Արևելյան Շիրակի (նոր սահմաններով Ալեքսանդրապոլի գավառի) համար և առանձին Փամբակի համար, ինչը, մեր կարծիքով, սխալ է: Զինագրավման պահին և հաջորդ վեց ամիսների ընթացքում Ալեքսանդրապոլի գավառը Արևելյան Շիրակի և Փամբակի տեղամասերից կազմված մեկ վարչական ընդհանրություն էր, կառավարվում էր Ալեքսանդրապոլից, ուրեմն և վիճակագրական տվյալները նա անհրաժեշտ է ներկայացնել մեկ ընդհանուր ձևաչափի մեջ:

⁶ Ղարաքիլիսեի յանձնումը, «Մշակ», Թիֆլիս, 1918, N 20, 18 հոկտեմբերի, էջ 4:

⁷ ՀԱԱ ֆոնդ 203, ցուցակ 1, գործ 4, թ. 20:

Թուրքական տիրապետության ողբերգական հետևանքները բացահայտելու գործում թույլ տրված երկրորդ թերացումը մարդկային կորուստների հաշվառման եղանակի մեջ է:

«Յառաջ» պարբերականի էջերում Իրազեկը գրում է, թե մինչ հանձնաժողովները տեղ կհասնեն, գյուղերում արդեն պարզել էին իրենց կորուստների մասշտաբները: Ուստի հանձնաժողովականներն ուղղակի գյուղ առ գյուղ հավաքել են ազգաբնակչությունը, ապա գյուղի «գլխակից մարդիկ թվել են... զոհերի անունները, եթե իհարկե... քիչ են եղել այդ զոհերը» (ընդգծումը մերն է-Ա.Հ.)⁸:

Փաստորեն զոհերի ու գերիների թիվը ճշգրտվել է բացառապես «գյուղի գլխակից մարդկանց» հիշողությամբ, և հաշվառման այս եղանակը մեկ հարյուրամյակ համարվում է խիստ արդյունավետ:

Այդ դեպքում հարց է առաջանում. ի՞նչ եղանակով է կազմակերպվել հաշվառումը Արևելյան Շիրակի և Փամբակի այն վեց տասնյակ գյուղերում, որոնց ազգաբնակչությունը զինագրավման հենց առաջին օրերին գրեթե 80%-ով սրի էր քաշվել, բնաջնջվել էին ամբողջական գերդաստաններ⁹, այն գյուղերում, որոնք ավելի քան երեք ամիս դատարկ էին և վերակենդանացան միայն սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին¹⁰, երբեմնի 52000-ոց Ալեքսանդրապոլում, որի բնակչության մոտ 40%-ը թուրքերի հեռանալուց հետո այլևս նույնիսկ ալեքսանդրապոլցի չէր¹¹:

Մարդկային կորուստների հաշվառման այդ եղանակի պատճառով գյուղերում հարյուրավոր անուններ բաց թողնվեցին, գրեթե չհաշվառվեցին փախստականները (մայիսի սկզբի դրությամբ՝ մոտ 200000 մարդ)¹² և արևմտահայերը (1918թ. սկզբի դրությամբ մոտ՝ 26000 մարդ, որբանոցների սաներին չհաշված)¹³, իսկ Ալեքսանդրապոլ քաղաքի մասին ընդհանրապես տվյալներ չհրապարակվեցին:

Պաշտոնական վիճակագրության ճշմարտացիությունն առաջին անգամ կասկածի տակ դրվեց միայն 2000-ական թվականների սկզբներին: Շիրակի 1918թ. մայիսյան գոյամարտի պարագայում Հ. Մելիքյանը մերժեց հայագիտության մեջ ընդունված այն տեսակետը, թե այդ եղեռնագործությանը կարող էր զոհ գնալ ընդամենը 10300 մարդ, իսկ «Յառաջ» պարբերականում հրապարակված վիճակագրական տվյալները թվագրեց 1918թ. հուլիս-նոյեմբեր ամիսներով¹⁴:

Ի դեպ, Հ. Մելիքյանի կողմից առաջ քաշված տեսակետը զուրկ չէ իրական հիմքերից: Հայաստանի ազգային արխիվում պահվող մեկ տասնյակից ավելի վավերագրեր գալիս են ապացուցելու, որ զանգվածային կոտորածները գավառում շարունակվել են թուրքական տիրապետության ողջ ընթացքում: Օրինակ՝ Ար-

⁸ Իրազեկ, Տաճկական վայրագությունները Ալեքսանդրապոլի գավառում, «Յառաջ» օրաթերթ, Եր., 1919, N 227, 17 հոկտեմբերի, էջ 2-3:

⁹ ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թ. 92:

¹⁰ Նույն տեղում, թ. 105:

¹¹ Նույն տեղում, թ. 96:

¹² Մշակ, Թիֆլիս, 1918, N 69, 1 ապրիլի, էջ 2: Մշակ, Թիֆլիս, 1918, N 81, 17 ապրիլի, էջ 2:

¹³ ՀԱԱ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թ. 23-24:

¹⁴ Մելիքյան Հ., 1918 թ. Շիրակի մայիսյան գոյամարտը, 1918 թ. գոյապայքարի պատմության նոր էջ, Եր., 2005, էջ 73:

մութիւում կոտորածը տեղի ունեցավ սեպտեմբերի 25-ին: Արթիկից և Հոռումից հանկարծակի գյուղ մտած թուրքական զորամասերը 95 հոգու սպանեցին, 85-ին՝ գերեցին, իսկ մյուսներին փախուստի մատնեցին¹⁵: Նոյեմբերի սկզբներին մոտ 1000 հոռումցի կոտորվեց այն բանից հետո, երբ գյուղի հարևանությամբ ասկյարի ղի հայտնաբերվեց¹⁶:

Եվ ուրեմն ի՞նչ է իրականում տեղի ունեցել Ալեքսանդրապոլի գավառում 1918թ. մայիս-նոյեմբեր ամիսներին, որո՞նք են այն փաստերը, որ թույլ են տալիս մերժել պաշտոնական վիճակագրության արդյունքները, և որ ամենակարևորն է՝ ի՞նչ մասշտաբներ ընդունեցին թուրքական վայրագությունները գավառում:

1918թ. մայիսի 14-ի գիշերը թուրքերը վերջնագրով պահանջեցին իրենց հանձնել Ալեքսանդրապոլը, ապա, չսպասելով պատասխանին, հաջորդ առավոտյան գրոհով տիրեցին քաղաքին և համանուն գավառի մեծ մասին¹⁷:

Զինագրավման առաջին օրերին թուրքական հրամանատարությունն զբաղված էր տեղական ինքնակառավարման նոր մարմինների ստեղծմամբ ու պետական շինությունների և պահեստների ցուցակագրմամբ¹⁸: Օգտվելով առիթից՝ քաղաքային բնակչության մեծ մասը (այդ թվում նաև տասնյակ հազարավոր արևմտահայեր, կարսեցի ու սարիղամիշցի փախստականներ), զոհաբերելով իր ունեցվածքը, փախավ Էջմիածնի և Մեծ Ղարաքիլիսայի ուղղությամբ, այնպես որ երբեմնի 52000 բնակիչ ունեցող քաղաքում մնաց 5000 մարդ¹⁹:

Հետագայում քաղաքային բնակչության թիվը վերականգնվեց, սակայն թուրքական ներկայությունը ծանր հետք թողեց քաղաքի էթնիկ պատկերի վրա: Վերադարձածների մեջ ալեքսանդրապոլցիները կազմում էին միայն 60%-ը: Փոխարենը մեծ թիվ էին կազմում թաթարները²⁰: Ըստ Գ. Խոյեցյանի՝ սրանց էր անցել էր քաղաքի համարյա կեսը՝ «ռուսական թաղամասը և բոլոր ամենայարմար գեղեցիկ շենքերը, իսկ քաղաքը կորցրել էր իր զուտ հայկական բնույթը»²¹:

¹⁵ ՀԱԱ, ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 326, թթ. 63-64:

¹⁶ ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թ. 70:

¹⁷ Ալեքսանդրապոլի անկման ականատեսներից Հովակիմ Մելիքյանն իր հուշերում գրում է, թե բերդապահ կայազորում օսմաներենի իմացությամբ մարդ չգտնվեց, ուստի որոշվեց առավոտյան թուրքերի մոտ մարդ ուղարկել՝ վերջնագիրը ֆրանսերեն կամ ռուսերեն թարգմանելու: Հ. Մելիքյանի այս խոսքերը մեզ համար խիստ կասկածելի են: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ալեքսանդրապոլցիների ճնշող մեծամասնության նախնիներն այստեղ են գաղթել Արևմտյան Հայաստանից, քաղաքային բնակչության համար թուրքերենի իմացությունը սովորական երևույթ էր: Նույնիսկ 1970-1980-ական թվականներին Լենինական քաղաքի բնակչության մի ստվար մասը բավականին լավ տիրապետում էր այդ լեզվին (Մանրամասն տե՛ս Մելիքյան Հ., Արյան ճանապարհով, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1925, թիվ 6, ապրիլ, էջ 134):

¹⁸ Մանրամասն տե՛ս Hayrapetyan A., *The Legal-administrative policy of the Ottoman authorities in the Alexandropol uyezd in May-November 1918*, "Journal of Armenian studies", Yerevan, 2017, N 2, pp. 21-22.

¹⁹ ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թ. 91:

²⁰ Նույն տեղում, թ. 96:

²¹ Նույն տեղում, թթ. 12-13:

Ըստ ականատեսների՝ Ալեքսանդրապոլում զանգվածային կոտորածի դեպքեր տեղի չունեցան (սպանությունները հիմնականում կատարվում էին զիշերով և անաղմուկ)²²: Թուրքերն այստեղ որդեգրեցին հայաջնջման «անարյուն» քաղաքականություն: Զինագրավման երրորդ օրը թուրքական հրամանատարությունը հայկական բանակում ծառայած զինվորներից պահանջեց հանձնվել: Հաջորդ երկու շաբաթների ընթացքում քաղաքից և շրջակա գյուղերից բերման ենթարկված 4000 երիտասարդներն ուղարկվեցին Կարս, իսկ անհնազանդները կայարանում գնդակահարվեցին²³: 101 տարվա ազատագրկման դատապարտվեցին և Կարս ուղարկվեցին նաև տանը զինվորական հագուստ ունեցողները²⁴:

Մարդորսության երկրորդ փուլն սկսվեց մայիսի 20-ից: Հաց և անցագրեր բաժանելու պատրվակով թուրքերը ցուցակագրեցին գավառի բնակչությանը, իսկ մի քանի օր անց, տղամարդկանց խումբ-խումբ հավաքելով, ուղարկեցին Կարս, Սարիղամիշ և Էրզրում՝ իբր թե «վճարովի» աշխատանքի տեղավորելու²⁵: Ատրպետի հաշվումներով՝ այս կերպ քաղաքից և հարակից գյուղերից հավաքվեց ավելի քան 2500 սայլապան²⁶ (նոյեմբերին այդ թիվը հասավ 4000-ի²⁷): Օսմանյան բանակի հեռանալուց հետո սրանք անհետ կորան: ՀՀ ԱԳՆ տվյալներով, թուրքական գերությունից վերադարձավ միայն հիսուն կիսամեռ սայլապան և 14 անտեր եզ²⁸: Անհետ կորան նաև քաղաքում մնացած բժիշկները, բուժքույրերը և 500 հայ գյուղյան քույրերը: Ցուցակագրվելուց հետո սրանց առաջարկվեց տեղափոխվել Մեծ Ղարաքիլիսա, սակայն վազոնները լցնելուց հետո քշեցին Կարսի ուղղությամբ²⁹:

Գ. Խոյեցյանի հաշվումներով, թուրքական վեցամսյա տիրապետության ընթացքում այս եղանակով միայն Ալեքսանդրապոլ քաղաքից և Արևելյան Շիրակի գյուղերից Թուրքիայի ներքին նահանգներ քշվեց նվազագույնը 10000 մարդ, որոնցից 4000-ն ուղարկվեց Երզնկա՝ «տեղական մահմեդականներին՝ ... նրանց վրեժի զգացմունքներին յագուրդ տալու համար»³⁰:

Այլ կերպ վարվեց թշնամին գավառի գյուղական ազգաբնակչության հանդեպ: Այն, ինչ ասկյարներն ու մահմեդական խուժանն արեցին Արևելյան Շիրակի և Փամբակի գյուղերում, հայոց ցեղասպանության ուղղակի շարունակությունն էր՝ առավել «կատարելագործված, անզիջում ու անթերի»: Սոցյությիում և հարակից գյուղերում դիմադրության հանդիպելուց հետո թուրքերն իրենց ուշադրությունը

²² Յովսէփեան Մ., *Ալեքսանդրապոլը՝ գրաւումէն ետք. (Ականատեսի պատմութիւնը)*, «Աշխատանք», Թերթ, Եր., 1918, Գ տարի, 8 (26) յունիսի, շաբաթ, N 6 (206), էջ 2:

²³ Նույնը:

²⁴ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թ. 95:

²⁵ ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 1, գործ 91, թ. 179:

²⁶ Ատրպետ, *Ալեքսանդրապոլ քաղաքի 200 օրվայ գրաւումը Օսմանեան զօրքերից*, «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1918, N 265, 25 դեկտեմբերի, էջ 2:

²⁷ ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թթ. 92:

²⁸ Նույն տեղում, թթ. 135:

²⁹ Յովսէփեան Մ., *Ալեքսանդրապոլը՝ գրաւումէն ետք. (Ականատեսի պատմութիւնը)*, «Աշխատանք», Թերթ, Եր., 1918, Գ տարի, 8 (26) յունիսի, շաբաթ, N 6 (206), էջ 2:

³⁰ ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թթ. 46-47:

սկսեցին Արևելյան Շիրակի գյուղերի վրա: Ավելի քան 50 գյուղ հիմնահատակ ավերվեց, իսկ դրանց բնակչությունը սրի քաշվեց³¹:

Սոցյալեցիներից վրեժ լուծելով՝ թուրքերը Աղիյաման, Փիրթիքյան, Մաստարա, Մուսլուղլի և Սոցյուրլի գյուղերից հավաքած մոտ 3000 հայերի մայիսի 25-ին կոտորեցին Ձիթհանքովում: Սրանցից 500-ին փակեցին Շահբազյան եղբայրների մարագներում, ապա պատուհաններից նռնակներ նետելով, գնդացիներից ու հրացաններից կրակելով՝ սպանեցին, իսկ հետքերը կորցնելու համար մարագներն այրեցին: Մյուսներին (մոտ 2500 հոգու) կոտորեցին գյուղի հյուսիսարևելյան կողմի սարերում (փրկվեցին սոցյուրլեցի Նեոյ Գասպարն ու աղիյամանցի Գլոն): Շուրջ 200 հայ օրիորդներ փրկվելով իրենց պատիվը, ինքնասպան եղան Ձիթհանքովի լճերում³²: Թուրքական զորքերին դիմադրելուց հետո ամայի դարձան նաև Մահմուդջուղ և Ղըլիջ-Յաթաղ գյուղերը (1916 թ. դրությամբ միասին ունեին մոտ 2570 բնակիչ երկու սեռերից³³): Այս շարքում համեմատաբար փոքրաթիվ կորուստներ ունեցավ միայն Մուլա-Գյուկչան (160 զոհ, 40 գերի)³⁴: Տանուտեր Իգնատոսյանի գլխավորությամբ գյուղացիների 50-60 հոգուց բաղկացած ջոկատը գյուղի «Գող մաղաբա» հանդամասում հարձակվեց թուրքերի վրա ու ստիպեց հեռանալ³⁵:

Ալեքսանդրապոլի զինագրավման օրերին գրեթե հիմնովին ավերվեց Իլլի Ղարաքիլիսա գյուղը: Շուրջ 1500 մարդ գերվեց կամ տեղում կոտորվեց (ողջ մնաց 200 մարդ)³⁶: Նույնը տեղի ունեցավ նաև Փոքր Ղարաքիլիսայի հետ: 1916թ. դրությամբ 900 ընտանիք³⁷ ունեցող այս գյուղում թուրքական յաթաղանին զոհ գնաց մոտ 3000 մարդ³⁸:

Ալեքսանդրապոլի և շրջանի հայրենակցական միության վարչության տվյալների համաձայն՝ մարդկային մեծ կորուստներ կրեցին նաև Գյուրջիյոլ (Թորոսգյուղ), Օրթաքիլիսա, Սալուտ, Գյուլլիբուլաղ, Ղզըլքիլիսա, Դուզխարաբա, Չիֆթալի, Բոզոյխուշ, Ղզըլդոշ, Ղազանչի, Տիտոյխարաբա և Քոռաղբյուր գյուղերը: Դրանք թալանվեցին ու ավերվեցին, գերեվարվեց, բռնաբարվեցին և բռնի մահմեդականացվեցին հազարից ավելի կին ու աղջիկ: Սարսափից խելակորույս բնակչությունը փախավ Լոռու ուղղությամբ, սակայն թուրքերը հետ բերեցին և կոտորեցին³⁹: Օրինակ՝ աղինցիները (1916թ. 1112 մարդ⁴⁰) ամբողջ գյուղով փախան, սա-

³¹ ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թ. 92:

³² ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 2, գործ 82, թ. 17:

³³ Կորկոսյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Եր., 1932, էջ 111, 119:

³⁴ Մելիքյան Հ., 1918 թ. Շիրակի մայիսյան գոյամարտը, 1918 թ. Մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ, Եր., 2005, էջ 56-58:

³⁵ Դավթյան Ա., Ճանաչիր արմատները քո, «Անի» շաբաթաթերթ, Մարալիկ, 1987, 22-ը օգոստոսի, էջ 2:

³⁶ ՀԱԱ ֆոնդ 227, ցուցակ 1, գործ 4, թթ. 1-12: Հմմտ. [Геноцид армян в османской империи: сборник документов и материалов](#). Под ред. М. Нерсисяна, 2-е, доп. изд. Ер., 1983, С. 536.

³⁷ ՀԱԱ ֆոնդ 227, ցուցակ 1, գործ 4, թ. 7: Հմմտ. С. 530.

³⁸ ՀԱԱ ֆոնդ 56, ցուցակ 16, գործ 475, թթ. 130-137, 206-212:

³⁹ ՀԱԱ ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 326, թթ. 58-61: Հմմտ. Միմոնյան Ռ., Անդրանիկ. Միբիրական վաշտի ողիսականը, Եր., 2006, էջ 59:

⁴⁰ Կորկոսյան Զ., նշվ. աշխ., էջ 109:

կայն հավատալով թշնամու կեղծ խոստումներին՝ վերադարձան և գլխովին կոտորվեցին (մոտ 1100 մարդ⁴¹): Հիմնահատակ ավերվեցին նաև Ալեքսանդրապոլի գավառի եզդիական գյուղերը: Հայրենակցական միության տվյալներով՝ եզդիական 15 գյուղերի բնակչությունն անհետ կորավ⁴²:

Արևելյան Շիրակի գյուղական խաղաղ ազգաբնակչության հանդեպ կիրառված ցեղասպանական քաղաքականության հետևանքով տղամարդկանցից զրեթե զրկվեցին Արթիկ, Կապս, Վերին Ղանլիջա, Ներքին Ղանլիջա, Զրախլի, Դուզբենդ, Մեծ Քյափանակ, Ղփչաղ, Արբիվալի, Բաշգյուղ, Ճլովխան, Իլխիաբի, Թումարտաշ, Դահարլի, Մեջիտլի, Փոքր Քյափանակ, Հաջինազար, Ջաջուռ, Աղբիլիսա, Դարբանդ, Սամրի, Արիսվալի Երրորդ գյուղերը: Միայն Արթիկում կոտորվեց 1200 մարդ (տղամարդկանց 80%-ը), ևս 200-ը՝ իբրև «գոհաբերման անասուն»՝ մորթվեց Կապս, Վերին և Ներքին Ղանլիջա գյուղերում⁴³: Մյուս գյուղերում տղամարդիկ խմբերով քշվեցին սարերն ու գնդակահարվեցին:

Հայաջնջման վերջին արարը տեղի ունեցավ Փամբակում, որտեղ, ըստ ականատեսների վկայության, կուտակվել էր մոտ 200000 մարդ (Բասենից՝ 9000, Կաղզվանից՝ 4000, Կարսի շրջանից՝ 60.000-ից ավելի, և Ալեքսանդրապոլ քաղաքից և Արևելյան Շիրակի գյուղերից՝ 70.000-ից ավելի): Մի հսկայական զանգված, որն զբաղեցրել էր Ղալթաղչիից մինչև Մեծ Ղարաքիլիսա ընկած հատվածը՝ մոտ 40 վերստ (42.5 կմ)⁴⁴:

Թուրքական 11-րդ դիվիզիայի առաջապահ զորամասերը Մեծ Ղարաքիլիսա մտան մայիսի 28-ի երեկոյան: Ջեմալ Ջավիդ բեյը, դիմելով ժողովրդին, խոստացավ «բիր էրմանինըն բուռնի խալ օլմամիշ»⁴⁵:

Նույն գիշերն սկսվեց խաղաղ հայ ազգաբնակչության կոտորածը: Ասկյարները, Սարալ, Արջուռ և Ղանջուղազ գյուղերի մահմեդական խուժանի ուղեկցությամբ, հարձակվեցին Ղըշլաղի վրա: Նույնը կրկնվեց նաև Մեծ Ղարաքիլիսայում: Վարդանլեցի ու հալլավարցի խուժանին միացած ասկյարները մեկ գիշերվա ընթացքում գյուղի «Վերին թաղ» կոչված թաղամասում կոտորեցին 156 հոգու: Սրանց համար գերեզման դարձավ «Ասլան բեգի փոս» կոչված վայրը⁴⁶:

Ընդհանուր առմամբ, միայն մայիսի 28-ի գիշերը Փամբակի շրջանի 9-ը գյուղերում՝ բացի արևմտահայերից, շիրակցիներից ու կարսեցիներից, թուրքական յաթաղանին զոհ գնաց 1269 փամբակցի (Ղարաքիլիսայում՝ 156 մարդ, Ղըշլա-

⁴¹ ՀԱԱ ֆոնդ 56, ցուցակ 16, գործ 475, թթ. 130-137, 206-212:

⁴² ՀԱԱ ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 326, թթ. 61:

⁴³ Նույն տեղում, թթ. 58-59:

⁴⁴ Էլչիբեկյան Հ., Ղարաքիլիսայի ճակատամարտը, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», Եր., 1947, N 8, էջ 57: Ղազարեան Մ., Դեպքերը Ղարաքիլիսայի շրջանում. տպավորություններ, «Մշակ», Թիֆլիս, 1918, N 102, 2 յունիսի, էջ 3:

⁴⁵ «Ոչ մի հայի քիթ չի արյունոտվի» (Մանրամասն տե՛ս Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ.՝ Ա. Մարության, Վ. Դալլաքյան, Եր., 2008, էջ 112):

⁴⁶ Խանզադյան Խ., նշվ. աշխ., էջ 91-92:

դում՝ 250, Դարբագում՝ 43, Բզովդալում՝ 200, Հաջիդարայում՝ 65, Էֆենդիում՝ 15, Համամլիում՝ 350, Յաղուբլիում՝ 40, Պարնիում՝ 150)⁴⁷:

Մարսափից խելակորույս փախչողներին մի քանի օր անց թուրքերը կեղծ խոստումներով հետ բերեցին և ամենաստոր եղանակներով կոտորեցին⁴⁸:

Ժամանակակիցների հավաստմամբ, խաղաղ ազգաբնակչության զանգվածային կոտորածի պատճառը եղավ այն, որ մարտական գործողությունների թատերաբեմ դարձած գյուղերի ազգաբնակչությունը մասնակցել էր հերոսամարտին: «Ղշաղը գտնուում էր կռիվ դաշտում, -գրում է դեպքերին ականատես Մ. Ղազարյանը,- ժողովուրդը մասնակցում էր հերոսամարտին, իսկ վերջին օրը ծանր թնդանօթներից մեկը դուրս էր գիւղի ծայրին, «Մայիլանց կալում» և այնտեղից էր ժառիտ անում դուշմնին»⁴⁹:

Մեծ կարծիքով, Փամբակի հայ ազգաբնակչության կոտորածը բացառապես տեղացիների կողմից մասնակցելով բացատրելը սխալ է: Առավել կործանարար եղավ այն, որ Ղարաքիլիսայի և հարակից գյուղերի բնակիչները չցանկացան զաղթել: Փախուստը համարելով «վախկոտության նշան»՝ տանուտերերն ստիպեցին ժողովրդին տեղից չշարժվել և նույնիսկ կանանց ու աղջիկներին գյուղերից չհեռացնել: «Ոչով իրաւունք չունի գեղից դուրս գալ, պտի էստի մնանք, էստի էլ մեռնենք, ով էլ որ հակառակը վարվի, նրա տունը կրակ կտանք, իրան էլ գիւլախորով կանենք», -սպառնացել էր դըշլաղցի քյոխվա Ծոքթանց Ավետիքը⁵⁰:

Իրենց հուշագրություններում ժամանակակիցներն անդրադարձել են նաև օսմանյան տիրապետության ընթացքում Փամբակի մահմեդական ազգաբնակչության շրջանում դրսևորված հայատյացության խնդրին, փորձել են հասկանալ դրա պատճառները: Դեպքերին ականատես Մուշեղ Ղազարյանի և Խորեն ավագ քահանա Խանզադյանի կարծիքով՝ պատճառը Վարդանլու թուրքաբնակ գյուղի վրա դաշնակցականներ Վաղոյի, Արշակի, Խզմալի, Չոպուռ-Դավթի, Ասոյի, Վաղինակի և այլոց կազմակերպած «պատժիչ» արշավանքն էր: Բանն այն է, որ ապրիլի վերջերին դաշնակցական «թուլցիկ խմբերը» դաժան կոտորած էին սարքել Ղարաքիլիսայից ոչ հեռու գտնվող այդ գյուղում: Սրանք շեն գյուղը վերածել էին սպանդանոցի. վառել էին տները, կոտորել անմեղ տղամարդկանց ու երեխաներին, բռնաբարել կանանց: Կոտորածին մասնակցել էին նույնիսկ խմբապետերի կանայք ու սիրուհիները, որոնք առանց ամաչելու ֆայտոններով գառներ էին կրել Ղարաքիլիսա՝ յուզալի խորտիկներ պատրաստելու համար: «Երբ պարզ դարձավ, որ թուրքերը շարժվում են դեպի Փամբակ, ազգի այդ «առաջնորդները» փախան Դսեղի ուղղությամբ, -գրում է Մ. Ղազարյանը,- իսկ ողջ մնացած վարդանլեցիները, միա-

⁴⁷ ՀԱԱ ֆոնդ 227, ցուցակ 1, գործ 4, թ. 12: ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 240, թթ. 36-37:

⁴⁸ Խանզադյան Խ., նշվ. աշխ., էջ 95-96:

⁴⁹ Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 115:

⁵⁰ Նույն տեղում:

նալով տաճկական կանոնավոր զորքերին, վրեժխնդիր եղան հայերից՝ դառնալով նվաճողների ուղեցույցներն ու հավատարիմ դահիճները»⁵¹:

Արդարացնելով թուրքաբնակ գյուղերի դեմ «պատժիչ» արշավանքներ կազմակերպելու գաղափարը՝ 1998թ. Խորեն ավագ քահանայի հուշերը վերահրատարակած պրոֆեսոր Մ. Մանթրոսյանը գրում է, թե դաշնակցական «թռուցիկ խմբերը» Հայաստանի տարբեր բնակավայրերում այդ կերպ փորձում էին թուրքական հարձակումով ոգևորված մահմեդական ազգաբնակչությանը հետ պահել անհեռատես քայլերից⁵²:

Թե ինչքանով այդ մարտավարությունն իրեն արդարացրեց, այսօր դժվար է ասել: Ինչ վերաբերում է Փամբակի մահմեդականներին, ապա «պատժվեցին» միայն վարդանյեցիները, որովհետև, ըստ հավաստի տեղեկությունների, մեծաքանակ զենք էին կուտակել ու պատրաստվում էին հարձակվելու Մեծ Ղարաքիլիսայի վրա (փաստորեն «թռուցիկ խմբերի» հարձակումը կանխեց նրանց՝ փրկելով դարաքիլիսեցիներին աղետից), սակայն ծայրահեղ հայատյացությամբ աչքի ընկան շրջանի բոլոր թուրքաբնակ գյուղերը՝ Սարալը, Արջուտը, Ղանջուղագը, Հալլավալը և այլն:

Մայիսի 29-ից խաղաղ ազգաբնակչության զանգվածային տեղահանությունն ու կոտորածն ստացան պաշտոնական բնույթ: Շրջանի ողջ հայ ազգաբնակչությունը հայտարարվեց ռազմագերի, իսկ շարժական ու անշարժ գույքը՝ պետական սեփականություն: Ասկյարները խուզարկեցին տներն ու թաքստոցները, հավաքեցին տղամարդկանց, ապա երեք օր սոված պահելուց հետո 400-500 հոգանոց խմբերով դուրս բերեցին, կապկպեցին և քշեցին տարբեր ուղղություններով: Գերիների առաջին խումբը գնդակահարվեց «Բադալ-օղլու աղբիւր»-ի մոտ, երկրորդը՝ Ղարաքիլիսայից հարավ՝ «Տաք-աղբի փոսեր» կոչված վայրում, երրորդը՝ Վարդալու գյուղից ոչ հեռու, «Քարալիչի գաւօղ»-ի մոտ, չորրորդը՝ «Վանանց Ձորի» անտառում, հինգերորդը՝ Մայմեխի փեշերին, Մեծ ձոր կոչված հանքերում և Յաղուբի գյուղի Սբ Մարգիս եկեղեցու հարևանությամբ, իսկ վեցերորդը՝ Հաջիդարա գյուղի անասնազուներում⁵³:

Ջավիդ բեյը ծրագրել էր հայերին բնաջնջելու և հանցագործի պիտակից ազատվելու «հանճարեղ» ծրագիր. գերիները գնդակահարվում էին այն բարձունքներում, որտեղ երկու օր առաջ դիրքավորված էին հարձակվող թուրքերը: Այսինքն՝ փորձ էր արվում ցույց տալու, որ խաղաղ ազգաբնակչության կոտորած չի եղել, իսկ անթաղ դիակները թողել են նահանջող հայկական զորքերը: Ընդ որում, գերիները գնդակահարվում էին այն հաշվով, որ դիրքերում երկուստեք զոհերի թիվը հավասար ստացվի: Օրինակ, վեցերորդ խումբը քշվեց Հաջիդարա, որով-

⁵¹ Մանրամասն տե՛ս Խանգաղյան Խ., Հուշեր և տպավորություններ 1919թ., ծանոթագրությունները և առաջաբանն ըստ Մ. Մանթրոսյանի, Եր., 1998, էջ 86: Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 102:

⁵² Խանգաղյան Խ., նշվ. աշխ., էջ 147-148:

⁵³ Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 120:

հետև գոհված «գեալուր-էրմանի»-ների թիվն այստեղ աննշան էր⁵⁴: Կոտորելով հաջիդարացիներին՝ թուրքերը ստեղծում էին հավասար կողմերի միջև ընթացած թեժ մարտի պատրանք⁵⁵:

Ըստ Հ. Ավետիսյանի՝ այդ նախաճիւղի արդյունքում անտառներում գնդակահարվեց մոտ 4000 մարդ՝ փամբակցիներ, շիրակցիներ, Ղարաբաղիսայի հերոսամարտի օրերին գերի ընկած կամ դրանից հետո կամովին հաղթողի մեծահոգությանը հանձնված հայ սպաներ ու զինվորներ, անպաշտպան մնացած արևմտահայ գաղթականներ և այլք⁵⁶:

Բեմական այս ներկայացումը կարող է և արդյունք տար, եթե դահիճները չզլանային արձակել դիակների՝ մետաղալարերով միմյանց կապկալված ցուցամատները կամ գնդակահարեին գերիների խրամատներում և ոչ թե արգելափակեին Պապոյի անասնագույններում և վայրագորեն ողջակիզեին:

Մայիսի 30-ին Ջավիդն իրագործեց իր դիվային ծրագրի հաջորդ կետը. Ղարաբաղիսայում հայտարարվեց, թե երկաթուղու ծառայողները պարտավոր են 24 ժամվա ընթացքում ցուցակագրվել և անցնել աշխատանքի: Մոտ 500 հոգի հավատալով ցուցակագրվեց ու այլևս չվերադարձավ: Հաջորդ առավոտյան սրանց 40-50-հոգանոց խմբերով, մետաղալարերով ցուցամատներից իրար կապկալված, քշեցին Մայմեխի և Ալթուն-թախտի բարձունքները, ստիպեցին գերեզմանափոսեր փորել, ապա դրանց առջև գնդակահարեցին, այնպես որ հետին շարքերն ընկնելով ծածկեցին առաջիններին: Ժամանակակիցների վկայությամբ, այս տեսարանին ականատես օտարազգի բանվորներից շատերը խելագարվեցին⁵⁷:

Փամբակի շրջանի զինագրավման յոթերորդ օրը կարգապահությունը բանակում վերականգնվեց, իսկ զանգվածային կոտորածները զոնե ցերեկային ժամերին դադարեցին: Փոխարենը մեծ մասշտաբներ ընդունեցին գիշերային հարձակումները: «Առեղծվածայնորեն սկսեցին անհետանալ դաշտերից վերադարձող մշակներն ու գյուղական գյուղատեղերը (թուրքերը սրանցից պահանջում էին իրենց հանձնել գյուղի գեղեցկադեմ կանանց ու աղջիկներին, իսկ մերժվելու դեպքում սպանում էին)⁵⁸:

Հատկապես ահռելի մասշտաբներ ընդունեցին կանանց ու աղջիկների առևանգման ու բռնաբարության դեպքերը: «Վավաշոտ, լպիրշ տաճիկը,-հիշում է Խորեն Խանզադյանը,-իր անասնական կրքերն էր հագեցնում՝ հայ ընտանիքի պատիվը ոտի տակ տրորելով»⁵⁹: Շատ գյուղեր, իրենց իսկ՝ գյուղացիների խոստովա-

⁵⁴ Թուրք զորահրամանատար Քյազըմ Կարաբեքիրը, Հաջիդարայում թուրքական զորքերի ձախողմանն անդրադառնալով, 1919թ. հակիրճ գրել է. «...գյուղի մոտ կանայք և գյուղացիները, կացիներով զինված, կոտորում էին հետ քաշվող թուրք զինվորներին»: (Տե՛ս Копия доклада, представленного американской делегацией, возглавляемой генералом Харбордом, относительно боевых действий 15-ого Кавказского армейского корпуса в 1918 г., Эрзерум, 1919, С. 10-11.)

⁵⁵ Խանզադյան Խ., նշվ. աշխ., էջ 92-93:

⁵⁶ Ավետիսյան Հ., Հայոց ազգային միության հաղթանակը 1918 թվականի մայիս, Եր., 1998, էջ 115:

⁵⁷ ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 33, թ. 52, ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 240, թ. 44:

⁵⁸ ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 2, գործ 79, թ. 15:

⁵⁹ Խանզադյան Խ., նշվ. աշխ., էջ 94:

նությամբ, ենթարկվեցին «լիակատար բռնաբարության»: Օրինակ՝ Նալբանդը. տղամարդիկ գյուղից հեռացվեցին, իսկ կանայք բռնաբարվեցին: Ընդ որում, բռնաբարվեցին ոչ միայն ջահել աղջիկները՝ սկսած 8-10 տարեկանից, այլ նաև տարեց կանայք: Թուրքերի հեռանալուց հետո Փամբակ գործուղված հանձնաժողովների կողմից արձանագրվեցին նաև արվամուլության բազմաթիվ դեպքեր՝ օսմանյան բանակի հրամանատարական կազմի ու բուժանձնակազմի մասնակցությամբ (դիվիզիայի բժիշկ Քյամիլ-բեյ)⁶⁰:

Այսօր, ինչպես և մեկ դար առաջ պարզել, թե ինչ մասշտաբներ ընդունեց այս զագրելի երևույթը, անհնար է, որովհետև հատկապես գյուղական բնակավայրերում ազգաբնակչությունը, որպես կանոն, թաքցնում էր իր կրած անպատվության դեպքերը: Հայ կիսն իրեն սպառնացող պատվազրկությանը պատասխանեց ինքնապաշտպանության բացառիկ ձևով՝ ինքնասպանություն թունավորմամբ: Ըստ Մ. Ղազարյանի՝ այս կերպ վարվեցին օրինակ հայտնի դարաքիլիսեցի Աղաբաբյանների ընտանիքի անդամները՝ Միքայելը, նրա կինը՝ Վարդանուշը, դուստրերը՝ Զանազանն ու Հռոմսիմը (Խորեն ավագ քահանան Միքայելի այս դստերն անվանում է Հռիփսիմե)⁶¹, որդին՝ Ավետիսն իր կնոջ ու երեխաների հետ, ղշլաղցի Մայիլյանցներից՝ Աստղիկը, Լուսիկը և Զավահիրը⁶²: Թունավորմամբ ինքնասպանություն գործեցին նաև Աղաբաբյանների ու Մայիլյանցների հետ միևնույն բակում ապրող ալեքսանդրապոլցի Ծատուրյաններից Սիրանուշն ու Արուսյակն իրենց մոր հետ, և այլք⁶³:

Մայիլյան վայրագություններից հետո անթաղ մնացած դիակները շուտով սկսեցին նեխվել, և Ղարաքիլիսայում մնալը, նույնիսկ թուրքի համար, դարձավ անհնար: Միայն հունիսի կեսերին թուրքերը բարեհաճեցին դրանք թաղել փողոցների եզրերին փորված գերեզմանափոսերում⁶⁴, ևս մեկ շաբաթ անց ողջ շրջանը հայտնվեց տիֆի և խոլերայի ճիրաններում: Դրան գումարվեց նաև համատարած սովը⁶⁵: Հիվանդանոցների բացակայության պայմաններում միայն հուլիս-օգոստոս ամիսներին համաճարակին ու սովին զոհ գնաց ավելի քան 1000 մարդ: Մ. Ղազարյանի հաշվումներով, միայն Ղըշլաղում համաճարակը խլեց 378 կյանք, Դարբագում՝ 125, Հաջիդարայում՝ 286, Բզովդալում՝ 35, Յաղուբլիում՝ 48: Սեպտեմբերին տարափոխիկ հիվանդություններից մահացության դեպքերն ընդունեցին սարսափելի մասշտաբներ: Ականատեսների վկայությամբ, մեռնողներն այնքան շատ էին, որ դիակները, օրերով մնալով տներում ու փողոցներում, նեխվում էին՝ թունավորելով օդն ու ջուրը⁶⁶:

⁶⁰ ՀԱԱ ֆոնդ 202, ցուցակ 1, գործ 1271, թթ. 48:

⁶¹ Խանզադյան Խ., նշվ. աշխ., էջ 94-95:

⁶² Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 121-122:

⁶³ Իրազեկ Յ., Մօտիկ անցեալից, պատմական դեպքեր և ապրումներ, 1917-1922, Պէրյուր, 1956, էջ 31:

⁶⁴ Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 126:

⁶⁵ Նույն տեղում, էջ 134:

⁶⁶ Նույն տեղում, էջ 135:

1918թ. հոկտեմբերի 30-ին Մուղրոսում կնքված զինադադարով Օսմանյան կայսրությունը ճանաչվեց աշխարհամարտում պարտված: Ձինագրավված շրջանները վերադարձվեցին ՀՀ-ին, իսկ դեկտեմբերին այստեղ գործուղվեցին հատուկ հանձնախմբեր՝ թուրքերի հասցրած մարդկային և նյութական վնասների մասշտաբները ճշգրտելու համար:

Այս գործում հատկապես լուրջ աշխատանք ծավալեց Ալեքսանդրապոլի հայրենակցական միությունը: Համագործակցելով Ալեքսանդրապոլում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության և Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության հետ՝ այն Շիրակի և Փամբակի իր կառույցների միջոցով հավաքեց գավառին հասցված մարդկային ու նյութական վնասների մասշտաբները լուսաբանող մեծաքանակ նյութ: Դրանք ամփոփվեցին և 1918թ. դեկտեմբերի 16-ին ներկայացվեցին «Հայկական հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի» ու «Կովկասում դաշնակից պետությունների ներկայացուցչության» ուշադրությանը: Այդ ամփոփիչ զեկուցագրում լիովին ապացուցված համարվեց այն, որ թուրքական կանոնավոր զորքերի և տեղի մահմեդականների կողմից գավառում կազմակերպված զանգվածային ջարդն ու բռնություններն արդյունք են պետական մակարդակով հայ ժողովրդի հանդեպ իրագործված ֆիզիկական բնաջնջման վաղորոք ծրագրված քաղաքականության: Ձինագրավման վեց ամիսների ընթացքում Ալեքսանդրապոլ քաղաքում, Արևելյան Շիրակի և Փամբակի գյուղերում կոտորվել էր մոտ 20000 մարդ, ևս 6000-ը զոհ էր գնացել սովին ու համաճարակային հիվանդություններին: Տարբեր պատրվակներով գերվել և Օսմանյան կայսրության խորքերն էր քշվել 15000 մարդ, որից վերադարձել էր մոտ 3-400-ը, առնանգվել ու բռնաբարվել էր ավելի քան 5000 կին և օրիորդ: Մոտ 1000 կին բռնի մահմեդականացվել էր: Շատերը, չհամակերպվելով անպատվությանը, ինքնասպանությամբ վերջ էին տվել իրենց կյանքին⁶⁷:

Ահավասիկ բոլոր այն փաստերը, որոնց առկայությունն այսօր թույլ է տալիս մեզ մերժել Ալեքսանդրապոլի գավառում թուրքական ոճրագործության արդյունքներն ամփոփող պաշտոնական վիճակագրության արդյունքները:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18SH-6A007 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

⁶⁷ ՀԱԱ ֆոնդ 227, ցուցակ 1, գործ 4, թթ. 1-12: ֆոնդ 240, ց. 1, գ. 240, թթ. 36-39, 44, 48-49:

ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ УЕЗДЕ В МАЕ-НОЯБРЕ 1918 ГОДА

___ *Резюме* ___

___ *А. Айрапетян* ___

Тот факт, что массовая резня и насилие, организованные в Александропольском уезде турецкими регулярными войсками и местными мусульманами в мае-ноябре 1918 года, были результатом на государственном уровне запланированной политики физического уничтожения армянского народа, доказано давно.

К сожалению, недостатки в работе комиссий, отправленных в уезд, не дали возможности полностью раскрыть фактический масштаб османских преступлений. В современной армянской историографии число жертв этой геноцидной политики оценивается всего в 10300 человека. В то время как простое сочетание архивных документов, мемуаров очевидцев и статей, опубликованных в периодической печати, указывает на то, что это число было сильно сокращено.

Новое исследование проблемы дало нам следующие результаты: В течение шести месяцев было уничтожено более 60 деревень, около 20000 человек были убиты, а еще 6000 умерли от голода и эпидемий. Под различными предлогами около 15000 человек были захвачены и угнаны в глубь Османской империи. Более чем 5000 женщин были похищены и изнасилованы.

Տեղեկություններ հեղինակի մասին

Հայրապետյան Արմեն Մերգրյի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, Շիրակի պետական համալսարան,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, E-mail: armenani@mail.ru

*ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԱՄԵՐԻԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ԳԱՎԱՌՈՒՄ 1919-1921թթ.*

Մեծ եղենից փրկված հազարավոր արևմտահայեր ապաստանել էին Հայաստանում՝ մասնավորապես սահմանին առավել մոտ Ալեքսանդրապոլի գավառում: Մինչև 1918 թվականին թուրքերի կողմից Ալեքսանդրապոլի գավառի գրավումը հայ ժողովուրդը սեփական ուժերով՝ հայկական բարեգործական տարբեր կազմակերպությունների միջոցով, կարողացել էր սատար կանգնել իր հայրենակիցներին:¹ Սակայն 1918թ. թուրքական յաթաղանը հասել էր նաև Արևելյան Հայաստան՝ Ալեքսանդրապոլի գավառի բնակչության զգալի մասին դարձնելով փախստական: Գավառը վեց ամիս շարունակ ապրել էր թուրքական բռնազավթման պայմաններում:²

1918թ. դեկտեմբերին՝ թուրքերի հեռանալուց հետո, Ալեքսանդրապոլի գավառի տեղական իշխանությունների և հասարակության առջև ծառացած բազմաթիվ խնդիրների մեջ առաջնակարգ տեղ էր զբաղեցրել այստեղ մեծ թիվ կազմող գաղթականների խնամատարության հարցը: ՀՀ Կենտրոնական վիճակագրական բյուրոյի 1919 թվականի տվյալներով՝ Ալեքսանդրապոլի գավառում կար 31989 թուրքահայ և 2372 ռուսահայ (ընդամենը 34,361) գաղթական:³

1918թ. դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության խնամատարության նախարարության աջակցությամբ Ալեքսանդրապոլում ստեղծված գաղթականական կոմիտեն ձեռնամուխ էր եղել գաղթականության հոգաձությանը:⁴ Սակայն որոշ ժամանակ անց ակնհայտ էր դաձել, որ չնայած թափած ջանքերին, կոմիտեն ի վիճակի չէ սեփական ուժերով լուծելու օրեցօր ավելացող գաղթականության խնդիրները:⁵

Հայաստանի կառավարության՝ տարբեր երկրների ուղղված օգնություն կանչերին արձագանքել էր Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց

¹ Ալեքսանյան Կ., Ալեքսանդրապոլի հասարակական կազմակերպությունների որբախնամ գործունեությունը 1915-1918թթ., Հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջան, Գյումրի, 2007, էջ 118-123: Արևմտահայ գաղթականներն Ալեքսանդրապոլի գավառում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Փաստաթղթերի հավաքածու, կազմ. Կ. Ալեքսանյան, Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 2, Հայաստանի ազգային արխիվ, Եր., 2008, էջ 40-56:

² Ալեքսանդրապոլում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի ղեկուցումները Արտաքին գործերի նախարարին՝ ներկայացուցչության գործունեության և Ալեքսանդրապոլի գավառի դրության վերաբերյալ (1918թ. սեպտեմբեր-դեկտեմբեր), կազմ. Կ. Ալեքսանյան, Բանբեր Հայաստանի արխիվների, 2014, թիվ 1, էջ 112-149:

³ ՀԱԱ, ֆ. 127, ց.1, գ.4, թ. 20:

⁴ ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2715, թ. 1:

⁵ Ալեքսանյան Կ, Արևմտահայ գաղթականության դրությունն Ալեքսանդրապոլի գավառում 1918-1921-ին, Հայկազեան Հայագիտական Հանդես, հ. 34, Պեյրուք, 2013, էջ 83-100:

կոմիտեն: 1919թ. ապրիլի 28-ին Փարիզում մի կողմից Ամերիկյան օգնության վարչության ներկայացուցիչ Հերբերթ Հուվերի և մյուս կողմից՝ Փարիզի հայկական պատվիրակության ներկայացուցիչ Պողոս Նուբարի ու Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ավետիս Ահարոնյանի միջև կնքված համաձայնագրով նախատեսվում էր կանխել սովի հետագա տարածումը Թուրքահայաստանի և Հայաստանի Հանրապետության տարածքում, վերացնել այստեղ անիշխանության տարածումն ու հաստատել կարգականոն: Ամերիկյան կողմը հանձն էր առել նաև 5000 տոննա այլուր ուղարկել Հայաստան և շարունակել այդ տեսակ առաքումները մայիս, հունիս, հուլիս ամիսներին: Համաձայնագրում շոշափվել էին նաև մթերքի տեղափոխման ծախսերը հոգալու և դրա ճիշտ բաշխմանը նպաստող երկկողմ համագործակցությանն ու պարտավորություններին առնչվող հարցեր: Ամերիկոմի գործունեությունն ընդգրկելու էր նորաստեղծ հանրապետության ներքին կյանքի համարյա բոլոր բնագավառները՝ գաղթականների և տեղացի չքավոր բնակչության խնամատարություն, որբերի հավաքագրում և որբանոցների բացում, հիվանդանոցների, շրջիկ բուժկայանների, արհեստանոցների ստեղծում, կրթական գործի կազմակերպում, օգնություն բանակին և զինվորականներին, շինարարություն, հացահատիկի և այլ կուլտուրաների սերմացուի ձեռքբերում, ցանքի կազմակերպում, մշակում և այլն:⁶ Այս համաձայնության հիման վրա 1918թ. դեկտեմբերից գործող Ալեքսանդրապոլի ինքնավարության գաղթականական կոմիտեն 1919թ. ապրիլին լուծարվում է, և գաղթականների պարենավորման գործն իր վրա է վերցնում Ամերիկոմը:⁷

Մինչ այդ ՀՀ խնամատարության և աշխատանքի նախարար Սահակ Թորոսյանն ու Մերձավոր Արևելքի նպաստամատույց ամերիկյան կոմիտեն /ՄԱՆԱԿ/ ներկայացնող եղբեր 1919թ. ապրիլի 12-ի եկել էին համաձայնության որբերի ու որբանոցների խնամքը 1919թ. մայիսի 1-ից ՄԱՆԱԿ-ի հոգածությանը հանձնելու շուրջ:⁸ 1919թ. մայիսի 22-ին Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Լևոն Սարգսյանի և Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի տեղի ներկայացուցիչների միջև կնքված պայմանագրով Ալեքսանդրապոլի որբանոցները հանձնվում են Ամերիկոմին:⁹

Զթերագնահատելով Մերձավոր Արևելքի նպաստամատույց ամերիկյան կոմիտեի բացառիկ դերը հայ ժողովրդի ֆիզիկական փրկության գործում՝ սույն հոդվածում անդրադարձել ենք 1919-1920 թվականներին Մերձավոր Արևելքի նպաստամատույցի գործունեության քաղաքական շարժառիթներին, Հայաստանի կառավարության, տեղական իշխանության մարմինների, ինչպես նաև գաղթականության հետ ոչ ճիշտ կազմակերպված աշխատանքի, սկզբունքների տարբերության, կամայականության և այլ գործոնների արդյունքում առաջացած բարդ հարաբերություններին, այդ հարաբերությունների սարդոստայնում հայտնված որբերի ու գաղթականների վիճակին:

⁶ ՀԱՄ, ֆ. 207, ց. 1, գ. 46, թ. 96:

⁷ ՀԱՄ, ֆ. 105, ց. 1, գ. 2715, 51-52:

⁸ ՀԱՄ, ֆ. 205, ց. 1, գ. 619, թ. 1:

⁹ ՀԱՄ, ֆ. 105, ց. 1, գ. 2853, թ. 153:

Հիմնական խնդիրները, որոնք ընկած էին այդ հարաբերությունների հիմքում, նպաստի բաժանման և գաղթականների թվերի շուրջ էին ծավալվում: Նպաստի մատակարարման և բաշխման պատասխանատուն՝ այդ հարցով զբաղվող միակ լիազոր մարմինը, ԱՄՆ բանակի գնդապետ Վիլյամ Հասկելի հրամանատարությամբ գործող ամերիկյան սպաների կորպուսն էր:¹⁰ Հասկելը Երևան էր ժամանել 1919թ. օգոստոսին և մինչև աշուն իր կորպուսի և ՄԱՆ-ի քաղաքացիական անձնակազմի օգնությամբ կազմակերպել նպաստավորումը:¹¹

Հայաստանի ընդհանուր նպաստը համապատասխանաբար բաժանվել էր ըստ շրջանների, և յուրաքանչյուր շրջանի աշխատանքների ղեկավարումը հանձնարարվում էր ԱՄՆ սպաների կորպուսի մի խմբի: Ալեքսանդրապոլում նպաստամատույց աշխատանքները ղեկավարել են մայոր Լ. Դեյվիսը, գնդապետ լեյտենանտ Դ. Ռոբինսոնը, կապիտան Սոուսին և կապիտան Վորները, որը որբանոցների ու պահեստների կառավարիչն էր:¹² 1919թ. Ամերկումից ստացվող սննդի ու հագուստի բաշխումը գաղթականներին և չքավոր ազգաբնակչությանը, ըստ Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի ղեկոնման թիվ 22 գլխավոր հրամանի, զուգահեռաբար իրականացնելու էին հանրապետության խնամատարության նախարարության և Ամերկումի տարածաշրջանային ներկայացուցիչները:¹³ Նրանք միասին շրջում էին գավառներում, ճշտում կարիքավորների ցուցակները, փորձում շինություններ առանձնացնել պահեստների և սննդակայանների համար, կարգավորել հատկացվող սննդի չափաբաժինը, տեսականին և այլն: Մակայն գավառային կոմիտեներին Հայաստանի խնամատարության նախարարության բազմիցս ուղարկած շրջաբերականները, որտեղ հորդորվում էր «Ամերկումի պաշտոնյաների հետ աշխատել ամեն կերպ բարի և սերտ յարաբերութեան մեջ, կորեկտ լինել և ամեն կերպ խուսափել տարաձայնությունների, դժգոհությունների տեղիք տալուց, վկայում են Ամերիկյան կոմիտեի և իշխանության տեղական մարմինների միջև հաճախակի դարձած տարաձայնությունների մասին»:¹⁴ Պատասխանատվության ոլորտների և յուրաքանչյուր կողմին վերապահվող իրավասությունների, պարենի փոխադրության գնի, փոխհատուցումների, ապատեղեկատվության, նպաստի յուրացման և ամերիկացի որոշ սպաների կողմից որբերի ու անձնակազմի հետ վատ վարմունքի վերաբերյալ տարաձայնությունները հաճախ վերածվում էին բացահայտ առձակատումների: Ամերիկացիների գործողությունները հաճախ դժգոհություններ էին առաջացնում նաև գաղթականների մեջ:

Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր վիճակը գրեթե անհնար էր դարձնում պարենի արդարացի բաժանումը, իսկ գաղթականների անընդհատ շարժի

¹⁰ Հասկելը Հայաստանում դաշնակից տերությունների գերագույն կոմիսարն էր և Մերձավոր Արևելքի նպաստամատույց ամերիկյան կոմիտեի /ՄԱՆԱԿ/ կովկասյան մասնաճյուղի գլխավոր տնօրենը:

¹¹ Ներսիսյան Ն. Նորա, Որբաքաղաքը, Նպաստամատույց աշխատողներ, կոմիսարներ և «նոր Հայաստանը» կառուցողներ, Ալեքսանդրապոլ/Լենինական/1919-1931, Եր. 2018, էջ 63:

¹² Նույն տեղում:

¹³ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 636, թ. 301:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 855, թ. 20:

պայմաններում՝ նրանց թվի հստակեցումը: Անկազմակերպվածությունը, թալանը, գործողությունների անհամաձայնությունը հնարավորություն չէին տալիս բավարարելու գաղթականների անընդհատ ավելացող պահանջները: Հայաստան մտնող հսկայական օգնությունը չէր բավարարում գաղթականությանը: Ձեռնումները բացառելու, հատկապես գաղթականների թվի շուրջ եղած տարաձայնությունները պարզելու, պարենավորումը հասցեականացնելու նպատակով Ամերկումը ձեռնամուխ է լինում նախ գաղթականների, ապա և որբերի կենտրոնացմանը մեկ վայրում: Ալեքսանդրապոլի փողոցներից, հանրակացարաններից, մասնավոր տներից գաղթականներին տեղափոխում են Պոլիգոններ: Դուռ ու լուսամուտ չունեցող այդ շենքերում 1919-1920թթ. ձմռան ամիսներին գաղթականների տեղափոխությունը հազարավորների սովի և համաճարակներին զոհ գնալու պատճառ են դառնում: 1919 թվականի դեկտեմբերին Ամերկումի ներկայացուցիչները կտրուկ հայտարարում են գաղթականներին Պոլիգոնում կենտրոնացնելու մասին՝ սպառնալով հաց չտալ քաղաքում գտնվող գաղթականներին: Հայաստանի կառավարությունը ցանկանում էր գաղթականներին ցրել գյուղերում, քաղաքում տեղավորվածներին հաց տալ և չտեղափոխել, այլ միայն փողոցներում բաց երկնքի տակ մնացածներին տեղավորել Պոլիգոնի զորանոցներում:¹⁵ Հաց չտալու սպառնալիքով Ալեքսանդրապոլում գտնվող ամբողջ գաղթականությունը տեղափոխվում է մեկ վայր, որն իսկական սպանդանոց է դառնում նրանցից շատերի համար: Նրանց Կարսի շրջանի գյուղերն են տեղափոխում միայն այն ժամանակ, երբ Հասկելը որոշում է հրաժարվել գաղթականների խնամատարությունից, զբաղվել միայն որբերի հոգածությամբ՝ կենտրոնացնելով նրանց մեկ վայրում՝ Ալեքսանդրապոլում: Այս որոշմամբ միանգամից մի քանի խնդիր էր լուծվում, նախ՝ խնայել միջոցները, իրենց հսկողության տակ պահել, ապառնել չարաշահումներից: Նրանց համար կարևոր էր նաև դաստիարակությունը և կրթությունը, պակաս կարևոր չէին քաղաքական հաշվարկները, ցուցադրական պահը՝ ամրապնդել իրենց ազդեցությունը քաղաքականապես անկայուն Կովկասում: Ենթադրվում էր, որ Վրաստանից և Ադրբեջանից, ինչպես նաև Հյուսիսային Կովկասից օտար տարրի՝ հայ որբերի տեղափոխությունը Հայաստան դրական կդիտվեր նրանց կողմից: Ինչ վերաբերում է որբերին Ալեքսանդրապոլում կենտրոնացնելուն, ապա սա ևս ուներ իր պատճառները: Նախ այստեղ էին գտնվում զորանոցները, որոնք առանց վարձակալության տրվում էին ամերիկացիներին, երկրորդ՝ Ալեքսանդրապոլի աշխարհագրական դիրքը հնարավորություն էր ընձեռում անհրաժեշտության դեպքում երկաթուղով տեղաշարժվելու Թիֆլիս, Կարս, Մարիդամիշ ուղղություններով:

Պոլիգոնների դատարկմամբ մեծապես շահագրգռված էր նաև Հայաստանի կառավարությունը: Ձեռնամուխ լինելով որբերի կենտրոնացման գործին՝ Մերձավորարևելյան նպաստամատույցը կամաց-կամաց դադարեցրել էր գաղթականներին և չքավոր բնակչության պարենի մատակարարման գործը: Հասկելի այդ որոշումը, նպաստավոր պայմաններ ստեղծելով որբերի համար, այնուհանդերձ ծանր

¹⁵ Հառաջ, Երևան, 23 հունվարի, թիվ 16, էջ 2:

վիճակի մեջ էր գցել Ալեքսանդրապոլում կուտակված գաղթականությանը և չքավոր բնակչությանը:

Ալեքսանդրապոլում, 1920 թվականի հունվարից սկսած, սովը և համաճարակները հազարավոր արևմտահայ գաղթականների և տեղացիների մահվան պատճառ էին դարձել: 1920 թվականի հունվարի 7-ին Ալեքսանդրապոլի Բաշխման կոմիտեի նախագահ Միհրան Գրիգորյանը ՀՀ խնամատարության նախարարին ուղղված գրության մեջ, տեղեկացնելով ստեղծված հուսահատական դրության մասին, առաջարկում է կտրուկ միջոցների դիմել: Հանրապետության խնամատարության և վերաշինության նախարարությունը որոշում է Պոլիգոններում ապրող գաղթականներին տեղափոխել Կարսի շրջանի լքված գյուղերը: ՄԱՆ-ի տեղի ներկայացուցիչները մի կողմից հավաստիացնելով իրենց շահագրգռվածությունը Պոլիգոնները գաղթականներից դատարկելու գործում, մյուս կողմից՝ աննպաստ պայմաններ էին ստեղծում, անհարկի ձգձգում, զանազան կամայականությունների դիմում: Կարծում ենք՝ սա պայմանավորված էր քաղաքական շարժառիթներով: Նույն շարժառիթներով Հայաստանի իշխանությունները շտապում էին գաղթականներին վերադարձնել իրենց բնակչության վայրերը: Ինչ վերաբերում է գաղթականներին, ապա նրանք չէին ցանկանում տեղափոխվել՝ վախենալով ցրտից ու սովից, ինչպես նաև՝ անցյալի կրկնվելուց:

Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի գնդապետ Ռոբինսոնը Կոմիտեի՝ Երևանի շրջանի կառավարչին գրում է, որ գաղթականները համառում են, ձյունների մեջ են պառկում և հրաժարվում կայարան գնալուց: Ամերիկացիները դիմում են փորձված միջոցի՝ սպառնում համառողներին զրկել հացից:¹⁶ Գաղթականների փոխադրությունը կազմակերպելու նապաստակով Խնամատարության և վերաշինության նախարարի կողմից Ալեքսանդրապոլ ուղարկված Սմբատը և Մեպուհը կարողանում են իրենց հեղինակության և կազմակերպչական աշխատանքների շնորհիվ համոզել գաղթականներին: 1920 թվականի փետրվարից սկսվում և մինչև մարտի 22-ը Պոլիգոններն ամբողջովին դատարկվում են գաղթականներից: Պոլիգոններից մոտ 20 հազար գաղթականների տեղափոխվում են Կարսի շրջանի գյուղեր:¹⁷ Իսկ Պոլիգոնի շենքերը Հայաստանի կառավարությունը ՄԱՆ-ի կոմիտեի Կովկասյան ճյուղի գլխավոր շտաբի փոխգնդապետ Չ. Տելֆորդի խնդրանքով հանձնում է ամերիկացիներին, որոնք էլ հետագայում այն դարձնում են մեծ որբանոց՝ այստեղ կենտրոնացնելով բոլոր հայ որբերին՝ Ալեքսանդրապոլը վերածելով որբանոց քաղաքի:¹⁸

Որբերը ևս ստիպված են լինում տեղափոխվել: Տարբեր վայրերից նրանց տեղափոխում են Ալեքսանդրապոլ: Սակայն նրանց համար հատկապես աղետալի եղան թուրքական բռնակալման շրջանում տեղի ունեցած տեղափոխությունները: Ալեքսանդրապոլի որբանոցների 10 հազար որբերն ստիպված են լինում երկու

¹⁶ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 634, թ. 11-12:

¹⁷ Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922թթ., Փաստաթղթերի ժողովածու, կազմ. Կ. Ալեքսանյան, Եր. 2012, էջ 325-334:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 634, թ. 318:

անգամ տեղափոխվել, նախ՝ 1920թ. նոյեմբերին Ալեքսանդրապոլից Կարս և հակառակ ուղղությամբ՝ 1921թ. փետրվար-մարտին: Թուրքերն օգտվելով Ամերկումի և բոլշևիկների հարաբերություններից՝ շարունակում են հայերի ոչնչացման քաղաքականությունը: Ցարոն 1921թ. հունվարի 4-ին ՀԽՍՀ Հեղկումի նախագահին գրած իր պատասխանում հանգամանորեն թվարկում է այն պատճառները, որ իրեն ստիպել են հեռանալ Ալեքսանդրապոլից՝ հիմնականում մեղադրելով Ալեքսանդրապոլի հեղկումին և ոչ մի տող չգրելով թուրքերի առաջարկների մասին:¹⁹ Իրականում նրանք խաղաղիք դարձան թուրքերի ձեռքին՝ հնարավորություն տալով վերջիններիս ոչնչացնել հայության խլյակները:

Թուրքերից կախման մեջ գտնվող Ալեքսանդրապոլի հեղկումին դրդելով թշնամական վերաբերմունք ցույց տալ Ամերկումին՝ Կարաբեքիր փաշան հավաստիացնում է Ամերկումի ներկայացուցիչներին, որ Կարսում նրանք ավելի ապահով կլինեն, նրանց նկատմամբ ավելի լավ վերաբերմունք կլինի, նույնիսկ առաջարկում է նրանց իր ծառայությունը՝ ապահով տեղափոխելու համար Կարս: Մինչև Հայաստանի հեղկումը քայլեր կձեռնարկեր ամերիկացիներին Հայաստանում պահելու ուղղությամբ, թուրքերի եռանդուն աջակցությամբ ամերիկացիները 10 հազար որբերի հետ տեղափոխվում են Կարս:²⁰ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարսից Ալեքսանդրապոլ են վերադառնում ընդամենը 6000 որբ, կարելի է ենթադրել, թե ինչու էր Կարաբեքիրն ամերիկացիներին հավաստացնում, որ Կարսում ավելի ապահով է: Այստեղ թուրքերի խոստացած նախնական պաշտպանությունն ու ազատությունը կարճ կյանք են ունենում: Կարսում շուտով թուրքական իշխանություններն սկսում են ճնշում գործադրել ՄԱՆ-ի ղեկավարության վրա՝ պահանջելով Կարսի պահեստներում որբերի համար պահվող պարենն ու պաշարը, որոնց մի մասը իրենց օգնությամբ էին տեղափոխել Ալեքսանդրապոլից:²¹ Ավելին, թուրք պաշտոնյաներն սկսում են միջամտել որբանոցների կառավարմանն ու գործունեությանը՝ թալանելով որբանոցները: Հունվարից սկսում են պահանջել Ցարոյից՝ տանել Կարսից որբերին, թուրք որբերի համար պարեն հատկացնել, որոնք Էրզրումից պետք է տեղափոխվեին Կարս: Չնայած սահմանափակումներին և աճող պահանջներին՝ ՄԱՆ-ը շարունակում է մնալ Կարսում և շարունակել որբախնամ գործունեությունը, քանի դեռ թուրքերը վերջնագրով չեն պահանջում Կարսից բոլոր որբերին տանել Ալեքսանդրապոլ: Ոչ մի խնդրանք ձմռան կեսին որբերին տեղափոխելու դժվարությունների վերաբերյալ չի սասանում թուրքերին: Փետրվար և մարտ ամիսների ընթացքում տեղի ունեցած տեղափոխությունը տնտեսական անասելի ծանր վիճակի մեջ գտնվող Ալեքսանդրապոլ շատ որբերի համար մահացու է լինում, հատկապես փոքրիկների: Մտածելով, որ ամերիկացիները չեն կարողանա աշխատել բոլշևիկների հետ և կհեռանան Կ. Պոլիս, թուրքերը փաստորեն որբերին դատապարտում էին մահվան ու սովի, չհաշված Կարսից Ալեքսանդրապոլ 1921թ. փետրվար-մարտի մահաբեր և վտանգավոր տեղափո-

¹⁹ Ներսիսյան Ն. Նորա, նշվ. աշխ., էջ 98-99:

²⁰ Նույն տեղում, էջ 95:

²¹ Նույն տեղում, էջ 104:

խության ժամանակ ցրտից ու համաճարակից, թուրքերի ավազակային հարձակումներից զոհվածներին: Օգտվելով տեղափոխության հանգամանքից՝ թուրքերը հարձակվում են գնացքի վրա և տանում մեծ աղջիկների ու տղաներին, իսկ ավելի փոքրերը զոհ են գնում ցրտին ու համաճարակին: Գնացքներում անասունի պես լցված երեխաների մեջ համաճարակ է բռնկվում, մահացած երեխաներին ստիպված են լինում դուրս նետել գնացքի պատուհաններից, որպեսզի համաճարակը չտարածվի:²² Եվ սա այն դեպքում, երբ Հայաստանի խորհրդային իշխանությունը, Ալեքսանդրապոլի հեղկոմի գործունեությունը համարելով տեղական բնույթի և անհամապատասխան խորհրդային ընդհանուր քաղաքականությանը, կոչ է անում Ամերիկյան կոմիտեին շարունակել իր գործունեությունը:²³ Եվ ընդհանրապես, Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման առաջին օրերից, խորհրդահայ կառավարությունը հատուկ վերաբերմունք է ցուցաբերում Մերձավոր Արևելքի նպաստամատույց ամերիկյան կոմիտեի նկատմամբ՝ գիտակցելով, որ առանց նրանց օգնության հնարավոր չէ լուծել հազարավոր գաղթականների խնամատարության հարցը: Արդեն 1920 թ. դեկտեմբերի 14-ին ՀՍԽՀ հեղկոմի նախագահ Ս. Կասյանը և արտաքին գործերի կոմիսար Ալ. Բեկզադյանը Ամերիկյան կոմիտեին ուղղված գրության մեջ, խիստ ցանկալի և անհրաժեշտ համարելով կոմիտեի գործունեության շարունակությունը գաղթականների և որբերի խնամատարության գործում, խոստանում են նրան իրենց լիակատար աջակցությունը: Ավելին, առաջարկում են ՀՍԽՀ բոլոր քաղաքացիական և զինվորական իշխանություններին ցույց տալ կոմիտեի վարիչներին հարկ եղած աջակցությունը իրենց գործունեության ընթացքում:²⁴ Նույն դեկտեմբերի 14-ին Ս. Կասյանն Ալեքսանդրապոլի հեղկոմի նախագահ Մատթևոս Գրիգորյանին լիազորում է բանակցել Ամերիկյան կոմիտեի հետ նրանց գործունեության պայմանների մասին:²⁵

Ինչևէ, ապրիլի 5-ին Մերձավորարևելյան նպաստամատույցն ամբողջությամբ տեղափոխվում է Ալեքսանդրապոլ, որտեղ նրանց սպասում էին 18 հազար որբեր և սոված բնակչություն: Ավելի մեծ դժվարություններ են հանդիպում պաշարեղենը Ալեքսանդրապոլ տեղափոխելուց, քանի որ թուրքերը փորձում էին բռնազավթել դրանք իրենց կարիքների համար:

Թուրքերի հեռանալուց հետո խորհրդային իշխանությունը ձեռնամուխ եղավ գաղթականների և որբերի խնամատարությանը՝ համագործակցելով ՄԱՆ-ի հետ ևս 10 տարի:

²² Ներսիսյան Ն. Նորա, նշվ. աշխ., էջ 104:

²³ ՀԱՄ, ֆ.114, ց.1, գ.22, թ.59-61:

²⁴ ՀԱՄ, ֆ.114, ց.1, գ.22, թ.2:

²⁵ Նույն տեղում, թ.6:

**ДЕЯТЕЛЬНОСТЬ БЛАГОТВОРИТЕЛЬНОГО КОМИТЕТА БЛИЖНЕГО
ВОСТОКА В АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ ГАВАРЕ В 1919-1921 гг.**

____ *Резюме* ____

____ *К. Алексанян* ____

Статья посвящена деятельности благотворительного комитета в Александропольском гаваре, в период Первой Республики Армения.

С одной стороны представлена роль комитета в деле спасения подвергшихся Геноциду армян восточноармянских беженцев и сирот, с другой стороны существующие разногласия, разные подходы между властями Армении и представителями Америккома.

Рассмотрено сложнейшее состояние восточноармянских беженцев и сирот, оказавшихся на острие этих отношений.

Տեղեկություններ հեղինակի մասին

Ալեքսանյան Գարինե Վանիկայի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոն,
E-mail: karineal@mail.ru

*ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ
(XXդ.-XXIդ. սկիզբ)*

Շիրակի մարզի բնակեցման և գյուղական բնակավայրերի առաջացման համար կարևոր նշանակություն է ունեցել բնապատմական գործոնը: Մարզի ժամանակակից գյուղական բնակավայրերը ձևավորվել են հիմնականում XIXդ. առաջին կեսին: Ցարական կառավարության կողմից անցկացված առաջին աշխարհագրի տվյալներով՝ 1831թ. ներկայիս մարզում կար 77 գյուղական բնակավայր, որոնց բնակչության թիվը կազմում էր 20,2 հազ. մարդ¹: Մինչև XIXդ. վերջը մարզի բնակչության թիվն ավելացել է չորս անգամ, իսկ բնակավայրերը կրկնապատկվել են²: Մարզի բնակչության թվի աճը համեմատաբար դանդաղել է 1914-1922թթ., ինչը պայմանավորված էր Առաջին աշխարհամարտով, նաև 1918 և 1920-1921թթ. մարզի տարածքի՝ թուրքական բանակի բռնազավթումով: Խորհրդային տարիներին քաղաքային և գյուղական որոշ բնակավայրերում գրանցվել է բնակչության թվի կայուն աճ, իսկ 1991թ. սկսած՝ նվազում: 1926-ի համեմատ՝ 2017թ. Շիրակի գյուղական բնակչության թիվը նվազել է 1,8 անգամ, գյուղական բնակավայրերի թիվը պակասել է 20-ով³: Մկսած 1960-ական թվականներից՝ արձանագրվել են գյուղական բնակչության սոցիալ-մշակութային և ժողովրդագրական բնութագրիչների վտանգավոր միտումներ: Արժե հիշատակել, որ 1959-1988թթ. մարզի քաղաքային բնակչության թիվն ավելացել է 139,1 հազարով կամ 2,1 անգամ, իսկ գյուղական բնակչությանը՝ 10,4 հազարով կամ 11%-ով: Քաղաքային բնակչության թվի արագընթաց աճը տեղի է ունեցել հիմնականում մարզի գյուղական բնակչության հաշվին:

Հետխորհրդային տարիներին մարզի, մասնավորապես Գյումրու բնակչության զանգվածային արտագաղթը լուրջ ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ է առաջացրել: Այդ առումով տարածքային զարգացման անհամաչափությունները ՀՀ-ում, այդ թվում՝ Շիրակի մարզում, սկսել են խորանալ տնտեսական ճգնաժամին զուգընթաց՝ 1990-ական թվականներից, և հիմնականում արտահայտվում են մայրաքաղաք Երևանի ագլոմերացիայի դերի և նշանակության աճով, որի արդյունքում կենսամակարդակի տարբերությունը Երևանի և ՀՀ մարզերի միջև անընդհատ աճել է՝ վերջին տարիներին հասնելով մտահոգիչ չափերի: Տարածքային զարգացման անհամաչափությունների պատճառներից է մեր հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում փոքր և

¹ Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы (статистический сборник). Ер. Арм.гос.издат, 1962. С. 62:

² Պտոսյան Ա., ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Եր., 2013, էջ 253:

³ Նույն տեղում, էջ 256:

թույլ կարողություններով մեծաթիվ համայնքների առկայությունը: Դրանով պայմանավորված՝ ՀՀ կառավարությունը ձեռնարկել է գյուղական համայնքների խոշորացման գործընթաց: Շիրակի մարզում կազմավորվել են Աշոցքի, Մարապատի, Ամասիայի, Արմիի, Մարմաշենի, Ախուրյանի և Անիի խոշորացված համայնքները: Այժմ մարզում համայնքների (հաշվի են առնված նաև խոշորացված համայնքները) թիվը 40 է, որից 3-ը՝ քաղաքային, և 37-ը՝ գյուղական, իսկ բնակավայրերինը՝ 131: Մարզի գյուղական համայնքների խոշորացումն ինչպիսի սոցիալ-ժողովրդագրական հետևանքներ կարող է ունենալ՝ դեռ վաղ է գնահատական տալ:

Այժմ կփոքանեք վերլուծել Շիրակի մարզի բնակչության թվի փոփոխության շարժընթացը վերջին 30 տարիների ընթացքում: Աղյուսակ 1-ի թվային ցուցանիշների հաշվարկից պարզվում է, որ 1988-2017թթ. ընկած ժամանակահատվածում բնակչության բացարձակ թիվը պակասել է 124,5 հազ. կամ 34,2%-ով, այդ թվում՝ քաղաքային բնակչությանը 121,4 հազ. կամ 46,4%-ով, իսկ գյուղականը՝ 3,1 հազ. կամ 3,0%-ով: Այսինքն՝ մարզի բնակչության թվի շեշտակի անկում գրանցվել է քաղաքային բնակավայրերում, ինչը պայմանավորված է առաջին հերթին աշխատունակ տարիքի բնակչության զանգվածային արտագաղթով, բնական վերարտադրության արագընթաց անկումով և 1988թ. Մայիսակի աղետալի երկրաշարժի կորուստներով: Արժե հիշատակել, որ բնակչության թվի նվազման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Գյումրի քաղաքում: Ներկայացվող ժամանակահատվածում Գյումրու բնակչության բացարձակ թիվը պակասել է 124 հազարով կամ 52,1%-ով: Եթե 1988թ. մարզի ամբողջ բակչության 72%-ն է բնակվել քաղաքներում, ապա 2017թ.՝ 58,4%-ը: Մակայն տեղին է հիշատակել, որ մարզի բնակչության թիվը 2014-2017թթ. ընկած ժամանակահատվածում նվազել է 3,6%-ով, այդ թվում քաղաքայինը՝ 3,7, իսկ գյուղականը՝ 4,2%⁴: Այսինքն՝ գյուղական բնակչության նվազման ցուցանիշն արդեն գերազանցում է քաղաքայինը, այն դեպքում, երբ 1990-2000-ական թվականներին քաղաքային բնակչության նվազման տեմպը գերազանցել է գյուղական բնակչության թիվը:

Ներկայացվող ժամանակահատվածում մարզի տարածաշրջանների գյուղական բնակչության թվի փոփոխության գործընթացները տարբերվում են իրարից, ինչը պայմանավորված է տարաբնույթ գործոններով: Աղյուսակ 2-ից երևում է, որ տարբեր ժամանակահատվածներում բնակչության թվի էական փոփոխություններ գրանցվել են Ախուրյանի, Ամասիայի ու Արթիկի տարածաշրջաններում: Թվային տվյալների հաշվարկը ցույց է տալիս, որ էապես պակասել է Ամասիայի տարածաշրջանի բնակչությունը: Մինչև աղետալի երկրաշարժը տարածաշրջանն ունեցել է 19497 բնակիչ, իսկ 2017թ.՝ 7384: Այսինքն՝ այդ տարիներին տարածաշրջանի բնակչությունը նվազել է 12113-ով կամ 2,6 անգամ, ինչը պայմանավորված է աղբի քանակների զանգվածային արտագաղթով, սակայն տեղի է ունեցել նաև

⁴ www.arm.stat

հայերի ներգաղթ՝ հիմնականում Ջավախքի հայաբնակ գյուղերից, Շիրակի մարզից և ՀՀ այլ բնակավայրերից⁵:

Աղյուսակ 1

Շիրակի մարզի բնակչության և բնակավայրերի թվի շարժունքացը

1988-2017թթ.

Տարեթիվ	Բնակավայրերի թիվը		Բնակչության թիվը			Միջին խտությունը մարզի վրա	Գյուղական բնակչության խտությունը մարզի վրա	Գյուղերի միջին մարմնավորվածությունը
	Լուսին	Ժամուռ	Ընդամենը	ղվմաժամուռ	դրսիսմառ			
1988թ.	122	5	363839	261314	102525	135,8	38,8	840
1989թ.	128	5	319643	213415	106228	119,0	40,2	897
1995թ.	128	3	356800	241900	114900	133,0	43,7	788
2001թ.*	128	3	257242	161298	95944	96,0	35,5	749
2011թ.*	128	3	233308	137482	95826	87,1	35,5	748
2014թ.	128	3	248300	144500	103800	92,6	39,5	810
2017թ.*	128	3	239300	139900	99400	89,3	36,7	776

* առկա բնակչություն

Աղյուսակը կազմված է ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

Բնակչության թվի արագընթաց աճ գրանցվել է Ախուրյանի և Արթիկի տարածաշրջաններում: Ախուրյանի տարածաշրջանում 1988-2017թթ. ժամանակահատվածում բնակչության թիվն ավելացել է 10,5 հազարով կամ 27,7%-ով, իսկ Արթիկի տարածաշրջանում՝ 13,7 հազարով կամ 60,1%-ով: Սակայն ներկայացվող ժամանակահատվածի տարբեր տարեթվերին բնակչության թվի աճի և նվազման միտումներ են գրանցվել (տե՛ս աղյուսակ 2): Կարծում ենք՝ իրականությանը ավելի մոտ են 2011թ. մարդահամարի տվյալները, իսկ ընթացիկ հաշվառման ցուցանիշները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ մարզի առկա գյուղական բնակչության թիվը 94,4 հազ. է: Հետևաբար ներկայացվող ժամանակահատվածում բնական վերարտադրության հաշվին բնակչության այդպիսի աճ գրանցվել չէր կարող, հատկապես արտագաղթի նման տեմպի պայմաններում: Ի վերջո պաշտոնական վիճակագրությունը պետք է լուրջ շտկումներ անի բնակչության թվի հրապարակման առումով: Բնակչության արտահոսք գրանցվել է բարձրադիր գյուղական բնակավայրերից դեպի ցածրադիրը: Այժմ մարզի գյուղական բնակչության 70,2%-ը բնակվում է Արթիկի և Ախուրյանի տարածաշրջաններում: Հետևաբար, եթե Աշոցքի և Ամասիայի տարածաշրջաններում տեղին է համայնք-

⁵ Բոյաջյան Ա., Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 8, Եր., 2005, էջ 67:

ների խոշորացումը, ապա Ախուրյանի և Արթիկի տարածաշրջաններում թույլատրելի չէ:

Աղյուսակ 2

Շիրակի մարզի տարածաշրջանների գյուղական բնակչության թիվը 1988-2017թթ.

Տարածաշրջաններ	1988թ.			1995թ.		2011թ.*		2017թ.	
	Բնակավ. թիվը	Բնակչության թիվը	Մարդաշատությունը	Բնակչության թիվը	Մարդաշատությունը	Բնակչության թիվը	Մարդաշատությունը	Բնակչության թիվը	Մարդաշատությունը
Ընդամենը	128	102495	840	120966	945	95826	748	99400	776
Ախուրյան	35	38117	1155	51685	1476	38151	1090	41125	1175
Ամասիա	25	19497	750	13443	517	5625	216	5785	231
Անի	19	12526	783	15002	789	11922	627	8567	450
Աշոցք	26	6424	377	11210	448	8345	333	12154	467
Արթիկ	23	22931	1042	29626	1288	31783	1382	31769	1381

Աղյուսակը կազմված է ՀՀ ԱՎՕ տվյալների հիման վրա:

Ներկայացվող ժամանակահատվածում փոփոխություններ են գրանցվել նաև մարզի գյուղական բնակչության սեռատարիքային կառուցվածքում: ՀՀ մարզերից, 2016թ. հունվարի 1-ի տվյալներով, ամբողջ բնակչության մեջ կանանց ամենամեծ մասնաբաժինն ունեն Լոռին ու Շիրակը՝ համապատասխանաբար 53,5% և 52,5%⁶: Նույն տարում իգական սեռի էր Շիրակի մարզի գյուղական բնակչության 51,4%-ը⁷:

Շիրակի մարզի քաղաքային և գյուղական բնակչության ժողովրդագրական իրավիճակի առկա հիմնախնդիրներից է բնակչության ժողովրդագրական ծերացումը, որը մեծապես արագացել է XXIX. սկզբին⁸: Դրա լավագույն ապացույցն են աղյուսակ 3-ում ներկայացված թվային ցուցանիշները: Թվային տվյալների հաշվարկից պարզվում է, որ 2001-2017թթ. ընկած ժամանակահատվածում մարզի քաղաքային և գյուղական բնակչության տարիքային կառուցվածքում տեղի են ունեցել էական փոփոխություններ: Մարզի քաղաքային բնակչության բացարձակ թիվը պակասել է շուրջ 21,4 հազարով կամ 13,3%-ով, այդ թվում մինչաշխատունակներին՝ 13,9 հազարով կամ 33,9%-ով: Այդ երևույթը բացատրվում է հիմնականում բնակչության ծնելիության թվի նվազումով (այս հարցին կանդրադառնանք հետագայում): Այստեղից պարզ է դառնում, որ մարզի քաղաքային բնակչության ընդմիջտ արտագաղթողների թիվը չի գերազանցում ծնվածների թիվը: Քաղաքային բնակչության ծերացման ցուցանիշը նույնպես փոխվել է՝ 9,9%-ից հասնելով

⁶ Ավագյան Ա., Մանասյան Մ., ՀՀ բնակչության միգրացիան և ժողովրդագրական իրավիճակի տարածաշրջանային առանձնահատկությունները, Ֆինանսներ և էկոնոմիկա, N 3-4, Եր., 2017, էջ 120:

⁷ www.arm.stai

⁸ Ըստ ՄԱԿ-ի կողմից սահմանված ժողովրդագրական ծերացման սանդղակի, Եթե երկրի բնակչության կառուցվածքում 65 տարեկան և բարձր մարդկանց մասնաբաժինը 7%-ից ավելի է, ապա տվյալ բնակչությունը համարվում է ծերացող:

11,5%-ի: Այսինքն՝ կարելի է արձանագրել, որ մարզի քաղաքային բնակավայրերն ունեն ծերացող բնակչություն: Ներկայացվող ժամանակահատվածում աշխատունակ տարիքի քաղաքային բնակչության թիվը նվազել է 7,8 հազարով կամ 7,5%-ով:

Աղյուսակ 3

**Շիրակի մարզի քաղաքային և գյուղական բնակչության
սեռատարիքային կառուցվածքը**

Տարի	Շիրակի մարզ		քաղաք		գյուղ		քաղաք		գյուղ	
	մարդ	%	մարդ	%	մարդ	%	Տղամարդ	կին	Տղամարդ	կին
2001թ.*	257242	100	161298	100	95944	100	73859	87439	44162	51782
մինչև 15 տարեկ.	71278	27,7	41107	25,4	30171	31,4	21211	19896	15650	14521
16-64 տարեկ.	160288	62,3	104449	64,7	55839	58,1	46639	58000	24628	31211
65 և բարձր	25676	10,0	15742	9,9	9934	10,5	6009	9733	3884	6050
2011թ.*	233308	100	137482	100	95826	100	62055	75427	44908	50918
մինչև 15 տարեկ.	46187	19,7	25921	18,8	20266	21,1	13929	11992	10942	9324
16-64 տարեկ.	162540	69,6	96093	69,8	66447	69,3	42209	53884	30553	35894
65 և բարձր	24581	10,7	15468	11,4	9113	9,6	5917	9551	3413	5700
2017թ.**	239300	100	139900	100	99400	100	64496	74504	48308	51092
մինչև 15 տարեկ.	48637	20,3	27186	19,4	21451	21,5	14374	13812	9516	9043
16-64 տարեկ.	166145	69,6	96595	69,1	69550	70,0	46216	51908	34394	36019
65 և բարձր	24518	10,2	16119	11,5	8399	8,5	3906	8784	4377	6036

*առկա բնակչություն, ** մշտական բնակչություն

Աղյուսակը կազմված է ՀՀ ՄՎԾ տվյալների հիման վրա:

Ըստ 3-րդ աղյուսակի մարզի քաղաքային և գյուղական բնակչության սեռային կազմը ենթարկվել է էական փոփոխության: 2001թ. համեմատ՝ մարզի քաղաքային բնակավայրերում տղամարդկանց թիվը պակասել է 12,7%-ով, իսկ կանանց թիվը՝ 14,8%-ով: Իգական սեռի թվի նվազումը պայմանավորված է հիմնականում ծնվածների մեջ տղաների գերակայությամբ, մասնավորապես ՀՀ-ում, այդ թվում՝ Շիրակի մարզում 100 ծնված աղջկան բաժին է ընկնում 120 տղա⁹ այն դեպքում, երբ միջին ցուցանիշը պետք է լինի 100-105 հարաբերակցությամբ: Ներկայացվող ժամանակահատվածում գյուղական բնակավայրերում տղամարդկանց թիվն ավելացել է, իսկ կանանցը գրեթե չի փոփոխվել: Աղյուսակ 4-ից երևում է, որ Շիրակի մարզի բոլոր տարածաշրջաններում նկատվում է բնակչության ծերացում, բացառությամբ Անիի տարածաշրջանի: Մտահոգող է, որ տարեցտարի

⁹ www.arm.stat

պակասում է մինչաշխատունակ տարիքի գյուղական բնակչության թիվը, մինչդեռ հետաշխատունակ տարիքի բնակչության թիվն ավելանում է՝ պայմանավորված ոչ միայն վերարտադրության տարիքի տղամարդկանց արտագաղթով, այլև ծնելիության անկումով:

Աղյուսակ 4

Շիրակի մարզի 2017թ. գյուղական բնակչության սեռատարիքային կառուցվածքը (ըստ տարածաշրջանների)

	Տարած. բնակավայր	Բնակչության թիվը			Մինչև 15 տարեկան		16-64 տարեկան		65 և բարձր	
		Ընդ.	տղամ.	կին	մարդ	%	մարդ	%	մարդ	%
1	Ախուրյան	41125	20115	21010	7904	19,2	28869	70,2	4352	10,6
2	Ամասիա	5785	2836	2949	1235	21,3	4043	69,9	450	8,8
3	Աշոցք	8567	4257	4310	2054	23,9	5775	67,4	738	8,7
4	Անի	12154	6024	6130	3138	25,8	8301	68,3	715	5,9
5	Արթիկ	31769	15076	16693	7120	22,4	22562	69,1	2144	8,5
	Ընդհանուրը	99400	48308	51092	21451	21,5	69550	69,9	8399	8,6


Աղյուսակը կազմված է ՀՀ Շիրակի մարզի համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում ներառված ժողովրդագրական տվյալների հիման վրա:

Էթնոժողովրդագրական հետազոտություններում կարևոր նշանակություն ունեն բնակչության բնական վերարտադրության առանձնահատկությունները, ներքին տարածքային տարբերությունները և առկա հիմնախնդիրների բացահայտումը: Շիրակի գյուղական բնակչության թիվը տարիների ընթացքում փոփոխվել է՝ բնական և մեխանիկական շարժերի հետևանքով: Հիշատակենք, որ նախախորհրդային և խորհրդային տարիներին բարձր է եղել բնակչության ծնելիության գործակիցը, սակայն XXդ. վերջին և XXIդ. սկզբին բնակչության բնական վերարտադրությունը և միգրացիան արագընթաց փոփոխության են ենթարկվել՝ պայմանավորված բազմաթիվ բնական, սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ գործոններով: Մարզի գյուղական բնակչության ծնելիության ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է 1991թ.(1000 բնակչին՝ 25 մարդ): Սկսած 1993թ.-ից՝ գրանցվեց ծնելիության արագացող անկում: 1990-ական թվականների համեմատ՝ 2000-2013թթ. բնակչության ծնելիության մակարդակը կայունանում է, իսկ 2014թ. սկսած՝ նորից անկում է գրանցվում: Այդ անկման հիմնական պատճառն այն է, որ ամուսնական տարիք են մուտք գործում ծնելիության առումով «նվազ» 1990-ական թվականների ծնվածները, որոնց թիվը ներկայիս արտագաղթողների մեջ զգալի է: Ներկայացվող ժամանակահատվածում մահացության թվի ցուցանիշի տատանումը, համեմատած ծնելիության և բնական աճի ցուցանիշների հետ, մեծ չէ: Մարզում մահացության ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է 2017թ.՝ հազար բնակչի հաշվով՝ 10,3 մարդ: Վերջին երեսուն տարիների ընթացքում ծնելիությունը նվազել է շուրջ երկու անգամ, մահացությունը՝ 1,2 անգամ, իսկ բնական աճը՝ 7,5 անգամ: Համեմա-

տության համար հիշատակենք, որ նույնն է պատկերը մարզի քաղաքային բնակավայրերում¹⁰:

Գծապատկեր 1

Շիրակի մարզի գյուղական բնակչության
բնական վերարտադրությունը
(1000 բնակչի հաշվով)



Օգտվելով Շիրակի մարզի գյուղական համայնքների զարգացման ծրագրերի ժողովրդագրական տվյալներից՝ պարզել ենք ըստ տարածաշրջանների գյուղական բնակչության բնական վերարտադրության շարժընթացը¹¹: Գծապատկեր 1-ից երևում է, որ 1990-ական թվականներին մարզի բնակչության բնական վերարտադրության անկում է գրանցվել: Հետագա տարիներին՝ մինչև 2014թ., բնական վերարտադրությունը կայունացել է, իսկ սկսած 2015թ.-ից՝ գրանցվել են բնակչության ծնելիության անկում և մահացության աճ: Մարզում ժողովրդագրական գործընթացները պայմանավորված են 1990-ական թվականների սոցիալ-տնտեսական (հատկապես արդյունաբերության) արագընթաց անկումով, Արցախյան պատերազմով, հիմնականում քաղաքային բնակավայրերի՝ մասնավորապես Գյումրու ակտիվ վերարտադրության բնակչության զանգվածային արտագաղթով:

Պաշտոնական վիճակագրական տվյալները փաստում են, որ այդ տարիներին մարզում գրանցվել են ամուսնությունների թվի անկում և ամուսնալուծությունների թվի աճ: Այսպես, 1996թ. ամուսնությունների թիվը կազմել է 857, 2009թ.՝ 1497 և 2016թ.՝ 1048, իսկ ամուսնալուծություններին՝ համապատասխանաբար 101, 201 և 241¹²: Հիշատակենք, որ գյուղական բնակավայրերում ևս պատկերը գրեթե նույնն է¹³: Մարզում, 2014թ. սկսած, ծնելիության անկումը և մահացու-

¹⁰ Բոյաջյան Ա., ՀՀ քաղաքային բնակչության թվի շարժընթացի շուրջ (20-րդ վերջ - 21-րդ դ. սկիզբ), ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», պ. Բ, Գյումրի, 2015, էջ 93:

¹¹ Բոյաջյան Ա., Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), տեսր 5, Գյումրի, 2017:

¹² www.arm.stat

¹³ Շիրակի մարզի գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի ժողովրդագրական տվյալներ:

թյան աճը պայմանավորված են ոչ այնքան բնակչության արտագաղթով, ինչքան վերոնշյալ ժողովրդագրական գործոններով, Գյուղական բնակչության բնական վերարտադրության նման տեմպերի պահպանման դեպքում չի բացառվում, որ 5-10 տարի հետո կունենանք բնակչության բնական վերարտադրության բացասական մնացորդ: Հասկանալի է, որ մարզի քաղաքային և գյուղական բնակչության ներկայիս ժողովրդագրական միտումների պահպանումը կամ հետագա զարգացումն ամենևին չի բխում մարզի սոցիալ-տնտեսական զարգացման շահերից: Բնակչության ծերացումը ու մինչաշխատունակ տարիքի բնակչության թվի նվազումը մարզի աշխատաշուկայում լուրջ հիմնախնդիրներ են առաջացնելու, բացի դրանից՝ հարկատուների թվի նվազմանը զուգընթաց՝ էլ ավելի են մեծանալու պետության սոցիալական ծախսերը:

Աղյուսակ 5

Շիրակի մարզի գյուղական բնակչության բնական վերարտադրությունն
ըստ տարածաշրջանների. 1992-2015թթ.

Տարածաշրջաններ	Ծնվածների թիվը/1000 մարդու հաշվով/								
	1992թ.	1994թ.	1998թ.	1999թ.	2000թ.	2001թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Շիրակի մարզ	21,4	15,5	12,3	9,5	8,5	7,8	14,1	15,0	14,2
Ամասիա	17,5	13,8	10,1	7,9	5,1	8,5	17,3	16,8	13,9
Անի	22,4	16,7	13,2	11,0	9,5	8,7	15,7	18,1	15,0
Արթիկ	22,1	16,1	12,9	10,7	10,5	8,8	12,0	13,9	13,0
Ախուրյան	21,6	15,7	14,1	9,8	7,7	9,3	17,0	17,4	16,8
Աշոցք	24,2	18,2	14,5	13,0	13,0	18,0	17,6	16,9	15,7
Գյումրի	18,9	13,5	8,9	8,6	7,9	7,0	13,3	14,0	13,7
Մահացածների թիվը									
Շիրակի մարզ	6,9	7,2	6,5	6,6	6,4	6,2	10,1	10,9	10,7
Ամասիա	7,1	8,2	6,7	4,6	4,3	5,3	7,5	6,7	7,8
Անի	7,2	7,5	6,8	6,3	6,0	6,2	9,1	9,5	8,5
Արթիկ	6,8	6,5	6,3	6,0	5,5	5,8	7,9	8,3	8,3
Ախուրյան	7,0	6,1	6,4	7,1	6,4	6,8	8,5	9,8	10,0
Աշոցք	6,9	6,7	6,6	6,0	7,3	9,2	8,5	8,7	9,5
Գյումրի	5,8	6,0	6,6	6,8	6,6	6,4	12,1	13,1	12,6
Բնական աճը									
Շիրակի մարզ	14,5	9,8	5,8	2,9	2,1	1,6	4,0	4,1	3,5
Ամասիա	10,4	5,6	3,4	3,3	0,8	3,2	9,8	10,1	5,2
Անի	15,2	9,2	6,1	4,7	3,5	2,5	6,6	8,6	6,4
Արթիկ	15,3	9,6	6,6	4,7	5,0	3,0	4,1	5,6	4,7
Ախուրյան	14,6	9,6	7,7	2,1	1,3	2,5	8,5	7,6	6,8
Աշոցք	17,3	12,1	8,1	7,0	5,7	9,1	9,1	8,2	6,2
Գյումրի	8,9	6,6	2,3	1,8	1,3	0,6	1,2	0,9	1,1

Աղյուսակը կազմել են Մ. Մանասյան, Ա. Գրիգորյան, Ա. Պոտոսյան, Շիրակի մարզ (բնությունը, բնակչությունը, տնտեսությունը), Հ. Մարգարյան, Ա. Բոյաջյան... Եր., 2002, էջ 59, ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

Սակայն Շիրակի մարզի բնակչության բնական վերարտադրության ընթացքը ներկայացվող ժամանակահատվածում Գյումրիում և տարածաշրջաններ-

րում տարբերվում է: Աղյուսակ 5-ից երևում է, որ բնակչության բնական վերարտադրության ցուցանիշները բոլոր տարածաշրջաններում և Գյումրիում անկում են ունեցել: Բնական վերարտադրության ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է Աշոցքի տարածաշրջանում 1992թ.՝ 24,2‰, իսկ ամենացածրը՝ Գյումրիում 7,0‰ (2001թ.): Հաշվի առնելով մարզի՝ 1992-2017թթ. ժողովրդագրական գործընթացները՝ բնակչության թիվը բնական աճի հաշվին ավելացել է շուրջ 65 հազարով, որի կեսը բաժին է ընկնում գյուղական բնակչությանը: Այսինքն՝ միայն բնական աճի հաշվին մարզն այժմ պետք է ունենար 420 հազարից ավելի բնակչություն, սակայն 2017թ. հունվարի 1-ի դրությամբ այն կազմել է ընդամենը 239,3 հազար բնակիչ:

Գծապատկերով ներկայացնում ենք Շիրակի մարզի տարածաշրջանների մահացածների և կենդանի ծնվածների սեռային կազմը 2014-2015թթ.:

Կասկած չկա, որ աշխատունակ բնակչության արտագաղթը սերտորեն կապված է գյուղատնտեսության զարգացման հնարավորությունների հետ: Հասարակության պարենային անվտանգությունն ապահովող գործունեության մնացած բոլոր ոլորտներում կարող է զբաղված լինել այնքան մարդ, որքան կարող է կերակրել ագրարային հատվածը արտադրողական ուժերի զարգացման տվյալ պայմաններում: Այսինքն՝ գյուղատնտեսության զարգացումը կառուցվածքային քաղաքականության հաջող իրականացման նախադրյալ է¹⁴: Այս իմաստով նպատակահարմար ենք համարում սահմանել ժողովրդագրական ներուժի ինդեքսը՝ D_p , որը ցույց է տալիս տվյալ երկրում կամ նրա շրջանում, ագրարային հատվածի ներուժից կախված, բնակչության հնարավոր առավելագույն թվի P_{max} և տվյալ պահին առկա բնակչության թվի՝ P_c հարաբերակցությունը. $D_p = P_c / P_{max}$: Երկրի կամ շրջանի օպտիմալ թվի է հասնում այն դեպքում, երբ $D_p = 1$: Այդ առումով Շիրակի մարզի գյուղական բնակչության թիվն, ըստ պետական ռեգիստրի, 2017թ. կազմել է 125 հազար, իսկ առկա բնակչության թիվը՝ 99,4 հազար: Այսինքն՝ մարզի գյուղական բնակչության ժողովրդագրական ներուժը հավասար է 0,8-ի:

Շիրակի գյուղական բնակչության արտաքին միգրացիոն հոսքերի գերակշիռ մասը բաժին է ընկնում աշխատանքային միգրանտներին, ինչն էլ ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական, հոգեբանական և մշակութային առումով իր ազդեցությունն է ունեցել գյուղական բնակավայրերի զարգացման ու բնակչության թվի նվազման վրա: Արտագնա աշխատանքն ընտանիքում հանգեցրել է կնոջ ու տղամարդու գործառույթների փոփոխությանը, քանի որ ներկայումս գյուղատնտեսական աշխատանքներում հիմնականում ընդգրկված են կանայք: Բացի դրանից՝ գյուղական բնակավայրերից սեզոնային արտագնա աշխատանքի են մեկնում առավելապես ակտիվ վերարտադրության տարիքի տղամարդիկ և որակյալ աշխատուժը, որոնք ունակ են ապահովելու նյութական համեմատական բարեկեցիկ կենսամակարդակ: Տարիների ընթացքում, դրսում ձեռք բերելով աշխատանք և անշարժ գույք, նրանք սովորաբար տեղափոխում են նաև ընտանիքի անդամները:

¹⁴ Եղիազարյան Ա., Գյուղատնտեսության զարգացումը՝ որպես տնտեսության կառուցվածքային փոփոխությունների նախադրյալ, «Հանրային գիտական կառավարում» գիտական հանդես, 3, 2002, էջ 61:

րին: Այսպիսով՝ ժամանակավոր արտագաղթը որոշակի ժամանակաընթացքում կարող է վերածվել մշտականի: Նաև այդ գործոնով է պայմանավորված, որ վերջին 30 տարիների ընթացքում մարզի գյուղական և քաղաքային բնակավայրերում նվազել է մինչաշխատունակ տարիքի բնակչության բացարձակ և հարաբերական թվային մեծությունները: Դաշտային ազգագրական նյութերի քննությունը ցույց է տալիս, որ գյուղական համայնքներում բնակչության ունեցվածքային շերտավորումը՝ հարուստ-միջին-աղքատ աստիճանակարգմամբ, իր ազդեցությունն է ունեցել մասնավորապես միջին խավի արտագաղթի պատճառով¹⁵: Արտագաղթողների թվում առանձնացվում է նաև հարուստների մի խումբ, որ խոշոր գործարարությամբ է զբաղվում դրսում, հիմնականում ՌԴ-ում: Հատկանշականն այն է, որ Շիրակի այն գյուղական համայնքներում, որտեղ արտագաղթը լայն տարածում չունի, հարուստներ գրեթե չկան: Այն համայնքներում, որտեղ հարուստներ կան, նրանք վարձակալական հիմունքներով մշակում են արտագաղթող գյուղացիների հողամասերը՝ նրանց զրկելով գյուղացիական աշխատանքեր կատարելու հնարավորությունից¹⁶: Արտագաղթողների մեջ մեծ թիվ են կազմում բարձրագույն կրթություն ունեցողները, որոնք տարբեր պատճառներով ցանկություն չունեն զբաղվելու գյուղատնտեսական աշխատանքներով: Նրանց մեծ մասը դրսում զբաղված է շինարարական աշխատանքներով և առևտրով: Ուշագրավ է նաև գյուղական բնակավայրերից արտագաղթի աշխարհագրությունը: Այսպես, Ագատան գյուղական համայնքից աշխատունակ բնակչության զգալի մասը մեկնում է Սախա-Յակուտիա, Ոսկեհասկից՝ Պրիմորիեի երկրամաս և Սախալինի մարզ¹⁷: Դաշտային ազգագրական նյութերի քննությունը ցույց է տալիս, որ Շիրակի գյուղական համայնքներից բնակչության գաղթը հիմնականում կրում է միջպետական բնույթ: Սակայն վերջին տարիներին աստիճանաբար ավելանում է նաև ներպետական գաղթը, մասնավորապես գյուղից քաղաք, հատկապես գյուղից Երևանի ագլոմերացիա ուղղությամբ: Առկա են գյուղական բնակավայրեր, օրինակ, Լեռնագյուղը և Բաշգյուղը, որոնք ունեն ժամանակավոր բնակեցման նշանակություն: Այսինքն՝ գյուղատնտեսական աշխատանքների սեզոնայությամբ պայմանավորված՝ շատ թվով գյումրեցիներ, հիմնականում հասուն տարիքի, մի քանի ամսով մեկնում են Աշոցքի և Ամասիայի տարածաշրջանի գյուղական բնակավայրեր: Քիչ չէ նաև այն գյումրեցիների թիվը, որ գյուղական բնակավայրերում ունեն գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ և վարձակալական հիմունքներով տալիս են գյուղացիներին: Ի վերջո՝ գյուղական համայնքներին բնորոշ է նաև ճոճանակային և միջադեպային արտագաղթը¹⁸:

¹⁵ Բոյաջյան Ա., ԴԱՆ, տետր 5, Գյումրի, 2017:

¹⁶ Նույնը:

¹⁷ Բոյաջյան Ա., ԴԱՆ, տետր 5, Գյումրի, 2017:

¹⁸ Ճոճանակային գաղթն ընդգրկում է հարևան բնակավայրերի միջև օրվա կամ շաբաթվա ընթացքում աշխատանքային ներուժի շարժը: Միջադեպային գաղթ բուժման, գործուղման, հանգստի նպատակով գաղթ:

Գծապատկեր 2

Շիրակի մարզի գյուղական բնակչության միգրացիայի մնացորդ
1995-2016թթ. (հաշվարկները 100 մարդու հաշվով)¹⁹:



Արժե հիշատակել, որ ՀՀ միգրացիայի սալդոյի ամենաբարձր բացասական գործակիցներն ունեցել են Լոռու և Շիրակի մարզերը: Այսպես, 2005-2010թթ. Լոռու մարզի միգրացիայի մնացորդը տատանվում է 2-3%-ի սահմաններում, իսկ Շիրակի մարզում՝ 1,5-2,0%:

Աղյուսակ 6

Շիրակի մարզի գյուղական բնակչության 2016թ. գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվածների և սեզոնային արտագնա աշխատանքի մեկնածուների թիվն ըստ տարածաշրջանների²⁰

	Տարած. բնակավայր	Ընդամենը	16-64 տարեկան	Զբաղվածների թիվը	Գործազուրկներ	Տնային տնտեսություններ	Տնտեսական օգուտ ունեն արտագնա աշխատանքի մեկնածուներ	Արտագնա աշխատանքի մեկնողների թիվը
1	Ախուրյան	41125	28869	13001	6303	11925	2610	7847
2	Ամասիա	5785	4043	3731	1100	1822	7627	1029
3	Աշոցք	8567	5775	5657	1343	2607	726	941
4	Անի	12154	8301	6784	1001	4058	1756	2810
5	Արթիկ	31769	22562	11052	4792	7300	3615	5337
	Ընդհանուրը	99400	69550	40225	14539	27712	16334	17964

Աղյուսակ 6-ի թվային տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի գյուղական աշխատունակ տարիքի բնակչության 57,8%-ը ունի զբաղվածություն, 20,9%-ը գործազուրկ է, իսկ 25,8%-ը մեկնում է սեզոնային արտագնա աշխատանքի: Հիշատակենք, որ երեք գյուղացիական տնտեսությունից երկուսն ունեն արտագնա աշխատանքի մեկնողներ: Շիրակի մարզի 2016թ. գյուղական աշխատունակ բնակչության թվի 25,8%-ը մեկնում է սեզոնային արտագնա աշխատանքի, այդ

¹⁹ Ավագյան Ա., Մանասյան Մ., ՀՀ բնակչության միգրացիան և ժողովրդագրական իրավիճակի տարածաշրջանային առանձնահատկությունները, Ֆինանսներ և էկոնոմիկա, 3-4, էր., 2017, էջ www.arm.stat

²⁰ Աղյուսակում օգտագործվել են Շիրակի մարզի 2017-2021թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի տվյալները:

թվում՝ ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է Անիի տարածաշրջանում՝ 33,9%, իսկ ամենացածր՝ Աշոցքի տարածաշրջանում՝ 16,3%:

Արտագնա աշխատանքի մեկնողները, ըստ մեր կողմից անցկացված սոցիոլոգիական հարցումների, ամսական միջինը 700 ամերիկյան դոլարին համարժեք գումար են ուղարկում իրենց հարազատներին²¹: Այդ առումով, մեր կողմից կատարված մոտավոր հաշվարկով, 2016թ. մարզի սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողները տարեկան միջինը 42,7 մլրդ դրամ են ուղարկում հարազատներին: Դրսում վաստակողները, որպես կանոն, խուսափում են գումարները գյուղատնտեսության մեջ ներդնելուց՝ դա համարելով ռիսկային²²:

Շիրակի մարզի պետական փաստաթղթերը պետք է ունենան գյուղական և քաղաքային բնակչության մանրամասն ու տարբերակված սոցիալ-ժողովրդագրական բնութագիր և առանձնացնեն սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական թիրախները: Այս առումով լրջագույն ժողովրդագրական խնդիրների առաջ են կանգնած հատկապես Շիրակի սահմանամերձ գյուղերը և Սարապատի խոշորացված համայնքը, որտեղ արտագաղթը նաև պետության կողմից իրականացվող ոչ հստակ սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական քաղաքականության հետևանք է:

ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ СЕЛЬСКОГО НАСЕЛЕНИЯ ШИРАКСКОГО МАРЗА (XXв.–начало XXIв.)

___ Резюме ___

___ А. Бояджян ___

В постсоветское время массовые миграции городского и сельского населения сформировали серьезную демографическую и социально-экономическую проблему. Среди сельского населения выросло число мужского населения, а число женского – почти осталось неизменным. Во всех районах марза население заметно стареет, исключение составляет район Ани. Старение населения и сокращение числа трудоспособного населения марза в дальнейшем формирует серьезные проблемы на рынке рабочей силы, кроме этого государство в условиях снижения числа налогоплательщиков из года в год будет вынуждено добавлять социальные затраты. Перед серьезными демографическими проблемами в основном стоят пограничные села марза и укрупненная община Сарапата.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Բոյաջյան Արտաշես Պետրոսի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, Շիրակի պետական համալսարան,
E-mail: a.bojajyan@mail.ru*

²¹ Բոյաջյան Ա., ԴԱՆ, տետր 5, 2016:

²² Նույնը:

Աստղիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄԻԱԲԵՎԵՌԱՅՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ԸՍՏ PAX AMERICANA ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ

(մերձավորարևելյան քաղաքականության օրինակով)

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո միջազգային հարաբերություններում բազմաթիվ համակարգից անցում կատարվեց երկբևեռայնության, որտեղ մոտ 5 տասնամյակ՝ Սառը պատերազմի¹ ամբողջ ընթացքում գերակայում էին ԱՄՆ-ն ու ԽՍՀՄ-ը՝ որպես միանգամայն ինքնիշխան պետություններ, որոնք, ըստ քաղաքական ռեալիզմի միջազգային դպրոցի ներկայացուցիչների, հավասարակշռում էին միմյանց այդ մրցավազքում²:

ԽՍՀՄ-ի և սոցիալիստական ճամբարի գոյության դադարումից հետո 1990-ականների առաջին հնգամյակը դարձավ երկբևեռ աշխարհակարգի կազմալուծման և միաբևեռայնության ձևավորման շրջան: Այս կերպափոխման յուրահատկությունն այն էր, որ չնայած լուրջ հակամարտություններին և էսկալացիաներին, անցումը միջազգային հարաբերությունների որակապես նոր՝ միաբևեռայնության փուլ տեղի ունեցավ առանց համաշխարհային ճգնաժամերի և լայնածավալ ռազմական գործողությունների, ինչպիսիք եղան միջազգային հարաբերությունների Վետսֆայան, Վիեննայի, Վերսալ-Վաշինգտոնյան և Յալթա-Պոտսդամյան համակարգերի ձևավորման դեպքում:

Նոր աշխարհակարգի ձևավորումն ուղեկցվում էր միջազգային հարաբերությունների տարբեր դպրոցների և տեսությունների ներկայացուցիչների շրջանակներում համաշխարհային քաղաքականության վերաձևակերպմանը վերաբերող տարբեր դիրքորոշումների առաջացմամբ: Օրինակ, ըստ քաղաքական նեոռեալիզմի դպրոցի և պաշտպանողական ռեալիզմի տեսության հիմնադիր Ք.Ուոլցի, չնայած ուժերի և ուժային կենտրոնների բաշխման փոփոխություններին, միջազգային հարաբերությունների բնույթը շարունակեց մնալ անարխիկ, քանի որ պետությունները, ելնելով անվտանգության նկատառումներից, շարունակեցին առաջնորդվել «ինքնօգնության սկզբունքով»: Նա գտնում էր, որ միաբևեռայնությունը ժամանակավոր երևույթ է, քանի որ վաղ թե ուշ ԱՄՆ-ն ամենուրեք ունեցած իր գերակա

¹ Холодная война / Егорова Н. И. // Хвойка-Шервинский. - М. : Большая российская энциклопедия, 2017. С. 132. (Большая российская энциклопедия : [в 35 т.] / гл. ред. Ю. С. Осипов ; 2004-2017, т. 34). Սառը պատերազմը 2-րդ աշխարհամարտի ավարտից մինչև Խորհրդային Միության՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի գոյության դադարումն ընկած ժամանակահատվածն էր, որին բնորոշ էր միջուկային գերտերություններ հանդիսացող ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի գլխավորությամբ սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման տարբեր ուղիներով ընթացող պետություններից ձևավորված բլոկների միջև ոչ ուղղակի առձևակատումը: Այն արտահայտվում էր գաղափարախոսական, սոցիալ-մշակութային, տնտեսական, ռազմական և քաղաքական հարթություններում՝ ուղեկցվելով արևմտյան և արևելյան ռազմաքաղաքական բլոկների միջև սպառազինությունների մրցավազքով և ուղղակի ռազմական գործողությունների չվերաճող տեղային բնույթի պատերազմներով:

² Varisco 2013; *The Impact of the "Unipolar Moment" on US Foreign Policies in the Mid-East*

դիրքերից բխող գործողությունների հետևանքով պատճառ էր հանդիսանալու նոր ուժերի, եթե ոչ բևեռների առաջացմանը: Համաձայն Ուոլցի՝ ԱՄՆ-ի գլոբալ գերակայությանն ավելի շուտ վերջ կտրվի, եթե նա սկսի հետապնդել ազգային անվտանգության և պետական շահերի տեսանկյունից պակաս կարևորություն ունեցող կամ ծայրամասային շահեր: Մասնավորապես նմանօրինակ «չարաշահում» համարվում էր ռազմական ճանապարհով ժողովրդափշխանության ներդրումը և տարածումը, ինչն էլ լավագույնս արտահայտվեց Ջ. Բուշ Կրտսերի Իրաքյան քաղաքականության ընթացքում՝ իբրև, այսպես կոչված, Բուշի դեկտրինայի առանցքային ուղղություն³:

Գրեթե նույնատիպ տեսակետ է հայտնում «հարձակվողական ռեալիզմի» հայր Ջ. Մերշալերը: Ըստ նրա՝ հետսառնապատերազմյան շրջանում լավագույն ռազմավարությունը զսպվածություն ցուցաբերելն է, քանի որ հնարավոր չի լինելու կանխել նոր ուժերի և կենտրոնների ի հայտ գալն ապագայում, և հնարավորինս շատ պարտավորություններ բարդելն է առաջացող նոր ուժերի վրա, քանի դեռ դրանք վերջնականապես չեն հրահրել ԱՄՆ-ի ուղղակի միջամտությունը որևէ հարցում⁴: Անհրաժեշտ էր միջազգային հարաբերությունների համակարգում գերակայելու ձգտումները չափավորել, քանի որ նման փորձերի դեպքում «արևի տակ առավել մեծ տեղ գտնելու» քաղաքականության ծախսը հաճախ ավելի մեծ է լինում, քան թե շահույթը:

Նեոռեալիզմի երկու ուղղությունների ներկայացուցիչներն էլ կարծում էին, թե միաբնեռ աշխարհակարգն անկայուն է, իսկ ԱՄՆ-ի՝ իր գերակայող դիրքերի պահպանման համար անհրաժեշտ հսկայական միջոցների ծախսումը հնարավոր է, որ երբեմն նաև չտա սպասված արդյունքը:

Ինչպես ռեալիզմի դպրոցի, այնպես էլ նեոլիբերալիստական տեսության ներկայացուցիչները, կարծում էին, թե միջազգային հարաբերությունների գլխավոր դերակատարները պետություններն են՝ արտաքին քաղաքականության իրականացման հիմնաքար հանդիսացող իրենց պետական շահերով: Ընդունելով միջազգային հարաբերությունների անարխիկ բնույթը՝ այնուամենայնիվ գտնում էին, որ գլոբալիզացիայի և միաբնեռայնության պայմաններում անհրաժեշտ է ձևավորել որոշակի նորմերի համակարգ, որ պետք է երաշխավորեն ոչ թե միայն մի քանի, այլ բոլոր պետությունների շահերը: Օրինակ, ըստ Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր Ռ. Փեյփի, միջազգային կառույցների միջոցով ԱՄՆ-ը կարող էր ոչ ուղղակիորեն և առավել արդյունավետ, կիրառելով փափուկ ուժ, ազդել այլ պետությունների վրա, ինչպես նաև թույլ չտալ նոր ուժերի առաջացումը՝ խուսափելով ռազմական խոշոր ծախսերից և հնարավոր առճակատումներից⁵:

³ Waltz K. "Structural Realism After the Cold War", *International Security* Vol. 25, No. 1 (Summer, 2000), *The MIT Press*, www.mitpressjournals.org: Ուոլցը կասկածի տակ էր առնում այն, որ Մաոն պատերազմի ավարտը հանգեցնելու էր ժողովրդավարության հաղթանակին, տնտեսական ամբողջական ինտեգրացիայի և հավերժական խաղաղության հաստատմանը՝ հաղթահարելով միջազգային հարաբերությունների կոնֆլիկտային բնույթը:

⁴ Mearsheimer J. *Foreign affairs* "The Future of the American Pacifier", *Foreign Affairs*, Vol. 80, No. 5 (Sep. - Oct., 2001), www.foreignaffairs.com

⁵ Pape R. *Soft Balancing against the United States*. *International Security* 30. No.1 (Summer, 2005). P. 7-8

90-ականներին ամերիկյան քաղաքագիտական շրջանակներում առաջացան տեսություններ, որոնք, չնայած իրենց հակասական բնույթին, որոշ առանցքային հարցերում մեկտեղվում էին: Հարվարդի իրավաբանական դպրոցի միջազգային իրավունքի բաժնի պրոֆեսոր, Բ. Օբամայի նախագահության տարիների ԱՄՆ-ի պետդեսպարտամենտի ռազմավարական պլանավորման բաժանմունքի նախկին տնօրեն Է. Մ. Սլոթերի կարծիքով, գլոբալիզացիայի պայմաններում անհրաժեշտ էր անցում կատարել միջազգային հարաբերությունների հնացած հայեցակարգերից և ազգային պետությունների շարունակական գոյության պայմաններում ստեղծել վերապետական կառավարում (transgovernmentalism)⁶, երբ պետությունները իրենց գործունեության ոլորտների ղեկավարման որոշակի հատվածներ պետք է փոխանցեին միջպետական մարմինների կառավարմանը⁷:

Մյուս հակառակ՝ Կրաութհամմերի կարծիքով, միջազգային հարաբերություններում կարգուկանոն պահպանելու համար ցանկալի և անհրաժեշտ կլինեին, որ ԱՄՆ-ը հետամուտ լինեի միաբևեռ գերակայության հաստատմանը՝ քառսից խուսափելու նպատակով, քանի որ միայն նա ուներ դրա համար անհրաժեշտ տնտեսական, ռազմական, դիվանագիտական և քաղաքական ներուժ (ինչն էլ, ի դեպ, հետսառնալատերազմյան շրջանում իր առաջին արտահայտությունը ստացավ մերձավորարևելյան թատերաբեմում՝ Օոցի առաջին ճգնաժամի և «Անապատի վահան» ու «Փոթորիկ անապատում» գործողությունների ժամանակ (1990-1991թթ.))⁸: Կրաութհամմերը կարծում էր՝ աշխարհը թևակոխել է «ուշ նորմալ» ժամանակաշրջան, և անվտանգության միակ հույսն ու երաշխիքը ԱՄՆ-ի հզորությունն ու կամքն է՝ առաջնորդելու միաբևեռ աշխարհը՝ սահմանելով նոր աշխարհակարգի կառուցման սեփական կանոններ: Ուստի վերապետական կառավարման վերաբերյալ վերոնշյալ դեմոկրատ-գլոբալիստական, իդեալիստական մոտեցումն անհիմն էր համարվում առկա աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում: Կրաութհամմերը չէր բացառում, որ բազմաբևեռայնություն կառաջանա ժամանակի ընթացքում, սակայն ներկա պահին ԱՄՆ-ը՝ երկրորդ կարգի հզորության պետությունների համաձայնությամբ, պետք է ստանձնի առաջնորդողի իր դերը, ինչն էլ տևելու է, սակայն, ոչ ավելի, քան 3-4 տասնամյակ: ԱՄՆ-ի գլոբալ հեգեմոնության այդ շրջանը Կրաութհամմերն անվանեց «միաբևեռայնության պահ» (unipolar moment)⁹:

Սլոթերին և Կրաութհամմերին միավորում էր այն, որ երկուսն էլ կարծում էին, թե ՄԱԿ-ը «ուշնչի երաշխավորն է», ի գործու չէ լուծելու տնտեսական և ստրատեգիական հիմնահարցերը, և որևէ պետություն իր ինքնիշխանության զգալի հատված

⁶ Slaughter A. *The real New world Order, Foreign affairs*, vol. 76, No.5 (Sept-Oct), 1997, P. 183-184, Տվյալ դեպքում պետական/կառավարական ինստիտուտների նկատմամբ վերահսկողությունը պետք է տրվեր պետությունների քաղաքացիներին, որոնց առջև կառավարությունը պետք է հաշվետու լինեի իր վերապետական և ներպետական ոլորտում կատարած գործողությունների համար:

⁷ Նույն տեղում, էջ 186:

⁸ Charles Krauthammer. *The Unipolar Moment. Foreign Affairs*. Vol. 70. No. 1. *America and the World 1990/91 (1990/1991)*. P. 33; Council on Foreign Relations Stable URL: www.jstor.org.

⁹ Krauthammer Ch. *The Unipolar Moment Revisited. The National Interest* No. 70 (Winter 2002/03), P. 1, 2 www.jstor.org.

չի փոխանցելու տվյալ կազմակերպությանը, ուստի գլոբալ անվտանգության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ էր, որ ԱՄՆ-ը հանդես գար որպես համաշխարհային կայունության և անվտանգության երաշխավոր:

Ինչ վերաբերում է «միաբնեռայնության պահ» ասվածին, ապա, ըստ Ք. Լեյնի, սկսած Յալթա-Պոտսդամյան համակարգի ձևավորումից, սա երկրորդ նմանատիպ շրջանն էր ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական իրականության մեջ: Երկրորդ աշխարհամարտից հետո ԽՍՀՄ ազդեցության գոտուց (Pax Sovietica) դուրս գտնվող շրջաններում ԱՄՆ-ը՝ դառնալով իր ռազմական ու տնտեսական գերազանցության շնորհիվ անվիճարկելի գերակայող դերակատար, ձևավորեց միջազգային հարաբերությունների մի համակարգ, որը մասնագիտական գրականության մեջ հայտնի դարձավ որպես Ամերիկյան խաղաղություն (լատ.՝ Pax Americana)¹⁰: Սա 1945թ. հետո ԱՄՆ-ի քաղաքական, տնտեսական և գաղափարական ազդեցության ներքո գտնվող Արևմտյան Եվրոպայում, Արևելյան Ասիայում և Արաբական թերակղզու երկրներում հարաբերական խաղաղության շրջանն էր, որի կենսունակության չորս հենասյուններն էին՝ նախևառաջ ԱՄՆ-ի ռազմական գերակայությունը, ապա տնտեսական առաջնությունը, նաև փափուկ ուժի քաղաքականությունը և Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո հիմնականում ԱՄՆ-ի նախաձեռնությամբ ստեղծված միջազգային կառույցների գործունեությունը:

Միաբնեռայնության պայմաններում գոյացած ուժային վակուումում ԱՄՆ-ը փորձեց կիրառել Pax Americana մոդելը իր աշխարհաքաղաքական շահերի կյանքի կոչման և տարածաշրջանային կարգի վերաձևակերպումների նպատակով: ԱՄՆ-ի համաշխարհային գերակայության գաղափարը ձևավորվեց Ջ.Բուշ Ավագի օրոք, կայացման և զարգացման բավական բարդ շրջան անցավ Քլինթոնի նախագահության տարիներին և իր գագաթնակետին հասավ Ջ. Բուշի նախագահ ընտրվելով, երբ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը վերաձևակերպվեց 2001թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո¹¹:

Այնուամենայնիվ նոր ձևավորվող միաբնեռայնությունը ենթադրում էր փոքր-ինչ այլ շեշտադրումների որդեգրում: Այսպես, օրինակ, 1991թ. սեպտեմբերի 23-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 46-րդ նստաշրջանում Բուշ Ավագը հայտարարեց, որ ԱՄՆ-ը չունի որևէ մտադրություն վերադառնալու իզոլացիոնիզմին և Pax Americana-ին: Փոխարենը նա առաջարկում էր հաստատել Pax Universalis՝ փոխադարձ համագործակցություն՝ պարտավորությունների, արժեքների և հավակնությունների հիման վրա¹²: Չնայած փոխակերպված շեշտադրումներին՝ այնուամենայնիվ, ռազմական ներուժը շարունակեց մնալ որպես «ամերիկյան խաղաղության» հիմնաքար և քաղաքական ու տնտեսական շահերի ապահովման գրավական:

¹⁰ Layne Ch. *This Time It's Real: The End of Unipolarity and the Pax Americana*. *International Studies Quarterly*. Vol. 56. No. 1 (March 2012). P.204., www.jstor.org.

¹¹ Gary J. Dorrien. *Imperial designs: Neoconservatives and the New Pax Americana*. New York. 2004. P.1.

¹² President Bush annual UN address. 23 september 1991, 46th session of the UN general Assembly.

Հետպատերազմյան Pax Americana-ի երկրորդ ալիքը կայացավ երկու փուլով. առաջինը Սառը պատերազմի ավարտը կանխանշող Բեռլինի պատի տապալումն էր, որը խորհրդանշեց ԱՄՆ-ի գլխավորությամբ Արևմուտքի քաղաքական, տնտեսական և գաղափարական հաղթանակը, իսկ երկրորդը Ծոցի ճգնաժամն էր, որն էլ իր հերթին նախանշեց ԱՄՆ-ի շարունակաբար աճող ռազմական գերակայությամբ¹³ և տարածաշրջանային կարգի փոփոխության միտումներով բնութագրվող նոր ժամանակաշրջանի սկիզբը¹⁴: Այնուամենայնիվ, երբ Ծոցի ճգնաժամի հետևանքով ԱՄՆ-ը, ՄԱԿ-ի հովանու ներքո ունենալով միջազգային հանրության աջակցությունը և առաջնորդելով դաշնակիցների ուժերը, մտավ Իրաքի կողմից օկուպացված Բուվեյթ, սրանով ավելի շուտ ցուցադրեց սեփական ուժի անպարտելիությունը: Արդյունքում ստացվեց, որ ԱՄՆ-ն իր դաշնակիցների հետ պարտության մատնեց բռնակալ ագրեսորին Մերձավոր Արևելքում՝ ազատագրելով հավատարիմ դաշնակցին, սակայն միևնույն ժամանակ չհեռացնելով Սադդամին իշխանությունից, իսկ Բուվեյթում էլ իր հերթին չամրապնդելով ժողովրդավարությունը և վերականգնելով ցեղապետերի իշխանությունը ներկայացուցչական կառավարության փոխարեն:

Ինչ վերաբերում է տարածաշրջանում ամերիկյան Pax-ի կայացման քլինթոնյան փուլին, ապա այստեղ կային զգալի տարբերություններ առկա հռետորաբանության և կատարված քայլերի միջև: Տարածաշրջանային քաղաքականության առանցքային ուղղություններն էին արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորումը և Իրաքի ու Իրանի նկատմամբ «Կրկնակի զսպման» քաղաքականությունը: ԱՄՆ-ն այս առումով վարում էր օրակարգային հարցերի միջազգայնացման, բազմակողմ դիվանագիտության, ինչպես նաև արաբա-իսրայելյան խաղաղության գործընթացում առաջատարի դիրքերի պահպանման քաղաքականություն: Քլինթոնի նախագահության առաջին իսկ ամիսներից ակնհայտ դարձավ, որ ԱՄՆ-ի համար առաջնահերթություն էր համարվում աշխարհատնտեսական և խաղաղօվկիանոսյան հարցերի կարգավորումը: Արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորման հարցում ԱՄՆ-ը նախընտրելի համարեց հիմնախնդրի տեղայնացումը /լուկա-

¹³ Ferry T. *Pax Americana and Middle East Regional Order*. apr. 13, 2013. *E-International Relations*. www.e-ir.info. Pax Americana-ի այս ալիքը հանգեցրեց տարածաշրջանային ռազմավարությունում պարադիգմային փոփոխությունների: Մասնավորապես, փոփոխության ենթարկվեց ոչ միայն «թշնամի» եզրույթի ընկալումը. ԽՍՀՄ-ին փոխարինեցին ՁՈԶ և դրանց տեղափոխման միջոցներ ձեռք բերած ու տարածաշրջանային գերակայության ձգտող պետությունները, այլ նաև շահերի պաշտպանության տեսանկյունից ուժի կիրառման վերաբերյալ դիրքորոշումը: Այսպիսով, փոփոխություն տեղի ունեցավ ոչ միայն ռազմական ուժի կիրառման, այլ նաև տարածաշրջանային նախկին կարգի պահպանման առումով, ինչն էլ լավագույնս արտահայտվեց Ծոցի առաջին ճգնաժամի պարագայում:

¹⁴ Martin K. *US Military Policy in the post cold war era*. P. 138-139; Ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ տարածաշրջանային կարգի կայացման վրա, բացի 1963 և 1973թթ. արաբա-իսրայելական պատերազմներից, իրենց ազդեցությունն ունեցան հատկապես Իրանում իսլամական հեղափոխությունը և Իրան-Իրաքյան պատերազմը: Վերոնշյալ երկու ճգնաժամներից ոչ մեկն էլ չի իրականացվել ԱՄՆ-ի միջամտությամբ: Նշանակում է, որ չնայած արևմտյան պետությունների ջանքերին, նրանցից ոչ մեկն էլ չի կարողացել ամբողջական գերակայության հասնել Մերձավոր Արևելքում:

լիզացում/, քանի որ ԱՄՆ-ը պարզապես խելամիտ չէր համարում ժամանակի և ռեսուրսների չափից դուրս վատնումը հարցի լուծման ձգձգման պատճառով, ինչի շնորհիվ էլ այս քաղաքականությունը ստացավ «ոչ ծախսատար Pax Americana» անվանումը: Այսպիսով, Քլինթոնի նախագահության առաջին շրջանում փորձ էր արվում միջազգային հարաբերություններում պահպանել status quo-ն՝ կայունությունը ամերիկամետ պետություններում, գերակայությունը Մոցում և առանց մեծածավալ ռազմական և դիվանագիտական ռեսուրսների՝ պաղեստինա-իսրայելական փխրուն հավասարակշռության ապահովումը¹⁵:

Այնուամենայնիվ, Քլինթոնի նախագահական երկրորդ շրջանի քարոզարշավից սկսած, տարածաշրջանում Pax Americana-ի հաստատման ջանքերն սկսեցին ձախողվել¹⁶: Եթե Քլինթոնի նախագահության առաջին տարիներին Իսրայելը, իսկ մյուս կողմից՝ Պաղեստինն ու Հորդանանը բանակցություններն իրականացնում էին ինքնուրույն և նախաձեռնությունների ցուցաբերմամբ, իհարկե, ԱՄՆ-ի ոչ ուղղակի մասնակցությամբ և խրախուսմամբ, ապա 2-րդ փուլում Յ. Արաֆատի և Բ. Նեթանյահուի միջև վստահության բացակայությունը հանգեցրեց ԱՄՆ-ի առավել ակտիվ ներգրավմանը բանակցային գործընթացներ: Աննշան ձեռքբերում կարելի էր համարել Ուայ-Ռիվերի համաձայնությունը, որը, սակայն, սառեցվեց Նեթանյահուի կողմից, իսկ երկրորդ ինթիֆադան փոշիացրեց հիմնախնդրի կարգավորման հեռանկարները:

Pax Americana հայեցակարգի ամրապնդման հաջորդ ուղղությունն Իրանի և Իրաքի Կրկնակի զսպման քաղաքականությունն էր: Ըստ ազգային անվտանգության հարցերով նախագահի խորհրդական Ա. Լեյքի՝ թշնամական (backlash states) համարվող Իրանի և Իրաքի նկատմամբ զսպումը և ԱՄՆ-ի ազդեցության տարածումն իրականացվում էին 3՝ մեկուսացման, ճնշման և դիվանագիտական ու տնտեսական պատժամիջոցների կիրառման մեթոդներով¹⁷: Տվյալ քաղաքականությունը

¹⁵ Hadar L. The Real lesson of the Oslo accord: "Localize" the Arab-Israeli conflict. Cato Institute foreign Policy Briefing, No.31. May 9, 1994. P.2.

¹⁶ Freedman R. U.S. Policy toward the Middle East in Clintons Second term. P. 55. Rubin Center. Research in Intrnational Affairs. www.rubincenter.org: ԱՄՆ-ի գլխավորությամբ 1993 և 1995թթ. Օսլոյի համաձայնագրերով ամրագրված բազմակողմ դիվանագիտությանը առաջին հարվածը իսրայելցի կրոնական մոլեռանդի կողմից վարչապետ Յիտժակ Ռաբինի սպանությունն էր, ապա նույն թվականին Համասի կողմից կազմակերպված ահաբեկչության արդյունքում ներքաղաքական մեծ աջակցություն ստացավ Օսլոյի գործընթացին ոչ կողմ և կոշտ զծի հետևորդ Բ. Նեթանյահուն, որը Կոնգրեսում վայելում էր մեծամասնություն կազմող հանրապետականների աջակցությունը:

¹⁷ S. Mohsen Mirhosseini. Global Advanced Research Journal of History. Political Science and International Relations ISSN: 2315-506X Vol. 2(3) P. 35-39. October. 2013. www.garj.org, Տարածաշրջանում Pax Americana-ի հաստատման մեխանիզմ համարվող Կրկնակի զսպման իրականացմանը նպաստող հիմնական գործոններն էին՝ Մադր պատերազմի ավարտը և ԽՍՀՄ-ի կազմալուծումը, Իրան-իրաքյան պատերազմից հետո թուլացած Իրանի և Իրաքի մեջ ուժային հավասարակշռության հաստատումը, որն ԱՄՆ-ին հնարավորություն տվեց միակողմանիորեն իրականացնելու զսպման քաղաքականությունը Մոցի տարածաշրջանում Իրաքի բուվեյթյան ագրեսիայից հետո Մոցի արաբական պետությունների առավել շահագրգռվածությունը ԱՄՆ-ի հետ անվտանգության պայմանագիր ձեռք բերելու ուղ-

Իրանի նկատմամբ ենթադրում էր կանխել իսլամական հեղափոխության արտահանումը տարածաշրջանային երկրներ, ահաբեկչության հովանավորումը, զանգվածային ոչնչացման և հարձակողական զենքերի ձեռքբերումը և արաբա-իսրայելյան խաղաղության գործընթացի վերաբերյալ կոշտ դիրքորոշումը: Իրանի նկատմամբ տարվում էր պասիվ, ոչ ուղղակի օտարման, տնտեսական պատժամիջոցների կիրառման և միջազգային մեկուսացման քաղաքականություն¹⁸: Ինչ վերաբերում էր Իրաքին, ապա վերջինիս զսպումն ուղեկցվում էր առավել ակտիվ գործողություններով (ՄԱԿ-ի կողմից պատժամիջոցների սահմանում, Իրաքի հյուսիսում և հարավում ոչ թոփաքային գոտիների ստեղծում, տարատեսակ առևտրատնտեսական էմբարգոների կիրառում, ոչ թոփաքային գոտիների տարածքը խախտելու պարագայում ԱՄՆ-ի կողմից թիրախային հարվածներ հասցնելու իրավունք):

Չնայած Իրանի և Իրաքի նկատմամբ կար ձևավորված ընդհանուր մոտեցում, սույն ռազմավարությունն ուներ տարբեր վերջնականատակներ: Իրանի պարագայում մասնավորապես կարևորվում էր նրա առկա դիրքորոշման փոփոխությունը ԱՄՆ-ի նկատմամբ, իսկ Իրաքի դեպքում՝ Սադդամի տապալումը և նրա փոխարինումը ԱՄՆ-ին ձեռնառու ժողովրդավար ռեժիմով, զանգվածային ոչնչացման զինատեսակների (այսուհետ՝ ՁՈԶ) տարածման կանխումը, քրդերի և շիաների իրավունքների ապահովումը և էներգակիրների ուղիների հասանելիության ու անվտանգության վերջնական ապահովումը:

Ըստ Բժեզինսկու՝ Կրկնակի զսպումն ավելի շատ նման էր կարգախոսի, քան թե ռազմավարության, և փորձելով մեկուսացնել Իրանին և Իրաքին՝ ԱՄՆ-ն առաջինն իրեն էր զրկում տարածաշրջանային քաղաքականության կենսունակությունից՝ գործադրելով ֆինանսական և դիվանագիտական մեծ ծախսեր ու ռեսուրսներ: Եթե ԱՄՆ-ը զսպումը փոխարիներ բաց և կառուցողական երկխոսությամբ, նամանավանդ Խաթամիի՝ իշխանության գալուց հետո, ապա կունենար Իրանի վրա ազդելու ավելի մեծ հնարավորություն: Վիճարկելի էր համարվում նաև Ծոցի տարածաշրջանին ստրատեգիական առաջնահերթություն տալը էներգակիրների հասանելիության ապահովման, ՁՈԶ-ի դեմ պայքարի և տարածաշրջանային կայունության հաստատման քաղաքականության տեսանկյունից: Մա ցույց էր տալիս, որ ծայրամասային շահերին առաջնայնություն տալը և ներքաշվելը տարածաշրջանային ևս մեկ ճգնաժամի մեջ չէին բխում ԱՄՆ-ի շահերից¹⁹: Այնուամենայնիվ, Քլինթոնը չհասավ Ծոցում ամերիկյան դիրքերի լիակատար ամրապնդմանը, չկարողացավ հեռացնել Սադդամին իշխանությունից, Իրանում կարողացավ միայն խորաց-

դությամբ, տարածաշրջանում իրադրության կայունացման դրական միտումները և ԱՄՆ-ի մասնակցությամբ արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորման հեռանկարը:

¹⁸ Նույն տեղում, էջ 36, 37

¹⁹ Նույն տեղում, էջ 37-39: Այնուամենայնիվ դեպքերի հետագա զարգացումը ցույց տվեց, որ Իրանից և Իրաքից եկող սպառնալիքները չափազանցված էին, քանի որ, օրինակ, կոշտ քաղաքական գծի հետևորդ Ահմադինեջադի՝ իշխանության գալուց հետո որևէ բախում տեղի չունեցավ հարևանների կամ Արևմուտքի ու վերջինիս դաշնակիցների հետ, իսկ Իրաքի դեպքում, չնայած ԱՄՆ-ը տարեկան ծախսում էր 20 մլն դոլլար, չկարողացավ հասնել Սադդամի տապալմանը և արդյունավետ քաղաքականության իրականացմանը:

նել արդեն իսկ առկա տնտեսական ճգնաժամը, իսկ պաղեստինա-իսրայելյան հակամարտության կարգավորման հարցում երկրորդ ինթիֆադայից հետո ցույց տվեց ԱՄՆ-ի անկարողությունը տարածաշրջանում խաղաղության հասնելու հարցում:

21-րդ դարասկզբին բազմակողմ և միակողմ գերակայության միջև մրցակցությունն ավարտվեց միակողմանի կերպով Pax Americana-ի հաստատման ջատագովների հաղթանակով՝ ի դեմս Ջ. Բուշ Կրտսերի վարչակազմի: Ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցավ եթե ոչ նպատակների, ապա դրանց կյանքի կոչման մեթոդների հեղափոխություն, որպես հետևանք՝ լիբերալ ինտերնացիոնալիզմն իր տեղը զիջեց միակողմանիորեն վարվող և իմպերիալիստական շեշտադրումներ կրող ինտերվենցիոնիզմին: Սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո հոդրս ցնդեցին ԱՄՆ-ի անխոցելիության պատկերացումները: Ազգային անվտանգությանը սպառնալիքների կանխման, ահաբեկչության դեմ պայքարի և իր խաթարված հեղինակությունը վերականգնելու նպատակով ԱՄՆ-ը փորձեց ընդլայնել միջազգային իրավունքով սահմանված կաղապարները և օրինականացնել կանխարգելիչ հարված հասցնելու իրավունքը՝ հղում կատարելով ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածին²⁰:

Մերձավորարևելյան տարածաշրջանում Pax Americana-ի կայացման ռազմավարությունը պետք է դիտարկել սեպտեմբերի 11-ից հետո ԱՄՆ-ՄԱԿ-ի ԱԽ /Անվտանգության խորհուրդ/ նորմատիվ-իրավական հարթությունում ընթացող լարված հարաբերությունների համատեքստում: Տարածաշրջանային քաղաքականության տեսանկյունից ԱՄՆ-ը նահանջ կատարեց Ջ. Բուշ Կրտսերի նախընտրական քարոզարշավում արած հայտարարությունից, թե ԱՄՆ-ը չի զբաղվելու այլ վայրերում պետականաշինությամբ: Դրա արդյունքում շարունակվեց «ընդգրկման» քաղաքականությունը՝ որպես պատճառ նշելով “failed and rogue state”-ից (բոց. Ձախողված և խռովարար պետություններ) եկող սպառնալիքը ԱՄՆ-ի և վերջինիս՝ տարածաշրջանում ունեցած շահերի նկատմամբ: Փոփոխություն կրեց տարածաշրջանում ԱՄՆ-ի նախաձեռնությամբ խաղաղության հաստատման մոտիվացիան. եթե 1990-ականներին դա դեֆակտո ստատուս քվոյի պահպանումն էր, ապա այժմ առաջին պլան էր բերվում ամերիկամետ «ժողովրդավար» ռեժիմների հաստատումը Իրաքում (ինչպես նաև Աֆղանստանում), կոշտ և փափուկ ուժերի կիրառմամբ այդ երկրներում կայուն և վստահելի պետական կառույցների ստեղծումը:

Ծոցի տարածաշրջանում Pax Americana հաստատելու համար Բուշը, հիմնվելով Աֆղանստանի վերաբերյալ ԱԽ-ի ընդունած 1373 և 1441 բանաձևերի և ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի վրա, առաջ քաշեց 2 փաստարկ՝ ինքնապաշտպանություն ընդդեմ ահաբեկչության և Իրաքում ՋՈՁ-ի վերացումը: Չնայած ԱՄՆ-ի կողմից 2002թ. սեպտեմբերից մինչև 2003թ. մարտ գործադրված բոլոր ջանքերին՝ թե՛ ԱԽ-ում և թե՛ վերջինիս շրջանակներից դուրս ընթացող քննարկումներին ու բանա-

²⁰ Jonhstone I. *US-UN Relations after Iraq: The End of the World (order) as We Know It ?*. P.828, Կանոնադրությունը ոչնչով չի խաթարում անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության անկապտելի իրավունքը Միավորված ազգերի կազմակերպության որևէ անդամի հարձակման ենթարկվելու դեպքում, քանի որ Անվտանգության խորհուրդը չի ձեռնարկի միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման միջոցառումներ:

վեճերին՝ ԱՄՆ-ն անհաջողության մատնվեց բազմակողմ դիվանագիտության հարթակի հանդիսացող ՄԱԿ-ի ԱԽ-ում²¹, սակայն շարունակեց միջազգային հանրությանը ներկայացնել հարցի վերաբերյալ իր տեսակետը: Մրա լավագույն ապացույցը ԱՄՆ-ի ներկայացուցչի նամակն էր՝ ուղղված ԱԽ-ի նախագահին (2003թ. մարտի 20) որտեղ խոսք անգամ չկար ահաբեկչության կամ ինքնապաշտպանության մասին: Իրաքի առնչությամբ այստեղ հղում էր կատարվում ԱԽ-ի ընդունած բանաձևերին՝ նշելով, որ Իրաքը «եականորեն շեղվել է» իր պարտավորությունների իրականացումից: Իրաքի պարագայում թեև ԱՄՆ-ը չստացավ ՄԱԿ-ի ԱԽ-ի թույլտվությունը այդ երկիր ներխուժելու համար, միևնույն է, գործեց Կանոնադրության 51-րդ հոդվածի շրջանակներում՝ դրսևորելով, Պետդեպարտամենտի Քաղաքական պլանավորման բաժնի տնօրեն Ռ. Հասսի բնորոշմամբ, «ընտրողական բազմակողմանիություն» (a la carte)²²:

Ներխուժումը Իրաք և պատերազմը փորձաքար դարձան տարածաշրջանում Pax Americana-ի ներդրման համար, քանի որ այն միտված էր Սադդամի ռեժիմը փոխարինելու ամերիկամետ ռեժիմով, փոխելու տարածաշրջանի քաղաքական միջավայրը և մշակույթը ու կոնսոլիդացնելու ԱՄՆ-ի ազդեցությունը Մերձավոր Արևելքում:

Այսպիսով, հետաառապատերազմյան շրջանում ձևավորվեց «միաբնեռայնության պահ»՝ ռազմաքաղաքական և տնտեսական հարթություններում ԱՄՆ-ի համաշխարհային գերակայությամբ, որն էլ իր հերթին ներկայիս միջազգային հարաբերությունների կոնֆլիկտային և անարխիկ բնույթի, ինչպես նաև դրանց ոչ ավանդական սուբյեկտների ի հայտ գալու արդյունքում անցում է կատարելու ոչ թե բազմաբնեռայնությանը, այլ «ոչ բնեռայնությանը»: ԱՄՆ-ը Մերձավոր Արևելքում իր անվերապահ և անվիճարկելի գերակայությունը հաստատելու համար փորձեց այնտեղ սահմանել Pax Americana-ի խաղի կանոնները, և աշխարհն ականատես եղավ, թե ինչպես մեկ տասնամյակում այն կյանքի կոչելու համար ԱՄՆ-ի երեք նախագահներ կիրառեցին տարբեր մոտեցումներ և գործիքակազմեր՝ սկսած տարածաշրջանում ստատուս քվոյի պահպանումից և ԱՄՆ-ի անպարտելիության ցուցադրման ռեալիզմի քաղաքականությունից, տարածաշրջանային կնճռոտ հակամարտության կարգավորումից, խնդրահարույց երկրներին զսպելու լիբերալ-դեմոկրատների քաղաքականությունից և վերջացրած միջազգային հարաբերություններում «ընտրողական բազմակողմանիության» դրսևորումով ու տարածաշրջանում ռազմական գոր-

²¹ Ferry T. *Pax Americana and Middle East Regional Order*. apr. 13, 2013, *E-International Relations*. www.e-ir.info. ԱՄՆ-ի Նախագահի շեշտադրումները ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում 2002թ. սեպտեմբերին հնչում էին այնպես, կարծես ոչ թե ՄԱԿ-ն էր պետք ԱՄՆ-ին՝ գործելու տարածաշրջանում, այլ ՄԱԿ-ին տրվում էր վերջին հնարավորությունը ապացուցելու իր օգտակարությունը ԱՄՆ-ին:

²² Jonhstone I., նշվ. աշխ., էջ 834: ԱՄՆ-ն այնուամենայնիվ ստիպված էր հաշվի առնել ԱԽ-ի լեգիտիմացնող ուժը և Իրաք ներխուժումից հետո հանդես եկավ ԱԽ-ում բանաձևերի ընդունման նախաձեռնությամբ՝ կիրառել կոալիցիոն ուժեր Իրաքում, տնտեսության վերականգնման համար ներգրավել միջազգային կազմակերպություններ, ապահովել կառույցի առկայությունը տարածաշրջանում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ներկայացուցչի միջոցով:

ծողությունների միջոցով ԱՄՆ-ին ձեռնառու ժողովրդավար ռեժիմ հաստատելու փորձով: Չնայած ձեռնարկված ջանքերին՝ այնուամենայնիվ հնարավոր չէրավ տարածաշրջանում հաստատել ամերիկյան լիակատար գերակայությունը «խաղաղության և համագործակցության» սկզբունքների հիման վրա: Մա թերևս պատմական օրինաչափություն կարելի է համարել, որովհետև տասնամյակների ընթացքում տարածաշրջանում երբեք չի եղել մեկ ընդհանուր գերիշխող դրսից, այլ ընդհակառակը՝ ներտարածաշրջանային գործընթացներն են միշտ պայմանավորել արտաքին ուժերի դասավորությունն այնտեղ: Չնայած ԱՄՆ-ին հաջողվեց չափավոր ազդեցություն ունենալ տարածաշրջանային կարգի վրա, հատկապես Ջ.Բուշ Կրտսերի՝ Իրաք ներխուժումից հետո, այնուամենայնիվ ասել, թե այնտեղ հաստատվեց ԱՄՆ-ի գերակայությունը, սխալ կլինի: Ընդհակառակը՝ ներխուժումն Իրաք չարդարացրեց նեոկոնսերվատորներից բաղկացած վարչակազմի սպասելիքները՝ հանգեցնելով տարածաշրջանի մանրակերտ համարվող Իրաքի բալկանացմանը, զրոբալ և լոկալ մակարդակներում հակաամերիկականության և ահաբեկչության աննախադեպ աճին՝ սկզբնավորելով միաբնեռայնության ճգնաժամը հենց Pax Americana-ի վերելքի գագաթնակետին:

ФОРМИРОВАНИЕ ОДНОПОЛЯРНОГО МИРА ПО ОБРАЗЦУ PAX AMERICANA (НА ПРИМЕРЕ БЛИЖНЕВОСТОЧНОЙ ПОЛИТИКИ)

___ Резюме ___

___ А. Айрапетян ___

В статье рассматривается формирование однополярного мира параллельно подъему концепции Pax Americana и предпринятые шаги к трансформации региональной политики на Ближнем Востоке. В статье представлены политика и механизмы, предпринятые президентами США в первое десятилетие после окончания "холодной войны", для введения в регионе правил Pax Americana, а также их результаты и последствия. Хотя США удалось умеренным образом повлиять на региональный порядок, было бы неправильно говорить о том, что там было подтверждено безусловное господство США. Напротив, вторжение в Ирак не только не оправдало ожидание неоконсервативной администрации Буша младшего, но и привело к балканизации миниатюры региона Ирака, беспрецедентному росту антиамериканизма и терроризма на глобальном и региональном уровнях, инициируя однополярный кризис на пике подъема концепции Pax Americana.

Տեղեկություններ հեղինակի մասին

Հայրապետյան Աստղիկ Մերգոյի – ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտ, E-mail: astghayrapetyan@gmail.com

Ինգա ԱՎԱԳՅԱՆ

*ՈՒՐՎԱԳԾԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԴԻՄԱՊԱՏԿԵՐԻՑ (մասն II)*

Ալեքսանդրապոլը XIX դ. վերջին-XX դ. սկզբին Ռուսական կայսրության կազմի մեջ մտած Արևելյան Հայաստանի ամենամեծ քաղաքներից մեկն էր, առևտրատնտեսական, մշակութային կենտրոն: Չնայած վայրիվերումներին և բնական աղետներին (խորհրդային շրջանում արագընթաց ինդուստրացում, քաղաքային կյանքի սովորույթների փոփոխություն, 1926, 1988թթ. ավերիչ երկրաշարժեր, հետխորհրդային տնտեսական ճգնաժամ)՝ քաղաքի պատմական մասը ներկայացված է նախագծված ցածրահարկ թաղամասերով, որոնք կառուցել են տեղի քարտաշ-որմնադիրները՝ ժողովրդական ճարտարապետական մշակույթի ներկայացուցիչները: Քաղաքի պատմական մասը պահպանվել է բավական ամփոփ տեսքով և շարունակում է հանդես գալ որպես քաղաքի կենտրոն:

Հրապարակման մեջ անդրադարձել ենք Ալեքսանդրապոլ-Գյումրու վերնակույր ճարտարապետության առանձնահատկություններին, որոնք ներկայացրել ենք ըստ պատմական կենտրոնի՝ Շիրազի, Վարպետաց, Աբովյանի, Ռուսթավելու փողոցների միջև ընկած տեղամասի, երբ կողք կողքի գոյատևում և փոխազդում են ճարտարապետական երեք շերտեր, որոնք համապատասխանում են քաղաքի պատմության հիմնական ժամանակաշրջանին (Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի): Առաջին անգամ շրջանառության մեջ ենք մտցնելու ճարտարապետ Ա.Վ.Իվանովի առաջարկած «վերնակույր անսամբլ» տերմինը, որը գիտնականի կողմից առաջադրվում է ուրբանիստ Ա. Վիսոկովսկու առաջարկած «վերնակույր քաղաք, կառուցվածք» տերմինների հիման վրա¹: Անգլերենից թարգմանաբար «վերնակույր» բառը նշանակում է տեղական, ժողովրդական, բարբառային, տվյալ տեղանքին բնորոշ: «Վերնակույր անսամբլ» տերմինն արտահայտում է այնպիսի քաղաքի միջավայրը, որն սկզբունքայնորեն տարբերվում է «ճարտարապետական անսամբլից»: ճարտարապետության մեջ «վերնակույր» տերմինն օգտագործվում է այն կառույցների պարագայում, որոնց կառուցողը պրոֆեսիոնալ ճարտարապետ չէ, սակայն կառույցն օժտված է որոշակի կենցաղային և գեղարվեստական առանձնահատկություններով: Բերնարդ Ռուդոֆսկին վերնակույր ճարտարապետությունն անվանում է «առանց ճարտարապետների ճարտարապետություն»²: Այս տիպի կառուցապատումների նկատմամբ հետա-

¹ Иванов А. Регулярный вернакуляр: свобода внутри решетки (исторический центр Гюмри XIX-середины XX в.). Вопросы всеобщей истории архитектуры, выпуск 9 (2/2017). М.С-II, 2017. С.159.

² Rudofsky B. Architecture without Architects: A Short Introduction to Non-Pedigreed Architecture. New York: Museum of modern Art Publ., 1964.

քրքրությունը հատկապես աճեց XX դ., իսկ սկզբունքները վավերացվեցին 1999թ. Մեխիկոյում ընդունված «Կառուցապատված վերնակույր ժառանգության խարտիայում»³: Ա. Իվանովը զուգահեռներ է անցկացնում Ալեքսանդրապոլի և Երևանի վերնակույր ճարտարապետության միջև (Կոնդ, Հին Նորք, Քանաքեռ, Նորագյուղ), որտեղ, ի տարբերություն Ալեքսանդրապոլի, դիտարկվում է «ստորին» խավերի կառուցած վերնակույր ճարտարապետությունը, երբ կառուցողը չի մտածում կառույցի գեղագիտական կողմի մասին, այլ լուծում է կենցաղային տարրական խնդիրներ: 1920-ական թթ. Երևանում դիտարկվում է պառակտում «ստորին» վերնակույրի և «վերին»՝ վարդագույն տուֆից կառուցված, բարձրաստիճան ճարտարապետության միջև (ճարտարապետ՝ Ա.Թամանյան): Ցավոք, այսօր Երևանի «ստորին» վերնակույրն արտահայտող թաղամասերը ենթարկվում են անխնա քանդման, բայց Հայաստանում Երևանին այլընտրանքային կարելի է համարել մեկ այլ պատմական կենտրոն՝ սև տուֆից կառուցված Գյումրին⁴: Ինչպես նշեցինք, քաղաքի պատմական մասը նախագծված ցածրահարկ թաղամասերն են, որոնք կառուցապատողները տեղի քարտաշ-որմնադիրներն էին, և նրանք էին ներկայացնում ժողովրդական ճարտարապետությունն այն պարագայում, երբ քաղաքի ընդհանուր հատակագիծը⁵ նախագծողները ճարտարագետ-շինարարներն էին: Այսօր քաղաքի պատմական մասը ներկայանում է ճարտարապետական երեք շերտերով, որոնք հրաշալիորեն ներկայացնում են Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրին: Այսպիսով, խոսքը քարտաշ-որմնադիրների անտիկ և միջնադարյան ավանդույթներով կառուցած հին քաղաքի մասին է, որը, սակայն, նախագծված էր «վերինից» (քաղաքի կանոնավոր հատակագծի ցանց): Ըստ Մ. Մաթևոսյանի՝ Ալեքսանդրապոլ-Գյումրիում դիտարկվում են Անիի ճարտարապետության հետ սերտ կապերը և նրա շարունակությունը մեր օրերում⁶:

Բնականաբար, քաղաքի կանոնավոր հատակագծումից հետո իշխանությունները հատուկ աշխատանք էին տարել փողոցներն ուղղելու նպատակով (քանդվել են փողոցների կանոնավոր դասավորությունը խանգարող կառույցները, բնակիչները տեղափոխվել են կանոնավոր կառուցված տներ): Ալեքսանդրապոլի բերդը համարվում է XIX դ. կեսի ռուսական ռազմական ճարտարապետության օրինակ, շինարարական աշխատանքները ղեկավարել են ռուսական ռազմական ճարտարագետները, կառուցել են տեղի հայ վարպետները: Հենց այս վարպետներն են կառուցել քաղաքը՝ եկեղեցիները⁷, դպրոցները, առևտրային շարքերը, բնակելի տները: Տեղական ինքնակառավարման մարմինների ստեղծումից հետո ձևավորվում է քաղաքի ճարտարագետի նոր պաշտոնը: Այն սովորաբար զբաղեց-

³ Иванов А., նշվ. աշխ., էջ 160:

⁴ Նույնը:

⁵ Атлас крепостей Российской империи, СПб., URL: insmat.info/fales/uploads/45273/atlas_krepostey_rossiyskoy_imperii_ok_1830_chast_i.pdf (ժառ. օժտություն: 13.08.2017).

⁶ Մաթևոսյան Մ., XVIII-XIX դդ. Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Եր., 1985:

⁷ Եկեղեցական շինարարության պատմության մեջ չտեսնված էր 1859-1866 թթ. քաղաքի ամենաբարձր եկեղեցու՝ Ամենափրկիչի կառուցումը, որը այժմ նույնպես վերնակույր տաճար է համարվում: Иванов А., նշվ. աշխ., էջ 175-180:

նում էր զինվորական ճարտարագետներից մեկը, որը համատեղում էր ծառայությունը քաղաքային վարչությունում պայմանագրային աշխատանքի հետ⁸։ Իրականում նա էր համակարգում քաղաքի կառուցապատման աշխատանքները, ստորագրում նախագծերը, որոնք որոշում էին կառույցի տեղը և ծավալը, հարկերի քանակը, բայց ոչ դրանց ճարտարապետական հորինվածքը և զարդարանքը, որը շարունակում էր մնալ տեղի վարպետների մենաշնորհը։ Լայնորեն կիրառվում էին կատալոգները, որտեղից ընտրված տները հարմարեցվում էին տիրոջ բյուջեին և տեղի պայմաններին։ Այսպիսի տան վառ օրինակ է *Աբովյանի թիվ 204* առանձնատունը, որի մասին խոսել ենք հոդվածի առաջին մասում⁹։ Քարտաշ-որմնադիրներն անընդհատ կատարելագործում էին թե՛ մյուս վարպետների, թե՛ իրենց ձեռքբերումները, որոնք, ի տարբերություն քաղաքային կենցաղից կտրված ճարտարապետ-մասնագետների, «կենդանի» քաղաքի անբաժանելի մասն էին կազմում։ Ըստ Ա. Իվանովի՝ Գյումրին մեծ Մանհեյմտենի և փոքր Վալետտայի նման կաղապարվել է նախագծված ցանցի մեջ, սակայն այդ ցանցի ներսում քաղաքը կառուցապատվում էր ողջ վերնակույքար անսամբլի ազատ սկզբունքներով՝ «ազատություն ցանցի մեջ»¹⁰։ Մեր խնդիրն է այս ամենը դիտարկել Ձորի մահլա թաղամասի մի հատվածի օրինակով, որի մեջ է մտնում մեր ուսումնասիրած հատվածը։ Իրար զուգահեռ Դորդակյանի, Աբովյանի, Վարպետաց փողոցները Ռուսթավելի փողոցից հյուսիս կորցնում են իրենց կանոնավոր ուղղվածությունը, խճողվում և կլանվում են ազատ վերնակույքարի մեջ։ Կանոնավոր թաղամասը դառնում է անկանոն, նրբանցքները սարդոստայն են հիշեցնում։ Դիտարկվում է լավ պահպանված ազատ վերնակույքար անսամբլը։

Ուսումնասիրված շենքերն ըստ արտաքին և ներքին հարդարման բաժանել ենք երեք խմբի։ Սույն հոդվածում կներկայացնենք վերնակույքար ճարտարապետության Ալեքսանդրապոլի ժամանակաշրջանին վերաբերող շերտի հուշարձան-տների նկարագրությունը, որը կատարել ենք Աբովյանի, Ռուսթավելու, Վարպետաց և Շիրազի փողոցների կազմած քառակուսիում՝ ըստ մեր կողմից առանձնացված առաջին և երկրորդ խմբերի։ Երրորդ խմբին պատկանող շինությունների ուսումնասիրությունը կներկայացվի մեկ այլ հոդվածի շրջանակում։

Սույն ժողովածուի նախորդ համարում մանրամասն անդադարձել ենք Աբովյանի և Վարպետաց փողոցներում գտնվող որոշ հուշարձան-տների նկարագրությանը, այստեղ ներկայացնում ենք դրանց լուսանկարները¹¹ (Աբովյանի թիվ 210 (պետական ցուցակ №4.472) (լուս.1), թիվ 202 (196,198, 200) (պետական ցուցակ №4.470) (լուս.2), թիվ 206, 208 (204)(պետական ցուցակ №4.471) (լուս.4), թիվ 111

⁸ Иванов А., *նշվ. աշխ.*, էջ 166-167։

⁹ Ավագյան Ի., *Ուրվագծեր Ալեքսանդրապոլի պատմամշակութային դիմագծից*, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XX, 2017, էջ 278-285։ Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Գյումրու «Գումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տնօրեն Ս. Տեր Մարգարյանին և ավագ գիտաշխատող Պ. Զաքարյանին լուսանկարները տրամադրելու և աշխատանքին սատարելու համար։

¹⁰ Иванов А., *նշվ. աշխ.*, էջ 170-171։

¹¹ Ավագյան Ի., *Ուրվագծեր Ալեքսանդրապոլի պատմամշակութային դիմագծից*, էջ 278-285։

(պետական ցուցակ №4.39) (լուս.3,29), թիվ 121(պետական ցուցակ №4.40) (լուս.5, 6), Աբովյանի 186 (պետական ցուցակ №4.50) (լուս.8), թիվ 216 (պետական ցուցակ №4.943)(լուս.10,11), Աբովյանի թիվ 184 և Ռուսթավելու թիվ 22,24 (պետական ցուցակ №4.38)(լուս.12), Ռուսթավելու թիվ. 30 (պետական ցուցակ №4.945) (լուս.14), Վարպետաց թիվ 87 (պետական ցուցակ №4.953) (լուս.17),¹² թիվ 101 (պետական ցուցակ №4.873) (լուս.18,28), Շիրազի՝ նախկին Գորկու թիվ 30 (պետական ցուցակ №4.946) (լուս.21,22)), Ալեքսանդրապոլի վերնակույր ճարտարապետության XIX դ. վերջ-XXդ. սկզբի մասին ամբողջական պատկերացում ստանալու համար: Ստորև ներկայացնում ենք նույն խմբի մեջ դասվող մյուս շինությունները, որոնց մասին տեղի աղբյուրան պատճառով սույն ժողովածուի նախորդ համարում չի խոսվել.

Աբովյանի թիվ 182 (պետական ցուցակ №4.49) (լուս.7,30): Հուշարձանը կառուցվել է XIX դ. վերջին: Պահպանված են ժամանակի փայտյա ինքնատիպ առաստաղը, մուտքի սենյակների փայտյա դռները, լուսամուտներն ու ծածկափեղկերը: Կառույցն ունի տեղական սև տուֆից կառուցված շքեղ ճակատ:

Աբովյանի թիվ 192, 192/1(պետական ցուցակ №4.51) (լուս.9): Հուշարձանը կառուցվել է XIX դ. վերջին: Պահպանվել է տան արևելյան ճակատի մի փոքր հատվածը, որը Ալեքսանդրապոլի սև տուֆից է պատրաստված: Նկուղը հարթ առաստաղով է:

Ռուսթավելու թիվ 39, 41(պետական ցուցակ №4.735) (լուս.13): Հուշարձանը կառուցվել է 1900-ական թթ.: 1988թ. երկրաշարժից հուշարձանը խիստ վթարվել էր: Մեփականատերը առանց անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի վերանորոգել է այն: Պահպանվել է միայն շենքի հարավային սրբատաշ, քանդակազարդ, ինքնատիպ քիվով ճակատը, որը կառուցված է սև տուֆից:

Ռուսթավելու թիվ 34, Վարպետաց փող. թիվ 81(պետական ցուցակ №4.287) (լուս.15): Հուշարձանը կառուցվել է XIX դ. վերջին: Պահպանվել են թաղակապ նկուղը և փայտյա ձևավոր դռները: Հուշարձանի՝ դեպի Վարպետաց փողոց նայող ճակատը լրիվ փակվել է ավելի ուշ իրականացված կցակառույցներով: Հուշարձանի՝ *Ռուսթավելու թիվ 34* հասցեով մասի մի հատվածը 1988թ. երկրաշարժից մասամբ վթարվել է: Կառույցն ունի Ալեքսանդրապոլի սև և կարմիր տուֆից կառուցված գեղեցիկ ճակատ:

Վարպետաց՝ նախկին Շահումյանի փողոց թիվ 148 (պետական ցուցակ №4.375) (լուս.16): Հուշարձանը կառուցվել է 1880թ. և պատկանել է Ալեքսանդրյան ընտանիքին: Պահպանվել են փայտյա գեղեցիկ շքամուտքը, սենյակների փայտյա ձևավոր դռները, պատուհանների ծածկափեղկերը, երեք, պատի մեջ փորված, նախազարդ փայտե պահարանների՝ դուլաբների դռները և թաղակապ նկուղը:

¹² Ավ. Բասիակյանի պապենական տունն է, որը ՀՀ պաշտոնական տեղեկագրում թվագրվում է XIX դ. վերջով: Տունը 1988թ. երկրաշարժից հետո վթարվել է, հետագայում հիմնովին վերականգնվել է և շարունակել է օգտագործվել որպես Ավ. Բասիակյանի տուն-թանգարան:

Մասնակի փոփոխվել է հուշարձանի արևմտյան ճակատին կից փայտյա պատշգամբը: Տունն ունի սև տուֆից կառուցված գեղեցիկ ճակատ:

Վարպետաց թիվ 160, 162, 164 (պետական ցուցակ №4.221, №4.222) (լուս. 19,20): Շինությունները կառուցվել են XIX դ. վերջին: Պահպանվել են թիվ 164-ի երեք պատուհանների ծածկափեղկերը, մեկ ներքին փայտե դուռը, շքամուտքը, թիվ 162-ի փայտե առաստաղը, հին երեք դռները, երկու լուսամուտների ծածկափեղկերը: Թիվ 164-ն ունի տեղական սև տուֆից կառուցված գեղեցիկ ճակատ: Հիմնախարիսխի մի շարքը բազալտապատվել է, բարելավվել է ջրահեռացման խնդիրը (հավանաբար երկրաշարժից հետո): Թիվ 160 տան սև տուֆից կառուցված, գեղեցիկ ճակատը փողոցի կողմից գտնվում է հողաշերտի մեջ: Երևում են ճակատի սրբատաշ քարերի միայն յոթ շարքերը:

Շիրազի I-ին նրբանցքի թիվ 88 (պետական ցուցակ №4.86) (լուս.23,24): Հուշարձանը կառուցել են Տեր-Հարությունյանները XIX դ. վերջին: Պահպանվել են «բոխչա թավանը», ուշագրավ և իր ձևով եզակի զարդաերկրով, փայտե շքամուտքը, որը ներսից ունի մետաղական փական և ներսի փայտե զարդանախշված երկու դռները: Նկուղը հարթ, փայտե առաստաղով է: Միջանցքում շատ վատ վիճակում պահպանվել է Արտաշես Տայանի գործարանում պատրաստված հախճասալիկներից հատակը: Կառույցն ունի սև տուֆից գեղեցիկ ճակատ:

Շիրազի I-ին նրբանցքի թիվ 89, վթարային (պետական ցուցակ №4.87) (լուս. 25): Կառուցվել է XIX դ. վերջին: Պահպանված են փայտե շքամուտքը, խիստ վթարային վիճակում «բոխչա թավանի» մի փոքր մասը և լուսամուտներից մեկը: Նկուղը թաղակապ է: Պահպանվել է տան միջնապատի կամարը: Արտաքին ճակատը շարված է Ալեքսանդրապոլի սև և կարմիր տուֆ քարերի համադրությամբ: Քիվը քանդակազարդ է: Շքամուտքի արտաքին պատը շարված է կարմիր տուֆով:

Շիրազի I նրբանցքի թիվ 90 (պետական ցուցակ №4.88) (լուս.26): Տունը կառուցվել է XIX դ. վերջին և պատկանել է Ղազարյանների տոհմին: Պահպանվել են փայտյա առաստաղը, փայտե նախշազարդ դռները, երեք լուսամուտների ծածկափեղկերը, փայտե հատակը և փայտե շքամուտքը: Կառույցն ունի սև տուֆից գեղեցիկ ճակատ:

Շիրազի թիվ 28 (պետական ցուցակ №4.907) (լուս.27): ՀՀ պաշտոնական տեղեկագրում կառույցը թվագրվում է 1880-ական թթ.-XX դարասկզբով: Կառուցվել է սև տուֆից և պատկանել է քաղաքում հայտնի մեծահարուստ Կոստանյան ընտանիքին: Պահպանվել են բաղնիքի սրահների թաղակապ առաստաղները: Ալեքսանդրապոլում մեծ տարածում գտած բաղնիքի արարողությունները (ընտանիքով բաղնիք հաճախելը, հարսնաբաղնիք, փեսաբաղնիք և այլն) մեծ մասամբ կատարվել են այստեղ: Մինչև 1988թ. երկրաշարժը այս կառույցը օգտագործվել է որպես բաղնիք: Երկրաշարժից մասամբ վնասվել է: 2000-ական թթ. այն օտարվել է մասնավոր անձի: Հուշարձանի վերանորոգումը իրականացվել է ներքին ճարտարապետական տեսքի որոշակի փոփոխություններով: Նաև լրիվ վերացվել են ներքին հարդարման որոշակի արժեք ներկայացնող մանրամասերը:

Այսպիսով, ուսումնասիրված հատվածի վերլուծությունը հստակ ցույց տվեց, որ թե՛ քաղաքի այս հատվածում, թե՛ ընդհանրապես Գյումրիում, ի տարբերություն Երևանի, պահպանվել է վերնակույար ճարտարապետության սկզբունքներով կառուցապատումը, որը գլոբալիզացիայի այսօրվա պայմաններում պահպանության կարիք է զգում, իսկ վերնակույար անսամբլի ամբողջականությունը ապահովելու համար անհրաժեշտ է ժամանակակից կառուցապատումները կատարել վերնակույար քաղաքի օրինաչափություններին համահունչ, ինչը այս պահի դրությամբ փորձում են իրականացնել Շիրազի և Ռուսթավելու փողոցներում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքում: Կարծում ենք՝ այստեղ տեղին է օգտագործել «նեովերնակույար կառուցապատում» եզրը: Թե որքանով դա կհաջողվի, ցույց կտա ժամանակը:



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7



Նկ. 8



Նկ. 9



Նկ. 10



Նկ. 11



Նկ. 12



Նկ. 13



Նկ. 14



Նկ. 15



Նկ. 16



Նկ. 17



Նկ. 18



Նկ. 19



Նկ. 20



Նկ. 21



Նկ. 22



Նկ. 23



Նկ. 24



Նկ. 25



Նկ. 26



Նկ. 27



Նկ. 28



Նկ. 29

- *Լուսանկարները՝ Ե. Վարդյանի*



Նկ. 30

ШТРИХИ ИСТОРИКО-КУЛЬТУРНОГО ОБЛИКА АЛЕКСАНДРОПОЛЯ (часть II)

___ Резюме ___

___ И.Авагян ___

В статье рассмотрены вопросы градостроительства города Александрополя в XIX-начале XX вв. Впервые в научный оборот вводится термин «вернакулярный ансамбль», предложенный доктором архитектуры А.Ивановым. В результате осмотра одного из кварталов старого города, который располагается между улицами Варпетак, Руставели, Шираз, Абовян, были выявлены новые здания и постройки, которые ранее не были включены в «Официальные ведомости»-список памятников охраняемых государством. В статье дана новая классификация домов и зданий по интерьеру и экстерьеру. 1. Здания, у которых сохранился старый экстерьер. 2. Здания, у которых сохранился старый экстерьер и интерьер. 3. Здания, у которых сохранился характерный для XIX-начала XX вв. внутренний интерьер, но при отсутствии парадного фасада, они не вошли в список охраняемых государством памятников. Архитектурные аналоги техники сооружения и некоторых декоров восходят к архитектуре средневековой Армении.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Ավագյան Ինգա Էդուարդի – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, «Կուսմայրի» պատմամշակութային
արգելոց-թանգարան, E-mail: inga.avagyan.76@mail.ru*

*Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ, Լարիսա ԵԳԱՆՅԱՆ,
Լևոն ՊԵՏՐՈՍՅԱՆ, Անդրեաս ՖՈՐԹՎԵՆԳԼԵՐ,
Թորիաս ՆԵՈՒՄԵՐ, Դորոթեա ՄԱՈՒԵՐՄԱՆ*

ԱԶԱՏԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ 2015թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

2015 թվականին Ազատանի ամրոցի և բնակավայրի ուսումնասիրությանը գուգահեռ շարունակվեցին նաև դամբարանադաշտի պեղումները¹: Այստեղ 2014թ. պեղված յոթ դամբարաններին ուսումնասիրվող տարում ավելացան վաղ երկաթի դարաշրջանին վերաբերող ևս վեցը (5, 6, 7, 8, 9, 12):

Ազատանի ժայռափոր դամբարանները գտնվում են հնավայրի երկարությամբ հյուսիս-հարավ ձգվող բլրաշարի ստորոտով անցնող հեղեղատի արևելյան ափին (նկ. 1): Ժայռի մեջ փորված առաջին դամբարանը բացվել է պատահաբար՝ տեղանքի հնագիտական հետախուզության ժամանակ հեղեղատի արևելյան կողմում կենդանիների կողմից ժայռի մեջ բացված անցքից երևացող անոթի կողերը նկատելուց հետո: 2015թ. այստեղ նախորդ՝ 2014թ. պեղված ժայռափոր դամբարաններին ավելացան ևս երկուսը: Պեղվեց ևս հինգ դամբարան:

Արտաքին քիչ ակնհայտ հատկանիշ են հեղեղատի եզրին ցցուն ժայռաբեկորները, որոնք գուցե վերին ժայռերի փլուզման հետևանքով սահելով ցած, հայտնվել են այստեղ, թե դրված են դամբարանների մուտքերի կողքին: Պարզելու համար՝ արդյոք թաղումները շարունակվում են թեք լանջով մեկ, թե միայն ստորին հատվածն են զբաղեցնում, լանջի երկարությամբ մի քանի մետր մաքրվեց բուսածածկույթից: Սակայն ակնհայտ դարձավ, որ նման քարերը միշտ չէ, որ դամբարան լինելու նշաններ են: Թիվ 5 դամբարանից հարավ՝ հեղեղատի լանջի երկարությամբ մաքրված մոտ տասը մետր հատվածում, այլ դամբարան չգտնվեց, իսկ արդեն պեղված դամբարանները կողք կողքի են, զրեթե իրար կիպ: Բոլորի մուտքերն ուղղված են արևմուտք, թաղը սֆերիկ է, մուտքի անցքը կիսակլոր է, միշտ տեղադրված է հատակից բարձր և ծածկված է սալերով:

Դամբարան 5 - Դամբարանը բլրի գագաթի հարավային կողմից թեքությամբ լանջ իջնող հատվածում է, որտեղ ուրվագծվում է ցցուն քարերով շրջանաձև շարվածք: Վերջինս ներառվեց 240սմ երկարությամբ և նույնքան լայնությամբ քառակուսու մեջ, որի կենտրոնում բացվեց ժայռաբեկորներով և խիճով լցված դամբարանի խոռոչանման մուտքը (երկ. 100սմ է, լայն.՝ 80սմ):

Մուտքից 20սմ ներս, բացվածքի մակարդակին դրված էր մի սափոր, որի տակ աջ կողմ թեքված գանգն էր: Մեկ այլ գանգ՝ բերանքսիվայր դիրքով, բացվեց դամբարանի հարավային կողմում: Արևելյան պատի մոտ բացվեց բերանը դեպի հարավ պառկած դիրքով նստուկի վրա բացվածքով, երկկանթ, ունկը թերի մի սա-

¹ Խաչատրյան Հ., Եզանյան Լ., Պետրոսյան Լ., Ֆորթվենգլեր Ա., Նեուսեր Թ., Մաուերման Դ., Ազատանի դամբարանադաշտի 2014 թ. պեղումները, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XVIII, 2015, էջ 32-50:

փոր, որի մեջ մեծ բլթակով և անցքով բրոնզյա ասեղ կար, բարակ բրոնզալարից օղակաձև մի ականջօղ և մածուկից սպիտակ, կապույտ, տափակ, օղակաձև, նաև սարդիոնից ցաքուցրիվ ուլունքներ: Դամբարանի կենտրոնում, կմախքի որովայնի հատվածում բացվեց մեկ ունկով մի քրեղան: Հյուսիսային պատի մոտ, որտեղ շրջանաձև բացվածք է, գտնվեց թեքողի մի կճուճ: Նշված բոլոր անոթների մեջ, բացի սափորից, սննդի մնացորդներ էին՝ ոսկորներով (աղ. 4):

Բացված երկու կմախքներից առաջինը դրված էր արևմուտք-արևելք, երկրորդը՝ հարավ-հյուսիս կողմնորոշմամբ: Ոսկորները խառնիխուռն էին, ծնոտի մասերը՝ դամբարանի տարբեր հատվածներում: Մուտքը փակող շարվածքի տակ բացվեց ոչխարի գանգ, սևանյան տիպի դաշույն՝ տակը թաս, մեկ այլ թաս՝ հյուսիսային մասում՝ պատի մոտ: Մուտքի մոտ դրված կմախքի ոսկորները մնացել էին մուտքը փակող շարվածքի տակ: Գանգից մոտ 50սմ դեպի դամբարանի խորքը բացվեցին կողք կողքի դրված մի թաս ու քրեղան: Գանգի մոտ գտնվեց բրոնզից մի ականջօղ (աղ. 4):

Դամբարան 6 - Նախորդ դամբարանը պեղելիս նկատեցինք, որ այստեղ պատահական բացված դամբարանի և թիվ 5-ի միջև բավականին մեծ է բաժանումը. ենթադրվեց, որ մեկ այլ դամբարան ևս կա: Պարզվեց, որ իրոք ժայռափոր մեկ այլ դամբարան է, որոնք իրար հողորդակցվող են թիվ 5-ի հյուսիսային պատի մեջ արված փորվածքով: Դժվար է պնդել՝ բացվածքը միտումնավոր է արվել, թե՞ ուղղակի բացվել է դամբարանը փորելիս: Դամբարանի հարավային կեսում դրվել է մի մեծ, ուղղանկյունաձև սալ, իսկ հյուսիսային մասը լրացվել է մանր քարերով:

Դամբարանի երկարությունը՝ 138սմ, լայնությունը՝ 118սմ, միջանցիկ անցքի չափերն են. 50սմ լայն., բարձր.՝ 57սմ: Թաղումը կատարվել է մուտքի դիմաց:

Մուտքի մոտ հյուսիս-հարավ դիրքով բացվեց մանկան կմախք՝ ոսկորները տեղաշարժված: Կմախքի որովայնի հատվածում բացվեցին բրոնզյա երկու ապարանջան, ապակու մածուկից տափակ, քիչ սեղմված գնդաձև մանր ուլունքներ, անցքով երեք խխուռ, երկկոնիկ կապույտ մեկ ուլունք, բրոնզից շատ նուրբ ասեղ, ականջօղ և մատանի, գնդաձև իրանով փոքրիկ անոթ, քրեղան (աղ. 3, նկ. 1-6):

Դամբարանի կենտրոնում՝ ավելի խորքում, բացվեցին ոսկորներ և բավականին մեծ չափերի անոթի մի բեկոր:

Պարզելու համար, թե արդյոք թաղումները շարունակվում են թեք լանջով մեկ, թե միայն ստորին հատվածն են զբաղեցնում, լանջի երկարությամբ մի քանի մետր մաքրվեց բուսածածկույթից: Որոշակի դարձավ, որ նման քարերը միշտ չէ, որ դամբարան լինելու նշաններ են:

Թիվ 5 դամբարանից հարավ՝ հեղեղատի լանջի երկարությամբ մաքրված մոտ տասը մետր հատվածում, այլ դամբարան չգտնվեց:

Դամբարան 7 - թիվ 5 դամբարանից հարավ՝ բավականին հեռու՝ մոտ 7 մ, լանջի ստորին հատվածում թեք ընկած մի սալաքար էր, որից վերև՝ երկու փոքր ժայռաբեկոր: Թեք ընկած քարը հեռացնելուց հետո երևաց ժայռի մեջ փորված բացվածք, որը խորանում է ցած և շարունակվում դեպի արևելք ու լայնանալով դեպի հյուսիս: Թիվ 7 դամբարանը բացվեց թիվ 5-ից մոտ մի մետր հեռու, մինչդեռ

նախորդները բացվել էին կողք կողքի: Դամբարանը բացվեց լանջի ստորին հատվածում՝ ժայռի կտրուկ փորվածքով իջնող փոսի մեջ: Արևելք-արևմուտք կողմնորոշմամբ թաղումը կատարվել էր ձախ կողքին կծկված դիրքով: Կմախքի որովայնի հատվածի դիմաց՝ դամբարանի հյուսիսային կողմում՝ բացվեց երկու կճուճ (աղ. 3, նկ. 7, 8):

Դամբարան 8 - Բացվեց թիվ 7-ից հյուսիս-արևելք, թեք լանջի վրա, հսկա ժայռի տակ, նախորդից քիչ բարձր դիրքով: Թաղումը կատարվել է ժայռի հսկա ցցվածքի տակ: Ժայռի փոքր բացվածքը փակված էր մի քարով և լցված մանր քարերով: Քարը հեռացնելուց հետո հյուսիս-հարավ ձգված ձվաձիգ բացվածքի հյուսիսային կողմում՝ ուղիղ քարի տակ, բացվեցին մարդու ծնոտ և գանգի դիմային մաս: Հարավային անկյունում՝ թասի մեջ դրված մարդու գանգ, որից քիչ հյուսիս-արևելք, բարձր դիրքով դրված էր մեկ ունկով գավաթ: Նշված թասի բեկորները ցրված էին դամբարանով մեկ: Խցի հյուսիսային կողմում բացվեց ձախ կողքին կծկված դիրքով ժայռին հավանաբար մի կմախք, որի տակ բացվեց շուրթերը և ունկը թերի, տանձաձև իրանով, նստուկի մոտ լայնացող անոթ: Գտնվեցին եռոտանի փոքրիկ թաս, որի ոտքերը հիմքից կոտրված էին, մեկ խոհանոցային կճուճ և մի գույզ բրոնզյա ականջօղ (աղ. 5): Դամբարանում թաղվել է 9 կամ 10 հանգուցյալ: Յուրաքանչյուր անգամ մուտքը բացվել է, և նախորդների ոսկորները տեղաշարժելով՝ նոր աճյունի համար տեղ են բացել: Որպես հետևանք՝ փոքր խցում, բացի նշված երկու կմախքներից, մյուսների նախնական դիրքը մնում է անհայտ:

Դամբարան 9 - Այս դամբարանը գտնվում է թիվ 7-ից քիչ բարձր: Արտաքուստ ձվաձիգ շարվածքը կրոմլեխի տպավորություն էր թողնում: Մաքրելուց հետո ուրվագծվեց հետևյալ պատկերը: Քանի որ այստեղ ժայռն ավելի խորն է, վերնից իջած հողաշերտի հզորությունն ավելին է, քան մինչ այդ բացված դամբարանների վրա: Մոտ 1մ հողի շերտի տակ բացվեց ժայռափոր փոս, որի մեջ կատարվել էր թաղումը: Այնուհետև խցի ստորին հատվածը փակվել է քարերի շարվածքով՝ պահպանելով լանջի թեքությունը: Խուցն անկանոն ձվաձիգ է, և հավանաբար արտաքին օղակն ուրվագծել է ներսի պատկերը: Կմախքը կծկված, ծնկները ծալված դիրքով դրված էր արևմուտք-արևելք: Ուղեկցող նյութերը ոտքերի և կոնքի հատվածում էին: Դամբարանի հյուսիսային պատին կիպ, կմախքից բարձր դրված, թեք ընկած էր մի սափոր, ոտքերից վերև՝ երկու կճուճ և հինգ քրեղան (աղ. 2): Ոսկորների խառնիխուռն վիճակը, կիսված ստորին ծնոտի մասերի գտնվելը դամբարանի տարբեր հատվածներում, ողերի ցաքուցրիվ լինելը, գանգի դրված լինելը անոթի մեջ ենթադրել են տալիս, որ կատարվել է դիամասնատմամբ թաղում:

Դամբարան 12 - Արդեն պեղված ժայռափոր դամբարանները հեղեղատով բաժանվում են դիմացի բլրալանջից: Որոշվեց ստուգել՝ արդյոք թաղումներ են կատարվել նաև հեղեղատի արևմտյան ափին: Դրված քառակուսիներից մեկի մեջ, մակերեսի ճիւղը հեռացնելիս, միջին մեծության մի ժայռաբեկորի արևելյան եզրին՝ գրեթե մակերեսին՝ մոտ 5սմ հողի տակ, բացվեցին բեկորված անոթներ: Բացվեց հյուսիս-հարավ կողմնորոշմամբ, մեջքի վրա պառկած, գլուխը ձախ թեքված դիրքով կնոջ թաղում: Երկու մեծ անոթներից մեկը պառկած դիրքով դրված էր ոտքերի

ծավալածքի մոտ, մյուսը՝ հենց կրծքին: Հավանաբար ունեցել են ուղիղ դիրք, այնուհետև ընկել են աճյունի վրա: Այն, որ կմախքը նախապես ունեցել է նստած դիրք, վկայում են ինչպես գլխի տակ բացված փշրված թասը, այնպես էլ կողքին դրվածը, որի մեջ ընկել էին ձեռքի ոսկորները: Կմախքի աջ կողմում գտնվեցին բրոնզյա զարդամասեր. սրտաձև կամ եռանկյունաձև կախիկ, գլանաձև ուլունքներ: Նույն հատվածում գտնվեցին նաև բրոնզյա երկու շքասեղ, բարակ բրոնզալարից, ծայրերը բաց երկու ականջօղ, մեկ այլ զարդ՝ հավանաբար մատանի կամ օղ: Աջ ականջի մոտ գտնվեց բարակ բրոնզալարից ականջօղ (աղ.1): Կմախքներն ունեն կծկված կամ մեջքին պառկած դիրք: Ուղեկցող նյութերը գտնվում են գլխի, որովայնի, ոտքերի մոտ: Կենդանական ոսկորները հազվադեպ են:

Առավել բնորոշ նյութեր կան թիվ 12 դամբարանում՝ մեկ կճուճ, երկու քրեղան, բրոնզից և ոսկորից զարդեր (աղ. 1): Գտնված միակ կճուճը (աղ. 1, նկ. 3) համահունչ է նախորդ տարում պեղված հարավային կրոմլեխի ուշ բրոնզի վերջին փուլին պատկանող կճուճին,² ինչպես նաև Շիրակի տարածաշրջանի, Շիրակավանի³ և Արթիկի ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանների նյութերին⁴: Ուսումնասիրվող դամբարանի քրեղանները ներկայանում են երկու տարբերակով: Առաջինը գնդաձև իրանով, դուրս թեքված շուրթով օրինակն է (աղ. 1, նկ. 2), որն ուշ բրոնզի վաղ փուլին պատկանող քրեղաններից որոշ չափով տարբերվում է թե՛ ձևով, թե՛ հարդարամբ՝ ավելի մոտենալով Արթիկի ուշ բրոնզի վերջի և վաղ երկաթի նյութերին⁵: Ագատանի քրեղանի զուգահեռները հայտնի են նաև Շիրակավանի վաղ երկաթի թիվ 94 դամբարանից⁶ և բնակատեղիի համաժամանակյա շերտից⁷, Քեթիի տվյալ ժամանակաշրջանի թիվ 33 դամբարանից⁸: Երկրորդ տեսակն ունի երկթեք իրան, կլոր շուրթ (աղ. 1, նկ. 1): Այս խմբին են դասվում նաև դամբարան 9-ի (աղ. 2, նկ. 5) և դամբարան 6-ի (աղ. 3, նկ. 3) քրեղանները: Այս տեսակը հատկանշական է հատկապես Արթիկի ուշ բրոնզի երկրորդ փուլերի⁹, նաև Շիրակավանի¹⁰, Մանթաշի վաղ երկաթի դարյան դամբարանի¹¹ և Ծաղկահովիտի¹² նյութերին:

Ագատանի թիվ 12 դամբարանում գտնվել են բրոնզալարից պատրաստված, ուշ բրոնզի վերջի և վաղ երկաթի ժամանակաշրջաններին բնորոշ ականջօղեր (աղ. 1, նկ. 7, 10, 11), ինչպես նաև ուլունքաշար, որի մեջ են հավանաբար եղել

² Խաչատրյան Հ., Եզանյան Լ., Պետրոսյան Լ., Ֆորթվենգլեր Ա., Նեուսեր Թ., Մատերման Դ., նշվ. աշխ., էջ 49:

³ Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., Հին Շիրակավան, Եր., 2002, աղ. XXXV, նկ.17-21:

⁴ Хачатрян Т. Артикский некрополь. Ер. 1979.

⁵ Хачатрян Т. Древняя культура Ширака. Ер. 1975. С. 193, 224. Рис. 139, 140.

⁶ Թորոսյան Ռ. և ուրիշներ., նշվ. աշխ., աղ. XXXVIII, նկ. 7:

⁷ Նույն տեղում, աղ. LIX, նկ. 16:

⁸ Петросян Л. Раскопки памятников Кети и Воскеаска. Ер. 1989. Таб. 58. Рис. 4.

⁹ Хачатрян Т., 1979, դամբ. թիվ 2, 7, 20, 22 և այլն:

¹⁰ Թորոսյան Ռ. և ուրիշներ., նշվ. աշխ., աղ. XVI, նկ. 5, աղ. XXVIII, նկ. 7, 8, աղ. XXXIV, նկ. 7:

¹¹ Badalyan R.S., Avetisyan P.S. Bronze and Early Iron Age Archeological sites in Armenia I. Mt. Aragats and its surrounding Region. BAR International Series 1967. 2007. P. 2h, Pl. Ii, F. 3.

¹² Նույն տեղում, աղ. V, նկ. 8:

նան կախիկն (աղ. 1, նկ. 6) ու բրոնզե թիթեղից զլանաձև ոլորուն երկու ուլունքները (աղ. 1, նկ. 8, 9): Այս դամբարանի վերջին երկու իրերն են բրոնզաձուլ ծակիչ- շքասեղները (աղ. 1, նկ. 4, 5), որոնց ոսկրե տարբերակները հայտնի են Արթիկի երկրորդ խմբի¹³ և Շիրակավանի ուշ բրոնզի վերջին փուլի դամբարաններից¹⁴:

Ազատանի թիվ 12 դամբարանի խեցանոթների հետ զգալի ընդհանրություններ ունեն նաև թիվ 9 դամբարանի նյութերը (աղ. 2): Քրեղաններից մեկը (աղ. 2, նկ. 5) նույնական է թիվ 12 դամբարանի նյութերին: Մյուս քրեղաններից երեքը (աղ. 2, նկ. 6-8) տիպական են ուշ բրոնզի վերջին փուլի համար և լավ հայտնի են Արթիկի և Շիրակավանի վերը նշված դամբարանների նյութերից: Թիվ 9 դամբարանի մյուս քրեղանը ձևով զգալիորեն տարբերվում է նախորդներից, ունի ընդգծված կլոր նստուկ, կիսագնդաձև իրան, դեպի դուրս ոլորված շուրթ և ուսերին արված երկու ակոսագոտի (աղ. 2, նկ. 3), որի զուգահեռները նույնպես Շիրակավանի ուշ բրոնզի վերջին փուլի և վերը նշված վաղ երկաթիդարյան դամբարաններում են: Ուսումնասիրվող դամբարանում գտնվել է նաև կլոր հատակով, բարձր վզով երկկանթ անոթ (աղ. 2, նկ. 4): Նույն ձևի անոթների սկիզբը նս ուշ բրոնզի վերջին փուլի հուշարձաններում է՝ Լենինականի¹⁵ Շիրակավանի 55, 106¹⁶, Արթիկի 48, 89, 128 և այլ դամբարաններ¹⁷: Այս նյութերն ավելի շատ են վաղերկաթիդարյան հուշարձաններում՝ Կառնուտում¹⁸, Մաստարայում¹⁹, Թալինում²⁰, Շիրակավանում²¹, և վաղ երկաթի ժամանակաշրջանի վերջին փուլի հուշարձաններում (Ոսկեհասկ և այլն)²²:

Ազատանի թիվ 9 դամբարանի վերջին երկու անոթները խոհանոցային կճուճներն են (աղ. 2, նկ. 1, 2), որպիսիք լավ հայտնի են Հայաստանի ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանների գրեթե բոլոր հուշարձաններից:

Այսպիսով, Ազատանի թիվ 12 և 9 դամբարանների նյութերի համեմատական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք կարող են վերաբերել ուշ բրոնզի վերջ-վաղ երկաթի ժամանակաշրջաններին և թվագրվել մ.թ.ա. XII-X դդ.:

Համանման նյութեր կան նաև Ազատանի թիվ 5 դամբարանում, որտեղ քրեղաններից մեկը (աղ. 4, նկ. 7), ինչպես տեսանք նախորդ դամբարանի նյութերի ուսումնասիրման ժամանակ, ամբողջությամբ կրկնում է ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջաններին բնորոշ ձևերը: Քրեղաններից հաջորդը (աղ. 4, նկ. 6) իրանի կիսագնդաձևությամբ հիշեցնում է ուշ բրոնզի վերջի և վաղ երկաթի նյութերի ձևերը, սակայն վզի թեթևակի ներձկումը նորություն է: Մյուս քրեղանի (աղ.

¹³ Хачатрян Т., 1975, էջ 214, նկ. 127.

¹⁴ Թորոսյան Ռ. և ուրիշներ, նշվ. աշխ., աղ. XV, նկ. 3, աղ. XXIX, նկ. 6:

¹⁵ Мартиросян А. Армения в эпоху бронзы и раннего железа. Ер. 1964. С. 128.

¹⁶ Թորոսյան Ռ. և ուրիշներ, նշվ. աշխ., աղ. XXIX, XLI:

¹⁷ Хачатрян Т., 1979, դամբ. 48, 89, 128 և այլն:

¹⁸ Badalyan R., Avetisyan P., նշվ. աշխ., էջ 151, աղ. I, նկ. 1-3.

¹⁹ Նույն տեղում, էջ 217:

²⁰ Նույն տեղում, էջ 258, նկ. 13, էջ 259, աղ. XIII, նկ. 4:

²¹ Թորոսյան Ռ. և ուրիշներ, նշվ. աշխ., աղ. XLI, XLVI:

²² Петросян Л., նշվ. աշխ., տախտ. 67, նկ. 1:

4, նկ. 4) նմանակը Շիրակավանի վաղ երկաթիդարյան թիվ 94 և 106 դամբարանների նյութերում է²³ և Արթիկի դամբարանների երկրորդ խմբում²⁴: Քրեդանների մյուս տեսակը նախորդներից տարբերվում է լայն, հարթ հատակով, լայն բերանով (աղ. 4, նկ. 5) շուրթի մոտ առկա բռնակով: Այս տեսակի քրեդաններ ևս առկա են Արթիկի երրորդ խմբում²⁵ և վաղ երկաթիդարյան նյութերով թիվ 223 դամբարանում²⁶, ինչպես նաև Քեթիի թիվ 34 և 38²⁷, Թալինի թիվ 3 դամբարանում²⁸ և Մարապատում²⁹: Թիվ 5 դամբարանում գտնվել է նաև քիչ հանդիպող կճուճների երկու տեսակ՝ մեկն ունի վզից իրանի ուսերին երկթեք անցում (աղ. 4, նկ. 2): Նշված կճուճի գուգահեռները Շիրակավանի թիվ 83³⁰ և Քեթիի 34³¹ դամբարաններում են: Մյուս կճուճն ունի քիչ բարձր վիզ, ծալած շուրթ (աղ. 4, նկ. 3): Նման շուրթեր ունեն Արթիկի երկրորդ խմբի թիվ 68, 74³² և այլ, նաև Շիրակավանի թիվ 100, 112³³ ու վաղ երկաթիդարյան այլ դամբարանների խոհանոցային կճուճները:

Ազատանի թիվ 5 դամբարանում հայտնաբերված մետաղյա գտածոներն են դաշույնը, ասեղները, մատանին ու ականջօղերը (աղ. 4, նկ. 9-12): Դաշույնը Մևանի ավազանում Երվ. Լալայանի պեղումներով հայտնաբերված սևանյան տեսակի դասական օրինակներից է³⁴, Հայաստանի վաղերկաթիդարյան ժամանակաշրջանում ամենատարածված մետաղյա իրերից: Նման դաշույններ գտնվել են ուշ բրոնզի վերջին փուլի և երկաթի ժամանակաշրջանների դամբարաններում՝ Էվկլուի հավաքածո³⁵, Ադիամանի իշխանական դամբարան³⁶ և բազմաթիվ այլ հնավայրեր (Մակարաշեն, Ռեդկին Լագեր, Մաստարա, Շիրակավան, Թալին): Հարություն Մարտիրոսյանը, ուսումնասիրելով Թաքիայից հայտնի դաշույնը, կարծում է, թե ավելի վաղ այդպիսիք հայտնի չեն և ըստ ընդունված ժամանակագրության, այն թվագրում է մ.թ.ա. XI-X դդ.³⁷: Ազատանի թիվ 5 դամբարանում գտնվել է նաև ասեղ (աղ. 4, նկ. 10), որի բազմաթիվ օրինակներ հայտնի են Հայաստանի բրոնզի դարաշրջանի մշակույթի բոլոր փուլերի հուշարձաններում: Թիվ 5 դամբարանից հայտնի են նաև զարդեր՝ բրոնզալարից պատրաստված մատանիներ (աղ. 4, նկ.

²³ Թորոսյան Ռ. և ուրիշներ, նշվ. աշխ., աղ. XXXIX, նկ. 7, աղ. XLI, նկ. 4:

²⁴ Хачатрян Т., 1975, էջ 227, նկ. 142:

²⁵ Նույն տեղում, նկ. 161:

²⁶ Хачатрян Т., 1979, էջ 203:

²⁷ Петросян Л., 1989, տախտ. 19, նկ. 1, 2:

²⁸ Badalyan R., Avetisyan P., նշվ. աշխ., էջ 257, աղ. X.

²⁹ Պետրոսյան Լ., Պեղումները Մարդարապատում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում I, Եր., 1992, աղ. XCIII:

³⁰ Թորոսյան Ռ. և ուրիշներ, նշվ. աշխ., աղ. XXXV, նկ. 12:

³¹ Петросян Л., 1989, տախտ. 62, նկ. 1:

³² Хачатрян Т., 1979, դաշ. 68, 74.

³³ Թորոսյան Ռ. և ուրիշներ, նշվ. աշխ., աղ. XLVI, նկ. 19, աղ. XL, VIII, նկ. 7:

³⁴ Լալայան Եր., Դամբարանների պեղումները խորհրդային Հայաստանում, Եր., 1931, էջ 156:

³⁵ Мартиросян А. Армения в эпоху бронзы и раннего железа. Ер. 1964. С. 143. Рис. 59 (13).

³⁶ Նույն տեղում, էջ 158, նկ. 64:

³⁷ Мартиросян А., նշվ. աշխ., էջ 132-135:

11), իրար մոտեցող ծայրերով ականջօղ (աղ. 4, նկ. 12), որոնց զուգահեռները Շիրակավանի 48³⁸ և Նորատուսի 10 կրոմլեխում³⁹ և այլուր են:

Ազատանում 2015 թ. պեղված թիվ 8 դամբարանում գտնվել են հինգ կավաման և բրոնզալարից պատրաստված զարդեր (աղ. 5):

Կա նաև թիվ 12 և 9 դամբարանների լայն հատակով և բերանի լայն բացվածքով քրեղաններից քիչ տարբերվող օրինակ (աղ. 5, նկ. 2), որի զուգահեռը Շիրակավանի բնակատեղիի երկաթիդարյան շերտից գտածոներում է⁴⁰: Մյուս՝ քիչ հանդիպող, նմանատիպ եռոտանի անոթի (աղ. 5, նկ. 3) նմանակները Շիրակավանի ուշ բրոնզի վաղ փուլի թիվ 54⁴¹ դամբարանի և Գեղարտոի համաժամանակյա նյութերում են⁴²: Վերջիններիս մեջ կան նաև առանց ոտքերի տարբերակներ: Ուսումնասիրվող դամբարանի երկկանթ կավանոթը (աղ. 5, նկ. 4) զուգադիր է Արթիկի ուշ բրոնզի երկրորդ խմբին պատկանող 48, 209⁴³ և այլ դամբարանների նյութերին:

Ազատանի թիվ 5 դամբարանի նյութերից է նաև փոքր, միականթ բաժակը (աղ. 5, նկ. 5), որի զուգահեռները հայտնի են Մաստարայի թիվ 17 դամբարանից⁴⁴ և Շիրակավանից⁴⁵:

Ազատանի՝ 2015 թ. պեղված գրեթե բոլոր դամբարաններում գտնվել են նաև ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջաններում տարածված, այսպես կոչված, խոհանոցային կճուճներ (աղ. 2, նկ. 1, 2), (աղ. 4, նկ. 8), (աղ. 3, նկ. 7, 8): Թիվ 8 դամբարանում գտնվել են բրոնզալարից զարդեր (աղ. 5, նկ. 6, 7), որոնց զուգահեռներն Արթիկի երկրորդ խմբի և վաղ երկաթի դամբարաններում են⁴⁶: Թիվ 6 դամբարանի ապարանջանները, ասեղը, խխունջից, շաղախից և սարդիոնից ուլունքները (աղ. 3, նկ. 1, 2, 5, 6) նույնպես վաղ երկաթի ժամանակաշրջանի հայտնի նյութերից են:

Այսպիսով, 2015 թվականին Ազատանի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների ժայռափոր հինգ և հիմնահողային մեկ դամբարանների պեղումներով ունենք հետևյալ պատկերը: Մինչ այժմ պեղված ժայռափոր դամբարանների տեղադրությունը ցույց է տալիս, որ դրանք փորվել են ստորինը՝ գետակի կամ հեղեղատի հունի մակարդակին, երկրորդը՝ դրանից վերև, և երրորդը՝ բլրի գագաթից քիչ ներքև: Վերին և ստորին դամբարանների միջև բարձրությունը 10մ է: Նրանց հիմնական մասը կենտրոնացված է բարձունքներում, դիտարժան տեղերում: Կողք կողքի խմբված ստորին հինգ թաղումներ են, ինչը ենթադրել է տալիս, որ դրանք կարող են խմբված լինել դամբարանադաշտի տարբեր հատվածներում՝ տեղանքի

³⁸ Թորոսյան Ռ. և ուրիշներ, նշվ. աշխ., աղ. XLVIII, նկ. 2, 3:

³⁹ Мартыросян А., նշվ. աշխ., էջ 209, նկ. 81:

⁴⁰ Թորոսյան Ռ.Մ. և ուրիշներ, նշվ. աշխ., աղ. LIV, նկ. 16, 20:

⁴¹ Նույն տեղում, XXVIII էջ 158, նկ. 64:

⁴² Badalyan R.S., Avetisyan P. S., նշվ. աշխ., էջ 110, աղ. VII, նկ. 20-23:

⁴³ Хачатрян Т. С., 1979, նշվ. աշխ., դամբ. 44, 209 և այլն:

⁴⁴ Badalyan R.S., P. S. Avetisyan, նշվ. աշխ., էջ 217:

⁴⁵ Թորոսյան Ռ.Մ. և ուրիշներ, նշվ. աշխ., աղ. LIX, նկ. 10:

⁴⁶ Хачатрян Т.С., 1979, նշվ. աշխ., դամբ. 34, 135, 192, 242 և այլն:

ժայռոտ այլ հասվածներում: Արդյոք կա՞ն այլ թաղումներ՝ ցույց կտան հետագա պեղումները:

Ժայռափոր դամբարանները փորված են պեմզայով, խճավագով և քարերով խիտ շերտի մեջ: Արտաքին՝ հազիվ նկատելի հատկանիշները հեղեղատի եզրին ցցուն ժայռաբեկորներն են, որոնք, կա՛մ վերին ժայռերի փլուզման արդյունքում ցած սահելով, հայտնվել են այստեղ, կա՛մ դրվել են դամբարանների արևմուտք ուղղված մուտքերի աջ և ձախ կողմերում: Ժայռափոր դամբարանները բացվել են հնավայրի երկարությամբ հյուսիս-հարավ ձգվող բլրաշարի ստորոտով անցնող հեղեղատի արևելյան և արևմտյան լանջերին և ստորոտին: Մինչ այժմ պեղված այս դամբարանների տեղադրությունը ցույց է տալիս, որ դրանք բլրի լանջի երեք տարբեր մակարդակների վրա են. ստորինը՝ գետակի կամ հեղեղատի հունի մակարդակին, երկրորդը՝ դրանից քիչ վերև, և երրորդը՝ գագաթից քիչ ցած:

Ազատանի այս դամբարանների ուսումնասիրությունը ցույց է տալիս թաղման կառույցների ձևերի ու ծեսի յուրահատկությունները:

Դամբարանները կողք կողքի են, գրեթե իրար կիպ: Լանջի ստորին մասում իրար կողք խմբված հինգ թաղումների խցերն անկանոն ձևով են, տանձաձև կամ կլորավուն: Առաստաղները կլորավուն են, մուտքերը՝ փոքր և նեղ: Խցան չկա:


Դամբարաններում կատարվել են ինչպես անհատական, այնպես էլ խմբակային թաղումներ: Վերջին դեպքում յուրաքանչյուր անգամ մուտքը բացել են, նախորդ աճյունների ոսկորները տեղաշարժել և կատարել նոր թաղում: Կմախքներն ունեն կողքին կծկված կա՛մ ուղիղ պատկած դիրք: Ուղեկցող նյութերը դրվել են գլխի, կոնքի, որովայնի և ոտքերի մոտ: Կենդանական ոսկորները հազվադեպ են:

Պեղված ժայռափոր բոլոր դամբարանները փակվել էին նույն կերպ: Դիադրումից հետո բացվածքը դիմացից քարերի մեկ-երկու շարքով փակվել է, որի հետևանքով բոլոր դամբարաններում ինչպես աճյունի, այնպես էլ հոգեհացի որոշ ոսկորներ մնացել են մուտքը փակող շարվածքի տակ: Այնուհետև դամբարանները, լանջի թեքությանը համապատասխան, ծածկվել են հողով, խճավագով ու քարերով: Վերականգնվել է տեղանքի նախնական տեսքը՝ չթողնելով դամբարանների առկայության մասին հուշող արտաքին որևէ նշան: Այս ձևով դամբարանները քողարկել են՝ հետագա ավերումներից ապահովելու նպատակով: Որպես հետևանք՝ ժայռափոր դամբարանները տեղանքին, բնական միջավայրին այնքան միաձույլ են, որ եթե առաջին դամբարանը պատահական չհայտնաբերվեր, այստեղ դամբարանադաշտի գոյության մասին հնարավոր չէր նույնիսկ ենթադրել:

Գտածոները զուգադիր են Հայաստանի ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանի հուշարձանների նյութերին ու կարող են թվագրվել մ.թ.ա. XII-X դդ.:




Նկ. 1.




Նկ. 2.


Աղյուսակ 1




Աղյուսակ 2




Աղյուսակ 3



Աղյուսակ 4



Աղյուսակ 5



РАСКОПКИ НЕКРОПОЛЯ АЗАТАН В 2015г.

___ *Резюме* ___

___ *А. Хачатрян, Л. Еганян, Л. Петросян,
А. Фуртвенглер, Т. Неусер, Д. Маурман* ___

2015 году совместная армяно-немецкая экспедиция продолжала раскопки некрополей поселения эпохи железа вблизи села Азатан Ширакского марза. Было раскопано 5 захоронений в склепах с горизонтально выкопанными шахтами в скальной породе, также 1 грунтовое погребение.

Все обнаруженные скальные захоронения расположены по всему склону на разных уровнях. Самые нижние находятся у подножья склона, а самый верхний-под вершиной скалистого холма. Камеры имеют форму неправильного круга или овала. Входы всегда с западной стороны. Поверхность покрыта землей и никаких внешних признаков наличия здесь склепов не было. Захоронения такого типа пока зафиксированы только в Азатанском могильнике.

Грунтовое захоронение, типичное для этого периода, не отличается от ранее раскопанных захоронений этого могильника: обведенная нкромлехом, центральная погребальная камера, перекрыта большими бесформенными глыбами базальта.

Датировка установлена по находкам. Инвентарь из склепов Азатана синхронен с материалами грунтовых и катакомбных погребений и датируется XII-X вв. до н.э.

Раскопки и погребальный инвентарь дают новый материал эпохи раннего железа Ширака, а следовательно, для всей древней истории Армении.

Տեղեկություններ հեղինակների մասին

Խաչատրյան Համազասպ Հակոբի – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, E-mail: smuseum@web.am.

Եզանյան Լարիսա Գրիշայի - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, E-mail: smuseum@web.am.

Պետրոսյան Լևոն Աշոտի – ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ
Ֆորթլանգլեր Անդրեաս - Հայլեի /Գերմանիա/ համալսարան,
E-mail: dadasfurtl@web.de

Նեուսեր Թորիաս - Հայլեի համալսարան,
E-mail: tobias.neuser@student.uni-halle.de

Մաուերման Դորոթեա - E-mail: dorothea.mauermann@adendorf.com

Գյումրեցի գեղանկարիչ Գարիկ Մանուկյանի արվեստն ավանդականի ու մոդեռնի, իրականի ու վերացականի յուրօրինակ եկլեկտիկ համադրություն է: Իբրև գեղանկարիչ ձևավորվելով 80-ականների բարդ ժամանակահատվածում՝ նկարիչն ամփոփում է նախորդների փորձն ու գիտելիքները, անցկացնում սեփական «ես-ի» միջով՝ ստեղծում նոր ձեռագիր: Նուրբ գունային համադրությունները, սիմվոլիկ նշանային լեզուն, կոմպոզիցիոն բարդ լուծումներ գտնելու կարողությունը բնութագրում են Մանուկյանի ինքնատիպ ոճը: Մասնագիտությամբ լինելով բեմական նկարիչ՝ նա կտավները դիտում է իբրև բեմական տարածություն, իսկ իր պայմանական հերոսներին՝ դերասաններին: Ինչ էլ նկարի Գարիկ Մանուկյանը, նրա արվեստի կիզակետում Գյումրին է՝ բարքերով, մարդկանցով ու անկրկնելի կոլորիտով:

Գարիկ Մանուկյանը ծնվել է Լենինականում 1958թ., Գյումրու պատմական Սլաբոդկա կոչվող թաղամասում, որը համարվում է քաղաքի «ամենանկարչական» հատվածը: Ներկերի հոտը նրան ծանոթ էր հոր արհեստանոցից, իսկ տան հարևանությամբ գտնվող Մերկուրովի անվան նկարչական դպրոցը տղայի մեջ սերմանեց սեր արվեստի նկատմամբ: Ավարտելով Երևանի Թերլեմեզյանի ուսումնարանը, ապա՝ Գեղարվեստաթատերական ինստիտուտի բեմանկարչության բաժինը՝ Գարիկը 1980-ականների սկզբին աշխատում է Լենինականի՝ Ա. Մռավյանի անվան թատրոնում իբրև ձևավորող նկարիչ՝ ի հայտ բերելով ստեղծագործական մեծ ներուժ: Այդ տարիներին քաղաքն ապրում էր մշակութային բուռն կյանքով. ստեղծագործական ակտիվ գործունեություն էին ծավալում Գրողների, Թատերական գործիչների, Նկարիչների միության Լենինականի մասնաճյուղերը: Լենինականում գործում էր պատկերասրահ, որտեղ պարբերաբար կազմակերպվում էին ցուցահանդեսներ, քննարկումներ: Ավագ սերնդի կայացած նկարիչների կողքին հայտնվում էին երիտասարդներ, որոնք զգում էին մոտավորապես փոփոխությունների անհրաժեշտությունը: Գարիկ Մանուկյանը պատկանում էր այդ սերնդին, որ կոտրում է ավանդական կաղապարներն ու կարծրատիպերը...

Մանուկյանի վաղ կտավները հիմնականում չունեն շրջանակներ: Նկարիչը պատի տարածությունը դիտում է որպես ֆոն և նկարի տրամաբանական սկիզբ ու շարունակություն: Նա մի քանի նկարներ միացնում է՝ ստեղծելով ինքնատիպ ու անկրկնելի գունային համադրություններ: Լույսով ողողված գույնը նրա կտավներում դառնում է զգացմունքի արտահայտություն, հոգևորի խորհուրդ:

Երկրաշարժից հետո նկարիչն անհատական ցուցահանդեսներով է ներկայացնում նախ Ֆրանսիայում /1990/, ապա Դանիայում /1994/: «Տեղատվություն» /1991/ շարքը ներկայացվեց Գյումրու I Բիենալին. բազում վիճաբանությունների առիթ տվեց՝ միաժամանակ առաջացնելով մեծ հետաքրքրություն: Գաղափարը ծնվեց,

երբ բնական աղետ (երկրաշարժ) տեսած նկարիչը Դանիայում ականատես դարձավ տեղատվության (բնական անոմալիայի): Կանաչի նրբերանգներով, կապույտի, դեղինի ու դարչնագույնի համադրությամբ նկարիչն ստեղծում է մեղամաղձոտ տրամադրության պատրանք: Պատկերված է իրականում գոյություն ունեցող վիճակ, որն իր մեջ կրում է հայտնի վերացարկում: Տեղատվությունն անջնջելի տպավորություն է գործել նկարչի վրա. ծովը, ավերից քաշվելով, ավազի վրա թողել է մամուռի կտորներ, թպրտացող ձկներ, խեցիներ, ծովի «հարստությունը» դուրս պրծած երևակայական ու իրական տարբեր բեկորների տեսքով: Մարդիկ քայլում են փափուկ, բայց թաց ավազի վրա՝ դաջելով իրենց ոտնահետքերը, անունները՝ գուցե ինչ-որ պահի իրենց պատկերացնելով բնության մի մասնիկ: Չկա տարածություն, ու չկա ժամանակ. սա «մակրոկոսմոսն» է՝ անձայրածիր ու անեզր...

1990-ական թվականներին գյումրեցի շատ նկարիչների աշխատանքներ միտված էին հոգևոր արժեքների բացահայտմանը: Ինչ էր սա. տուրք ժամանակին, տարիներ շարունակ արգելքի տակ գտնվող թեմաների բացահայտում, թե՛ սեփական ներաշխարհի զննման ու ինքնամաքման փորձ: Նկարիչը «Նոր կտակարանը» ներկայացնում է խոհափիլիսոփայորեն, ինքնատիպ մեկնություններով ու նոր արտահայտչամիջոցներով: Նրա առջև դժվարին խնդիր էր.

«Նոր կտակարանը» գրվել է շուրջ 2000 տարի առաջ ու նույնքան էլ մեկնություններ ու արտահայտչաձևեր ունի: Ո՞ր պահն ընտրել ու ինչպե՞ս մեկնել նկարը, որ ամփոփի աստվածաշնչյան խորհուրդները, հասկացվի ու ընկալվի նորովի: Շարքը բաղկացած է կտավներից, որոնցից յուրաքանչյուրն անդրադառնում է Քրիստոսի կյանքի բախտորոշ դրվագներին՝ «Ծնունդ», «Մկրտություն», «Մատնություն», «Ուրացում», «Խաչելություն», «Հարություն»... Շարքը կառուցված է հակադրամիությունների միջոցով. հանգուցակետերը հասնում են՝ խորհրդանշելով Քրիստոսի կյանքի կարևոր իրադարձությունները, որոնք ամբողջանում են Փրկչի պատմության մեջ՝ Ավետումից մինչև Համբարձում: Կտավները բաժանված են առանձին վանդակների, որոնցից յուրաքանչյուրում գունային լուծումներն ու օգտագործված խորհուրդները ստանում են իմաստային ամբողջություն: «Ծնունդ» կտավում գերիշխում են կապույտն ու դարչնագույնը՝ հոգու ու մարմնի խորհրդով: Կապույտ ֆոնին պատկերված է Գյումրվա շքամուտքերից մեկը, որը տվյալ դրվագում ստանում է «Դրախտի դռան»/Հին կտակարան/ ու «Ավետման»/Նոր կտակարան/ խորհուրդները: Ներքևի դրվագում ու կենտրոնական հատվածում Աստվածամայրն է մանկան հետ: Նա ողողված է անտեսանելի (ներքին) լույսով: Ներքևում պատկերը դառնում է ավելի հստակ. նրա դիմացի ֆոնը մուգ է, ասես լինի մոր կանխազգացումը որդու ողբերգական ճակատագրի վերաբերյալ: Աստվածամայրերի միջև պատկերված խաչը ջրբաժան է անցկացնում մոր կյանքի երկու հատվածների միջև՝ մինչ խաչելություն և խաչելությունից հետո: Խաչը աճելով՝ վերածվում է «կենաց ծառի»՝ տրամաբանական զարգացում ստանալով շարքի հաջորդ կտավում: «Խաչելությունը» շարքի արտահայտիչ կտավն է՝ գունային լուծումներով ու իմաստային շեշտադրումներով: Օգտագործված են հայկական մանրանկարչության («Խորհրդավոր ընթրիք», Վասպուրականի դպրոց), Վերածննդի

շրջանի դիմանկարի մի հատված (Պոնտացի Պյուդատուր՝ դատավորի կերպարում), որոնք ասես երկխոսության են բռնվում, տարբեր մշակույթների լեզվով պատմում Նոր կտակարանի «եղելությունը»: Նկարիչը վարպետորեն միահյուսում է ժամանակակից վերացական արվեստի տարրերը դասական արվեստի հայտնի ստեղծագործությունների, սեփական խորհրդանիշերի հետ: Կտավի վերնում՝ եկեղեցու պատի տակ, թռչունը խորհրդանշում է Քրիստոսի կյանքի երկակի բնությունը: Երկու անկյուններում պատկերված է Քրիստոսի դեմքը անֆաս դիրքով: Չախ կողմում նա ասես հանգչում է՝ փշե պսակը գլխին. դեմքն արտահայտում է ցավ, տառապանք: Աջում՝ Քրիստոսի աչքը լայնակի բացված է. նա լուսավորված է ներքին լույսով ու պայծառատեսությամբ: Սա հոգու հաղթանակն է, որ հաջորդել է ֆիզիկական մահվանը: Թեման ամբողջանում է Քրիստոսի խաչելության պատկերով, որը դարձյալ կատարված է դարչնագույնի ու կապույտի համադրությամբ: Որպես գաղափարական ու գեղարվեստական միջոցներ օգտագործված են հանգույցները, իսկ հանգույցներից հյուսվում է կյանքի հենքը, որը կուտակված բացասական էներգիան է: Նկարիչը խոսում է աստվածային նախախնամության ու իրականության միջև եղած հակասության մասին: Այն պահանջում է ելքեր, լուծումներ..

«Հարությունը» «Ծնունդ» կտավի տրամաբանական շարունակությունն է, որտեղ դարձյալ շեշտադրվում է գծի ու գույնի այլաբանական փոխակերպումը: «Ծնունդ» կտավում Քրիստոսի «կյանքի գիծը» համարժեք է խաչի պատկերին+/, որը հետզհետե վերածվում է անկյունագծի/←/, իսկ «Հարություն» կտավում այն դառնում է հորիզոնական/---/: Այս անցումները շեշտված են գույնով: Քրիստոսի չարչարանքներն ու խաչելությունը արտահայտված են կապույտի ու կարմիրի, իսկ հաղթանակն ու հարությունը՝ երկնագույնի ու վարդագույնի միջոցով՝ այն մաքրելով սպիտակով: Գունային այս մտածողությունը հիշեցնում է միջնադարյան խորանների մեկնությունը, որտեղ ամեն գույն ունի որոշակի իմաստ ու նշանակություն: Այսպես, Քրիստոսի կյանքի ու հարության գլուխները զարդանախշվում են բաց, իսկ չարչարանքներն ու խաչելությունը՝ մուգ գույներով: Կտավի վերին հատվածում նկարիչը պատկերել է դրվագ Պ. Բրեգելի «Կույրեր» կտավից, նրանց ձեռքերին կարելի է տեսնել նավթի ամաններ՝ այդ տարիների մութ ու խավար Գյումրու խորհրդանիշը: Միգուցե այս նկարով նկարիչը կանխորոշում է քաղաքի ապագա՞ն. իրենց առաջնորդի հետևից կուրորեն կործանման գնացող մարդկանց պատկերով:

Համատեղել անհամատեղելին, ժամանակակիցը ավանդականի հետ. ահա այս խնդիրն է իր առջև դրել նկարիչը: Գիծն ու գույնը դառնում են միջոցներ, որոնցով նկարիչն ստիպում է մտածել, մարդու ներանձնյա խորքերում արթնացնում առեղծվածային զուգորդումներ, տանում տեսիլքների ու անուրջների աշխարհ:

Մանուկյանի ոճը կրում է հետաքրքիր տրանսֆորմացիաներ. վաղ շրջանին բնորոշ աբստրակտ ոճին ու էկլեկտիզմին փոխարինելու են գալիս իրապատական ոճի գործերը՝ նկարչի ասելիքը երբեք չսահմանափակելով որևէ ոճով ու ժանրով...

2002թ. - Գարիկ Մանուկյանի արվեստի կիզակետում Գյումրին է՝ ավանդապաշտ ու ժամանակակից, սարկաստիկ ու ինքնագոհ, իր հին ու նոր հերոսներով, բարքերով, ավանդույթներով: Նկարիչը երկխոսության մեջ է մտնում քաղաքի հետ, շոշափում նրա զարկերակը, ակնդետ նայում տեղի ունեցող փոփոխություններին և այս ամենը դրոշմում իր կտավներում:

«Լավ տղերք» շարքի կտավներից մեկում հեղինակը երևացող քաղաքի ուրվագիծը հիշեցնում է Բաբելոնի աշտարակը, որի ֆոնին պատկերված է Անտիկենց Թադևոսը, մարդ, որ կառուցեց Յոթվերք եկեղեցին և դարձավ հոգևոր Գյումրու խորհրդանիշներից մեկը: Կտավի առաջին պլանում պատկերված են նոր Գյումրու հերոսները՝ «Լավ տղերքը», որոնք ակամա պտտում են այսօրվա ժամանակի անիվը: Նրանք դիմագուրկ են և միանման. իրենց կամքից անկախ, բախտի բերմամբ հայտնվել են կյանքի դեկին: Լավ տղերքը ինչպես մտել, նույն կերպ էլ դուրս են գալու կտավի մակերեսից, ինչպես և դուրս կմնան Գյումրու պատմությունից: Իսկ Անտիկենց Թադևոսը մնալու է:

Նկարիչն իր կտավներում մեծ ուշադրություն է դարձնում գեղանկարչական խնդիրներին՝ կոմպոզիցիոն կառուցվածքի, դինամիկայի, ռակուրսների: Մակայն դրանք ինքնանպատակ չեն, այլ խորապես պատճառաբանված են և կրում են իմաստային որոշակի շեշտադրումներ: Այսպես՝ «Օրիորդ Վարսենիկ» շարքը նկարիչը դիտում է տարբեր դիտակետերից՝ ստեղծելով հարթություն հարթության մեջ: Շարքի հերոսուհին Գյումրու բանահյուսական հերոսներից է՝ Օրիորդ Վարսենիկը, որը նույնիսկ ծեր հասակում պճնվում էր, վառ գույներով շաքարվում և պարծենում իր երևակայական «ուզողներով»: Մանուկյանը իր կտավներում ի կատար է ածում Օրիորդ Վարսենիկի երազանքը և պատկերում է նրա հարսանիքը: Դժվար է որոշել՝ կտավի հերոսուհին պատկանում է հի՞ն Գյումրուն, թե՞ ժամանակակից: Թե՛ երեկ, թե՛ այսօր կարելի է հանդիպել բազում օրիորդ վարսենիկների, որոնք ապրում են ցնորքների աշխարհում, իրենց չկայացած ճակատագրերը սքողում գյումրեցուն բնորոշ մեծախոսությամբ ու ցուցամոլությամբ: Պատահական չէ, որ այս շարքում Մանուկյանը դիմում է գրոտեսկի՝ ընդգծելով հերոսների կերպարները: Շարքի բոլոր գործողությունները ծավալվում են ճոխ սեղանի շուրջը, որն ինչպես հին, այնպես էլ նորօրյա Գյումրու խորհրդանիշն է: Առանձին կտավներ դրվագման շնորհիվ հիշեցնում են հարսանեկան լուսանկարներ: Մակայն նկարիչը, նայելով տարբեր դիտակետերից, ընդհանրացրել է իր ասելիքը: Նա տեղի ունեցող ֆարսը դիտում է մերթ ներսից, մերթ վերսից: Այս յուրօրինակ տեսլականն էլ տարբերում է Մանուկյանի ձեռագիրը: Նա ստեղծում է քաղաքային ֆոլկլորային կտավներ, որոնցում բացահայտում է իր փիլիսոփայությունը: Նկարի բովանդակային հիմքը ժամանակի հենքն է, որտեղ մարդկային ամեն մի ճակատագիր ընդամենը մի հանգույց է քաղաքի պատմության մեջ: Եվ միևնույն ժամանակ առանձին տիպական կերպարներով նկարիչը բացահայտում է քաղաքի իրական դեմքն ու էությունը, որտեղ ավելի շատ իշխում է ցուցամոլությունը, քան թե իրական էությունը, և որտեղ մարդիկ իրենց հանապազօրյա հացի համար վերածվում են խեղկատակների, դերասանների, իսկ կյանքը՝ ֆարսի, թատրոնի: Նա

ստեղծում է մի միջավայր, որտեղ զուգորդվում են իրականությունն ու երևակայությունը: Նայելով Մանուկյանի կտավներին՝ ակամա վերհիշում ես Կուստուրիցայի ֆիլմերը: Այստեղ կան դինամիկա, երաժշտություն, կոլորիտային կերպարներ, հետաքրքիր իրավիճակներ, գունեղ լուծումներ, այլաբանական խորհուրդներ:

Առավել խոհափիլիսոփայական է Մանուկյանի «Խելացիներ և խենթեր» շարքը, որի վրա նկարիչը դեռ շարունակում է աշխատել: Նրա հերոսները նկարչին մանկուց ծանոթ կերպարներն են՝ խենթ Ուրոն, Աշոտը, Սոյոպը, որոնք, ինչպես բացահայտում է նկարիչը, «իրենց խենթության մեջ ավելի իմաստուն են, քան շատ իմաստուններ»: Նրանցից կարելի է սովորել կյանքի իմաստություն: Պատահական չէ, որ շատ արգելված թեմաների մասին մարդիկ խոսում են՝ «Աշոտի լեզվով» կամ Ուրոյի լեզվով՝ քողարկելով իրենց ասելիքը: Ակամա մտածում ես, որ խենթերը տարբերվում են մյուսներից սոսկ իրենց ազատ մտածողությամբ: Եվ դեռ հարց է ծագում՝ խենթե՞րն են խելացի, թե՞ խելացիները՝ խենթ: Իրականությունը վերածվում է խաղի, խաղը՝ իրականության:

Եթե իրական կյանքը Գարիկ Մանուկյանը դիտում է իբրև թատրոն, ապա իր թատերական ձևավորումների մեջ նա ներկայացնում է իրական կյանքը՝ հակասական, երբեմն անտրամաբանական ու միշտ գունեղ ու ինքնատիպ... Այսօր դժվար է հիշել այն բոլոր ձևավորումները, որ կատարել է Մանուկյանը Գյումրու թատրոնում: «Խնդանք, անցնինք», «Կարոտ», «Նստարան», «Քաջ Նազար», «Վենետիկի վաճառականը»... Սակայն նրա լավագույն աշխատանքը այս բնագավառում, անշուշտ, 2016թ. Աճեմյանի թատրոնում Շեքսպիրի «Լիր արքա» (ռեժիսոր՝ Արթուր Սահակյան) ներկայացման ձևավորումն է: Բացվում է վարագույրը, ու մենք ակնատես ենք դառնում յուրօրինակ միստերիայի, երբ դերասանները դիմակներով ներկայանում են հանդիսատեսի դատին: Սա «ներկայացում է ներկայացման մեջ», ու մեզ նկարիչն ու ռեժիսորը տեղափոխում են Դիոնիսյան խրախճանքի ու «միմեսիսի» տիրույթ, որտեղ ծավալվելու է դրաման, ապա ողբերգությունը՝ «կյանք» անունով: Դասական գործի նոր ընթերցումը կարելի է հաջողված համարել, քանզի նկարիչը գտնելով համոզիչ արտահայտչաձևեր՝ գույների, լույսների, հագուստների, դիմակների ու բեմական առարկաների միջոցով ասում է. «Բոլոր ժամանակներում մարդ արարածն ու նրա կրքերը նույնն են: Միշտ էլ գոյություն ունի հայրեր-որդիներ հակասությունը, ու միշտ Կոռնելիայի ճշմարտությունը մնում է չհասկացված ու չընդունված»: Բեմադրությունը վեր է ժամանակային ու ազգային պատկանելությունից, ինչն էլ համարում եմ նրա հաջողության ցուցիչը:

Այդպիսին է Մանուկյանի արվեստը՝ վառ, գունեղ, խոհական, ինքնատիպ. այսպիսին է թատրոնի ու ֆարսի վերածված Գյումրին:

ГЮМРИ КАК ТЕАТР: ХУДОЖНИК ГАРИК МАНУКЯН

___ Резюме ___

___ А. Маргарян ___

Искусство гюмрийца Гарика Манукяна сформировалось в трудный период 80-х годов. Он обобщает опыт и знания предшественников через собственное “я”, создавая новый почерк. Деликатные цветовые сочетания, символический образный язык, способность находить сложные композиции характеризуют уникальный стиль Манукяна. Будучи сценическим художником, он рассматривает холсты как сценографическое пространство, а условных героев как актеров. Какую картину бы не нарисовал Гарик Манукян, в центре его искусства Гюмри с его нравственностью, людьми и неповторимым колоритом.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարգարյան Արարի Մանվելի - արվ. թ., Երևանի գեղարվեստի ակադեմիայի

Գյումրու մասնաճյուղ, E-mail: araxmargaryan@dmil.com

*ПРОЕКТ ГРАНИЦ, ОТДЕЛЯЮЩИХ АРМЕНИЮ ОТ ГРУЗИИ И
АЗЕРБАЙДЖАНА, ПОДГОТОВЛЕННЫЙ ГЕНЕРАЛОМ
ГАБРИЭЛОМ КОРГАНЯНОМ (1918 ИЮНЬ)*

После обретения независимости в мае 1918 года в стране ещё оставалось много нерешенных проблем. И одной из них была задача определения границ между Закавказскими республиками, которую предстояло обсудить на будущей конференции в Константинополе. На конференции, кроме представителей закавказских стран, должны были присутствовать также представители союзнической четверки : Турции, Германии, Австро- Венгрии и Болгарии. Выехав из Тифлиса 13 - го июня, армянская делегация прибыла в Константинополь 19-го июня и оставалась там до 1- го ноября. Как писал Александр Хатисян, переговоры, проводимые армянской делегацией эти 4 месяца, касались следующих трёх задач:

1. Благоприятные границы для создания жизнеспособной Армении.
2. Созыв конференции в Константинополе.
3. Невыносимое положение армян в Закавказье¹.

Делегацию возглавлял Аветис Агаронян, в состав делегации входили также Александр Хатисян, Геворк Хатисян, военный советник, генерал Габриэл Корганян, первый секретарь делегации Акоп Кочарян, второй секретарь Тигран Мирзоян, секретарь делегации и дипломатический посланник Левон Лисисцян, делопроизводитель А. Агабабян, сотрудник делегации Аршак Арутюнян².

24 июня к делегации присоединились также Микаэл Пападжанян, полковник Ованнес Шахбазян, Г. Берберян. Следует отметить, что в состав армянской делегации входили люди, хорошо разбирающиеся в вопросах административного деления Закавказья.

За эти месяцы делегация представила турецкому правительству и послам стран - участниц проект границ этого административного деления с картами, основанный на статистических данных.

Это имело жизненно важное значение для молодой Армянской республики, поскольку в это время территория Армении фактически составляла всего 9000 кв. км., а с соседними странами: Грузией и Азербайджаном - не было окончательного соглашения по вопросам границ, что и предстояло обсудить и окончательно решить на предстоящей конференции.

Однако из-за новых геополитических реалий конференция в Константинополе не состоялась, и проблема границ была перенесена для обсуждения в другие инстанции.

¹ Хатисян Ал. Возникновение и развитие Республики Армении. Бейрут, 1968. л. 98.

² Национальный Архив Армении (НАА) ф. 200, о. 2, д. 12, л. 38.

За время пребывания в Константинополе, армянская делегация проводит активные обсуждения и совещания.

Уже на втором заседании, организованном 26-го июня армянской делегацией, было решено сделать подробный доклад о проблеме границ для передачи его послам стран-участниц, а представителям Грузии и Азербайджана представить точку зрения армянской делегации на эту проблему.

Собрание решает также, что обсуждения относительно границ между Арменией, Грузией и Азербайджаном должны быть проведены на этой конференции³.

27-го июня, на третьем заседании основным вопросом было определение географических границ. Генералу Корганяну было поручено создать проект границ между Арменией, Грузией и Азербайджаном, с учётом географических и исторических реалий, представить его армянской делегации как армянскую программу административно-территориального деления Закавказья⁴. Было решено, что будущая программа должна обсуждаться на заседании армянской делегации, после чего она будет представлена послу Германии, а затем правительству Турции.

На следующем заседании 30 июня генерал Габриэл Корганян и Геворк Хатисян представили свой проект границ, составленный на основе принципов, упомянутых на прошлом заседании, с учетом также условий Брест - Литовского договора.

Документ, публикуемый впервые, представляет собой проект границ между Арменией, Грузией и Азербайджаном, составленный генералом Габриэлом Корганяном в июне 1918 года. Печатается документ с оригинала, который хранится в фонде армянского национального совета Грузии, Национального Архива Республики Армения.

Документ печатается без языковых и стилистических изменений.

Проект границ

отделяющих Армению от Грузии и Азербайджана, согласно записке по вопросу о национальном разграничении территории Закавказья

Граница идёт от горы Каракая /9351/ по хребту к северо-востоку по высотам Цхрацкарос мта /8807/, Саквелос мта /9221/ к северо-западному углу Борчалинского уезда. Дальше граница по Триолетскому хребту, сливается с северной границей Борчалинского уезда до пункта, расположенного в 7 верстах по востоку от горы Арджеван, после чего она поворачивает к юго-западу и идёт по прямой линии до пункта, расположенного по реке Храм, к востоку, в одной версте от села Даракев. От этого пункта (в одной версте к востоку от села Даракев) граница идёт на запад по реке Храма до деревни Еддикилиса и, обходя эту деревню с севера, направляется по прямой линии к Инек-Тапа /6350/ и дальше по прямой линии к горе Бикей, где сливается с восточной границей Ахалкалакского уезда. От горы Бикей граница сливается с восточной границей Ахалкалакского уезда до высоты 8891, откуда она

³ НАА ф. 200, о. 2, д. 12, л. 61.

⁴ НАА ф. 222, о. 1, д. 24, л. 432.

идёт по [.....] Сарф-дара и [.....] того же названия до селения Тнуси. Она направляется дальше по вершинам в экваториальном направлении до горы Демур/4949/ после чего направляется к северу и достигает по хребту пункта, расположенного к востоку в 4-х верстах от села Пабахмели. После этого граница идёт по хребту на северо-восток и поворачивая в 2-х верстах к северу от деревни Болнис-Хачен продолжается в юго-восточном направлении через гору Тиль-Даг, скалу Тахлга-Кая по в вод[разд]ельной линии, между реками Салзалап-Чай и Шулавер-Чай до холма Узуп-Тапа. От холма Узуп-Тапа граница идёт по прямой линии до пункта, расположенной в одной версте к северу от села Эмир, после чего она идёт в общем направлении на юг, проходя в 3-х верстах к востоку от линии железной дороги Тифлис-Александрополь, и поворачивает на восток по хребту горы Гедек-Бурпу/3983/, огибая с севера деревни Бапакенд и Калача. Обогнув с севера деревню Калача, граница направляется к юго-востоку огибая в одной версте с севера и востока деревню Курумс, после чего она идёт по прямой линии на восток и достигает горы Авей. От горы Авей граница идёт на юг, до горы Сатимыш, дальше она поворачивает к юго-востоку и идёт до горы Каралл, расположенной в 2-х верстах к северо-востоку от деревни Леле-Кенд. От горы Каралл граница идёт на северо-восток до горы Оцакар и, сохраняя то же направление, достигает реки Хундуркут по горе Шиш-Тапа, обходя с севера селения Ахум и Кизил-Булаг. Граница следует дальше по реке Хундуркут до деревни Кулам, откуда имея общее направление на юг, она проходит по вод[оразделу] линии рек Аханджа (приток реки Хундуркут) и Асрак-Чай, до границы Казахского уезда и сливается с этой последней границей до горы Шах-Даг /9578/. От горы Шах-Даг граница сливается с границей Новобаязетского уезда до горы Гинал-Даг /11057/. От горы Гинал-даг/11057/ граница, им[еет] общее направление на север, [идет] по вод[ораздельной] линии речек Кошкарычек, Кошкара-Чай и Шамхор, притока реки Куры по вершинам горы Кошкар /11085/, Купак-Чермаз, до реки Шамхор, с которой сливается до горы Цранис-Коли /5792/. От пункта по реке Шамхор (на параллели горы Цранис-Коли) граница поворачивает в общем направлении на восток и идёт через гору Цранис-Коли/5792/ по хребту до горы Гек-Даг и по высоте 5319 до горы Туляк /5878/, огибая с севера деревни Куши, Балеи, Аблах. От горы Туляк /5878/ граница поворачивает в общем направлении на юго-восток и достигает реки Тертер к востоку, в одной версте от деревни Чайлы, огибая с севера деревни Эркеч, Енгикенд, Тальш и отделяя деревню Карачинар от села Молла Далатлу. От пункта, находящегося в одной версте от села Чайли по реке Тертер, граница поворачивает к югу и достигает по горами Карамем-Даг/2995/ и Сарджа /2392/ высоты в 3-х верстах к северо-западу от села Кирджамал. От этого последнего пункта граница идёт к юго-востоку до горы Плоу-Тапа /2375/ так, что селения Ара[т]алин, Такир, [.....]кенд и Ахкенд остаются к югу, а селения Гюлашлу и Котляревская - к северу от проектируемой границы. От горы Плоу-Топа/2373/ граница берет общее направление к югу до села Бинетлу Карягинского уезда, проходя через гору Кюэк-тапа/2051/ по восточному склону горы Мархушин-Хут /4199/ и горы

Ар[гю]нали/4867/ так, что селения [И]ейсалы, Ахвашлу, Давананлар, Гюмушатлу, Карадарлу, Сулейманлу остаются на востоке, а селения Суз, Авшари, Дудачки, Керманчик, Эдиллу, Гадрут, [Гитаб-ква.....а] Ванк, сел. Афандилар остаются к западу от проектируемой границы.

От села Бинетлу, которое остается к югу от этой границы, она поворачивает на северо-запад и идёт по хребту до горы Зиарет/8186/, оставляя на востоке селения Джийлам, Мулькадара, селения Халаплу и Сар[ли] на западе. От горы Зиарет/8186/ граница сливается с границей Шушинского уезда до горы Б. Кирс/8989/ по Карабахскому хребту. От горы Б. Кирс/8989/ граница идёт на юго-запад до перевала Гязбель, сначала по хребту до устья реки Милхалев, а затем по реке Акера до села Махсудло и дальше через гору Мазмазак/3643/ по прямой линий до моста Гусейнкепри на реке Базар-чай и по ней до села Шахвердляр, откуда идёт по хребту гор Генерта-Даг /6337/ и Чирчур /7535/. От перевала Гязбель граница поворачивает на запад и проходит по хребту гор Армао /11188/, Алмераддаг/11050/ до горы Гейсут[ычекь], откуда она сливается с границей Нахичеванского уезда до горы Аражин/10425/, проходя через горы Дамурыдаг/11093/ и Кявинская/9100/. От горы Аражин/10425/ граница идёт по хребту на запад через гору Агнег-Тапа до горы Саридаг, откуда она поворачивает на север и идёт по хребту через горы Ахкая/5816/, Карапут/8585/, Пирдаг, Кабахел/6034/, Тандери, Ард[а]г/6780/ до горы Кемурлу-Даг /6930/. Дальше граница идёт в направлении на запад по хребту Сарайбулаг до пункта, расположенного между высотой 8071 и монастырем св. Иоанна Крестителя, а от этого пункта, она идет по прямой линии в юго-западном направлении до поста Буралии таким образом, что село Давалу остается к западу от границы.

Точное определение проектируемой границы должно быть произведено на местах с учетом границ землепользования сельских общин.

Объяснительная записка к описанию границ Армении

Основой этого проекта разграничения служит этнографический признак. Отступление от этого признака допущено лишь в случаях исключительных, [где] по условию топографии, как для Армении, так и для соседских государств, была абсолютная, необходимость с[делать] это. От горы Каракая/9351/ граница вместо того, чтобы пройти, по границе Ахалкалакского уезда, проведена по естественному хребту, который проходил по высотам Цхрацкарос мта/8807/ и Саквелос мта/9221/. На этом небольшом участке - приблизительно 150 кв. км. - живет исключительно армянское население - 1100 человек. Этот участок был включен в состав Горийского уезда и Боржомской сельской общины.

Проектируемая граница при[мык]ает к независимой Армении в северо-западном углу Борчалинского уезда, прямоугольный участок которого (приблизительно 600 кв. км.) состоял из 3-х сельских общин, имеющих население 18000, из которых 10000 армян и 8000 греков. Так как греки живут на территории этого участка, то в случае их пожелания, возможно районы, населённые ими, передать сосе-

дней Грузии. С точки зрения экономической и топографической это [район] (Цалка) представляет естественное продолжение Ахалкалакского плато.

По остальной части Борчалинского уезда и Казахского граница проведена с учетом этнографического признака, со включением [.....] [.....] 5000 мусульман в восточной части Борчалинского уезда. (Прямоугольник, ограниченный с запада линией горы Ахчала/8891/, с юга - горой Ахчала-5035, с востока - шоссе Тифлис-Воронцовка и на севере рекой Сарар-дара). Сделано это потому, что эта территория по условиям экономическим и топографическим является естественным продолжением Лорийской степи. Следует отметить что преобладающее армянское население достигает в северном направлении от Борчалинского уезда до самого Тифлиса (селения Боличи, Дагет-Хачин, Клди и Кудро) и в самом Тифлисе армянское население составляет относительное большинство.

Въ ущерб естественной ко[.....] национальной территории юго-западная часть Елизаветпольского участка исключена из территории независимой Армении, так как на этом участке проживали 10000 армян, но 20000 мусульман. Иначе обстоит дела с юго-восточной частью Елизаветпольского участка, где насчитывается 25000 армян на 5000 мусульман. Граница, проведенная по Джеванширскому, Шушинскому и Карягинскому уездам, строго согласована с принципом этнографическим и в то же время совпадает с топографической границей Нагорного Карабаха. Две мусульманские сельские общины: Гюлаплинская и Каджарская - хотят [включиться] в Карабахское нагорье [.....] территории Армении. А в Нагорном Карабахе 177000 армян и 45000 мусульман, из коих 15000 курдов живших в восточной окраине Джеванширского уезда. Часть Карабаха площадью 120 кв. км. из Карягинского участка, которую мы присоединили к территории Армении, насчитывает население исключительно армянское в 25000 человек. В Зангезурском участке армянское и мусульманское население приблизительно равно. По северной части этого участка армянское население вдвое многочисленнее мусульманского. Это - часть в проектируемую территорию Армении. Напротив, в южной половине преобладает мусульманское население. Причем, восточная часть этой половины населена исключительно мусульманами, а в западной преобладают армяне. Было бы желательно в согласии с принципом этнографическим отр[езать] от этой западной части в пользу независимой Армении небольшой участок с населением 8000 армян и 4000 мусульман, которые живут на территории в границах обозначаемых пунктами: село Ахвердлер, гора Сусап-Тапа, гора Эшак-Майдам и перевал Гезбель. На этом участке находятся медные рудники. Эта практикуемая граница Зангезура даст возможность установить сообщение между Эриванским и Карабахским [.....] по единственной горной дороге, открытой О[.....], Шуша-Герюси-Бичапакский перевал-сел. Арпа - Эривань. Небольшой отрезок из состава Нахичеванского участка, включа[нный] в независимую Армению, имеет население 10000 армян и 10000 мусульман. Эта прирезка дает возможность сообщения между Карабахским и Эриванским [.....] по вышеуказанной дороге.

На этих основаниях проектировалась граница в Шаруро-Даралагском и Эриванском уездах, которые смыкается с границей Сурмалинского уезда.

Константинополь, июнь 1918г

Ваше Превосходительство !

В виду того, что на Константинопольской конференции имеют [.....] примеры решения весьма [.....] важности касательно вопросов, затрагивающих организацию Армянской республики, Армянская делегация имеет честь Вам предложить прилагаемые [данные], на основании коих можно составить точное представление о территориях, входящих в состав Армении, и которые абсолютно необходимы для существования и развития молодой республики.

Делегация считает необходимым приложить краткое объяснение относительно стратегической важности границ, экономического положения и истории Армении, статистические данные, распределение населения и карту, и описание границ в 20 /10 верст.

Мы убеждены, что эти сообщаемые сведения с [иной] стороны установят неоспоримые права Армении на показанные [.....] и с другой стороны покажут безусловную необходимость для Армении обладания этими территориями.

Примите [.....] в с[.....] [.....]

Председатель Армянской мирной делегации

ԳԵՆԵՐԱԼ ԳԱՐԴԻԵԼ ՂՈՐՀԱՆՅԱՆԻ ԿԱԶՄԱԾ ՆԱԽԱԳԻԾԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՂԲԵՋԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (1918թ. հունիս)

____ *Ամփոփում* ____

____ *Հ. Մահտեսյան* ____

ՀՀ հռչակումից հետո անդրկովկասյան հանրապետությունների միջև սահմանների հարցը պետք է քննարկվեր Կոստանդնուպոլսում կայանալիք խորհրդաժողովում: Այդ օրերին Ադրբեջանը և Վրաստանը համատեղ ջանքերով գործում էին հայկական պատվիրակության դեմ՝ օգտագործելով իրենց արտոնյալ դիրքայինը: Հայկական պատվիրակությունը թուրքական կառավարությանն ու մասնակից երկրների դեսպաններին ներկայացնում է Անդրկովկասի վարչական սահմանների բաժանման ծրագիր՝ հիմնավորված քարտեզներով, վիճակագրական տվյալներով՝ կազմված գեներալ Գաբրիել Ղորանյանի կողմից: Սակայն աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխությունների պատճառով Կոստանդնուպոլսում այդպես էլ խորհրդաժողովը չի գումարվում, իսկ այդ հարցերը, վերջնական հանգուցալուծման չարժանանալով, տեղափոխվում են միջազգային այլ կոնֆերանսների և ատյանների քննարկմանը:

Տեղեկություններ հեղինակի մասին

Մահտեսյան Հայկ Շավարշի - ՀՀ ԳԱԱ պատմության

ինստիտուտի հայցորդ, E-mail: mahtesian_haik@mail.ru

ԳՅՈՒՄՐՈՒ ՀԻՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՅԸ

ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ*

XIX դ. վերջին և XX դարասկզբին Գյումրու այսօրվա քաղաքային այգու¹ տարածքում գոյություն ունեցող գերեզմանոցը փակվեց², տեղական ինքնակառավարման մարմինները նոր գերեզմանոցի համար հողահատկացման մասին որոշում ընդունեցին³: Ընդամենը ութ-ինը տասնամյակ անց ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ Լենինականի այդ (թիվ 1) գերեզմանոցը մտավ քաղաքի պատմամշակութային անշարժ հուշարձանների ցուցակ⁴: 2013 թ. մինչև այսօր «Գումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի արշավախումբը (արշավախմբի պետ՝ Ս. Տեր-Մարգարյան, անդամներ՝ Պ. Զաքարյան, Ի. Ավագյան) կատարում է հուշարձանի ուսումնասիրություն ու դամբարանների հաշվառում, անձնագրավորում, դասակարգում ու խմբավորում⁵: Ըստ արխիվային փաստաթղթերի՝ սկզբում հողահատկացում կատարվել է երեք տարբեր գերեզմանոցների համար, հետագա տարիներին այդ երեք հատվածները համաձուլվել են և կոչվել Հին գերեզմանոց:

* Հոդվածն իբրև գեկուցում կարդացվել է Երևանում 2018թ. մայիսի 21-24-ին կայացած «Թաղման ձևեր հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը (Հայկական լեռնաշխարհ և Հարավային Կովկաս)» միջազգային գիտաժողովում:

¹ Տե՛ս «Дело «Об осаде склона старого кладбища деревьями, 1901-1902гг.»»; ՀԱԱ, ֆ. 105, ց. 2, գ. 101, էջ 1-33.

² Տե՛ս «Дело «О прекращении погребения покойников на Холме Чести, 1899-1901гг.»», ՀԱԱ, ֆ. 105, ց. 2, գ. 710, էջ 1-4:

³ Տե՛ս «Решение Александропольской городской управы об отводе земли под военное кладбище. 14.08.1899-25.06.1900гг.»; ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2512; Указ, постановление Управы, заявление о принятии мер к содержанию кладбища в благоустройстве, 1894-1904гг.»; ՀԱԱ, ֆ. 105, ց. 2, գ. 4; Дело «Об отводе важным гостям участков городской земли под кладбище, 1898-1903.»; ՀԱԱ, ֆ. 105, ց. 2, գ. 24; Տե՛ս «Дело «Кладбище для холерного лазарета»»; ՀԱԱ, ֆ. 105, ց. 2, գ. 719, էջ 1-8:

⁴ ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակ 7. Շիրակի մարզ, 7.1 Գյումրի քաղաք, հուշարձան համար 7, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, թիվ 52 (351), հրատարակության 8-րդ տարի, 29 սեպտեմբերի 2004:

⁵ Հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված Պատմական միջավայրի պահպանության Շիրակի մարզային ծառայության պետ Ա. Մելիք-Մարգարյանի 2012թ. նոյեմբերի 26-ի № 1-50 գրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ պարբերություններով, 2013թ. ապրիլի 16-ին համայնքի ավագանին որոշեց 1. Ձևավորել ժամանակավոր հանձնաժողով՝ Գյումրու թիվ 1 գերեզմանոցում հուշարձանների իրադրության ուսումնասիրման համար: 2. Ժամանակավոր հանձնաժողովին հանձնարարել՝ ուսումնասիրություն կատարել Գյումրու թիվ 1 գերեզմանոցի տարածքում, պարզել այդ գերեզմանոցի տարածքում գտնվող վտանգված գերեզմանները, փաստագրել ու վավերագրել դրանք, պարզել վտանգվածության և ոչնչացման ծավալները: 3. Մահմանել Գյումրու թիվ 1 գերեզմանոցի տարածքում թաղված նշանավոր մարդկանց գերեզմանների մոտ տեղադրվելիք տեղեկատու ցուցանակների ցանկը:

Տիեզերքից արված լուսանկար-քարտեզում⁶ Հին գերեզմանոցը բաժանել ենք չորս հատվածների (1ա, 1բ, 1գ, 2, 3, 4) (նկ. 1): Բոլոր հատվածներում մինչ օրս կատարվում են թաղումներ:

Թիվ 1 գերեզմանոցի 1ա, 1բ, 1գ հատվածներում թաղումները կատարվել են մյուս հատվածների հետ համեմատած ավելի ուշ՝ XX դ. 20-ական թթ. սկսած, այս հատվածներում հիմնականում թաղվել են հայեր: Քաղաքի զարգացմանը զուգահեռ՝ խորհրդային ժամանակաշրջանում Հին գերեզմանոցի սահմաններն ընդլայնվել են: Այս ընդլայնված հատվածներն են 1ա, 1բ, 1գ հատվածները (ստորև նաև անվանելու ենք նոր հատվածներ): Նոր հատվածներում ևս կան քաղաքի մշակութային, տնտեսական, հասարակական կյանքում զգալի ներդրում ունեցող մարդկանց գերեզմաններ: Առկա են արժեքավոր մահարձաններ, քարի և մետաղի դեկորատիվ մշակման ինքնատիպ նմուշներ:

1ա տեղամասում են գտնվում պահպանական միավոր հանդիսացող և իրենց արտաքին հարդարանքով աչքի ընկնող մի շարք գերեզմաններ: Սրանց թվին են պատկանում սովետական զինվորների՝ ուղղաձիգ, թրածև շիրմաքարով եղբայրական (նկ.2) և Կարիմ Զումարազիևի ուղղաձիգ, քառակող շիրմաքարով գերեզմանները, 1988թ. երկրաշարժի ժամանակ զոհված մի շարք ընտանիքների՝ ուշագրավ մակագրություններով դամբարանները, Ալեքսանդրապոլի կարմիր տուֆից պատրաստված արժեքավոր խաչքարեր և Ավագյանների (նկ.3), Միքայելյանների⁷, Ստեփանյանների, Թոքմաջանների, Փալանջյանների, Դավթյանների (նկ. 15), Շահբազյանների(նկ.5), Մելիքյանների ընտանեկան դամբարանները: Հարդարանքով առանձնահատուկ է Ալեքսանդրապոլ-Լենինականի նշանավոր լուսանկարչատներից մեկի տերերի՝ Փալանջյանների դամբարանի դեկորներից մեկը (նկ.4), որը հին լուսանկարչական սարքի տեսքով է, Ա. Շահբազյանի շիրմաքարը փեթակի տեսք ունի, ինչը վկայում է հանգուցյալի մասնագիտության մասին: Նմանատիպ մոտիվ ունեն Մենուշի և Տելուշի դամբարանաքարի վրա պատկերված տավիղը և բժշկության խորհրդանշանը (զավաթին փաթաթված օձ) (նկ.14): Ավագյաններինը մետաղյա հրթիռ է հիշեցնում, դատարար Թուման Դավթյանը դատավորի սև պատմուճանով է: Ճիշտ է, թաղումները տարածամասակյա են, սակայն դրանց հարդարանքը, անշուշտ, վկայում է հանգուցյալների մասնագիտության և վարած կենցաղի մասին: Առանձնահատուկ արժեք է ներկայացնում Հ. Թոքմաջանի՝ ճարտարապետական առումով բոլորովին աչքի չընկնող դամբարանը, որի վրա Հ. Շիրազի անտիպ էքսպրոմտներից մեկն է.

Թեթև կլինի հողն իր վրա,

Չէ՞ որ ազնիվ էր ողջ կյանքը նրա,

Թեթև կլինի շիրիմն իր վրա.

Չէ՞ որ մաքուր էր ողջ կայնքը նրա,

Թեթև կլինեն դարերն իր վրա.

⁶ Google Earth, Дана съёмки: 9.9.2016. Հատակագծի հեղինակ՝ Մ.Տեր-Մարգարյան:

⁷ Վաղամեծիկ Գրինա Անտոնյանա Մելիքյանի (1956-1978) մարմարե նրբագեղ բարձրաքանդակի տակ մակագրված են Մ.Եսենինի խոսքերը. «Жизнь моя, иль ты приснилась мне».

Չէ՞ որ անուշ էր անունը նրա՞:

1-ր հատվածում առանձնացվել են երկու դամբարաններ, որտեղ թաղված են ծառայության ժամանակ 1948թ. զոհված երկու տանկիստներ՝ լեյտենանտ Պ. Կորզիյը և գվարդիայի կապիտան Ի. Սավելևը: 1-ր հատվածում ավելի ուշ են թաղումներ կատարվել: 2-րդ հատվածում հիմնականում թաղված են Ալեքսանդրապոլում բնակվող կամ ծառայող, ուղղափառ և այլ դավանանքի հետևորդներ (XIX դ. վերջ- XX դ. սկիզբ): Այս են վկայում մինչհեղափոխական ռուսերեն ուղղագրությամբ, լատինատառ և հունատառ արձանագրությունները: Այս դամբարաններից առանձնացվել են Անտոնի Մայերի (1857-1918) (նկ.12) (Ալեքսանդրապոլում գործել է Մայերի լուսանկարչատունը), Աննետա Սրաբյանի (1893-1899), վերահսկիչ-մեխանիկ Ի.Ի. Վասիլևսկու (1858-1907), Կազիմիր Բայարունասի (1873-1906), Նորբերտ Մինկելիչի (?-190?), Ֆրանց Սյալտինսկու (?), գվարդիայի ավագ տեխնիկտենանտ Ն.Ի.Լուկոշկինի (1914-1951) (նկ.7), Գևորգյան Վարհադ Տեր Ղուկասի (1914-1943), գրասեր Պողոս Բեբուրյանի (1862-1905) (նկ.6) դամբարանները: Առանձնահատուկ ուշադրության է արժանի այս տեղամասում գտնվող խոտրջուղցի ամուսինների դամբարանը, որը Ալեքսանդրապոլի կարմիր տուֆից տապանաքար է: «ԱՍՍ ՆՆՁՈՒՄ Է ՕՏԱՐԱԿԱՆ ՈՐ Է ԿԱՐԱՊԵՏ ՀԱՊՈՒՋԵԱՆ ՏԷՐ ՅԻՍՈՒՄ ՈՂՈՐՄԻ ՀՈԳՈՅՆ ՓԱՅԼԷ Ի ՄԵՁ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ(1844-1889)»⁹ արձանագրությունից գատ՝ տապանաքարն ունի փորագիր զարդերից (նկ.35):

3-րդ՝ ամենամեծ հատվածում ճնշող մեծամասնությամբ թաղված են հայեր: Այստեղ թաղումները կատարվում են XIX դ. վերջին քառորդից մինչև այսօր: Քաղաքի նշանավոր գերդաստանների դամբարանների, նշանավոր մտավորականների, հայտնի արհեստավորների գերեզմանների կողքին կան մշակութային արժեքավոր, դեկորատիվ-կիրառական արվեստի մեծաթիվ նմուշներ: Այստեղ են գտնվում Անտիկյանների, Գյուրջինների, Երանոսյանների, Տեր-Ավագյան-Տաթևյանների, Հովհաննիսյան-Տաթևյանների, Վարդիկյանների, Մելիք-Աղամալյանների, Տիգրանյանների, Դրամբյանցների, Ռաֆայելյանցների, Չիթոդցյանների, Ծաղիկյանների, Մանուկոյանների, Ջանիբեկյանների, Քյանդարյանների, Շաթիրյանների, Ամրջանյանների, Խաժակյանցների, Ժամագոյանցների, Ջարդարյանցների, Տեր-Գևորգյանների, Ղարաճյանների, Միտինյանցների, Ամբարդարյանների տոհմական դամբարանները:

Ալեքսանդրապոլի սև տուֆից պատրաստված շիրմաքարերից երկուսին պահպանվել են արձանագրություններ, որոնք վկայում են, որ թաղվածները հայր և որդի Անտիկյաններն են. «ԹԱԹԵՈՍ ԱՆՏԻԿՅԱՆ¹⁰ ՀՈՉԱԿԱՎՈՐ ՎԱՐՊԵՏ ՈՐՄՆԱԴԻՐ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ ՇԻՆՈՂ (1835-1899)», «ԳՐԻԳՈՐ ԱՆՏԻԿԵԱՆ ԹԱԹԵՈՍԻ (1875-1886)» (նկ.9): Ալեքսանդրապոլում նշանավոր քարտաշ-որմնադիր Անտիկենց Թադևոսը կառուցել է Ս. Ամենափրկիչ եկեղեցին:

⁸ Ըստ Արամ Շիրազունու բանավոր հաղորդման՝ նման մի անտիպ բանաստեղծություն էլ կա Գյումրու թիվ 2 գերեզմանոցի շիրմաքարերից մեկի վրա:

⁹ Մակագրությունները բերում ենք ըստ բնօրինակի:

¹⁰ Նկարիչ Արշակ Բրուսյանի վրձինն է պատկանում Թադևոս Անտիկյանի դիմանկարը, որը պահպանվում է Շիրակի երկրագիտական թանգարանում (նկ.10):

Ուշագրավ է Վարդիկյանների ընտանեկան դամբարանը¹¹: Արտաշես Հովհաննեսի Վարդիկյանի քառակող շիրմաքարի հիմքին փորագրված են արհեստավորի պատրաստած իրերը (նկ.31), իսկ քիչ հեռու գտնվում է Արտաշես Վարդիկյանի հորեղբոր՝ Մարտիրոս Սարգսի Վարդիկյանի՝ (1868-1948)՝ սև տուֆից ուղղանկյուն շիրմաքարը, որին փորագրված են վարպետի՝ Ղալաչի Մարտինի աշխատանքային գործիքները՝ մուրճ և գնդան (նկ.30): Այս հատվածում ամփոփված է նաև Երևանի հայտնի Մելիք Միմոն Սուլթանի որդու՝ հռչակավոր երաժիշտ Աղամալ Մելիք-Աղամալյանի աճյունը (1929-1906): Գորոյանցների հայտնի տոհմից էր սերում նրա կինը՝ Տիրուհի Սիրականի Մելիք-Աղամալյանը (1842-1918): Սիրական Գորոյանցի մյուս դուստրը՝ Երանուհին (1835-1919), մեկ այլ՝ Տիգրանյանցների հայտնի գերդաստանի հարսն էր¹²: Երկու քույրերի գերեզմանները ինչպես և Տիգրանյանների ու Մելիք-Աղամալյանների ընտանեկան դամբարանները գտնվում են հարևանությամբ:

Այս հատվածում պահպանված տոհմական դամբարանների տեղադրությունը և մակագրությունների ուսումնասիրությունը թույլ են տալիս բացահայտել Ալեքսանդրապոլի երևելի տոհմերի միջև խնամիական կապերի առանձնահատկությունները: Այսպես, դատելով շիրմաքարերի արձանագրություններից՝ Եղիսաբեթ Աղաբեկյան-Տիգրանյանցի (1869-1896) ամուսինն է Գրիգոր Բաղդասարյան Դրամբյանցը, Սիրական Գորոյանցի երկու դուստրերը Տիգրանյանների և Մելիք-Աղամալյանների հարսներն էին: Սիրական¹³ և Մարիամ Գորոյանցների հովանավորությամբ Սբ Խաչ եկեղեցու փայտե խաչը փոխարինվեց մետաղյա խաչով¹⁴: Պահպանվել է խաչի վրայի արձանագրության լուսանկարը. «ՄԲ ԽԱՉՍ ՅՇՏԿԷ. ԳՈՐՈՇԱՆՑ. ՄԻՐԷԿԱՆԻ. և. ԿՆՈՋՆ. ՄԱՐԻԱՄՈՒ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՈՑ. Ի. 1892. ԱՄԻ»: Մեր ձեռքի տակ է Տիգրանյանների տոհմի ծագումնաբանական քաղվածքը՝ տոհմաձառը, ըստ որի՝ հին հայկական ազնվական տոհմի՝ Տիգրանյանների (Տիգրանավների) նախնին է համարվում Վարդան Դիլան Տիգրանյանը (XVII դ.): Ըստ ավանդության՝ Տիգրանյանները Անիի բնիկներից են եղել: Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ նրանց անունն է կրել Անի քաղաքի դարպասներից մեկը՝ «Դուրք Տիգրան-

¹¹ Պահպանվել է Վարդիկյանների ընտանեկան տոհմաձառը, ըստ որի՝ ընտանիքը Արևմտյան Հայաստանի Ակն քաղաքից 1832թ. տեղափոխվել է Կարին, ապա ըստ «Положение»-ի՝ Ալեքսանդրապոլ:

¹² Քույրերի շիրմաքարերն ունեն հայերեն և ռուսերեն արձանագրություններ, որոնց բովանդակությունից իմանում ենք նրանց ծագման մասին:

¹³ Սիրական Գորոյանցի անունն է կրել Թադևոս և Երանուհի Տիգրանյանների որդին՝ Սիրական Թադևոսի Տիգրանյանցը, որը եղել է Ցարական Ռուսաստանի Երկրորդ դումայի անդամ (20.02.1907-02.06.1907): 1918-1919թթ. զբաղեցրել է ՀՀ արտաքին գործոց նախարարի պաշտոնը, 1938թ. դարձել է ստալինյան բռնաճնշումների զոհ: Նա նշանավոր երգահան, ֆոլկլորիստ, դաշնակահար Նիկողայոս Տիգրանյանի եղբայրն է (նկ.18): findarmenia.org/arm/culture/music/nikoghayos-tigranyan (10.11.2018)

¹⁴ Գյումրի, քաղաքը և բնակիչները, Գյումրու քաղաքապետարան, Գյումրի, 2009, էջ 224:

անց»¹⁵: Տիգրանյանցների դերի մասին է խոսում նաև Խ. Աբովյանը «Վերք Հայաստանի, ողբ հայրենասերի» վեպում¹⁶:

Գյուրջիների ընտանեկան գերեզմանում է ամփոփված փիլիսոփա, միստիկ, հոգևոր ուսուցիչ Գևորգ Գյուրջիի հոր՝ Իվան Գյուրջիի աճյունը, հորիզոնական ուղղանկյունաձև քառակող տապանաքարին փորագրված է. «ИВАН ГЮРДЖИЕВ, 1834-1917, (ԱԴԱՇ) Я -ЭТО ТЫ, ТЫ-ЭТО Я, ОБА МЫ-ЕГО. ПОЭТОМУ ПУСТЬ ВСЕ БУДЕТ ДЛЯ НАШЕГО БЛИЗНЕГО» մակագրությունը: Աշուղ ուստա Ադաշը հունադավան հայ էր: Ալեքսանդրապոլում հունադավան շատ ընտանիքներ կային: Ամենանշանավորներից էին Մերկուրովները, Գյուրջիները, Բազանները, Կաֆաֆովները: Վերջիններիս ընտանեկան դամբարանը գտնվում է գերեզմանոցի 4-րդ հատվածում: Քառակող մահարձանի վրա ռուսերեն մակագրություն կա. «Здесь покоится прах Семена Кирияковича Кафафова (?)»:

3-րդ հատվածում առանձնահատուկ ուշադրության են արժանի զվարճաբան, առակախոս Մկրտիչ Ղազարի Մելքոնյանի՝ Պոլոզ Մուկուչ (1881-1931) (նկ.25): «ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՐԴԵՐԻ ԹԱՐԳՄԱՆ ԿՈՒՅՐ ԱՇՈՒՂ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱԴԱՍՅԱՆ (1867-1904) (ՀԱՄԲՈ)»-ի, հարկային տեսուչ Դմիտրի Էռնեստովիչ Ֆոն Բաուերի (1855-1900) (նկ.23), քարտաշ-որմնադիր Գեորգի Պալյանի, ճարտարապետ Հովհաննես Շաթիրյանցի (1835-1890) և հավանաբար ալեքսպոլցի ֆայտոնջիներից մեկի՝ ձի հիշեցնող շիրմաքարերը: Պոլոզ Մուկուչի գերեզմանի մահարձանը կանգնեցվել է Ա. Բսահակյանի նախաձեռնությամբ¹⁷: Նույն հատվածում է գտնվում նաև տեր Ամբակում Տեր-Գևորգյանի (1875-1937) և Հովսիսիմե Տեր-Գևորգյանի (1882-1965) (նկ.17) ընտանեկան դամբարանը:

Երրորդ հատվածում առանձնացրել ենք Յա տեղամասը, որտեղ գտնվում է Կարանյանների ընտանեկան դամբարանը: Կարանյանների գերդաստանից առավել հայտնի էին ալեքսանդրապոլցի վաճառականներ Հակոբ և Հարություն Կարանյանցները, որոնք եղել են Թ.Թորամանյանի և Ն.Մառի գիտական գործունեու-

¹⁵ Ղևոնդ Ալիշան, Շիրակ, 1881, էջ 39,128: XIVդ. վերջին, երբ Անիում կյանքը մեռավ, Տիգրանյանցները վերաբնակեցվեցին Հին Ջուղայում (Պարսկաստան), սակայն XVII դ. սկզբին Շահ-Աբասի արշավանքների ժամանակ գաղթեցին հայրենի Շիրակ: Դեռևս Հին Ջուղայում Տիգրանյանները կրել են Դիլան կամ Դիլանյանց տոհմանունը և շարունակել են կրել իշխանական տիտղոսը: 1828թ. նրանց սերունդները Կարսից տեղափոխվեցին Գյումրի:

¹⁶ Նա գրում է. «Ու ը թողանք էն մեր հոյակապ իշխանքը՝ Բարսեղ Մանուկ, Մկրտիչ աղերն բայազդցի, աշխարհահռչակ տունն Տիգրանյանի»¹⁶ դարսցի, որ ինչպես հայր, իրանց բոլոր հարստությունը վատնեցին, փչացրին ու իրանց աղքատ ժողովուրդը պահելով՝ բերին էս կողմը: Աբովյան Խ., Երկեր, Վերք Հայաստանի, ողբ հայրենասերի, Եր., 1984, էջ 158:

¹⁷ Գյումրու հնաբնակներից Բզոյի Լյովան պատմում է. «Ավ. Բսահակյանը ուստա Սիմոնին 500 մանեթ տվեց հուշաքարը տաշելու համար, վրան մակագրված է. «Հիշատակ Ավետիք Բսահակյանից»: Ըստ վարպետի՝ «Աշխարհի ազգերը իրենց սրախոսությունները վերագրում են մեկ մարդու և անմահացնում են նրան: Այսպես է եղել Պոլոզ Մուկուչը մեր ժողովրդի համար: Տարբերությունն էն է, որ ուրիշներինը միջ է, իսկական մարդ չի եղել, գերեզմանի տեղն էլ հայտնի չէ, իսկ Պոլոզ Մուկուչը իրական մարդ է եղել, և գերեզմանը կա, քար չկար վրեն, էն էլ ես պատվիրեցի: Ժամանակ անց ոչ մեկս չենք մնա, բայց Պոլոզ Մուկուչը կմնա...»: Պոլոզ Մուկուչին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ.Ղանալանյանը համարել է ազգային դասական սրախոսության հիմնադիր: Մարգարյան Հ., «Բսահակյանը և Պոլոզ Մուկուչը», Ցայգ, 2001, թիվ 6 (14-20 հունիս), էջ 4:

թյան ջերմ երկրպագուներ և նրանց բարեկամները¹⁸: Գյումրու Հին գերեզմանոցում պահպանվել է հինգ եղբայրներից մեկի՝ հավանաբար Գրիգոր Պետրոսյան-Կաբանյանի տապանաքարը:

4-րդ հատվածում նույնպես թաղված են ուղղափառ դավանանքի հետևորդներ՝ մեծ մասամբ ռուսներ (երեխաներ, քաղաքացիներ, պետական պաշտոնյաներ՝ չինովնիկներ): Ըստ գերեզմանաքարերի արձանագրությունների՝ թաղումները այստեղ իրականացվել են XIX դ. 70-80-ական թթ.- XX դ. 20-ական թթ.: Այս տեղամասում են թաղված վաղամեռիկ Ալեքսանդր Պուշկովը (1902) և Պավլուշա Մատվենը (1886-1895) (նկ.21), կաբարդինյան գնդի հոգևորականի կին Աննա Նիկոլաննա Նիկոլսկայան, քուլեջի խորհրդական Աֆանասիյ Դոլենկոն (1822-1899) և նրա կինը՝ Մարիա Դոլենկոն (1827-1907), Աննա Օրանսկայան ի ծնե Դոնտանի (նկ.27), Ելիզավետա Դիդեբուլաձեն (1853-1910), Անդրկովկասյան երկաթգծի բժիշկ Սերգեյ Իրակլիսիչ Մեսխին (1862-1910) (նկ.16), 153-րդ Բակինսկի հետևակային գնդի պորուչիկ Վլադիսլավ Վոյցեխովսկին (?-1892), Արիստարխ Դմիտրիևիչ Կոնստանտինովը (1882-1916) (նկ.13), որը զոհվել էր 1916թ. Հասանկալայի ճակատամարտում, փոստի կառավարիչ Իօսիֆ Պետրովիչ Գոնչարենկոն (?-1885) (նկ.22), Բայանդուրովի ուսումնարանի տեսուչ Գեորգի Պորոշենկոն (1874-1899), Երևանի ուսուցչական սեմինարիայի սան Ալեքսեյ Ստելմախը (1886-1903) (նկ.24), քուլեջի աստենակալ Ալեքսանդր Տիտովը (1840-1892) (նկ.26):

Ուսումնասիրության ընթացքում անդրադարձել ենք նաև գերեզմանաքարերի մակագրություններին, որոնք, ըստ ուսումնասիրողների, ժողովրդի գեղարվեստական մտածողության ու աշխարհատեսության քարեղեն վկայությունն են և ամփոփում են մարդկային հույզեր, ապրումներ, չապրած օրերի ափսոսանք¹⁹: Այս առումով առանձնահատուկ են սև տուֆից երկու տապանաքարերի վրա արված մակագրությունները՝ «Լից ան էկա», «Պողոս ամի բաժագդ խմէ» (նկ.29), երկրորդի

¹⁸ Թորամանյան Թ., Նամակներ, կազմեց և ծանոթագրեց Նազիկ Թորամանյան, Եր., 1968, էջ 487: Բ.Ստրժեգովսկին իր հուշերում գրում է. «...սեպտեմբերի 14-ին եկանք Ալեքսանդրապոլ: Երեկոն անցկացրինք Ալեքսանդրապոլում, հյուրընկալ Կարանյանների ընտանիքում, որը բաղկացած էր հինգ եղբայրներից, որոնք ապրում էին նույն տանը: Եղբայրներից մեկը՝ Հակոբը, ուներ տարբեր հնությունների մի հավաքածու, որը զբաղեցնում էր սենյակներից մեկը և բավականին ընդարձակ տան բակը: Բայց մենք հազիվ թե ի վիճակի էինք ուսումնասիրելու այդ հավաքածուն, քանի որ մեր ուշադրությունը շեղում էին հյուրասիրությամբ՝ նախուտեստներով և խմիչքներով, որոնցով ծածկված էր սեղանը, նաև թամադայի սրամիտ ելույթներով, պարերով, երաժշտությամբ և 80 հոգուց բաղկացած ընտանիքի գրկաբաց ընդունելությամբ»: Стржеговецкий И., Архитектура армян и Европа, т. I, книга I, Ер., 2011.: 1911թ. Թիֆլիսում Թ. Թորամանյանը հրատարակում է «Պատմական հայ ճարտարապետություն ուսումնասիրության» առաջին հատորը՝ «Տեկորի տաճարը»: Աշխատության առաջին էջը կրում է «Առ մեկենասին, մեծարգո պարոն Հարություն Կարանյանց» խորագիրը, որտեղ Թ.Թորամանյանը խորին շնորհակալություն է հայտնում մեկենասին:

¹⁹ Հովհաննիսյան Ռ., Սահակյան Կ., Գերեզմանաքարերի գեղարվեստական մակագրությունների շուրջ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. III, Եր., 2000, էջ 161-164:

վրա փորագրված են նաև շիշն ու բաժակը²⁰։ Մակագրությունների թեմատիկան բազմազան ու բազմառժամ է։ Գերեզմանոցի դամբարաններն ու դամբարանաքարերը, դրանց արձանագրությունները պատմագագազարկան հարուստ նյութ են պարունակում, ինչը երկարատև ուսումնասիրության կարիք ունի։ Հայերեն, մինչևեղափոխական ռուսերեն, լատիներեն, վրացերեն և հունարեն արձանագրությունները, դամբարանաքարերի փորաքանդակները և հարդարանքները տեղեկություն են հաղորդում հանգուցյալների կրոնական պատկանելության, զինվորական կոչումների ու աստիճանների, մասնագիտական առանձնահատկությունների, տիտղոսների ու ծագումնաբանության մասին։

Առանձնացրել ենք մի խումբ շիրմաքարեր, որոնց վրա կան հանգուցյալի մասնագիտության մասին վկայող պատկերներ. հաճախ հանդիպում են փորագրված, կամ գրանիտի վրա ծեծված ֆայտոններ, որոնք զարդարում են մասնագիտությամբ ֆայտոնջիների շիրմաքարերը (նկ.28)(մի տապանաքար ունի ձիու տեսք), զանազան արհեստներով զբաղվող արհեստավորներից յուրաքանչյուրի գերեզմանաքարին փորագրված են աշխատանքային գործիքներ, կամ արհեստավորի պատրաստած իրերը (անվագործինը՝ անիվ, կլայեկագործինը՝ մուրճ և զնդան կամ կլայեկված ամանեղեն, կոշկակարինը՝ մուրճ, կոշիկ, կաղապար (XIX դ. վերջ) (նկ.32), կարի մեքենա, մկրատ, հերյուն (1950-ական թթ.)(նկ.33), մասնագիտությամբ վաճառողինը՝ կշեռք (նկ. 34), վարորդինը՝ բեռնատար մեքենա, փայտագործինը՝ կացին, ծաղկավաճառինը՝ ծաղիկ, օդաչուինը՝ պրոպելլեր (նկ.8), զինվորականինը (ракетчик)՝ հրթիռ, ընտանեկան դամբարանի քառակորդի մի կողմում հաշվետարի փայտե հաշվիչն է, մյուս կողմում՝ ուսուցչի գրիչն ու թանաքամանը (նկ. 36,37), ավելի ուշ՝ 1970-ականներով թվագրվող ընտանեկան շիրմաքարերից մեկին Մենուշ և Ֆելուշ²¹ եղբայրների զբաղմունքը խորհրդանշող պատկերներն են ծեծված՝ տավիղ և բժշկության խորհրդանիշը, մեղվապահինը՝ փեթակ, լուսանկարչինը՝ լուսանկարչական սարք, ներկարարինը՝ վրձին...

Ուսումնասիրության մեջ առանձնացրել ենք քառակող շիրմաքարերի մի խումբ. դրանց արձանագրությունները ոչ թե փորագրված են, այլ արված են բրոնզաձուլ աղյուսիկների վրա, այս գերեզմանաքարերը դրվել են 1895-1910 թթ. միջակայքում։ Մակագրություններ ունեն Կարապետ Զիթողյանի (1873-1901) (նկ.11), Պետրոս Հարությունյանի (1834-1895), Գրիգոր Տեր-Հարությունյանցի (1838-1896), Նիկողայոս Հաջիպապյանի (1857-1910), Հակոբ Գևորգյանի (1824-1899), Մատակյանների ընտանեկան դամբարանի (?-1892) շիրմաքարերը։ Առանձնացրել ենք նաև Ալեքսանդրապոլի սև և կարմիր տուֆից խաչակերպ պատկերներով գերեզմանաքարերի, գերեզման-մատուռների, թևավոր խաչերով քառակորդների և կենդտաֆ²² գե-

²⁰ Այս մոտիվը երբեմն հանդիպում է նաև Ալեքսանդրապոլ-Լենինականի վերնակույյար ճարտարապետության մեջ։

²¹ Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական ուսումնարանի նախկին տնօրեններից է։

²² Հանդիպում են կենդտաֆ դամբարանների երկու տեսակներ։ Մեկում, ինչպես Ստեփանյանների ընտանեկան գերեզմանն է, շիրմաքարը դրվել է կորած որդու՝ Մերոբի անունից. «Հիշատակ կորած որդուց՝ Մերոբից, աղջիկներից, թոռներից»։ Կենդտաֆ դամբարանների

րեզմանների խմբերը: Ցավոք, թեև վոր խաչերի մեծ մասը կոտորված է: Խորհրդային շրջանում թեև վոր խաչերին փոխարինելու են գալիս հնգաթև աստղով և մուրճ ու մանգաղով քառակոթողները (տե՛ս 1929թ. զոհված կոմերիտական բանվորներ Ժորժիկ Միրզոյանի և Գուրգեն Պարոնյանի քառակոթողները)(նկ.19.20):

Խորհրդային և հետխորհրդային շրջանում ընտանեկան գերեզմանների վրա դրվել են նշանավոր քանդակագործների արժեքավոր գործեր (Ռուդոլֆ Հակոբյանի գերեզմանի վրա դրվել է քանդակագործ, ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ, Լենինյան մրցանակի դափնեկիր Ֆրիդրիխ Սոդոյանի պատրաստած քանդակը):

1988թ. երկրաշարժն զգալի ավերածություններ գործեց նաև Հին գերեզմանոցում: Փլվեցին նշանավոր գերդաստանների ընտանեկան գմբեթավոր դամբարաններ, կոտորվեցին արժեքավոր մահարձաններ, տապանաքարեր, վերաթաղումներ կատարվեցին մի շարք նշանավոր մարդկանց գերեզմանների տեղերում (ավերվել է Ատրաբեյի գերեզմանը): Անկանոն թաղումների հետևանքով անանցանելի դարձան գերեզմանատան գլխավոր և երկրորդական անցուղիները:

Գյումրու Հին գերեզմանոցը պատմության և մշակույթի ազգային մեծարժեք միավոր է, որը, ինչ խոսք, երկարատև հետազոտական ուսումնասիրության անհրաժեշտություն ունի:

Երկրորդ տեսակին է պատկանում Միրոյանների տոհմական գերեզմանոցը, որտեղ ամփոփված են Ասատուր և Սանամ Միրոյանների աճյունները: Թաղումները հիմնահողային են: Գերեզմանը շրջապատված է ճաղավանդակով: Միրոյաններն ունեին երեք որդի և երկու դուստր: Որդիներից երկուսը զոհվել էին Երկրորդ համաշխարհայինի տարիներին: Ազատ Միրոյանը անհետ կորել էր 1942թ. Մոսկվայի մարզում, կրտսեր որդին՝ Զարգանդը, քաջարի զոհվել է 1942թ. և թաղվել է Վիտեբսկի շրջանի գյուղերից մեկի (Վիտեբսկից մոտ 65 կմ հեռավորության վրա) Եղբայրական գերեզմանում, որտեղ թաղված է մոտ 150 խորհրդային զինվոր): Միրոյանների կրտսեր դուստրը՝ Շուշանիկը, երկրաշարժից հետո՝ 1990 թ.-ին այցելեց Վիտեբսկի Եղբայրական գերեզման, այնտեղից մի շիշ հող բերեց և հոր ու մոր հողաթմբերի միջև եղած մասում թաղելով՝ պատրաստեց երրորդ թումբը: Սա կենդանա՞ դամբարանի ժամանակակից դրսևորումներից մեկն է: Հոր և մոր հողաթմբերի միջև որդու հողաթումբը դնելով՝ Շուշանիկը իր պարտքը կատարեց 1915 թ. Մուշից Կարս, ապա 1918թ. Ալեքսանդրապոլ գաղթած իր ծնողների առջև: Տե՛ս Հուշամատյան, Հայաստանը Հայրենական մեծ պատերազմում (1941-1945 թթ.), հ. II, Եր., 1996, էջ 393:



Նկ. 1.



Նկ. 2.



Նկ. 3.



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7



Նկ. 8



Նկ. 9



Նկ. 10



Նկ. 11



Նկ. 12



Նկ. 13



Նկ. 14



Նկ. 15



Նկ. 16



Նկ. 17



Նկ. 18



Նկ. 19



Նկ. 20



Նկ. 21



Նկ. 22



Նկ. 23



Նկ. 24



Նկ. 25



Նկ. 26




Նկ. 27



Նկ. 28



Նկ. 29



Նկ. 30



Նկ. 31



Նկ. 32

Նկ. 33



Նկ. 34



Նկ. 35



Նկ. 36



Նկ. 37

ГЮМРИСКОЕ КЛАДБИЩЕ НОМЕР ОДИН КАК ОХРАНЯЕМАЯ КУЛЬТУРНАЯ ЕДИНИЦА

___ *Резюме* ___

___ *И.Авагян* ___

В статье рассмотрены вопросы старого кладбища номер один в Гюмри, которое в 1980г. было включенного в «Официальные ведомости»-список памятников охраняемых государством. Первые захоронения кладбища датируются концом XIX-началом XX вв. Впервые в научный оборот вводится системный анализ

кладбища, территорию которого мы разделили на четыре участка. На территории участков 1а, б, г- захоронения произведены с начала 1920-ых гг. по наше время. На участке 2 похоронены христиане других конфессий и национальностей. На участке 3 начиная с 80-ых гг. XIX в. похоронены армяне. На участке 4, начиная с 80-ых гг. XIX в., похоронены русские (дети, гражданские лица, чиновники, военные). В статье дана новая классификация надгробных камней кладбища- усыпальницы, надгробные камни с бронзовыми табличками, крестами, крылатые кресты, два подтипа погребений кенотаф и надгробия, отражающие специальность усопшего. Непоправимый ущерб кладбищу нанесло землетрясения 1988 г. Гюмриское кладбище номер один является охраняемой культурной единицей и подлежит глубокому изучению.

Տեղեկություններ հեղինակի մասին

Ավագյան Ինգա Էդուարդի-ՀՀ ԳԱԱ Շիրակի

հայագիտական հետազոտությունների կենտրոն,

«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան,

E-mail: inga.avagyan@mail.ru

ПРОЩАНИЕ С. А. АМБАРЦУМЯНОМ



Тяжелая весть о большой утрате настигла меня в тысячах километров от Армении.

Утрата оказалась более тяжелой, поскольку нет возможности физически присутствовать и проститься с большим человеком.

Мы все знали, что последние месяцы он тяжело болел, не выходил из дома. Но при этом 97-летний академик мужественно продолжал работать над новой книгой о науке Армении. Из единственно возможного в этих условиях общения с ним по электронной почте мне было ясно, что его беспокоила судьба академической науки и академии в условиях новой революционной перекройки. Однако смерть прервала работу над последней его книгой.

Титаны уходят медленно. Величаво, как отплывают океанские корабли, они увлекают, уводят с собой целую эпоху, оставляя живым всю ответственность за продолжение их дел и жизни.

Сергей Амбарцумян, великий гражданин Армении и большой ученый никогда не допускал неуважительного отношения к ученым и к науке. Одно его присутствие, даже молчаливое, на различных собраниях придавало зна-

чимость и серьезность происходящему. При этом он не был сухим и отвлеченным профессором, любил жизнь, рисовал философские картины, ценил женскую красоту, умел шутить и уважал умные шутки и мысли собеседника.

Два старца - хранители академических традиций, держатели своего рода морального дресс-кода ученого, смысла и назначения науки, армянской науки – академики Владимир Бархударян и Сергей Амбарцумян сделали очень много для того, чтобы сохранить, сбереечь академическую науку и ученых в самые тяжелые для нее годы.

Как олимпийские чемпионы, которые на долгие годы обеспечивают престиж и служат оправданием для спорта в стране, точно так при них армянская академическая наука казалась особенно защищенной и оправданной в глазах общества.

После распада Советского Союза казалось, что все меняется, рушится старое, отжившее свой советский век. В угоду установившейся моде подражания Западу, чуть ли не каждое новое армянское правительство задавалось целью закрыть академию наук или по крайней мере слить, соединить ее с вузами. Впрочем, не секрет, что эта тенденция и сегодня еще продолжается. И очень жаль, что нет больше с нами рядом двух мудрых старцев – заступников и защитников чести и совести армянской академической науки.

Нас учили, что незаменимых людей не бывает. Это правда, но бывают личности в истории страны, заменить которых бывает практически невозможно. Их невозможно заменить, в лучшем случае на их место приходят другие, иногда много лет спустя, а может быть и много десятилетий или столетий спустя. Ну вот скажите, пожалуйста, кто и как может нам заменить Комитаса, Сарьяна, Туманяна или Кочара. Кто и когда заменит нам Виктора Амбарцумяна, Алиханянов, Мергеляна или Сергея Амбарцумяна.

Великие уходят тихо и величаво, сохраняя тайны, известные только им. Нам же остается глубокое чувство утраты чего-то очень важного, ценного без чего наша жизнь кажется несколько опустошенной.

Это своеобразное ощущение уходящей эпохи, которое свойственно людям его поколения, его современникам и тем из нас, кому довелось быть свидетелем мужественного и достойного ответа Сергея Амбарцумяна всемогущему держателю высшей партийной власти в СССР. Тогда его беспримерная отва-

га и человеческое достоинство поразили всю страну. Никто не смел до этого так уверенно и спокойно возражать генеральному секретарю партии, да еще прилюдно, при включенных камерах всесоюзного телевидения. Поступок Амбарцумяна тогда был сродни подвигу Матросова, закрывшего собою немецкую амбразуру. Тогда этот его поступок возымел оглушительный эффект и надолго врезался всем в память. С уверенностью можно сказать, что он поменял атмосферу в стране. Все армяне ходили тогда гордые, ловили завистливые взгляды людей других национальностей и просто купались в лучах его – амбарцумяновской славы.

Один только этот поступок демонстрации гражданского достоинства и личной отваги надолго, если не навсегда, сохранил бы его в наших сердцах и в сердцах всего поколения 80-десятих.

В одной из своих книг он как-то опубликовал некролог на свою смерть. На мой удивленный вопрос, зачем нужен был этот авто-некролог, он с присущей ему иронией заметил, что не хочет, чтобы после его смерти опубликовали бы черт знает что. Поэтому и подготовил сам нормальный некролог. Перечитав тот текст сегодня я еще раз убедился, что он как всегда был абсолютно прав.


Он уходил тихо и величаво, как подobaется Великим.

Вечная ему память...

Академик Геворг Погосян

Շիրակի հայագիտականի աշխատակիցները նույնպես խոր ցավով են ապրում կորուստը Մեծ մարդու, գիտնականի և իրենց համերկրացու, որը նաև ժամանակին էական ներդրում ունեցավ իր ծննդավայր Գյումրիում ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ստեղծման մեջ ու մշտապես մնաց նրա լավագույն բարեկամներից մեկը:

«Գիտական աշխատություններ» ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի; խմբ.՝ Ս. Հայրապետյան, -Գյումրի: 2017, հատոր XX, 320 էջ:



Լույս տեսավ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուի հոբելյանական XX հատորը՝ 20 տպագրական մամուլ ծավալով, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Հայրապետյանի ընդհանուր խմբագրությամբ և ինքնատիպ նախաբանով ուղղված պարբերականի ընթերցողներին: Նրանում, անդրադարձ կատարելով քսանամյա գիտական այս պարբերականի դերին ու նշանակությունը, խմբագիրն արժևորում է հայագետների շրջանում ժողովածուի վաստակած հեղինակությունը՝ նրա դավանած բարձր գեղագիտական սկզբունքների ու ստեղծած բարի ավանդույթների հիմքի վրա: Հատուկ կարևորվել է պարբերականի դերը ՇՀՀ կենտրոնի գիտական կազմի կենսագործունեության մեջ, որտեղ «այն ավելին է, քան ինչ-որ ժողովածու, այն կենտրոնի ինքնության մի մասն է, նրա հպարտությունը, նրա անդամներից շատերի համար՝ իրենց գիտական կենսագրության սկիզբն ու ընթացքը: Նրա հատորներում տեղ են գտել Գենտրոնի գիտաշխատողների երեք հարյուրից ավելի գիտական հոդվածներ, հրապարակումներ, հաղորդումներ: Այդ հատորներում «հյուրըն-

կալվել են» նաև հանրապետության բազմաթիվ անվանի բանագետներ ու ազգագրագետներ, պատմաբաններ ու հնագետներ, ակադեմիական և բուհական համակարգերի երիտասարդ գիտական կադրեր, արտերկրի շուրջ հինգ տասնյակ հայ և այլազգի գիտնականներ»:

Հոբելյանական հատորում տեղ են գտել 32 գիտական հոդվածներ, հաղորդումներ, հրապարակումներ՝ նվիրված հայագիտության, մասնավորաբար շիրակագիտության հիմնարար ուղղություններին:

Է.Խնկյանը, քննության առնելով ասույթաբանական ժանրերի՝ առած-ասացվածքների, երդումների, դարձվածքների և բարբառային տարաբնույթ արտահայտությունների կիրառությունը Գարսի հեքիաթներում, փորձել է բացահայտել դրանց կիրառման դրդապատճառներն ու խաղացած դերը հեքիաթի կառուցվածքում: Նշվում է, որ դրանք նպաստել են կայուն բանաձևերի ձևավորմանը, միևնույն ժամանակ որպես գեղարվեստական արտահայտչամիջոցներ ոճավորել և պատկերավոր են դարձրել հեքիաթապատումը:

Ա.Հայկագուն Գրիգորյանի «Նաչատակի աստիճանաձև հորինվածքների խորհրդաբանական ստուգաբանությունը երկիր-երկինք բնափիլիսոփայական ընկալումների համատեքստում» հոդվածը նվիրված է խաչքարային արվեստի՝ որպես հայ մշակութային ուրույն տեսակի, հորինվածքային ձևերի, տիպերի և նախատիպերի ուսումնասիրմանը: Ըստ հեղինակի՝ դրանց խորհրդաբանակ ստուգաբանությունը կօգնի լրացնելու հայ ինքնության ապացույցների անընդհատելի գիտատեսական հիմնավորումների տեսական շղթան:

Շումերների Ներգալ աստծու նախատիպ առասպելաբանական կերպարի հայկական գծերի բացահայտումը, ըստ Մ.Պետրոսյանի հոդվածի դրույթների, գալիս է հաստատելու այն իրողությունը, որ միջագետքյան առասպելաբանությունն ունեցել է ոչ միայն բուն շումերական և սեմական-աքադական, այլև հնդեվրոպական-հայկական բաղադրատարր: Այսպիսի եզրակացությունը համահունչ է մ.թ.ա. V–III հազարամյակների հնագիտական նյութի ուսումնասիրությունից բխող այն եզրակացությանը, ըստ որի՝ մ.թ.ա. V–III հազարամյակներին Հայկական լեռնաշխարհում և Հյուսիսային Միջագետքում գոյություն է ունեցել հնդեվրո-

պական էթնիկական տարրը ներկայացնող բնակչություն:

Հայտնի է, որ հայկական վերածնունդ արտահայտությունը, որն ընդունված է հայագիտության մեջ, իր ժամանակային սահմաններով հասնում է մինչև 10-րդ դար, Դ.Գասպարյանի «Հայկական Վերածնունդ. ժամանակը և առանձնահատկությունները» հոդվածում, երևույթի նորովի քննությամբ, հայ գրականության նոր շրջանը պետք է սկսել 18-րդ դարի սկզբից՝ Մխիթարյանների գործունեությունից, բայց Մայաթ-Նովային, ժամանակային կապի խզումով հանդերձ՝ պայմանավորված հայոց գրապատմական զարգացումների անկանոնությամբ, պետք է թողնել միջնադարում:

Գրականագետ Գ.Խաչիկյանի հոդվածում անդրադարձ է կատարվել գրող, հրապարակախոս, Հայաստանի առաջին Հանրապետության հայտնի պետական գործիչ Ավետիս Ահարոնյանի ստեղծագործություններին:

Մ.Ղազարյանի «Ծննդավայրի և մանկության պատկերը Հովհ.Գրիգորյանի «Հրեշտակներ մանկության երկնքից» շարքում» հոդվածում հեղինակը, քննության առնելով բանաստեղծի ստեղծագործությունը, դիտում է նրան որպես հասուն մի մանուկ, որն ապրել է խենթություններով լի մանկության և պատանեկության տարիներ, և իրական կյանքից ծնված նրա բանաստեղծությունները դարձել են նրա դեմքը:

Մշո և Գարնո բարբառները հայերենի ամենամեծ բարբառների թվին են պատկանում, որոնք, հազարամյակների խորքից գալով, կենդանի են մինչ օրս: Գ.Մկրտչյանի հոդվածում ոչ միայն լեզվական իրողությունների, այլև բնապատմական, աշխարհագրական հատկանիշների հիման վրա ամրագրվում է այն դրույթը, որ Մշո և Գարնո բարբառները հավակնում են լինելու հայերենի հնագույն լեզվավիճակները՝ գերծորոշակի այլ ենթաշերտերից, առավել ևս, որ հայագիտության մեջ վիճարկման ենթակա չէ, որ հայ ժողովրդի կազմավորման ու ձևավորման ակունքները գտնվում են Կենտրոնական Հայաստանում՝ համապատասխանելով այն վայրերին, որտեղ գոյակցել են Մշո և Գարնո բարբառները:

Լեզվաբանական և գրականագիտական բազմաբնույթ թեմաներ են արծարծված Մ.Միրումյանի «Նորակազմ բայական կառույցի կապակցություններ «Ազգ» շաբաթա-

թերթում (2015-2016 թվականներ)», Շ.Տեր-Աղամյանի «Ըղձական եղանակի իմաստային և գործառական առանձնահատկությունները գերմաներենում», Հ.Մելքոնյանի և Վ.Մելքոնյանի «Մակդիրը բանաստեղծի ստեղծագործական տեսադաշտում», Ք.Նիկողոսյանի «Փոխաբերությունը Նար-Ղոսի «Մեր թաղը» պատմվածաշարում», Հ.Մատիկյանի «Օրորոցայինը և աղոթքը՝ որպես քնամուտ տեքստեր անգլերենում և հայերենում» հոդվածներում:

Հատորի հոդվածների մի զգալի մասը՝ որպես գիտական զեկուցումներ, ներկայացվել է 2016թ. սեպտեմբերին ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնում անցկացված «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հայագիտության արդի հիմնախնդիրներ» միջազգային 9-րդ գիտաժողովում և արժանացել լսարանի հավանությանը: Դրանց մեջ հատկապես կարևորվում են Սփյուռքում հայկական գաղթօջախների ձևավորմանը և գործունեությանը նվիրված /տե՛ս Ա.Շպորտ, «Խարկով քաղաքի հայկական համայնքը (XIX դ. երկրորդ կես–XXI դ. սկիզբ)» Էթնոժողովրդագրական բնութագիր», Տ.Մարգարյան, «Անեցիների գաղթը Ղրիմ և թվագրումը», Տ.Նևսկայա, Ա.Հակոբյան, «Հայերի դերը Հյուսիսային Կովկասի տնտեսական և քաղաքական զարգացման գործում XVIII դ.-XX դարասկզբին», Հ.Ամիրջանյան, «Հովսեփ արքեպիսկոպոս Արդուրյանը Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ (1773-1800)»/ արժեքավոր հրապարակումները:

Պատմագիտական բազմաբնույթ խնդիրներ ու հարցեր են բարձրացված Լ.Պետրոսյանի «Օրոնտես-Երվանդի ռազմական և վարչական միջոցառումները Հայաստանի հյուսիս-արևմուտքում», Հ.Սուքիասյանի «Հայ-վրացական քաղաքական հարաբերությունների լուսաբանումը Մարտիրոս Հարությունյանի նամակներում (1918թ. դեկտեմբեր – 1919թ. ապրիլ)», Ա.Ակոպովի «XIX դարի II կեսի ռուս-թուրքական պատերազմները և Տայքը»:

Թեմատիկ բազմազանությամբ են ներկայացված նաև Ալեքսանդրապոլի պատմամշակութային ժառանգությանն առնչվող հոդվածներն ու հրապարակումները. «Հուշեր Ալեքսանդրապոլի հեղափոխական անցյալից 214 (Ա.Ազնավուրյան)»/Ա.Հայրապետյան/, «Խորհուրդների առաջին ընտրություններն Ալեքսանդրապոլի գավառում 1921թ. դեկտեմբերին» /Կ.Ալեքսանյան/, «Աշուղա-

կան ավանդույթը Ալեքսանդրապոլի քաղաքային մշակույթում» /Հ.Հարությունյան/, «Արխիվային փաստաթղթեր Ալեքսանդրապոլի գրադարան-ընթերցարանների մասին» /Գ.Այվազյան/, «Ուրվագծեր Ալեքսանդրապոլի պատմամշակութային դիմագծից» /Բ.Ավագյան/:

Հատորում տեղ գտած հնագիտական բնույթի հոդվածները նվիրված են Ախուրյանի ավազանի ամրաշինական կառույցներին, այդ թվում՝ կիկլոպյան ամրոց-բնակավայրերին /Լ.Եզանյան/, միջնադարյան պաշտպանական /Հ.Խաչատրյան/ և Ախուրյանի վերնահովիտ ամրոցներին /Բ.Վարդանյան/:

Ժողովածուի արվեստագիտական հոդվածները նվիրված են գյումրեցի գեղանկարիչ Սերգեյ Միրզոյանին /Ա.Մարգարյան/, Արցախի 1639-1700թթ. մանրանկարչությանն ու զարդանկարչությանը /Մ.Հարությունյան/:

Հատորը եզրափակվում է «Գիտական լրատու» խորագրի հարուստ տեղեկատվությամբ, նաև հրատարակված բոլոր նյութերի անգլերեն ամփոփումներով:

* * *

**ՍԻՄԱՎՈՆ ԾԵՐՈՒՆՈՒ
ԻՄԱՍՏՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱԳԵՏՑ**
(Սարգիս Հարությունյանի ծննդյան
90-ամյակի առթիվ)



Սարգիս Հարությունյանի գոյակերպը հայրենական գիտության ու մտավորականության համար բաց դաս է, քանի որ նա ցայսօր էլ հայ բանագիտության մեջ շարունակում է մեծն Մ. Աբեղյանի գործը՝ մնալով նշաձող թե՛ ժամանակակիցների, թե՛ նորեկ սերնդի համար։ Նրա կյանքը ինքնամոռաց նվիրում ու արարում է՝ հայ բանագիտությունը գոց իմացողի ու գնահատողի ծանրակշիռ վաստակով։

«...Դոկտորական ատենախոսությունս պաշտպանելու նախորդ գիշերը երազ տեսա. Աբեղյանն ու Աճառյանը եկան մեծաքայլ, պատկառելի, մոտեցան ինձ, աջ ու ահյակ թներս ընկան ու զարմանահրաշ, զմրուխտյա դաշտով ինձ տարան դեպի մի սարի կատար։ Ճանապարհը բարդ էր, ուղեկցողներս իմաստուն ու ճանապարհին գիտակ։ Մենք բարձրանալով հասանք սարի գագաթին, որտեղ մեծ ու ճոխ սեղան կար՝ բարիքներից ծանրաբեռն, գույների զմայլանքով։ Ես մոտեցա սեղանին, և ինչ ուտում էի, քաղցր էր։

Գուցե սա երազ էր ամբողջ կյանքիս համար, որ նախասահմանել էր ճակատագիրը. իմաստուններից միտք առա», -իր նշանավոր երազը մեզ համար այսպես է մեկնաբանում անվանի հայագետը։

Մ. Հարությունյանն աստվածատուր շնորհով իր խորաքնին հայացքը շարունակ դարձնում է դեպի հայ ժողովուրդն ու նրա բանավոր ստեղծագործական միտքը։ Նա մեզ սովորեցնում է ժողովրդի բանավոր իմաստությունը, ավելին՝ իր իսկ ներկայությունն իմաստություն է՝ աշխարհին, ինչպես ինքն է սիրում ասել, «լեն ու բոլ սրտով»

նայելու պատգամ։ Ժողովրդական բառ ու բանով, խոսքաշեն, հյուրընկալ, ժողովրդի ուրախություններին ու խրախճանքներին մշտապես սրտաբաց մասնակցող գիտնականը, Աստծու տված շնորհի ծաղկեցնելով, անհաթար մշակմամբ վերադարձնում է իր ժողովրդին, իր մեկնողական բացահայտումներով նրան տանում առասպելական մտածողության խորքերը։ Իր տքնող տեսակով հայի գեներ հզորացնելով՝ ապահովում է մեր ազգային ինքնությունը։

Հայոց բանավոր ավանդության բազմաթիվ ժանրեր Մ.Հարությունյանը խորապես ուսումնասիրել, քննել ու ներկայացրել է բազմաթիվ հոդվածներում, մենագրություններում ու հրապարակումներում։ Դրանց մեջ հատուկ կարևորվում են այն ժանրերը, որոնց առաջինն է անդրադարձել բազմա-հմուտ գիտնականը։ Առանձնահատուկ մոտեցմամբ քննել է հայ ժողովրդական հանելուկները («Հայ ժողովրդական հանելուկներ», Եր., 1960), դրանց տաղաչափական, գեղարվեստական առանձնահատկությունները։

Երկարատև գիտական պրպտումների արդյունք էր նաև «Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ» (Եր., 1975) մենագրությունը՝ հիմնված հայերեն ձեռագիր հիշատակարանների, հին արևելյան սեպագիր արձանագրությունների, միջնադարյան գրավոր աղբյուրների, նաև հայ ժողովրդական օրհնանքների և անեծքների հնագույն ըմբռնումների ու պատկերացումների վրա, պարզել է դրանց իմաստաբանական, կիրառական, կառուցվածքային հատկանիշները։ Այս ամենի հիման վրա ստեղծել է նաև «Հայ հմայական-ժողովրդական աղոթքներ» բնագրերի գիտական համահավաքը՝ հիշյալ բարդ ժանրերի իմաստաբանական մեկնություններով։

Նշանակալի է Մ.Հարությունյան բանագետի ավանդը հայկական էպոսի՝ «Մասնա ծռեր»-ի նոր տարբերակների թե՛ հայտնաբերման, թե՛ գրառման, թե՛ հետազոտման ու հրատարակման գործում։ Անուրանալի է գիտնականի վաստակը հայ առասպելաբանության հետազոտման ոլորտում՝ վերականգնելով աշխարհի տեսքի ու կառուցվածքի մասին հին հայոց առասպելաբանական պատկերացումները։

Մեծ գիտնականին ենք պարտական նաև հայագիտության պատմության ուսումնասիրման, վաստակաշատ հայագետների

գիտական ժառանգության հրատարակման համար: Պատահական չեն Մ.Հարությունյանի գիտական գործունեության մասին Պարույր Սևակի սևեռուն միտքն ու գնահատականը. «Մ.Հարությունյանը գիտության մարդ է. ինչ վիճակում էլ լինի այդ գիտությունը, Մ.Հարությունյանն իր ուժերի լարումով զբաղվելու է գիտությամբ, Մանուկ Աբեղյանի գործը՝ կատարելով այն, ինչ թերի է մնացել»:¹

Երկար տարիներ Մ.Հարությունյանի՝ որպես ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական նյութերի վավերագրման բաժնի վարիչի, գիտական ղեկավարմամբ, նորագույն մեթոդներով և հաշվողական տեխնիկայի կիրառությամբ մշակվել ու համակարգվել է ինստիտուտի բանահյուսական արխիվում կուտակված մեր հոգևոր ժառանգությունը, կազմվել է արխիվային նյութերի գլխավոր ցանկը, հրատարակվել են արխիվում պահպանվող շատ ու շատ նյութեր:

Մեծարգո հայագետը, որ նաև մեր հող ու ջրի ծնունդ է, եղել է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ստեղծման ակունքներում՝ իր քննախույզ մտքով ու ոգով, հայականությամբ նպաստելով իր հայրենակից երիտասարդ գիտնականների հոգևոր վերընթացին, Կենտրոնի գիտական գործունեության ծավալմանն ու զարգացմանը:

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը շնորհավորում և արևշատություն է մաղթում մեծանուն գիտնականին՝ 90-ամյա հոբելյանի առթիվ, երախտագիտությամբ արժևորելով Գյումրիում 1997թ.-ին Կենտրոնի կայացմանը, այստեղ պարբերաբար անցկացվող «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողովներին նրա առ այսօր գործուն մասնակցությունը, անգուցական գիտնականի ու հմայատիպար մարդու ջերմ, անաչառ աջակցությունը:

Կենտրոնի հանրային անունից

հ.գ.թ. Կ.Սահակյան


Ռ.Հովհաննիսյան

* * *

¹ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Բանահյուսության արխիվ, Մ.Հարությունյանի ֆոնդ:

2018թ. համայն հայությունը մեծ ոգևորչումով նշեց Հայաստանի Հանրապետության 100-ամյակը: Այս նվիրական տարեդարձը յուրովի նշեցին ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոնի աշխատակիցները: Կենտրոնում բարի ավանդույթ է դարձել հայության բաղձալի տոները նշել Արևմտյան Հայաստանում՝ ուխտագնացությամբ և գիտական ընթերցումների անցկացմամբ:

2018թ. օգոստոսի 3-5-ը Կենտրոնը «Համշեն տուրի» ուղեկցությամբ, երեք տասնյակ ուխտավորների հետ այցելեց Արևմտյան Հայաստան: Առաջին հանգրվանը հայոց տիեզերական մայրաքաղաք Անիում էր, որտեղ Մայր տաճարում, կատարվեց հիշատակի խնկարկում՝ հոգևոր երգերի ուղեկցությամբ:



Այնուհետև ուխտավորները, շրջանցելով Արարատ լեռան ստորոտը, ճանապարհվեցին դեպի Բայազետ պատմական Դարոյնք բերդավանք, որը IV դարում Մեծ Հայքի հայտնի բերդերից էր և Բագրատունի նախարարների ոստանը: Բայազետի հայ բնակչությունը հիմնականում զբաղվել է առևտրով, երկրագործությամբ, անասնապահությամբ և արհեստներով, որոնք, հայտնի պատմական իրադարձությունների բերումով, 19-րդ դարի վերջում իրենց հանգրվանը գտան նաև Շիրակ աշխարհում՝ Ալեքսանդրապոլի համաքաղական համալիրում:

Առջևնում Հայաստանի պատմական մայրաքաղաք Վանի բերդն էր, որը հայոց բնօրրանի ոգեշունչ զգացողությունների և ոգեշնչման առատ աղբյուր է: Այն այսօր ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցուցակում: Ուխտագնացության խորագրից բխում էր նաև հիշել ու խոնարհվել 1915 թ. ապրիլին Վանի հերոսական ինքնապաշտպանական կռիվների մասնակիցների հիշատակին, ինչն էլ տեղում դարձավ յուրահատուկ պատմագիտական բանավեճ-քննարկման թեմա:

Աղթամարի Սբ Խաչ և Վարագա Սբ Նշան եկեղեցիներում ուխտավորները հղեցին հիշատակի խնկաբույր աղոթքներ, որոնց հաջորդեց այցելությունը «Մեերի դուռ» կամ «Ագռավու քար» սրբազան քարաժայռ [Վանա բերդի](#) մոտ: «Հայու աշխարհը» չար ուժերից «ազատողին» խումբը մոտեցավ սրբազան դրոշով ու պայծառ գալիքի հանդեպ մեծ հույսով:



Ուխտագնացությունը շարունակվեց Մշո դաշտով, Բասենով, և ուխտավորները Սուլուխի ու Հովվի կամուրջներին սրբազան եռագույնը ծածանելու և ազգային ազատագրական երգեր հնչեցնելու բաղձալի պահեր ապրեցին: Ուխտագնացության բուն հանգրվանը Կարսն էր՝ Հին Հայոց Կարուց բերդը: Ավանդական հիշատակի արարողությունից հետո ներկաները վերհիշեցին հայոց վեհաշուք այս մայրաքաղաքի պատմության

կարևորագույն էջերը: Օրվա խորհրդին համապատասխան խոսվեց Կարսի մարզի մասին, որի մեջ մտան նաև Արդահանի, Կադփանի, Օլթիի շրջանները: Նշվեց, որ Ռուսաստանին միանալը դրական ազդեցություն ունեցավ Կարսի համար: Քաղաքն արագ բարգավաճեց ու շենացավ: Դա նկատելի էր հատկապես 1833-ից՝ երկաթուղու Կարս մտնելուց հետո, որն աշխուժացրեց քաղաքի տնտեսական կյանքը: Սա նպաստեց նաև բնակիչների թվաքանակի ավելացմանն ու հայերի վերադարձին: Աշխուժացավ նաև մշակութային կյանքը:



Կարսի բերդի կամարների տակ էլ անցկացվեցին նախատեսված գիտական ընթերցումները: Հանդես եկան ՇՀՀ կենտրոնի գիտաշխատողներ Ա.Ակոպովը /«Մահմեդականացած հայերի ինքնության խնդրի շուրջ»/, Հ.Հարությունյանը /«Տաղերի զարգացման նախադրյալները հայ միջնադարյան երաժշտության մեջ»/, «Վասպուրականի ավանդական պարերը», Լ.Պետրոսյանը /«Երվանդունիների արքայատոհմը և վերջին արքան»/, Հ.Մատիկյանը /«Ավանդական օրորները Արևմտյան Հայաստանից»/:



Վերադառնալով Շիրակ՝ ՇՀՀ կենտրոնի աշխատակիցները մեծ ոգևորությամբ քննարկեցին հաջորդ ուխտագնացություն-գիտական ընթերցումների թեմատիկ շրջանակը:

SUMMARY

T. Aghanyan, K. Bazeyan. TRADE AND ART HANDICRAFT IN THE ADAPTATION PROCESS OF POST-DISASTER GYUMRI POPULATION. The article discusses the role and adaptive functions of art and art crafts in overcoming the difficult moral and psychological state of the population of Gyumri. Within a short period of time, in the most difficult socio-economic conditions it was possible to restore the image of Gyumri as one of the scientific and cultural centers of Armenia. Along with the existing cultural and educational institutions new ones have been established, including the State Symphony orchestra, "Koar" cultural center with the orchestra and choir of the same name, houses-museums of Hovhannes Shiraz and Mher Mkrtchyan. In Gyumri international Biennale avantgarde art started, branches of art universities, exhibitions were held, sales of works of folk artists were carried out.

H. Harutyunyan. ALEXANDRAPOL'S ASHOUGH SONGS IN ARSHAK BRUTYAN'S RECORDINGS. Alexandrapol's ashough school has an exceptional place in the history of the Armenian national music. Among the valuable pieces of life and creative heritage of prominent ashoughs, Arshak Brutyan, a prominent musician, public figure, performed the above mentioned samples. The recorded samples of genuine songs of about 30 ashoughs give a clear idea of the genre, poetry, and other characteristics of Alexandrapol's ashough music. In the context of the study of the Middle East tradition, the legacy of the Armenian folk song, medieval narrative, spiritual monument and the features of national identity become apparent.

K. Sahakyan, R. Hovhannissyan. "MY STEP" AS A MEANS OF 'EXIT' DOOR. In the article we have touched upon how our people gathered in the square in 2018- the proclamation of new time, new ideas and values during the April-May nationwide awakening. New vectors of life were directed toward the future of Armenia, where the creed of national values was a nation-culture stance. In essence, My Step Initiative has become an 'exit' door to the entire Armenian nation.

H. Matikyan. DOLL AS A PERSONIFIED NURSERY CHARACTER. Doll, as an active personage of nursery, has an important applied value. Symptomatically, it is created with the image and likeness of a child. The toy is a constant companion of the child from the first days of birth. The entry of the doll into the world of the child is due to the fact that it is identical to the child's image. The entry of the child into the symbolic world of the doll is a priority both in the Armenian and English-speaking environment. In one case, it plays the role of a partner, in the other – a patron, a protective image.

L. Yeganyan. CULT OF SHEEP AND BLOODLESS SACRIFICE (on the objects having ceremonial functions). The article is devoted to the study of the cult of sheep and its bloodless sacrifice in the Armenian mythology and principles.

Conditioned by the specific role of sheep in economy, fleece, wool, thread, fabric- carpet, sock, girdle reflected in mythology are the realization means of ceremonial activities.

Ancient imaginations have given birth to the principles of woman deity with thread weaving on her hand.

Q. Nikoghosyan. STYLISTIC FIGURES IN NAR DOS “OUR NEIGHBOURHOOD” (“MER TAGHE”) STORIES. The article analyses the manifestations of the repetition, gradation,

antithesis, periphrasis, asyndeton in the narrative compositional language of the stories in the cycle "Our Neighborhood" ("Mer Taghe") by Nar-Dos.

The mentioned syntactic conversions as stylistic devices are used in abundance in the cycle of stories, thus expressing some features peculiar to the national linguo-mentality, helping to make the author's style more literary, popular, pathetic as well as to ascribe typicality to the characters and to represent the lifestyle and the "dark" atmosphere in people's minds of the period described.

L. Petrosyan. PARK-GARDEN AND SANCTUARY- RESERVES IN THE ANCIENT EAST AND ARMENIA. Since ancient times, like other countries of the ancient East, Armenia has also had specially protected natural territories that have served not only royal - gardens, sanctuaries but also as hunting grounds and places for entertainment and maneuver. Among them are popular a) "Sosyats Purak" ("Park of the sycamors") in Argishtikhinili-Armavir, b) "Tsndots Antar" (Forest for giving birth to), recovered by King Yervand the Last, c) a garden-park built by Tigran the Great near Tigranakert, d) "Tachar Mayri" ("Cathedral of the Cedars") and Khosrovakert grove of King Khosrov Kotak. We have enlarged this list with ten less popular garden- parks.

A. Akopov. THE ARMENIAN POPULATION OF THE TORTOUM DISTRICT IN 1830-1878. In 1831 administrative changes took place in the Ottoman Empire, in which one of the provinces of historical Great Armenia - Tayk, became a part of the Erzurum eyalet. Among the Tayk regions, one of the Armenian-populated was Tortoum district, which was located in the basin of the Tortoum River. The well-known villages of Tortum - Khahu, Kitskha, Aprnes, Norshen, Rabat, Par, Khozbrik, Veringegh, Shippek, Garnkos etc., were largely deprived of the indigenous Armenian population during the resettlement of Armenians to the Russian Empire in 1830. In the mid-19th century, the living conditions of the Armenians of Tortoum got worse. Only a few villages - Rabat, Garnkos, Gorker, Aprenes, etc., were completely settled by Armenians, and in the remaining villages Armenians lived next to Muslims. According to historical sources and archival documents, in the second half of the 19th century, about 3000 Armenians (Catholics and Apostolic) lived in Tortum district. At the same time, the main part of Muslim population of the region had an Armenian roots, knew the Armenian language and had good-neighborly relations with Armenian Christians. Such Muslims were known as "Keskeses" (half Armenian-Christians, half Muslim-Turks).

G. Ayvazyan. FROM THE HISTORY OF THE ARMENIAN NATIONAL-POLITICAL SYMBOLS OF THE XVIII-XIX CENTURIES. In the era of modern times, beginning in the second half of the 17th century, the important political task of the national forces was to unite the people with the goal of liberating Armenia from the rule of Iran and the Ottoman Empire. A strong support for achieving this intention was political symbolism.

The formation of the self-identity of the nation was greatly influenced by the portrait "Mother of Armenia" -the Armenian lady sits on the wreckage of Armenia. The figure-allegory leaves no one indifferent. Several variants of the portrait have been survived. They show how the ideology of the Armenian liberation struggle and the doctrines of the restoration of the Armenian state were transformed over time.

A well thought out picture is the result of romantic historiosophy. It summarizes the experience of knowledge of national and political figures about the world's historical processes.

A. Hayrapetyan. THE DEMOGRAPHIC PROCESSES IN THE ALEXANDRAPOL UYEZD IN MAY-NOVEMBER, 1918. The fact that the mass violence and massacres organized by the Turkish regular troops and local Muslims in the Alexandrapol uyezd in May-November, 1918, was the result of a state level policy planned beforehand with the aim to carry out the physical extermination of the Armenian population, has already been proven.

Unfortunately the work shortcomings and flaws allowed by the commissions which was sent to the uyezd didn't give the chance to fully unearth the complete scales of the Ottoman criminal policy.

In the modern Armenian historiography it is accepted to mention only about 10300 victims of that genocidal policy while the simple combination of archival material documents, eyewitnesses' memories and the reports of the then periodical press, shows that the number has been extremely reduced.

The new study gave the following results: during the six months of the occupation, more than 60 villages were destroyed, some 20,000 were slaughtered, and another 6,000 became victims of famine and epidemics. More than 15,000 people were captured and taken to the depths of the Ottoman Empire under various pretexts. About 5,000 women were abducted and raped.

K. Alexanyan. THE ACTIVITIES OF THE NEAR EAST RELIEF COMMITTEE IN THE ALEXANDROPOL DISTRICT IN 1919-1921. The article refers to the activities of the Middle Eastern Relief Committee of the First Republic of Armenia in the province of Alexandrapol. On the one hand we presented the great role of the organization in the rescue of Western Armenian refugees and orphans who survived the Armenian Genocide, on the other hand, contradictions and different approaches between the Armenian authorities and the representatives of the USSR. We have touched upon the situation of Western Armenian refugees and orphans in the focus of those relations.

A. Boyajyan. DEMOGRAPHIC PROCESSES IN THE RURAL SETTLEMENTS OF SHIRAK REGION (XX- BEGINNING OF XXI). During Post-Soviet years the mass emigration of urban and rural areas caused serious demographic and socio-economic problems. In rural settlements the number of men increased while the number of women has remained the same. In all areas of the regions aging of people is evident except the Ani region. The aging of the population and the till working age, the reduction of the population of the region in the labor market will create serious problems, in addition, the state will increase the social expenses from year to year in case of the decreasing of the number of taxpayers. The villages adjacent to the region and the enlarged community of Sarapat are facing great demographic problems.

A. Hayrapetyan. THE FORMATION OF UNIPOLARITY MODELLED ON THE CONCEPT OF PAX AMERICANA (by the case of Middle East policy). The paper examines the rise of Pax Americana concept along with the formation of unipolarity and the steps towards regional policy redefinition based on the example of the US Middle East policy. The paper presents the policies and mechanisms adopted by the US presidential administrations in the first decade after the Cold War in order to promote Pax Americana rules in the region as well as its outcomes and consequences. Though it managed to extend its moderate influence in the regional order the US could not establish and maintain its indisputable and complete supremacy there. On the Contrary the Iraq invasion didn't justify G.W. Bush neoconservative administration's expectation

leading to the balkanization of Iraq which considered to be the whole region's miniature model, resulted in the rise in anti-Americanism and the unprecedented scales of terrorism at the global and local levels initiating the crisis of unipolarity just at the peak of Pax Americana rise.

I. Avagyan. SKETCHES ON HISTORICAL AND CULTURAL CHARACTER OF ALEXANDRAPOL (SECOND PART). The article touches upon the issues concerning town building of the town Aleksandrapol in XIX- in the beginning of XXth century. For the first time the term "vertical ensemble" was put into scientific circulation by A. Ivanov, Doctor of architecture. As a result of the examination of one of the quarters of the old town, which is located between the streets Varpetats, Rustaveli, Shiraz, Abovyan, identified new buildings, which were not previously included in the official statements-the list of monuments protected by the state. The article gives a new classification of homes and buildings according to interior and exterior forms. 1. Buildings, which still have the old exterior 2. Buildings, which still have the old exterior and interior forms. 3. Buildings, which remained typical of the XIX-beginning of XX centuries of the interior, but in the absence of the front facade, they are not included in the list of monuments protected by the state. Architectural analogues of equipment facilities and some decors date back to the architecture of medieval Armenia.

H. Khachatryan, L. Yeganyan, L. Petrosyan, A. Furdvengler, T. Neuser, D. Mauerman. THE EXCAVATIONS OF AZATAN NECROPOL IN 2015. The Armenian-German expedition group carried out the excavations of the settlement of the necropolis in Azatan, Shirak region dating back to Late Bronze and Early Iron age. The excavations lasted in 2015. Five rock-cut tombs and one priming burials have been excavated with horizontal pitfalls.

All revealed rock-cut tombs are in different levels of the hill. The bottom tomb is located on the foot of the mountain, the upper one is under the peak of the hill. Tombs have irregular oval shape. The entrance is from the western side. The materials date back according to the objects. Such kind of burials are recorded in Azatan necropolis. The priming burial is not different from early excavated burials. The guided material is synchronic to the materials excavated from base grounded and catacomb burials and dates back to XII-X BC.

The excavations and the guided material provide with new information of Late Bronze and Early Iron Age of Shirak as well as the history of Old Armenia

A. Margaryan. GYUMRI AS A THEATRE: PAINTER GARIK MANUKYAN. The art of Gyumri painter Garik Manukyan was formed during the difficult period of the 80s. He summarizes the experience and knowledge of the predecessors and carries out his own handwriting. The delicate color combinations, the symbolic figurative language, the ability of complex compositions characterize Manukyan's unique style.

Being a stage artist by profession he looks at the canvases as a stage space and his conventional heroes are actors. Gyumri is in the center of the art of Garik Manukyan with morals, people and unique color.

H. Mahtesyan. GENERAL GABRIEL GHORGHANIAN'S PROJECT OF ADMINISTRATIVE BORDERS BETWEEN ARMENIA, GEORGIA AND AZERBAIJAN (1918, JUNE). After proclamation of the Republic of Armenia in 1918 the problem of the borders between Transcaucasian republics had to be discussed in Constantinople.

Those days Azerbaijan and Georgia were interacting united against Armenian delegation using their privileged positions.

Armenian delegation had introduced general Gabriel Ghorghanian's project of delimitation of the administrative borders with justified maps and statistical data to Turkish government and the ambassadors of the participating countries.

But as the political situation summit did not take place, those problems had not been solved and had been transferred to other international conferences and summits.

I. Avagyan. GYUMRI'S OLD CEMETERY AS A PROTECTED CULTURAL UNIT.

The article touches upon the issues of the old cemetery number one in Gyumri which in 1980 was included in the "Official Statement" list of monuments protected by the state. The first burial of the cemetery dates back to the late XIX-early XX centuries. For the first time the system analysis of the cemetery is put into scientific circulation, the territory of which we divided into four sections. In section 1 a, b, c - burials have been made since the beginning of the 1920s till nowadays. In section 2 Christians and other nationalities were buried. Section 3 starting from the 80s of XIX century Armenians were buried. Section 4 starting from the 80s of XIX century Russians were buried (children, civilians, officials, soldiers).

The article presents a new classification of gravestones of the cemetery-tombs, tombstones with bronze plaques, crosses, winged crosses, two types of cenotaph tombs have been singled out and burial vaults where the specialization of the dead person is mentioned.

Irreparable damage to the cemetery was caused by the earthquake in 1988. Gyumri cemetery number one is a protected cultural unit and is subject to in-depth study.

Բ ո Վ ա ճ ի ն ո թ յ ո ն

Հ ո ղ Վ ա ծ ճ ե ռ

Թորգոմ ԱՂԱՆՅԱՆ, Կարինե ԲԱԶԵՅԱՆ

Արվեստն ու գեղարվեստական արհեստագործությունը հետադետյան
Գյումրու բնակչության հարմարվողականության գործընթացներում5

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ալեքսանդրապոլի աշուղական երգերը Արշակ Բրուտյանի գրառումներում15

Կարինե ՄԱՀԱԿՅԱՆ, Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Իմ քայլը»՝ ելից դուռ25

Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ

Տիկնիկը որպես մանկանոցի անձնավորված կերպար.....33

Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

Ոչխարի պաշտամունք և անարյուն զոհաբերություն

(ծիսական գործառույթներով առարկաների շուրջ)38

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ

Սեպագրային ՄԻՐԱՍԻԿԻ երկրի տեղադրության շուրջ50

Լալիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կրկնավոր բարդությունների աճականով և նախդրավոր տիպերն

Աստվածաշունչ մատյանում60

Հռիփսիմե ԹՈՐՈՍՅԱՆ

«Գլուխ» բաղադրիչով սոմատիկ դարձվածքները հայերենում և պարսկերենում...68

Քրիստինե ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Ոճական բանադարձումներ Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարում77

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

Այգի-պարտեզներ և սրբավայր-արգելանոցներ

Հին Արևելքում և Հայաստանում.....84

Արկադի ՄԿՈՊՈՎ

Թորթումի գավառի հայ բնակչությունը 1830-1878 թթ.96

Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ

XVIII-XIX դարերի հայ ազգային-քաղաքական

խորհրդանիշների պատմությունից107

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ժողովրդագրական գործընթացներն Ալեքսանդրապոլի գավառում

1918թ. մայիս-նոյեմբեր ամիսներին113

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մերձավոր Արևելքի նպաստամատույց ամերիկյան կոմիտեի

գործունեությունն Ալեքսանդրապոլի գավառում 1919-1921թթ.128

Արտաշես ԲՈՅԱԶՅԱՆ

Ժողովրդագրական գործընթացները

Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում (XXդ. -XXIդ. սկիզբ).....136

Աստղիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Միաբնեռայնության ձևավորումն ըստ PAX AMERICANA հայեցակարգի
(մերձավորարևելյան քաղաքականության օրինակով)148

Հրապարակումներ և հաղորդումներ

Ինգա ԱՎԱԳՅԱՆ

Ուրվագծեր Ալեքսանդրապոլի պատմամշակութային
դիմապատկերից (մասն II)158

**Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ, Լարիսա ԵԳԱՆՅԱՆ, Լևոն ՊԵՏՐՈՍՅԱՆ,
Անդրեաս ՖՈՐԹՎԵՆԳԼԵՐ, Թորբիաս ՆԵՈՒՄԵՐ, Դորոթեա ՄԱՌԻԵՐՄԱՆ**

Ազատանի դամբարանադաշտի 2015 թ. պեղումները 168

Արաքս ՄԱՐԳԱՐՅԱՆ

Գյումրին իբրև թատրոն. գեղանկարիչ Գարիկ Մանուկյան183

Հայկ ՄԱՀՏԵՍՅԱՆ

Գեներալ Գաբրիել Ղորղանյանի կազմած նախագիծը Հայաստանի,
Վրաստանի և Ադրբեջանի սահմանագծման վերաբերյալ (1918թ.Հունիս).....189

Ինգա ԱՎԱԳՅԱՆ

Գյումրու Հին գերեզմանոցը
որպես մշակութային պահպանական միավոր195

Լրատու.....211

Ամփոփում (անգլերեն).....218

С о д е р ж а н и е

С т а т ь и

Торгом АГАНЯН, Карине БАЗЕЯН

Искусство и художественные ремесла в адаптационных процессах
населения Гюмри после землетрясения5

Асмик АРУТЮНЯН

Ашугские песни Александрополя в записях Аршака Брутяна15

Карине СААКЯН, Роза ОГАНЕСЯН

«Мой шаг»-дверь на выход25

Асмик МАТИКЯН

Кукла как персонифицированный образ детской комнаты33

Лариса ЕГАНЯН

Кульť овцы и бескровное жертвоприношение
(о предметах с ритуальными функциями)38

Саргис ПЕТРОСЯН

О локализации клинописной страны UṬIRU(ḪI)50

Лалик ХАЧАТРЯН

Редупликативные словообразовательные типы с детерминативом
и предложом в Библии60

Рипсима ТОРОСЯН

Соматические фразеологические единицы с компонентом «голова»
в армянском и персидском языках68

Кристине НИКОГОСЯН

Стилистические приемы в цикле новелл Нар-Доса "Наш квартал"77

Лусине ПЕТРОСЯН

Парки-сады и святилища-заповедники в Древнем Востоке и в Армении84

Аркадий АКОПОВ

Армянское население Тортумской области в 30-70-х гг. XIX века96

Геворг АЙВАЗЯН

Из истории армянской национально-политической символики XVIII-XIX веков..107

Армен АЙРАПЕТЯН

Демографические процессы в Александропольском уезде
в мае-ноябре 1918 года113

Карине АЛЕКСАНИЯ

Деятельность американского благотворительного комитета
Ближнего Востока в Александропольском гаваре в 1919-1921 гг.128

Арташес БОЯДЖЯН

Демографические процессы в селах Ширакского марза (XXв.-начало XXIв.)136

Астхик АЙРАПЕТЯН

Формирование однополярного мира по образцу Pax Americana (на примере ближневосточной политики)	148
---	-----

П у б л и к а ц и и и с о о б щ е н и я

Инга АВАГЯН

Штрихи историко-культурного облика Александрополя (часть II)	158
--	-----

***Амазасп ХАЧАТРЯН, Лариса ЕГАНЯН, Левон ПЕТРОСЯН,
Андреас ФУРТВЕНГЛЕР, Тобиас НЕУСЕР, Доротея МАУЕРМАН***

Раскопки некрополя Азатан в 2015г.	168
---	-----

Аракс МАРГАРЯН

Гюмри как театр: художник Гарик Манукян	183
---	-----

Гайк МАЙТЕСЯН

Проект границ, отделяющих Армению от Грузии и Азербайджана, подготовленный генералом Габриэлом Корганяном (1918 июнь).....	189
---	-----

Инга АВАГЯН

Гюмрийское Старое кладбище как охраняемая культурная единица.....	195
---	-----

<i>Информация.....</i>	211
-------------------------------	------------

<i>Резюме (на английском).....</i>	218
---	------------

Contents

Articles

Torgom AGHANYAN, Karine BAZEYAN

Trade and Art Handicraft in the Adaptation Process of Post-Disaster

Gyumri Population5

Hasmik HARUTYUNYAN

Alexandropol's Ashough Songs in Arshak Brutyan's Recordings15

Karine SAHAKYAM, Roza HOVHANNISSYAN

"My Step" as a Means of 'Exit' Door25

Hasmik MATIKYAN

Doll as a Personified Nursery Character33

Larisa YEGANYAN

Cult of Sheep and Bloodless Sacrifice (on the Objects having Ceremonial Functions).....38

Sargis PETROSYAN

About the Location of Cuneiform UITIRU(HI) Land50

Lalik KHACHATRYAN

Reduplicative Word-Formation Types by Root-Determinatives and

Prepositions in the Bible.....60

Hripsime TOROSYAN

Somatic Phraseological Units with the Component

"Head" in Armenian and Persian.....68

Qristine NIKOGHOSYAN

Stylistic Figures in Nar Dos "Our Neighbourhood" ("Mer Taghe") Stories77

Lusine PETROSYAN

Park-Garden and Sanctuary- Reserves in the Ancient East and Armenia84

Arkadi AKOPOV

The Armenian Population of the Tortoum District in 1830-187896

Gevorg AYVAZYAN

From the History of the Armenian National-Political Symbols

of the XVIII-XIX Centuries107

Armen HAYRAPETYAN

The Demographic Processes in the Alexandropol Uyezd

in May-November, 1918113

Karine ALEXANYAN

The Activities of the Near East Relief Committee

in the Alexandropol District in 1919-1921.....128

Artashes BOYAJYAN

Demographic Processes in the Rural Settlements

of Shirak Region (XX- Beginning of XXI)136

Astghik HAYRAPETYAN

The Formation of Unipolarity Modelled on the Concept of Pax Americana (by the Case of Middle East Policy)	148
--	-----

Publications and Reports

Inga AVAGYAN

Sketches on Historical and Cultural Character of Alexandropol (Second Part)	158
---	-----

Hamazasp KHACHATRYAN, Larisa YEGANYAN,

Levon PETROSYAN, Andreas FURTFANGLER

The Excavations of Azatan Necropolis in 2015	168
--	-----

Araqs MARGARYAN

Gyumri as a Theatre: Artist Garik Manukyan	183
--	-----

Hayk MAHTESYAN

General Gabriel Ghorghasian's Project of Administrative Borders between Armenia, Georgia and Azerbaijan (1918, June).	189
---	-----

Inga AVAGYAN

Gyumri's Old Cemetery as a Protected Cultural Unit	195
--	-----

<i>Scientific Information</i>	211
--	-----

<i>Summary (in English)</i>	218
--	-----

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. XXI. 2018

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ. XXI. 2018

Shirak Centre for Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

SCIENTIFIC WORKS. XXI. 2018

Համակարգչային և գեղարվեստական ձևավորումը՝ Լ. Կոստանյանի, Կ. Մադրյանի
Խմբագրումը և սրբագրումը՝ Հ. Հարությունյանի, Ռ. Հովհաննիսյանի,
Հ. Մատիկյանի

Ստորագրված է տպագրության՝ 05.09.2018

Շապիկի առաջին էջին՝

Ժամանակը կանգ առավ ... Լենինականի Գուլպա-նասկեդենի «Արշալույս» արտադրական
միավորման կենտրոնական մասնաշենքի աշտարակի ժամացույցը՝ 7 դեկտեմբերի, 1988թ.:

Ծավալը՝ 230 էջ, թուղթը՝ A4, տպաքանակը՝ 200, գինը՝ պայմանագրային

Գիտությունների ազգային ակադեմիայի
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Հայաստան, Գյումրի, Վազգեն Սարգսյանի – 5ա
<http://shirakcenter.sci.am/>. E-mail: hkentron@mail.ru.